Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

84:գրք
Ա 19

Տորժ Սանդ

ԻՆԴԻԱՆԱ

Ժորժ
Սանդ

ԻՆԴԻԱՆԱ

ԵՐԵՎԱՆ «ԽՍՀՐՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ԳՐՈՂ». 1990

ԳՄԴ 84.4Ֆր-4
Ս 190

Ֆրանսերենից թարգմանեց
ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Գ. Ա. Գորկի անվ.
ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄՈՍԿՎԱ

ՍԱՆԴ, Ժ.
Ս. 190 Ինդիանա։ Վեպ/Ժորժ Սանդ, [Ֆրանս. թարգմ. Ն. Վարդանյանը].— Եր.։ Խորհրդ. գրող, 1990, 272 էջ։

Ժորժ Սանդը (Ավրորա Դյուփեն, 1804 թ. Փարիզ— 1876 թ. նոյն) համաշխարհային գրականության ակնառավոր դեմքերից է։ «Ինդիանան» (1832 թ.) վիպը նրա ինքնատիպ և լավագույն գործերից է, որտեղ հեղինակը համարձակորեն վեր է հանում կնոջ իրավունքի պաշտպանության հարցը, անողոքաբար քննադատում տիրող հասարակարգի կեղծ ու պատիր օրենքները՝ զգայացունց նյութի և հերոսների կերպարների հետաքրքիր զարգացումով։

Ժորժ Սանդն առաջին անգամ է ներկայացվում հայ ընթերցողին։

4703010100 (18)
Ս ——————————113-90
705 (01) 90
ISBN 5-550-00524-7

ԳՄԴ 84. 4 Ֆր-4

© «Խորհրդային գրող» հրատարակչություն
Թարգմանված է հայերեն, 1990

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Գլուխ I

Ուշ աշնանային անձրևոտ ու ցուրտ մի երեկո Դը լա Բրի փոքրիկ գյուղակի հեռավոր սրահներից մեկում երեք հոգի նստել էին բուխարիկի առաջ, մտազբաղ նայում էին առկայծող ածուխներին և մեքենայաբար հետևում ժամացույցի սլաքի դանդաղ ընթացքին։ Նրանցից երկուսը լուռ անձնատուր էին եղել ծանր ու անորոշ ձանձրույթին, մինչդեռ երրորդը ակնհայտորեն անհամբերության նշաններ էր ցուցաբերում. վեր էր թռչում աթոռի վրայից, մի կերպ զսպում էր իրեն, որ բարձրաձայն չհորանջի, ունելիով խփում էր ճարճատող ածուխի կտորներին. մի խոսքով, ամեն կերպ ջանում էր հաղթահարել իրեն համակած ձանձրույթը։

Այդ մարդը, որ մյուս երկուսից շատ ավելի տարիքոտ էր, տանտերն էր՝ գնդապետ Դելմարը, թոշակի անցած հին զինվորական, ժամանակին գեղեցիկ, այժմ գեր, ճաղատ, սպիտակ բեղերով, ահեղ հայացքով կատարյալ մի տիրակալ, որից դողում էին բոլորը՝ կինը, ծառաները, ձիերն ու շները։

Վերջապես վեր կացավ աթոռից, ձանձրալի լռությունը խզելու ապարդյուն ջանքերից ղգալով, որ համբերությունն սպառվում է, սկսեց ծանրորեն քայլել հյուրասենյակում։ Նրա բոլոր շարժումներում զգացվում էր նախկին զինվորականի ձիգ կեցվածքը. հետևառաջ քայլելիս, ամեն նստարանի հետ նա ձգվում էր ամբողջ իրանով մեկ՝ շքերթներին մշտապես աչքի ընկած օրինակելի սպային հատուկ ինքնաբավականությամբ։

Սակայն անցել էին երբեմնի փառքի օրերը, երբ Դելմարը, դեռևս լեյտենանտ, ըմբոշխնում էր ռազմի հաղթանակը։ Այժմ նա՝ թոշակի անցած բարձրաստիճան սպան, երախտամոռ հայրենիքի կողմից անուշադրության մատնված, բավարարվում էր ընտանեկան կյանքով ու կենցաղային պարտականու-

Բյուններ կառարելով։ Ամուսնացել էր երիտասարդ ու գեղեցիկ կնոջ հետ, ուներ ընդարձակ հողատարածություն և օժանդակ հարմարություններով խիստ բարեկարգ կալված։ Բացի դրանից, հաջողությամբ վարում էր ֆաբրիկայի գործերը։ Այնուամենայնիվ, նա մշտապես վատ տրամադրության մեջ էր, մանավանդ այդ երեկո, որովհետև խոնավ եղանակ էր, իսկ գնդապետը տառապում էր հոդացավից։

Նա մոայլ քայլում էր Լյուդովիկոս XV-ի ոճով կահավորված հին հյուրասենյակում, երբեմն կանգ առնելով գեղատանգակ գոներից մեկի առջև, որտեղ պատկերված ամուրները ծաղկաշղթաներով պճնում էին բարեհամբույր նկնիկներին ու մեղմաբարո վարագներին. երբեմն էլ կանգնում էր անհրապույր ու անհաշակ զարդաքանդակներով խճողված մեծադիր որմնանկարի դիմաց, որն իր անհաշիվ գալարներով ու անսպառ հանգույցներով մարդու աչք էր հոգնեցնում։ Սակայն այդ անսպառակ ու անցողիկ զբաղմունքը չէր խանգարում գնդապետին, որ ամեն անգամ, երեկոյի լռաված ընկերակիցների կողքով անցնելիս, խորաթափանց, անկատ հայացք չնետեր մերթ մեկի, մերթ մյուսի վրա։ Երեք տարի շարունակ այդպես հետևում էր կնոջը, անհագորեն հսկելով այդ քնքուշ ու անգին գանձը։

Կինը սասանվեր տարեկան էր. եթե տեսած լիներիք արմունկը ծնկանը հենած ու ոսկեփայլ պղնձի երիզով, ճերմակ մարմարե մեծ բուխարիկի առջև մտասույզ նստած այդ էակին, եթե տեսած լիներիք իր հիանալուրջ սան մեջ, ծեր ամուսնու կողքին, նրբագեղ, անսահման գունատ ու թախծոտ այդ մանկամարդ կնոջը, որը նորափթիթ ծաղկի նման կարծես մեկ օր առաջ այգաբացի հետ էր բացվել, ու քաղել նետել էին գոթական հնամենի ծաղկամանի մեջ, անշուշտ կիսաճայիք գնդապետ Դելմարի կնոջը, գուցե՝ ավելի շատ գնդապետին, քան կնոջը։

Մեկուսացած տան երրորդ բնակիչը նստած էր շիկակարմիր ածուխներով հուրհրատող բուխարիկի մյուս անկյունում։ Նա ամբակազմ երիտասարդ էր, ուժերի ամենածաղկուն շրջանում, որի կարմիր այտերը, ոսկեգանգուր մազերի առատությունը և թավ այտամորուսը հակադրություն էին կազմում առանձնաշնորհ ճերմակած մազերի, գունատ այտերի և խստաբարբ կեցվածքի հետ։ Սակայն գեղագիտական ամենաթույլ ճաշակի տեր մարդն անգամ կնախընտրեր պարոն Դելմարի խիստ ու դաժան տեսքը, քան երիտասարդի համալափ, գեղեցիկ, բայց անարտահայտիչ դիմագծերը։ Բուխարիկի խորքում թիթեղի վրա դրվագված ուռուցիկ դիմակը, որ նույնպես հայացքը հառել էր բոցկլտացող կրակի լեզվակներին, անկասկած, ավելի խոսուն էր, քան մեր պատմության ոսկեվարս և վարդ այտերով հերոսի դեմքը։ Իմիջիայլոց, նրա աչքի ընկնող առնական կազմվածքը, ընդգծված թուխ հոնքերը, ողորկ ճակատի ճերմակությունը, պայծառ աչքերի հանդարտությունը, գեղեցիկ ձեռքերը, մինչև իսկ որսորդական համազգեստի խիստ նրբագեղությունը նրան կարող էին ամենագեղեցիկ սապատների շարքը դասել յուրաքանչյուր կնոջ աչքին, որը, սիրո հարցերի շուրջ դատողություններ անելով, հակված է կառչել անցյալ դարի, այսպես կոչված, «իմաստասիրական նախասիրություններից»։ Բայց, ամենայն հավանականությամբ, պարոն Դելմարի ծաղկահասակ, մտազբաղ կինը տղամարդկանց այդ տեսանկյունից երբեք չէր նայել։ Ակնհայտորեն, այդ նրբակիրտ ու թուլակազմ կնոջ և ուտել ու քնել սիրող տղամարդու միջև ոչ մի ընդհանրություն չկար։ Եվ, ինչ խոսք, զգոն ամուսնու գիշատիչ անդդի աչքերը զուր էին շանում որսալ փոխանակվող որևէ հայացք, հառաչանք կամ հույզ իրարից այնքան տարբեր երկու անձանց միջև։ Համոզվելով, որ խանդելու ոչ մի հիմք չունի, գնդապետը ավելի խոր մխրճվեց մոայլության գիրկը և ընդոստ շարժումով ձեռքերը խրեց զրպանները։

Թվում էր, թե այս խմբի մեջ երջանիկ էր միայն խաղաղ հայացքով գրիֆոն ցեղի որսորդական գեղեցիկ շունը, որ գլուխը դրած երիտասարդի ծնկներին՝ հանգստանում էր։ Շունը խոշորակազմ էր, մազմզոտ ու լայն թաթերով, աղվեսի նուրբ ու սուր գնչով, խելացի, ոսկեփայլ խոշոր աչքերով, որոնք խճճված մազերի տակից շողշողում էին ինչպես զույգ տապազիոն։ Այդ ժիր շան աչքերը, որ արնակալած ու ահեղ տեսք էին ստանում որսի թեժ պահերին, այժմ թախծոտ ու անսահման քնքուշ արտահայտություն ունեին։ Իսկ երբ տերը՝ իր բնազդային սիրո առարկան, սեր, որ երբեմն ավելի գնահատելի է, քան մարդկային բանական սերը, մատներով խա-

զում էր գեղեցիկ շան արծաթափայլ մեռաքսի հետ, կենդանու աչքերը փայլում էին հաճույքից, իսկ երկար պոչը միօրինակ շարժումով հարվածում էր նախշավոր փայտե հատակին և ցրիվ տալիս կրակարանի մոխիրը։

Բուխարիկի բոցերից թույլ լուսավորված կենցաղային այս տեսարանը, անտարակույս, կարող էր Ռեմբրանդտի կտավների համար հիանալի նյութ ծառայել։ Բոցերի վառ բռնկումները մերթ ընդ մերթ ողողում էին բնակարանը և ներկանների դեմքերը, ապա, փոխվելով թանձր կարմիրի, հետզհետե մարում էին։ Այդ միջոցին ընդարձակ սրահը նույնպես սկսում էր մթնել։ Ամեն անգամ, երբ պարոն Դելմարն անցնում էր բուխարիկի առջևից, հյուրասենյակի խորհրդավոր խորքերում նրա սավերը հայտնվում էր և իսկույն կորչում։ Այսուայնտեղ լույսի ոսկեգույն շողերը հայտնվում էին թագերով, դիմանկարներով, փայտյա ժապավեններով ծանրաբեռնված ձվաձև շրջանակների, պղնձով զարդարված եբենոսի կահույքի վրա և հասնում էին մինչև պատերին դրվագված ցանցկեն քիվերին։ Բայց երբ բուխարիկում վառվող փայտի գլխիկը սկսում էր մարել, իսկ հաջորդ կտորը դեռ չէր հասցնում ինչպես պետք է բոցավառվել, քիչ առաջվա լուսավորված առարկաները պարուրվում էին մութով, խավարի միջից փայլփլում ու առանձնացնում էին ուրիշ առարկաներ։ Այսպիսով, հնարավոր էր աստիճանաբար տեսնել սենյակի բոլոր մանրամասները. մերթ ձևավոր, եռոտանի ոսկեզօծ սեղանը, մերթ ամպիրի քուլաներով լցված աստղապատ երկնակամար պատկերող առաստաղը, մերթ ծանր, երկար ծոպքերով բոսորագույն վարագույրները, որոնց լայն ծալքերը կարծես վեսվեսում էին, երբ նրանց վրա էին ընկնում կրակի ցոլքերը։

Բուխարիկի լույսի տակ անշարժ նստած կերպարանքներին նայելիս այն տպավորությունն էր ստեղծվում, թե նրանք վախենում էին խախտել շրջապատի լռությունը, անքիթ ու ընդարմացած, կախարդական հեքիաթների հերոսների պես, ասես երկնչում էին, որ աննշան մի ձայն, ամենափոքր մի շարժում կարող էր իրենց վրա փլել կախարդված դղյակի պատերը, իսկ կախարդի կերպարանքով խոժոռադեմ տանտերը, որի ոտնաձայնն էր միայն արձագանքում կիսախավար սենյակի լռության մեջ, կախարդել էր նրանց։

Շունը, վերջապես որսալով տիրոջ ներողամիտ հայացքը, կարծես ձերբազատվեց մոգական այն ուժից, որ կարող է ներգործել միայն մարդու հայացքը խելացի կենդանու վրա։ Հազիվ լսելի թույլ կաղկանձյունով, աննման գեղեցիկ ոստյունով երկու թաթերը գցեց տիրոջ ուսերին։

— Իջի՛ր, Օֆելյա, հեռացի՛ր։

Երիտասարդը անգլերենով խստորեն կշտամբեց հնազանդ կենդանուն, որը մի տեսակ քաշվելով՝ մեղավորի պես սողաց տիկին Դելմարի մոտ՝ պաշտպանություն գտնելու հույսով։ Սակայն տիկին Դելմարը, անձնատուր իր մտորումներին, ուշադրության չարժանացրեց շանը, բայց չխանգարեց նաև, որ նա գլուխը դնի իր ծնկներին ծալած սպիտակ ձեռքերի վրա։

— Սա ի՞նչ բան է,— ներքուստ ուրախացած ասաց գնդապետը, որ ժամանակ սպանելու համար վերջապես զայրանալու առիթ էր գտել,— ուրեմն, այս շունը հիմնովին հասատվեց հյուրասենյակո՞ւմ։ Հեռացի՛ր, Օֆելյա, կորի՛ր այստեղից, հիմա՞ր անասուն։

Եթե այդ պահին ընտանեկան այս պարզ մթնոլորտում որևէ մեկը հետևեր տիկին Դելմարին, այդ չնչին միջադեպից անմիջապես կկռահեր նրա տխուր կյանքի ողջ գաղտնիքը։ Տիկնոջ մարմնով աննկատելի սարսուռ անցավ, նա ակամա սեղմեց շան ամրակուռ, մազախոիվ վիզը, կարծես ուզում էր պահել, պաշտպանության տակ առնել նրան, որի գլուխը հանգչում էր իր ծնկներին։ Պարոն Դելմարը բաճկոնի գրպանից գուբս քաշեց որսորդական մտրակը, սպառնալից մոտեցավ խեղճ Օֆելյային. վերջինս փակեց աչքերը, նախապես ցավի ու սոսկումի կաղկանձյուն արձակելով՝ սողաց գնդապետի ոտքերի տակ։ Տիկին Դելմարը էլ ավելի գունատվեց։ Հեկեկոցը սեղմեց կուրծքը, և խոշոր կապույտ աչքերը շրջելով սմուսնու կողմը՝ աննկարագրելի վախով դիմեց նրան.

— Ի սեր աստծո, պարոն, մի սպանեք նրան։

Գնդապետ Դելմարը ցնցվեց։ Պոռթկուն ցասումը փոխվեց տրամության։

— Ձեր ակնարկը, տիկին, ես լավ եմ հասկանում,— ասաց նա։— Դուք ինձ չեք ներում, դուք շարունակ հանդիմանում եք ինձ այն օրվանից, երբ որսի ժամանակ, զայրույթի պա-

հին սպանեցի ձեր շանը։ Պա՜հ, ի՜նչ մեծ բան. մի շուն, որ թուչկոտելով անընդհատ փախցնում էր որսը։ Իսկ ո՞վ կհանդուրժեր։ Քանի չէր սատկել, չէիք նկատում նրան, իսկ հիմա, երբ դա ձեզ հնարավորություն է տալիս հանդիմանել ինձ...

— Մի՞թե երբևէ հանդիմանել եմ ձեզ,— ասաց տիկին Դելմարն այնպիսի քնքշությամբ, որն ընդհանրապես արտահայտվում է սիրելի մարդուն դիմելիս կամ սեփական անձի հանդեպ ունեցած հարգանքից դրդված, ուղղվում է այն անձնավորությանը, որի հետ ակամա առնչվում է ու չի սիրում։

— Այդ չէի ուզում ասել,— առարկեց գնդապետը ավելի շուտ հայրական, քան ամուսնուն հատուկ շեշտ տալով խոսքին,— սովորաբար կնոջ արցունքի մեջ ավելի շատ հանդիմանություն կա, քան այլոց հայհոյանքներում։ Գրողը տանի, շատ լավ գիտեք, տիկին, որ արցունք տանել չեմ կարող...

— Կարծում եմ, դուք երբեք չեք տեսել իմ արցունքները։

— Դե իհարկե՞, ձեզ թվում է չեմ տեսնում այս կարմրած աչքերը։ Իսկ դա անչափ տհաճ է, գրողը տանի։

Ամուսինների միջև ծագած վեճի միջոցին երիտասարդը վեր կացավ և առանց շտապելու դուրս տարավ Օֆելյային։ Այնուհետև վառեց մոմը, տեղավորեց բուխարիկի վրա և վերադարձավ նստեց տիկին Դելմարի դիմաց։

Այս աննշան գործողությունը կարծես միանգամից փոխեց պարոն Դելմարի տրամադրությունը։ Երբ մոմի կայուն ու անթրթիռ լույսն ընկավ կնոջ երեսին, գնդապետը նկատեց նրա տառապագին ու ընկճված տեսքը, որն այդ երեկո հատկապես ավելի էր ընդգծվել, տեսավ նրա հոգնատանջ դեմքը, նիհար այտերի վրայով սահող թուխ մազերը, անփայլ աչքերի տակ գծված կապույտ երիզները։ Մի քանի պտույտ կատարեց սենյակում և միանգամից կանգնեց կնոջ առջև։

— Իսկ այսօր ինչպե՞ս եք զգում,— հարցրեց այն ձախորդ մարդու կերպարանքով, որի սիրտն ու բնավորությունը հազվագիպ են ներդաշնակում։

— Շնորհակալ եմ, սովորականի պես,— պատասխանեց կինը առանց զարմանքի կամ վիրավորանքի ակնհայտ արտահայտության։

— Սովորականի պե՞ս, դա պատասխան չէ կամ, ավելի ճիշտ, կանացի խուսափողական պատասխան է, որը ոչինչ չի ասում. ոչ այո՛, ոչ էլ ո՛չ, ոչ լա՛վ, ոչ վա՛տ։

— Այդպես է, ոչ լավ եմ զգում, ոչ էլ վատ։

— Դե՛ չէ՛, արդեն ստում եք,— դարձյալ կոպտեց ամուսինը,— ինձ հայտնի է, որ լավ չեք զգում, արտահայտվել եք այստեղի վկայի՝ սըր Ռալֆի ներկայությամբ։ Ինչ է, ճիշտ չե՞մ ասում, պատասխանե՛ք, դե՛, ասացե՛ք, պարոն Ռալֆ, այդ մասին խոսե՞լ եք, թե ոչ։

— Խոսել ենք,— սառնորեն պատասխանեց սըր Ռալֆը, ուշադրություն չդարձնելով Ինդիանայի հանդիմանական հայացքին։

Այդ պահին հայտնվեց չորրորդ անձը, տանտիրոջ աջ ձեռքը՝ պարոն Դելմարի նախկին գնդի սերժանտը։

Մի քանի խոսքով պարոն Դելմարին հայտնեց իր կասկածները, որ վերջերս գողեր են հայտնվել և ամեն օր մոտավորապես այս ժամերին այդի են մտնում, հավանաբար, ածուխ թաղնելու։ Եկել է հրացան տանելու, որպեսզի, նախքան դարպասի դռները փակելը, ստուգի այգու չորսբոլորը։ Պարոն Դելմարը, ռազմի և արկածախնդրության հոտ առնելով, իսկույն վերցրեց հրացանը, մեկ ուրիշն էլ տվեց Լըլիեվրին և պատրաստվեց դուրս նետվել։

— Ինչպե՞ս,— սարսափած բացականչեց տիկին Դելմարը,— մի պարկ ածուխի համար ուզում եք մի խեղճ գեղջուկի՞ սպանել։

— Շան պես կսատկացնեմ բոլոր նրանց,— պատասխանեց Դելմարը կնոջ առարկությունից կատաղած,— ովքեր գիշերով կթափառեն իմ կալվածքում։ Եթե օրենքին ծանոթ լինեիք, տիկին, կիմանայիք, որ իրավունք ունեմ այդպես վարվելու։

— Սարսափելի օրենք է,— բորբոքված արձագանքեց Ինդիանան, բայց իսկույն տիրապետելով իրեն՝ մեղմորեն ավելացրեց,— հապա ձեր հոգացո՞վը, մոռանում եք, որ անձրևում է, եթե հիմա դուրս գաք, վաղը հիվանդ կպառկեք։

— Օ՜, երևում է, շատ եք վախենում, որ հարկադրված

պիտի խնամեք մի ծեր ամուսնու,— պատասխանեց Դելմարը և, կոպտությամբ հրելով դուռը, դուրս ելավ՝ անվերջ քրքջմընչալով առաջացած տարիքի դեմ ու կնոջ հասցեին։

Գլուխ II

Երկուսը, որոնց քիչ առաջ անվանեցինք Ինդիանա Դելմար և սըր Ռալֆ կամ եթե, ցանկանում եք, պարոն Ռոդոլֆ Բրաուն, մնացին նույն անշարժ դիրքում, դեմ-դիմաց նստած, նույն սառը, անվրդով տեսքով, կարծես Ինդիանայի ամուսինը դեռ իրենց կողքին լիներ։ Անգլիացին ամենևին չէր մտածում արդարանալ, իսկ տիկին Դելմարը հասկանում էր, որ անիրավացի կլիներ խստորեն հանդիմանել նրան, քանի որ պարոն Ռոդոլֆը միայն բարի միտումով էր խոսել ամուսնու հետ։ Ի վերջո, դժվարությամբ խզելով լռությունը, Ինդիանան նրբանկատորեն կշտամբեց նրան.

— Լավ չարեցիք, սիրելի Ռալֆ, չէ՞ որ արգելել եմ կրկնել ասածներս, դրանք տառապալից պահերին դուրս են թռել բերանիցս։ Իսկ պարոն Դելմարն այն մարդը չէ, որին կուզեի տեղյակ պահել հիվանդությանս մասին։

— Ձեզ չեմ հասկանում, սիրելիս,— պատասխանեց սըր Ռալֆը,— հիվանդ եք և չեք ուզում բուժվել։ Ինձ մնում է ընտրություն կատարել. կամ կորցնել ձեզ, կամ ձեր հիվանդության մասին անհրաժեշտաբար հայտնել ձեր ամուսնուն։

— Ճիշտ է,— ասաց տիկին Դելմարը տխուր ժպտալով,— և դուք գերադասեցիք «նախազգուշացնել նորին գերազանցությանը»։

— Սխալվում եք, ազնիվ խոսք, սխալվում եք, ինչո՞ւ եք այդքան դառնացած գնդապետի դեմ, նա պատվախնդիր, արժանավայել մարդ է։

— Իսկ ո՞վ է հակառակը պնդում, սըր Ռալֆ...

— Դո՜ւք, ձեր կամքից անկախ։ Ձեր այդ տխրությունը, հիվանդությունը և, ինչպես ինքն է նկատում, կարմրած աչքերը մի՞թե չեն ասում բոլորին, ամեն բոպե, որ երջանիկ չեք...

— Լռե՛ք, սըր Ռալֆ, շատ ազատ գնացիք։ Ես թույլ չեմ տվել նման դուշակություններ անել։

— Ինչպես երևում է, վշտացնում եմ ձեզ, ինչ արած, ճարպիկ չեմ, ինձ հասու չեն ֆրանսերենի նրբերանգները, բացի այդ, ձեր ամուսինը և ես շատ ընդհանուր բաներ ունենք։ Նրա նման ես էլ բացարձակապես չեմ տիրապետում կանանց սիրաշահելու արվեստին ո՛չ անգլերենով, ո՛չ ֆրանսերենով։ Մեկ ուրիշին գուցե հաջողվեր առանց խոսքերի համոզել ձեզ այն, ինչ քիչ առաջ այդքան կոպտորեն ասացի, կկարողանար արվեստի ուժով հնարքներ բանեցնել և շահել ձեր վստահությունը և այնպես աներ, որ զգայիք իր կանխամտածված քայլերը։ Այդ դեպքում գուցե հաջողվեր մի փոքր թեթևացնել ձեր սիրտը, որ քարացել ու փակվել է իմ առջև։ [Հաճախ եմ նկատել, որ բառերն ավելի մեծ ներգործություն ունեն, քան բուն գործը] հատկապես Ֆրանսիայում։ Իսկ կանայք նախընտրում են...

— Օ՜, խոր ատելությամբ եք լցված կանանց հանդեպ, սիրելի Ռալֆ, այստեղ ես մեն-մենակ եմ ձեր երկուսի դեմ, նշանակում է, ամեն դեպքում պարտավոր եմ ընդունել իմ մեղքը։

— Ուրեմն, ապացուցիր, որ մե՛նք ենք սխալվում, սիրելի զարմուհիս, ապացուցի՛ր քո առողջությամբ, վերագտիր նախկին կայտառությունդ, աշխուժությունդ, թարմությունդ։ Հիշիր Բուրբոն կղզին, Բերնիկայի հրաշալի անկյունը, մեր անսահման երջանիկ մանկությունը, քո տարիների, ապրած տարիների չափ մեր հին ընկերությունը...

— Հորս էլ եմ հիշում...,— շեշտված ու տխուր ձայնով ասաց Ինդիանան՝ ձեռքը դնելով սըր Ռալֆի ձեռքի մեջ։

Տիրեց խոր լռություն։

— Ինդիանա,— ի վերջո ասաց Ռալֆը,— երջանկությունը մեզնից է կախված, այն միշտ մեր կողքին է, հաճախ բավական է ձեռք մեկնել, ու այն քոնը կլինի։ Ի՞նչ է պակասում քեզ. ապահով կյանքով ես ապրում, այս հանգամանքը, հավանաբար, ավելի կարևոր ու պատվաբեր է, քան մեծ հարստությունը։ Հրաշալի ամուսին ունես, որն ամբողջ հոգով սիրում է քեզ, համարձակվում եմ ասել՝ ունես անկեղծ, նվիրված բարեկամ...

Տիկին Դելմարն առանց տեղից շարժվելու աննշմար սեղ-

մեց սրբ Ռալֆի ձեռքը՝ գլուխը կրծքին հակած, խոնավ աչքերը կրակի կախարդական խաղերին հառած։

— Ձեր տխրությունը, սիրելի բարեկամ,— շարունակեց սրբ Ռալֆը,— հիվանդագին վիճակի արդյունք է։ Ո՞վ կարող է խուսափել ցավից, անձկությունից։ Նայեցեք ձեզ շրջապատող մարդկանց և կտեսնեք, որ շատ-շատերն իրավամբ նախանձում են ձեզ։ Այդպիսին է մարդ արարածը. միշտ ձգտում է ձեռք բերել այն, ինչ չունի...

Ձեր համբերությունը չլարաշահելու համար չեմ ուզում կրկնել բազմիցս ծեծված այն արտահայտությունները, որ իր մտքերի պես ծանր ու միօրինակ տոնով վկայակոչում էր բարեսիրտ սրբ Ռալֆը։ Նա հիմար չէր, և դա՛ չէր պատճառը, որ այդպես էր արտահայտվում, ոչ, նա անսովոր վիճակի մեջ էր. խելացի մարդ էր, զարդացած, սակայն, ինչպես ինքն էր խոստովանում, իր ուժերից վեր էր կանանց մխիթարելը։ Եվ հետո, նա այնքան քիչ էր հասկանում ուրիշի վիշտը, որ կամենալով բարություն անել, վերքի վրա սպեղանի դնելով՝ փոխանակ ցավը մեղմացնելու, այն ավելի էր բորբոքում։ Գիտեր, որ անճարակ է, այդ պատճառով աշխատում էր համարյա չնկատել բարեկամների վիշտը։ Բայց այս անգամ ջանք չխնայեց։ Նրա կարծիքով, մտերիմ մարդու համար այդպիսի գործ սանձնելը շատ ծանր պարտականություն էր։ Նրբ զգաց, որ տիկին Դելմարն այլևս չի լսում իրեն, լռեց։ Սենյակի անդորրության մեջ լսվում էին այրվող փայտի հազարավոր փոքրիկ ճարճատյուններ, բռնկվող ու մարող կոճղի ողբաձայն երգեր, կծկվող ու պայթող կեղևի ճայթոց, կապտավուն կրակե լեզվակներով ժայթքող ֆոսֆորային թույլ կայծկլտումներ արձակող չորացած ճյուղերի ճարճատյուն։ Ժամանակ առ ժամանակ շան ոռնոց էր գալիս խառնվում դռների արանքից սողոսկող քամու նվազուն սուլոցին և ապակիները մտրակող անձրևի շառաչին։ Ամենաստուր երեկոներից մեկն էր, որ տիկին Դելմարը երբևիցե անցկացրել էր Բրիի փոքրիկ դղյակում։

Եվ հետո դժբախտության ինչ-որ անորոշ սպասում էր ծանրանում այդ զգայուն էակի, նրա սրտի նուրբ լարերի վրա։ (Թույլ մարդիկ միշտ վախով, նախազգացումներով են ապրում։) Տիկին Դելմարը, ինչպես բոլոր ջղային և տկար կրեոլուհիները, նույնպես ամեն տեսակի նախապաշարումներ ուներ։ Գիշերվա մեջ թևածող հնչյունները, լուսնի լուսային խաղերը կանխագուշակում էին մոտալուտ դժբախտություն, ճակատագրական իրադարձություն, իսկ խորհրդավորություններով ու տեսիլքներով հագեցած գիշերները այդ տխրագալուկ ու երազկոտ կնոջ հետ խոսում էին ինչ-որ առանձնահատուկ լեզվով, որ միայն ինքն էր հասկանում, միայն ինքն էր մեկնաբանում զգացած վախի ու տվայտանքների սահմաններում։

— Գուցե ինձ ցնորված եք համարում,— ասաց Ինդիանան ձեռքը քաշելով, որ մինչ այդ պահել էր սրբ Ռալֆը,— բայց զգում եմ, որ մեզ վտանգ է սպառնում և կախվելու է մեկնումեկիս գլխին... Հավանաբար՝ իմ... բայց... սպասեք, Ռալֆ, այնպես եմ հուզված, կարծես մեծ փոփոխություն է սպասվում իմ կյանքում... վախենում եմ,— շշնջաց նա սարսռալով,— վատ եմ զգում։

Շրթունքներն այտերի նման ճերմակեցին։ Սրբ Ռալֆը վախեցավ։ Վախեցավ ոչ թե տիկին Դելմարի նախազգացումներից. դա վերագրում էր նրա հոգեկան լարվածությանը, վախեցավ նրա մահատեսիլ գունատությունից և զանգը քաշելով՝ իսկույն օգնության կանչեց։ Ոչ ոք չերևաց. Ինդիանան ավելի ու ավելի էր թուլանում։ Ռալֆը կորցրեց իրեն։ Ինդիանային հեռացրեց կրակի մոտից, տեղավորեց թիկնաթոռի մեջ և չիմանալով ինչ անել՝ դուրս նետվեց սպասավորներին կանչելու, շուր, սթափեցնող հեղուկներ բերելու և ոչինչ չգտնելով՝ քաշեց, պոկեց զանգերի պարանները, մոլորվեց բնակարանի լաբիրինթոսում, անհամբերությունից և հուսահատությունից կոտրատեց մատները։

Ի վերջո մտածեց բացել պեպի այգին նայող ապակեպատ դուռը և ձայն տալ Լըլիեվրին ու Նունին՝ տիկին Դելմարի լրեոլուհի սպասուհուն։

Ջանցած մի քանի վայրկյան, նունը դուրս թռավ պարանգի մթին ծառուղուց, շնչակտուր նետվեց սենյակ ու անհանգստացած սկսեց հարցուփորձ անել տիկին Դելմարի առողջական վիճակի վերաբերյալ.

— Սովորականից վա՞տ է։

— Շատ վատ,— պատասխանեց սըր Ռալֆը։

Նրանք շտապեցին հյուրասենյակ, ջանք ու եռանդ չխնայեցին տիկին Դելմարին ուշքի բերելու. Ռալֆը՝ իր անօգուտ ու անճարակ շտապողականությամբ, Նունը՝ նվիրված կնոջ ճարպկությամբ ու բանիմացությամբ։

Նունը տիկին Դելմարի կաթնաքույրն էր։ Երիտասարդ աղջիկները միասին էին հասակ առել և շատ էին սիրում իրար։ Նունը բարձրահասակ էր, ամրակազմ, քաջառողջ, եռանդուն, ճարպիկ, կրեոլուհուն հատուկ աշխուժությամբ ու կրքոտությամբ օժտված։ Նրա գեղեցկությունը աչք էր շլացնում, և տիկին Դելմարի դալուկ դեմքն ու նվաղուն գեղեցկությունը խամրում էին նրա ներկայությամբ։ Բայց նրանք այնքան սիրալիր էին, այնքան մտերիմ, որ կանացի մրցակցության մասին խոսք անգամ լինել չէր կարող։

Երբ տիկին Դելմարն ուշքի եկավ, անմիջապես նկատեց սպասուհու այլայլված դեմքը, խառնիխուռն խոնավ մազերը, շմարող հուզմունքը։

— Ուշքի եկ, խեղճ երեխա,— բարեհամբույր տոնով ասաց Նունին,— իմ ցավն ավելի է հոշոտում քեզ։ Գնա, Նուն, դո՞ւ ես ավելի շատ խնամքի կարիք զգում, քան ես. օրեցօր նիհարում ես, շարունակ լաց ես լինում, կարծես կյանքն արժեք չունի քեզ համար։

Նունը, երախտագիտական զգացումով լի, տիկին Դելմարի ձեռքն ամուր հպից շուրթերին։ Բայց հանկարծ սկսեց զառանցադին, սարսափով լի հայացքը պտտեցնել շուրջը և շշնջաց.

— Աստվա՞ծ իմ... Տիկին, չգիտե՞ք ինչու է պարոն Դելմարը պարտեզ իջել։

— Ինչո՞ւ,— ակամա կրկնեց Ինդիանան՝ անմիջապես կորցնելով այն նուրբ վարդագույնը, որ հազիվ հայտնվել էր այտերին,— չէ, սպասիր, չեմ հասկանում... վախեցնում ես, ի՞նչ է պատահել։

— Պարոն Դելմարը,— կցկտուր ասաց Նունը,— կարծում է պարտեզում գողեր կան։ Լբլիեվրի հետ հսկում է, երկուսի ձեռքին էլ հրացան կա...

— Հետո՞, — ասաց Ինդիանան, կարծելով, թե սարսափելի լուր է լսելու։

— Հետո, տիկին,— շարունակեց Նունը ինքն իրեն կորցրած, ձեռքերը խաչելով,— սարսափելի է մտածել. կարող են մարդ սպանել...

— Սպանե՞լ,— բացականչեց տիկին Դելմարը այն դյուրահավատ երեխայի պես, որ ահաբեկվում է դայակի զարհուրելի հեքիաթները լսելիս։

— Օ՜, կսպանեն նրան,— խեղդվելով հեծկլտաց Նունը։

«Այս կանայք խելքները թոցրել են,— մտածեց Ռալֆը զարմացած և եզրակացրեց,— ինչ կարող ես անել, բոլորն էլ այդպիսին են»։

— Նուն, ի՞նչ ես ասում,— պնդում էր տիկին Դելմարը,— դո՞ւ էլ ես համոզված, որ գողեր են։

— Ա՜խ, ինչ գողեր։ Երևի որևէ աղքատ մի քիչ փայտ է վերցնում՝ տունը տաքացնելու համար։

— Այո, իրոք սարսափելի է... բայց չի կարող պատահել. Ֆոնտենելոյի անտառը մոտ է, փայտն այնտեղից կհավաքեին, ինչո՞ւ պիտի վտանգեին իրենց կյանքը՝ պարսպի վրայից ցատկելով ու այգի մտնելով... չէ, պարոն Դելմարը ոչ մեկին չի գտնի, հավատա...

Բայց Նունը չէր լսում։ Պատուհանի մոտից գնում էր տիրուհու մոտ, ամենափոքր ձայնի ականջ էր դնում ու չէր կողմնորոշվում՝ վազեր պարոն Դելմարի ետևի՞ց, թե՞ մնար հիվանդ տիրուհու մոտ։

Նունի անհանգստությունն այնքան անտեղի, այնքան տարօրինակ էր թվում պարոն Բրաունին, որ իրեն հատուկ հանգստությունը մի կողմ թողնելով՝ ամուր սեղմեց սպասուհու թևն ու ասաց.

— Խելագարվե՞լ եք, ինչ է, չե՞ք տեսնում, որ սարսափեցնում եք ձեր տիրուհուն, իսկ այդ հիմար վախը խորապես հուզում է նրան։

Նունը չէր լսում, բայց երբ աչքերը շրջեց տիրուհու կողմը, նկատեց նրա ցնցվելը։ Ինդիանայի մարմնով կարծես հոսանք անցավ և հարվածեց զգայարաններին։ Համարյա նույն պահին հրացանից արձակված կրակոցը դղրդացրեց հյուրասրահի ապակիները, և Նունը ծնկաչոք ընկավ։

— Ինչից ասես չեն վախենում այս կանայք,— գոռաց սըր Ռալֆը նրանց հուզմունքից նյարդայնացած,— հիմա ուրախ

կմտնեն ներս. գնդապետի ձեռքին էլ մի խփված նապաստակ կտեսնեք, այն ժամանակ մի լավ կծիծաղեք։

— Ո՛չ, Ռալֆ,— ասաց տիկին Դելմարը՝ քայլերը վստահորեն ուղղելով դռան կողմը,— ես ձեզ ասում եմ, որ մարդկային արյուն է թափվել։

Նունը սուր ճիչ արձակեց և բերանշսիվայը փռվեց հատակին։

Այդու խորքից միաժամանակ լսվեց Լըլիեվրի ձայնը.

— Բռնվեցի՛ր, աղավնյակս, ճիշտ նշանակետին խփեցիք, գնդապետ, ավազակը տեղնուտեղը ընկավ...

Սըր Ռալֆը նույնպես սկսեց անհանգստանալ։ Շտապեց տիկին Դելմարի հետևից։ Ջանցած մի քանի բոպե, սյունազարդ շքամուտքի տակ տեղափոխեցին արնաշաղախ մի մարդու, որ կենդանության ոչ մի նշան ցույց չէր տալիս։

— Ինչո՞ւ եք աղմկում, ինչո՞ւ եք ճվճվում,— դաժան ուրախությամբ գոռում էր գնդապետը վիրավորի շուրջը խռնվող ահաբեկված ծառաների վրա,— կատակեցինք, հրացանի մեջ աղ էր լցված, նույնիսկ չկպավ, վախից ընկավ։

— Հապա արյունը, պարոն,— ասաց տիկին Դելմարը խիստ հանդիմանական տոնով,— վախի՞ց է հոսում։

— Իսկ դո՞ւք այստեղ ինչ գործ ունեք, տիկին,— գոռաց պարոն Դելմարը։— Ի՞նչ եք ուզում։

— Եկել եմ պարտականությունս կատարելու, ձեր գործած չարիքը շտկելու,— սառնորեն պատասխանեց Ինդիանան։

Եվ այնպիսի վճռականությամբ ուղղվեց դեպի վիրավորը, որ ներկաներից ոչ մեկը չէր հանդգնի, ու մոմի լույսը մոտեցրեց նրա դեմքին։

Աղքատիկ հագուստով չքավոր մարդու փոխարեն, ինչպես ենթադրում էին տեսնել, երեսց աղնվականի նուրբ դիմագծերով, որսորդական ճոխ համազգեստով մի երիտասարդ։ Ձեռքը թեթև վիրավորված էր, բայց, ինչպես երևում է, երիտասարդը բարձր տեղից էր գլորվել. այդ էին վկայում պատռված հագուստը և ուշաթափությունը։

— Հապա ի՞նչ եք կարծում,— ասաց Լըլիեվրը,— քանի ոտնալափ բարձրությունից ընկավ։ Պատի վրայից էր անցնում, գնդապետը նշան բռնեց և կրակեց աչ ձեռքին, կապար

էր, աղ էր, ի՞նչ իմանաս, կորցրեց հավասարակշռությունը և թրմփաց, աչքովս տեսա։ Խեղճը փռվեց պատի տակ, էլ ո՞ւր փախչեր։

— Մարդու հավատը չի գալիս,— ասաց սպասուհիներից մեկը,— այսքան լավ հագնված մարդ և գողություն։

— Գրպանում ահագին ոսկի կա,— ասաց մեկ ուրիշը, որ արձակել էր կարծեցյալ գողի ժիլետի կոճակները։

— Տարօրինակ է,— ասաց գնդապետը, որ առանց հուզմունքի նայում էր իր առջև փռված երիտասարդին,— եթե մեռել է, մեղավոր չեմ, նայեք նրա ձեռքին, տիկին, կապարի կտոր կա՞...

— Կուզենայի հավատալ, պարոն,— պատասխանեց տիկին Դելմարը այնպիսի սառնասրտությամբ ու համարձակ տոնով, որ զարմացրեց բոլորին։ Սկսեց ուշադիր լսել զարկերակն ու շոշափել վզի երակները, ի վերջո ավելացրեց,— ճիշտ եք ասում, նա չի մահացել, հարկավոր է շտապ օգնություն ցույց տալ։ Այս մարդը գող չէ և գուցե արժանի է խնամքի, եթե նույնիսկ արժանի էլ չէ, կանանց պարտքն է օգնել։

Տիկին Դելմարը պատվիրեց վիրավորին տեղափոխել բիլիարդի սրահը, որն ամենամոտն էր։ Մի քանի նստարան բերին, ներքնակը հարմարեցրին նստարանների վրա, և Ինդիանան սպասուհիների օգնությամբ վիրակապեց նրա ձեռքը, իսկ սըր Ռալֆը, որ վիրաբուժության դասընթացների էր մասնակցել, զարկերակից արյուն քաշեց։

Գնդապետը շվարած էր, չգիտեր ինչ անել, այն մարդու վիճակում էր, որ իրեն ավելի դաժան է ներկայացնում, քան կցանկանար։ Նա զանազան մանրամասնություններ էր վկայակոչում՝ մարդկանց աչքում իրեն արդարացնելու համար կամ, ավելի ճիշտ, ուզում էր, որ մարդիկ արդարացնեին իրեն իր աչքում։ Ինչպես սովորաբար լինում է նման դեպքերում, պարոն Դելմարը, ծառաների հետ սյունազարդ շքամուտքի տակ կանգնած, տաքացած խոսում էր այնպիսի վերացական նյութերի շուրջ, որ ոչ մեկին չէր հետաքրքրում։ Լըլիեվրը արդեն քսաներորդ անգամն էր մանրամասնորեն

Դ. Գ. Գ. ԱԶԳԻՆ

պատմում դեպքի մասին, թե ինչպես էին կրակել, ինչպես էր ընկել և հետևանքը։ Իսկ գնդապետ Դելմարը իր ծառաների աչքում նորից վերափոխվելով մեծահոգի մարդու, դա նրա հետ հաճախ էր պատահում, երբ մեկն ու մեկի վրա էր թափում զայրույթը, սկսեց զաստապարտել երիտասարդին, որ հանդգնել էր գիշերով անցնել պատերի վրայով և մտնել ուրիշի այգին։ Բոլորը հավանություն էին տալիս իրենց տիրոջը, բայց պարոնիգպանը աննկատ նրան մի կողմ տանելով՝ հավաստիացրեց, որ այդ թվացյալ գողը երկու կաթիլ ջրի պես նման էր հարևան առանձնատանը վերջերս հաստատված երիտասարդ սեփականատիրոջը, իսկ երեք օր առաջ գյուղական տոնահանդեսի ժամանակ տեսել էր նրան Ռուբելիում օրիորդ Նունի հետ խոսելիս։

Այս տեղեկությունները նոր ընթացք տվին պարոն Դելմարի մտքերին։ Նրա փայլուն, լայն ճաղատի վրա, ճակատի երկարությամբ, դուրս ցցվեց մի հաստ երակ, որ մոտալուտ փոթորկի նախանշան էր։

«Գրողը տանի,— մտածեց նա՝ բռունցքը սեղմելով,— տիկին Դելմարը կարծես բավական շատ է հետաքրքրվում պատերի վրայով կալվածքս մտնող այս երիտասարդով»։

Եվ զայրույթից դողալով, գունատված մտավ բիլիարդի սրահը։

Գլուխ III

— Մի մտահոգվիք, պարոն,— ասաց Ինդիանան,— այս մարդը, որին քիչ էր մնացել սպանեիք, հավանաբար մի քանի օրից լավ կդգա, համենայն դեպս, հույս կա, չնայած դեռ ուշքի չի եկել...

— Բանն այդ չէ, տիկին,— ձայնին տիրապետելով՝ ասաց գնդապետը,— ես կուզենայի իմանալ՝ ինչ է այս հետաքրքիր երիտասարդի անունը, ինչն է նրան դրդել անցնել իմ այգու պատի վրայով և բռնել տուն տանող գլխավոր ծառուղին։

— Գաղափար չունեմ,— պատասխանեց տիկին Դելմարը այնպիսի սառը հպարտությամբ, որ ամուսինը մի պահ կարկամեց։

Բայց խանդի կասկածները կրկին շատ արագ համակեցին նրան, և կիսաձայն ավելացրեց.

— Կիմանամ, տիկին, վստահ եղեք, շուտով կիմանամ...

Տիկին Դելմարը ձևացրեց, թե չի նկատում նրա կատաղությունը, շարունակեց խնամել վիրավորին, իսկ գնդապետը դուրս եկավ սրահից, որպեսզի չպոթկա սպասուհիների ներկայությամբ և նորից կանչեց պարտիզպանին։

— Ասում ես, ի՞նչ է այն մարդու անունը, որ, քո ասելով, նման է մեր սրիկայի՞ն։

— Պարոն դը Ռամիեր։ Նա վերջերս է գնել պարոն դը Սերսիի անգլիական փոքրիկ տունը։

— Ի՞նչ մարդ է, ո՞վ է, ազնվակա՞ն, պճնամո՞լ, թե՞ գեղեցիկ տղամարդ։

— Շատ գեղեցիկ տղամարդ, և կարծում եմ՝ ազնվական...

— Երևի այդպես է,— զայրացած ասաց գնդապետը— Պարոն դը Ռամիե՞ր։ Ասա տեսնեմ, Լուի,— ավելացրեց ցածրաձայն,— երբևիցե տեսնո՞ւմ ես այդ պճնամոլին մեր տան շուրջը թափառելիս։

— Պարոն... անցած գիշեր...— պատասխանեց շվարած Լուին,— ինչ-որ ճիշտն է, տեսա մեկին... պճնամոլն էր, թե մեկ ուրիշը, չեմ կարող ասել, բայց հաստատ տղամարդ էր։

— Իսկ դու անձամբ տեսա՞ր նրան։

— Ինչպես ձեզ եմ տեսնում, ջերմոցի պատուհանների տակ։

— Եվ բահդ չիջեցրի՞ր գլխին։

— Պարոն, ուզում էի այդպես անել, բայց այդ ժամանակ ջերմոցից դուրս եկավ սպիտակ շորեր հագած մի կին և մոտեցավ այդ մարդուն։ Ես էլ մտածեցի՝ երևի լուսաբացից առաջ տեր ու տիկին որոշել են զրոսնել։ Վերադարձա քնելու։ Իսկ այս առավոտ լսեցի, որ Լբլիեվրը ինչ-որ գողի մասին է խոսում, հետաքր է նկատել այդում, հենց այդ ժամանակ էլ որոշեցի. այստեղ ինչ-որ բան մաքուր չէ։

— Թշվառական, իսկ ինչո՞ւ անմիջապես չհայտնեցիր ինձ։

— Տեր աստված, պարոն, մենք էլ ենք նրբություններից հասկանում, չէ՞. կյանքում այնքան բաներ են պատահում...

— Պարզ է, մտքովդ ինչ-որ կասկածներ ես անցկացնում։ Հիմար, եթե մեկ էլ համարձակվես այդպիսի հանդուգն դատողություններ անել, ականջներդ կկարեմ։ Ես շատ լավ գիտեմ, ով է այդ գողը և ինչու է այդի մտել։ Քեզ հարցաքննեցի, որ իմանամ՝ ինչպես ես պահպանում ջերմոցը։ Իմացի՛ր, հազվագյուտ բույսեր ունեմ, տիկինը շատ է սիրում դրանք, իսկ շատերի խելքը գնում է դրանց համար։ Նրանք մտնում են հարևանների ջերմոցները՝ բույսեր գողանալու նպատակով։ Իսկ երեկ գիշեր ի՞նձ ես տեսել տիկին Դելմարի հետ, հասկացա՞ր։

Եվ խեղճ գնդապետը հեռացավ ավելի քան շփոթված ու կատաղած, չկարողանալով պարտիզպանին համոզել, որ իրոք գոյություն ունեն մոլեռանդ բուսաբաններ, որոնք ինչ-որ հազվագյուտ տնկիի կամ շիվապատվաստի համար վտանգում են իրենց կյանքը։

Պարոն Դելմարը մտավ բիլիարդի սենյակը, ամենևին ուշադրություն չդարձնելով վիրավորին, որ վերջապես կենդանության նշաններ էր ցույց տալիս, և սկսեց խառնել աթոռին գցած բաճկոնի գրպանները, իսկ երիտասարդը, ձեռքը մեկնելով, թույլ ձայնով ասաց.

— Հարգելի պարոն, ցանկանում եք իմանալ ո՞վ եմ ես, իզուր մի տանջվեք, ամեն ինչ կասեմ, երբ մենակ մնանք։ Մինչ այդ, թույլ տվեք չհայտնել իմ անունը, հաշվի առնելով այն դժվարին և զավեշտական կացությունը, որի մեջ ընկել եմ։

— Ցավում եմ, որ այդպես է,— թունոտ պատասխանեց գնդապետը,— բայց պետք է խոստովանեմ, որ այդ հանգամանքը ինձ շատ չի հուզում։ Համենայն դեպս, հույսով եմ, որ շուտով երես առ երես կհանդիպենք, այդ պատճառով համաձայն եմ հետաձգել մեր ծանոթությունը։ Մինչ այդ, բարևհաճեք ասել, որտե՞ղ տեղափոխենք ձեզ։

— Եթե կամենաք, ամենամոտ գյուղի պանդոկը։

— Բայց պարոնն այնպիսի վիճակում է, որ չի կարելի նրան տեղափոխել, այնպես չէ՞, Ռալֆ,— իսկույն միջամտեց տիկին Դելմարը։

— Պարոնի վիճակը չափից շատ է մտահոգում ձեզ, տիկին,— ասաց գնդապետը,— դուրս եկեք բոլորդ այստեղից,—

դիմեց սպասուհիներին,— մեր պարոնը ավելի լավ է զգում իրեն և կարծում եմ՝ արդեն ուժ կունենա բացատրելու, թե ինչպես ընկավ իմ տունը։

— Այո, պարոն,— պատասխանեց վիրավորը,— և խնդրում եմ բոլորին, ովքեր բարեհաճել են օգնություն ցույց տալ ինձ, լսել հանցանքիս խոստովանությունը։ Զգում եմ, թե որքան կարևոր է արդարացնել իմ արարքը և ներկա գտնվողների կողմից արհամարհանքի չարժանանալ։ Ամենակարևորն այն է, որ իմ մասին սխալ կարծիք չստեղծվի։ Ուրեմն, իմացեք, թե ինչպիսի կանխամտածված քայլի եմ դիմել և ընկել ձեզ մոտ։ Պարոն, միայն ձեզ հայտնի արտակարգ պարզ միջոցներով դուք հիմնել եք մի ֆաբրիկա, որի արտադրանքը գերազանցում է ձեր շրջանում հիմնադրված նմանօրինակ բոլոր ֆաբրիկաների արտադրանքին։ Եղբայրս համարյա այդպիսի մի ֆաբրիկա ունի Ֆրանսիայի հարավում, բայց հումքի համար անսահման քանակությամբ միջոցներ է ծախսում։ Եղբորս գործերը վատ են, և ահա, երբ լսեցի ձեր հաջողությունների մասին, որոշեցի դալ ձեզ մոտ խորհուրդ հարցնելու, որ, մեծահոգաբար ինձ տալով, ամենևին չէիք տուժի, քանի որ եղբայրս բացարձակապես ուրիշ տեսակի ապրանք է արտադրում։ Իսկ ձեր պարտեզի կողպած դուռը անդրդվելիորեն փակ մնաց իմ առջև։ Երբ ցանկացա անձամբ հանդիպել ձեզ, պատասխանեցին, որ չեք ընդունում։ Այսպիսի անբարեհաճ մերժում ստանալով, որոշեցի կյանքիս ու պատվիս գնով փրկել եղբորս կյանքն ու պատիվը։ Գիշերը պատի վրայով անցա, մտա պարտեզ և աշխատեցի սողոսկել ֆաբրիկա ու տեսնել մեքենաները։ Որոշեցի թաքնվել մի տեղ, կաշառել բանվորներին, ձեր գաղտնիքը կորզել, մի խոսքով, նման որոշում կայացնելով, առանց վնաս հասցնելու ձեզ, ուզեցի օգնել պատվավոր մի մարդու։ Ահա իմ մեղքը։ Պարոն, եթե սրանից բացի այլ պարզաբանումներ եք պահանջում, ձեր տրամադրության տակ կլինեմ, երբ ապաքինվեմ։ Հնարավոր է, որ անձամբ դիմեմ ձեզ խնդրանքով։

— Կարծում եմ, իրարից ոչինչ չունենք պահանջելու, պարոն,— թեթևացած ասաց գնդապետը, զգալով, որ նրա պատմածները ինչ-որ չափով ցրել են ներկաների կասկածները։

ները,— դուք բոլորդ էլ լսեցիք ու վկա եք պարոնի սուտ-ներին, եթե հաշվի առնենք, որ պետք է դատաստան տեսնեի նրա հետ, այժմ գտնում եմ, որ բավականաչափ դաժան սատ-վեց այդ։ Հիմա բոլորդ դուրս եկեք և թույլ տվեք խոսենք իմ ձեռնարկության գործերի մասին։

Տառաները դուրս եկան։ Արտաքուստ հաշտությունը նրանց մոլորության մեջ գցելու միջոց էր։ Վիրավորն իր երկարա-շունչ պատմությունից թուլացած՝ անկարող էր ճիշտ ընկալել գնդապետի վերջին բառերի վրա դրված շեշտը։ Նա նորից ընկավ տիկին Դելմարի թևերին և ուշաթափվեց։ Ինդիանան կռացել էր երիտասարդի վրա, ուստի ուշադրություն չդարձ-րեց ամուսնու զայրույթին։ Պարոն Դելմարը խոժոռ էր ու բարկությունից՝ գունատված, իսկ պարոն Բրաունը սովորա-կանի պես հանդարտ էր, և հայացքն անտարբեր։ Նրանք լռել-յալն ու հարցական նայեցին իրար։

Սըր Ռալֆին բառեր պետք չէին, որ հասկանար պարոն Դելմարի վիճակը։ Գնդապետը նրան մի կողմի վրա տարավ և, ցավեցնելու աստիճան մատներով սեղմելով նրա թևը, ասաց.

— Հիանալի խարդավանք է, բարեկամս, բավարարված եմ, անսահման բավարարված. այդ երիտասարդը սրամտո-րեն կարողացավ ծառաներիս ներկայությամբ փրկել պատիվս։ Բայց, գրողը տանի, իր հասցրած վիրավորանքի դիմաց թանկ է վճարելու։ Իսկ այս կի՞նը։ Ինչպե՞ս է խնամում նրան և ձևացնում, թե բոլորովին չի ճանաչում սրան... Օ՜, խորամանկություն, որ ի ծնե բույն ես դրել կանանց հոգում... — և զայրույթից կրճտացրեց ատամները։

Սըր Ռալֆը, ցնցված, համաչափ քայլերով երեք անգամ պտույտ գործեց դահլիճում։ Առաջին պտույտից հետո հան-գեց հետևյալ եզրակացության. անհավանական է, երկրորդից՝ անկարելի է, իսկ երրորդից հետո՝ ապացուցվեց։ Այ-նուհետև իր մշտական սառը դիմագծերով վերադարձավ գնդ-ապետի մոտ և մատով ցույց տվեց Նունին, որ կանգնած էր հվանդի հետևում՝ ձեռքերը կոտրատելով, սարսափած հա-յացքով, գունատված, ամբողջովին հուսահատ, ահաբեկված ու մոլորուն։

Իրողությունն այնքան կայծակնային ու անողոք համոզ-չականություն էր ամփոփում իր մեջ, որ սըր Ռալֆի ոչ մի պերճախոսությունը նման ներգործություն չէր ունենա, ինչ-պես այդ շարժումը։ Պարոն Բրաունն ըստ երևույթին ուրիշ հիմքեր էլ ուներ մտածելու, որ ճիշտ ուղու վրա է։ Նա հիշեց, թե ինչպես Նունը դուրս թռավ այգուց, երբ կանչեց նրան, հիշեց նրա թաց մազերը, խոնավ ու ցեխոտ կոշիկները, որոնք վկայում էին անձրևի տակ կատարած անսովոր զբո-սանքի մասին և այլ մանրուքներ, որոնք այնքան էլ չէին գրավել սըր Ռալֆի ուշադրությունը տիկին Դելմարի ուշա-գնացության ժամանակ, իսկ հիմա դրանք վերակերտվում էին հիշողության մեջ։ Հետո նրա անհասկանալի վախը, շղային հուզումները և արձակած ճիչը, երբ լսել էր հրացանի կրա-կոցը...

Պարոն Դելմարն այլևս ոչ մի նշանախոսության չէր հե-տևում։ Ավելի քան խորամուխ լինելով իր հետամտություն-ների մեջ, սկսեց միայն Նունով հետաքրքրվել։ Բավական եղավ մի հայացք գցել այդ աղջկա վրա, հասկանալու հա-մար, որ միակ մեղքը նրանն է։ Բայց և այնպես իր կնոջ ուշադրությունը այդ արկածախնդիր գեղեցիկ հերոսի հանդեպ ավելի ու ավելի տհաճ էր դառնում նրա համար։

— Ինդիանա,— դիմեց նա կնոջը,— գնացեք ձեր սենյակը, ուշ է, մանավանդ, լավ չեք զգում։ Նունն այս գիշեր կմնա պարոնի մոտ և կխնամի նրան, իսկ եթե վաղը երի-տասարդը իրեն ավելի լավ զգա, կմտածենք, ինչպես տուն հասցնել նրան։

Այդ որոշմանն ընդդիմանալը ավելորդ էր։ Տիկին Դել-մարը, սովորաբար ամուսնու կոպտությանը հակադրվելու համար իր մեջ ուժ գտնում էր, բայց մշտապես զիջում էր նրան, երբ նրբորեն էր վերաբերվում իր հետ։

Ինդիանան խնդրեց սըր Ռալֆին մի քիչ էլ մնալ հիվանդի մոտ, իսկ ինքը վերադարձավ իր սենյակը։

Գնդապետի որոշումն անսպասելի չէր։ Մեկ ժամ հետո, երբ բոլորը քնել էին, և տունն ամբողջությամբ խորասուզ-վել էր լռության մեջ, անձայն մտավ պարոն Ռամիերի պառ-կած սենյակը, թաքնվեց վարագույրի հետևում ու սկսեց դրեց երիտասարդի և սպասուհու խոսակցությանը. այդ ժա-

մանակ միայն համոզվեց, որ նրանք սիրում են իրար։

Երիտասարդ կրեոլուհու անսովոր գեղեցկությունը շատերին էր հրապուրել և մեծ ազդեցություն թողել գյուղական տոնահանդեսի ժամանակ։ Շատերն էին պտտվել նրա շուրջը, նույնիսկ շրջանի ամենաաչքի ընկնող երիտասարդները։ Մելյունի տեղական կայազորի հեծելազորային գնդի շատ գեղեցիկ նետաձիգ սպաներ աշխատել էին դուր գալ նրան, բայց Նունը իր առաջին սիրո արբունքի մեջ միայն մի հոգու ուշադրությունն էր թանկ գնահատել՝ պարոն դը Ռամիերինը։

Գնդապետ Դելմարը կարիք չուներ մինչև վերջ հետևելու նրանց։ Իսկույն հեռացավ թաքստոցից, երբ համոզվեց, որ իր կինը մեկ վայրկյան անգամ չէր հետաքրքրել այդ արկածախնդիր Ալմավիվային*։ Բայց և այնպես, լսածն էլ բավական էր, որ նա զգար այդ երկու սիրող սրտերի միջև եղած տարբերությունը. խեղճ Նունը ամբողջ հոգով, իր բուռն, կրակոտ էությամբ ու եռանդով նվիրվել էր նրան, իսկ ազնվական ծագումով այս երիտասարդը, որ բանականությունը չէր կորցնում իրականության հանդեպ, այս սիրավեպին նայում էր իբրև ժամանակավոր հաճույքի։

Տիկին Դելմարն արթնացավ և Նունին տեսավ իր անկողնու մոտ շփոթված ու տխուր։ Ինդիանան միամտորեն հավատացել էր պարոն դը Ռամիերի բացատրությանը, քանի որ մինչ այդ էլ շատ առևտրականներ փորձել էին զարտուղի ճանապարհներով կամ խաբեությամբ թափանցել Դելմարի ֆաբրիկայի գաղտնիքի խորքերը։ Այդ պատճառով սպասուհու անհանգստությունը վերագրեց գիշերվա հուզումներին և հոգնածությանը։ Նունը շատ ավելի հանգստացավ, երբ գնդապետը բարեհամբույր և ուրախ տեսքով մտավ կնոջ սենյակը և խոսեց նախորդ օրվա դեպքի մասին որպես ամենասովորական երևույթի։

Վաղ առավոտյան սրբ Ռալֆը քննեց հիվանդին և համոզվեց, որ վիճակը բարվոք է։ Պարոնը, ճիշտ է, բարձր տեղից էր ընկել, բայց հետևանքը ծանր չէր, իսկ ձեռքի վերքը փակվել էր։ Պարոն դը Ռամիերը ցանկություն հայտնեց անմիջապես տեղափոխվել Մելյուն։ Նա քսակի պարունակությունն ամբողջությամբ բաժանեց ծառաներին՝ խնդրելով պատահածի մասին լռություն պահպանել, որպեսզի, ինչպես ինքն էր ասում, մի քանի վերստ հեռավորության վրա ապրող մայրը չվախենար։ Համենայն դեպս, այս դեպքը հայտնի դարձավ ավելի ուշ, այլևայլ վարկածներով։ Երբ իմացվեց, որ նրա եղբայրը, ոմն պարոն դը Ռամիեր, իրոք անգլիական ֆաբրիկայի տեր է, հաստատվեց նրա հրաշալի հնարանքը։ Գնդապետն ու սրբ Բրաունը նրբանկատորեն լռեցին և նույնիսկ ցույց չտվին Նունին, որ գիտեն նրա գաղտնիքը։ Իսկ դրանից հետո Դելմարի տանը շատ շուտով մոռացվեց այս միջադեպը։

Գլուխ IV

Շատերին գուցե տարօրինակ թվա այն փաստը, թե պարոն Ռեյմոն դը Ռամիերը՝ ճարտարամիտ, տաղանդավոր, ամեն տեսակ բարեմասնություններով օժտված այդ երիտասարդը, որն իր հաջողություններով մշտապես աչքի էր ընկնում բարձր հասարակության մեջ, իսկ սիրային արկածները նրա անբաժան ուղեկիցն էին, Բրիի հասարակ արդյունաբերողի համեստ տան սպասուհու հանդեպ սիրո անկեղծ զգացմունք տածեր։ Այնուամենայնիվ, պարոն դը Ռամիերը ոչ ինքնահավան, ոչ էլ անառակ պճնամոլ էր, և, ինչպես նշեցինք, նա խելացի էր, սուր մտքի տեր, հետևաբար, տեղին արժեքավորել գիտեր բնածին շնորհքները և բարձր դասի մարդկային բնավորության գծերի առավելությունները։ Նա նույնիսկ սկզբունքային էր, երբ ինքնուրույն գատողություններ էր անում, բայց ժամանակ առ ժամանակ բռնկվող սիրո կիրքը հաճախ էր նրան շեղում սկզբունքայնությունից։ Այդպիսի պահերին նա այլևս ի վիճակի չէր ճիշտ գատել և աշխատում էր խեղդել իր մեջ խղճի ձայնը։ Իրենից անկախ սխալներ էր թույլ տալիս, այնուհետև փորձում էր ինքնախաբեության դիմել և արդարացնել ինքն իրեն։ Դժբախտաբար նրա բնավորության ամենացայտուն գիծը սկզբունքայնությունը չէր, որը հատուկ է սպիտակ ձեռնոց-

* Ալմավիվա — Բոմարշեի հերոսներից՝ «Սևիլյան սափրիչ», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Մեղավոր մայրը» ստեղծագործություններում։ Հաճոյատես, խելացի ու եսասեր աշնվականի կերպար (Ծ. թ.)։

ներ հագած մի շարք փիլիսոփաների, որոնք նույնպես տառապում են անհետևողականությամբ, իրենց արարքներով, իսկ Ռամիերի կիրքը չէր կարող ենթարկվել սկզբունքներին. դրանով իսկ առանձնանում էր այն անգույն հասարակությունից, ուր չէր կարելի ինքնատիպ լինել առանց ծիծաղելի երևալու։ Ռեյմոնը ինչ-որ յուրահատուկ շնորհով էր օժտված. նա հաճախ էր մեղավորի դերում հանդես գալիս, բայց ոչ ատելի դառնալու գնով, երբեմն տարօրինակ էր պահում իրեն, բայց տհաճ զգացումներ չէր առաջացնում իր հանդեպ։ Հաճախ նրան հաջողվում էր իր անձի շուրջ բողոքի ալիքներ բարձրացնել այն մարդկանց մոտ, ովքեր ամենից շատ իրավունք ունեին բողոքելու նրանից։ Լինում են այդպիսի հաջողակներ, որոնք շատ են շփանում, երբ հասնում են իրենց ուզածին։ Հաճելի արտաքինն ու պերճախոսությունը երբեմն փոխարինում են բարեսրտությանը։ Մենք հավակնություն չունենք դատապարտել պարոն Ռեյմոն դը Ռամիերին, ոչ էլ նրա նկարագիրը տալ նախքան նրա արարքներին ծանոթանալը։ Առայժմ հարևանցիորեն նայենք նրան, ինչպես ամբոխն է նայում անցորդին։

Եվ այսպես, պարոն դը Ռամիերը սիրահարվել էր խոշոր, սևաթույր աչքերով երիտասարդ կրեոլուհուն, որը Ռուբելիում, տոնակատարության ժամանակ հիացմունք էր պատճառել ամբողջ գավառի բնակիչներին։ Սակայն դա սոսկ հրապուրանք էր, ուրիշ ոչինչ։ Հավանաբար, աղջկա հետ ծանոթացել էր պարապմունքից մղված, բայց դյուրությամբ ձեռք բերած հաջողությունը բոցավառել էր նրա ցանկասիրությունը։ Նա իր ակնկալածից ավելին էր տիրացել և օրիորդի դյուրաբեկ սիրտը նվաճելու օրն իսկ, վերադառնալով տուն, սարսափել էր տարած հաղթանակից ու սկսել էր անհանգստացած մտածել. «Իսկ եթե հանկարծ սիրահարվի»։

Աղջկա սիրո ապացույցներն ունենալուց հետո միայն Ռամիերն սկսեց հասկանալ նրա զգացմունքի խորությունը։ Այդ ժամանակ էլ զղջաց պատահածի համար, բայց արդեն ուշ էր։ Հարկավոր էր հաշտվել ապագայի ու նրա բոլոր հետևանքների հետ կամ ստորաբար հետ քաշվել։ Ռեյմոնը չվարանեց. [Թույլ տվեց, որ աղջիկը սիրի իրեն և, երախտագիտության զգացումից մղված, ինքն էլ սիրեց։] Վտանգն աչքի առջև

ունենալով՝ մագլցեց Դելմարի պարտեզի պատերի վրայով, իր իսկ ձախորդության պատճառով ընկավ ու ծանր վիրավորվեց։ Ռեյմոնին ուժեղ ցնցեց գեղեցիկ ու երիտասարդ սիրուհու վիշտը, և, լիովին արդարացնելով ինքն իրեն, շարունակեց փորել այն անդունդը, որի մեջ պլորելու էր Նունին։

Հենց որ ապաքինվեց, այլևս ոչ մի խոչընդոտի առջև չկանգնեց. ոչ ձմռան ճքճքան ցուրտը, ոչ գիշերային վտանգները, ոչ տանջալի խղճի խայթը, ոչինչ, ոչինչ չխանգարեցին նրան, որպեսզի անցներ անտառը, հասներ իր կրեոլուհուն ու երդվեր, թե միմիայն նրան է սիրում, որ աշխարհի ոչ մի թագուհու հետ չի փոխի Նունին և հազար ու մի հավատիացումներ, որոնք միշտ էլ հաճելի են եղել չքավոր ու դյուրահավատ երիտասարդ աղջիկներին։

Հունվար ամսին տիկին Դելմարն ամուսնու հետ մեկնեց Փարիզ։ Սըր Ռալֆ Բրաունը՝ նրանց հարգարժան հարևանը, տեղափոխվեց իր սեփական կալվածքը, իսկ Նունը, դառնալով տիրոջ գավառական տան միանձնյա ղեկավարը, ազատություն ստացավ զանազան պատճառաբանություններով բացակայելու տնից։ Հենց դա էլ նրա դժբախտության պատճառը դարձավ։ [Սիրեկանի հետ հեշտությամբ ձեռք բերված տեսակցությունները ակնառու կերպով կրճատեցին ճաշակելիք երկարատև երջանկությունը։] Անտառն իր պոեզիայով, ցողազարդ ծաղիկները, լուսնի խաղերը, խորհրդավոր զրոնակը, վաղ առավոտյան գաղտնի փախուստները, Նունի փոքրիկ ոտքերի դրոշմած հետքերը այգու ձյան վրա՝ եռգարձի ճանապարհին, սիրային գաղտնի հնարքների բոլոր մանրուքները՝ այդ ամենը սաստիկ արբեցրին պարոն դը Ռամիերին։ Իրանը գրկած ճերմակ հագուստով, երկար, թափվող սև մազերով Նունը իսկապես նման էր միջնադարյան ազնվական տիկնոջ, թագուհու, դիցանուշի։ Երբ դուրս էր գալիս կարմիր աղյուսե տնից՝ միապետության շրջանի ոճով կառուցված ծանր, քառակուսի մի շինությունից, որ ասպետական դարաշրջանի ճարտարապետական ոճավորումով պալատ էր հիշեցնում, Նունն իրոք պարոն դը Ռամիերին միջնադարյան դղյակի տիրուհի էր թվում, և տարաշխարհիկ ծաղիկներով լեփ-լեցուն տաղավարում, որտեղ Նունը արբեցնում էր նրան իր երիտասարդությամբ ու կրքով, Ռամիերն իսկապես

մոռանում էր այն բոլոր հետևանքները, որ հիշելու էր ավելի ուշ։

Սակայն, երբ զգուշությունը զանց առած ու իր հերթին արհամարհելով վտանգները, Նունն սկսեց նրա մոտ գնալ ճերմակ գոգնոցով, պշրանքով գլխին կապած ազգային գլխաշորով, Ռամիերի աչքում վերածվեց նաժիշտի, դեռ ավելին, գեղեցիկ կնոջ նաժիշտի, որը կարող է քլով բավարարվել։ Բայց և այնպես Նունը շատ գեղեցիկ էր. այս տեսքով էր պարոն դը Ռամիերը տեսել նրան առաջին անգամ գյուղական տոնակատարության ժամանակ, երբ, ճեղքելով հետաքրքրասերների ամբոխը, մոտեցել էր Նունին և առաջին փոքրիկ հաղթանակը տանելով՝ պոկել էր նրան քսան հակառակորդի ձեռքից։ Մի անգամ չէ, որ Նունը քնքշանքով հիշեցնում էր այդ օրվա մասին։ Խեղճ աղջիկ, նա կասկած անգամ չուներ, որ Ռեյմոնի սերը արմատներ չէր գցել, իսկ այդ օրվա մասին, որով այնքան հպարտանում էր Նունը, Ռեյմոնը հիշում էր ինքնագոհ փառասիրությամբ։ Եվ հետո, զոհաբերելով իր բարի անունը, Նունը կարծում էր, թե դրանով ավելի սիրելի կդառնա Ռեյմոնին, բայց իրականում նա անվանարկեց իրեն, իսկ դա ոչնչով չօգնեց պարոն դը Ռամիերի զգացմունքների խորացմանը և ամենևին դուր չեկավ նրան։ Եթե ֆրանսիացի որևէ բարձրաստիճան տղամարդու կինը նույն ձևով զոհաբերեր իրեն, ապա դա կդիտվեր որպես թանկարժեք նվաճում, բայց նաժի՞շտը... [Այն, ինչ հերոսություն է համարվում մեկի կողմից, ամբարտավանություն է մյուսի համար։] Առաջիններին կնախանձի հակառակորդների մի խանդոտ ամբոխ, երկրորդին կդատապարտի գայթակղված սենեկապանների մի խումբ։ Բարձրաստիճան կինը հանուն ձեզ կարող է զոհաբերել իր քսան սիրեկաններին, իսկ նաժիշտը միայն մեկին կարող է զոհ դարձնել՝ իր ապագա ամուսնուն։

Ինչ արած, նրբին կյանքին սովոր, ազնվակիրթ բարքերով և բանաստեղծական սիրով տոգորված Ռեյմոնը պատկանում էր աշխարհիկ դասին։ Սեփական վաստակով օրվա ապրուստը հայթայթող հասարակ կինը Ռեյմոնի համար կին չէր։ Նունը այդ օրը նրան փրկել էր իր արտասովոր գեղեցկության շնորհիվ, և Ռեյմոնը ցանկացել էր այդ աղջկա հետ

զվարճանալ միայն ժողովրդական տոնակատարության ժամանակ։ Կատարվածի համար Ռեյմոնը մեղավոր չէր. նրան բարձրաշխարհիկ կյանքի համար էին դաստիարակել, նրան ներշնչել էին, որ ինքը ստեղծված է միայն այդ կյանքի համար, բոլոր կարողությունները շաղախված էին արքայավայել երջանկության համար, բայց անկախ իրենից երակներում եռացող արյունը նրան նետեց քաղքենիական սիրո գիրկը։ Նա ամեն միջոցի դիմեց, որ այդ զգացմունքից միայն արտաքին անցողիկ հաճույք քաղեր, բայց չհաջողվեց։ Ինչ անել այժմ։ Երբեմն մեծահոգաբար խորհում էր, բայց այդ անհեթեթ մտքերը հաճախակի գալիս էին ու անցնում ուղեղով։ Ժամանակ եղավ, որ խիստ տարվեց սիրուհիով և բազմիցս մտածեց բարձրացնել նրան իր աստիճանին, օրինականացնելով իրենց կապը... Այո, ազնիվ խոսք, այդպես էր մտածում, բայց քանի որ սերն է ամեն ինչ օրինականացնում, այժմ այդ նույն սերը սկսել էր նվազել և ընթանում էր վտանգավոր արկածախնդրության ու սրացող խորհրդավորության հետքերով, որից հետո այլևս ոչ մի օրինական առագաստի մասին խոսք լինել չէր կարող։ Եվ, ուշադրություն դարձրեք, Ռեյմոնը ճիշտ էր դատում, դատում էր. սիրուհու օգտին։

Եթե նա իրոք անկեղծ սիրով սիրեր աղջկան, թերևս կարողանար հանուն այդ սիրո զոհաբերել իր ապագան, ընտանիքը և հեղինակությունը, երջանկանար նրա հետ, հետևաբար աղջկան էլ երջանկացներ։ Որովհետև սերը նույնպիսի դաշինք է, ինչպես ամուսնությունը։ Բայց ինչպիսի կյանք պիտի ստեղծեր նա այդ կնոջ համար, եթե սառել էր նրանից։ Ամուսնանար նրա հետ, որպեսզի այդ խեղճ աղջիկը տառապե՞ր, ամեն օր տեսնելով նրա տխուր դեմքը, վհատ տեսքը, իր օջախը տաղտկալի՞ դարձներ։ Ամուսնանար, որ իր ընտանիքի անդամները ոչնչացնեի՞ն իր սիրեցյալին, որպեսզի սպասավորները արհամարհե՞ն նրան, համարձակվեր նրան ներկայացնել այն հասարակությանը, ուր նա օտա՞ր էր զգալու իրեն, չէ՞ որ այդ ստորացումները կսպանեին նրան, խղճի խայթից կտանջվեր, զգալով այն բոլոր ցավերը, որ պատճառել էր իր սիրեցյալին։

Եկեք անվիճելիորեն համաձայնենք նրա հետ, իրոք, անհնար էր, դա Ռեյմոնի կողմից ամենևին մեծահոգություն

չէր համարվելու, անհնար էր այդ ձևով պայքարել հասարակության դեմ, այսպիսի բարեգործ հերոսությունը նման կլիներ Դոն Կիխոտի մենամարտին, որը տեգը փշրել էր հողմաղացի թևերի վրա. դա քամու դիմաց խորտակվող անդրդվելի ուժի նման մի բան կլիներ, անցած դարերի ասպետության նման մի բան, որ մեր օրերում արժանի է միայն խղճահարության։

Այս ամենը հավասարակշռելով, պարոն դը Ռամիերը հանգեց հետևյալ եզրակացության. հասել է այդ կործանարար կապը խզելու ժամանակը։ Նունի այցելություններն սկսել էին անհանգստացնել նրան։ Մայրը ձմեռը Փարիզում էր անցկացրել և անխուսափելիորեն պիտի իմանար այս փոքրիկ միջադեպի մասին։ Նա արդեն զարմանում էր, թե ինչու էր որդին այդքան հաճախակի այցելում Սերսիի իրենց ամառանոցը և շարաթներով մնում այնտեղ։ Թեպետ որդին պատճառաբանում էր, թե իբր հույժ կարևոր աշխատանք ուներ ավարտելու քաղաքի աղմուկից հեռու, գյուղական անդորրում, սակայն այդ պատճառաբանությունը ճշմարտանման չէր հնչում։ Նրա մայրը բարի կին էր, և նրան խաբելը, ինչպես նաև երկար ժամանակ նրան իր խնամքից զրկելը ծանր էր անդրադառնում Ռեյմոնի վրա։ Ի՞նչ արած, նա հեռացավ Սերսիից և այլևս չվերադարձավ։

Նունը լաց էր լինում, սպասում, հուսահատվում և, տեսնելով, որ ժամանակը հոսում է, համարձակություն ունեցավ գրել նրան։ Ա՜խ՝ ղե աղջիկ, վերջին հարվածն էլ ստացավ։ Սպասումս նամա՜կ։ Չնայած տիկին Դելմարի դարակից վերցրել էր նամակի փայլուն թուղթ և անուշաբույր զմուռս, չնայած նամակը նրա սրտի ճիշն էր, բայց... ուղղագրությո՜ւնը։ Գիտե՞ք արդյոք, մարդու զգացումների արտահայտման վրա ինչպիսի ներգործություն կարող է ունենալ մի ավելորդ վանկ։ Ավա՜ղ, Բուրբոն կղզու կիսագրագետ աղջիկը քերականական կանոններից գաղափար անգամ չուներ։ Նրան թվում էր, թե տիրուհու պես ազատ խոսում ու գրում է, և երբ տեսավ, որ Ռեյմոնը չի գալիս, մտածեց. «Իսկ նամակը շատ գեղեցիկ էր գրված, ինչո՞ւ չի գալիս»։

Ռեյմոնը քաջություն չունեցավ մինչև վերջ կարդալու նամակը։ Գուցե այն միամիտ, հուզիչ ու շնորհալի սիրո խոստովանության գլուխգործո՞ց էր։ Վերժինեն, հավանաբար, հայրենիքից հեռանալիս ավելի գեղեցիկ նամակ չէր գրել Պոլին*... Պարոն դը Ռամիերը շտապեց այրել այն, վախենալով ինքն իրենից ամաչել։ Նորից եմ կրկնում. ի՞նչ կարող ես անել, այս ամենը դաստիարակության արդյունք է, իսկ ինքնասիրությունը երևան է գալիս սիրո առկայությամբ, ինչպես անձնական շահադրդվածությունը՝ բարեկամությամբ։

Պարոն դը Ռամիերի բացակայությունն զգալի էր բարձր հասարակության մեջ։ Իսկ դա արդեն, ինքնըստինքյան, շատ բան է ասում, մանավանդ այնպիսի հասարակության մեջ, ուր բոլորն իրար նման են ջրի երկու կաթիլի պես։ Հնարավոր է խելացի մարդ լինել և գնահատել աշխարհիկ կյանքը, ինչպես նաև հնարավոր է լինել հիմար և արհամարհել այն։ Ռեյմոնը սիրում էր այդ կյանքը և իրավացի էր. նա գնահատված էր և դուր էր գալիս բոլորին։ Այդ անտարբեր կամ այպանող դիմակավոր ամբոխը նրա հանդեպ ուշադիր էր ու սիրալիր։ Դժբախտները կարող են հեշտությամբ մարդատյաց դառնալ, բայց նրանք, ովքեր սիրված են՝ հազվադեպ են ապերախտ լինում։ Վերջին հաշվով, Ռեյմոնը մտորում էր դրա մասին։ Նա երախտապարտ էր յուրաքանչյուր փոքրիկ ուշադրության դիմաց, ջանում էր արժանանալ բոլորի հարգանքին և հպարտ էր շատ բարեկամներ ունենալու համար։

Աշխարհիկ հասարակության մեջ, որի կանխակալումները բացարձակ են, նրա մոտ ամեն ինչ հաջողությամբ էր պսակվում, նույնիսկ կատարած սխալները, և երբ փնտրում էր մշտապես իրեն սատար կանգնած այդ համատարած սիրո պատճառները, հանկարծ հայտնաբերեց, որ դրանք իր արյան մեջ են, դրանք ձեռք բերելու ցանկության մեջ, իր զգացած ուրախության մեջ, այն հուժկու մարդասիրության մեջ, որ շռայլում է անսպառ ձևով։

Բարձր հասարակության մեջ ունեցած իր հաջողության համար պարտական էր նաև մորը, որի ակնհայտ մտային կարողությունները, գրավիչ զրույցները և հոգեկան հարբուտությունը առանձնացնում էին նրան մնացած բոլոր կանան-

* «Պոլ և Վերժինե»— Բեռնարդեն դը Սեն-Պիերի հայտնի մի սիրավեպ, որտեղ նկարագրված է երկու երիտասարդների մաքուր սերը (Ս. Բ.)

ցից։ Նրանից էր ժառանգել այդ հրաշալի բարոյական սկզբունքները, որ մշտապես ուղեկցում էին նրան ճիշտ ճանապարհով և թույլ չէին տալիս, չնայած իր քսանհինգամյա երիտասարդի մոլեգնությանը, վանել հասարակության հարգանքը։ Ճշմարիտ է, որ նրա նկատմամբ ավելի մեծահոգի էին, քան այլոց հանդեպ, քանի որ մայրը տիրապետում էր այսպիսի մի արվեստի. որդուն հանդիմանելով հանդերձ, միաժամանակ արգարացնում էր նրան, ներողամտություն էր պահանջում նրանից, ձևացնելով, թե հայցում է։ Նա այն կանանցից էր, որի կյանքն անցել է պատմական իրարից խիստ տարբեր ժամանակահատվածներում, իսկ նման մարդկանց մոտ, ճակատագրի բերումով, դատողությունը խիստ ճկուն է, և ներքնապես հարստանում են ծանր փորձությունների միջ։ Նա խույս էր տվել 1793 թվականի կախաղաններից, Դիրեկտորիայի արատներից, Իշխանության սնապարծություններից, Ռեստավրացիայի ոխակալությունից։ Նա այն հազվագյուտ կանանցից էր, որոնց թիվը գնալով նվազում էր ու նվազում։

Իսպանիայի դեսպանի կազմակերպած պարահանդեսի օրը Ռեյմոնը դարձյալ մուտք գործեց հասարակության մեջ։

— Պարոն դը Ռամիերն է, եթե չեմ սխալվում,— ասաց մի գեղեցիկ կին հարևանուհուն։

— Ասուպի նման մերթ ընդ մերթ հայտնվում է,— պատասխանեց վերջինս,— մի ամբողջ հավերժություն կլինի, որ չենք լսել այս գեղեցիկ երիտասարդի մասին։

Այդ տոնով արտահայտվողը օտարերկրացի մեծահասակ մի կին էր։ Նրա խոսակիցը թեթևակի շիկնեց։

— Շատ հաճելի անձնավորություն է, այնպես չէ՞, տիկին։

— Ազնիվ խոսք, հրապուրիչ անձնավորություն է,— ասաց պառավ սիցիլուհին։

— Գրաղ կգամ, որ խոսում եք մեր առանձնաշնորհյալ սալոնների հերոսի՝ թխահեր Ռեյմոնի մասին,— ասաց գեղեցկատես մի գնդապետ։

— Նկարելու արժանի շատ գեղեցիկ գլուխ ունի,— շարունակեց երիտասարդ կինը։

— Գուցե ձեզ ավելի շատ դուր են գալիս այդ գլխի մի-

ջով անցնող մտքե՞րը, ինչ ուզում, այն էլ անում է,— ասաց գնդապետը։

Երիտասարդ խոսակցուհին գնդապետի կինն էր։

— Ի՞նչ է նշանակում այդ գլխի միջով անցնող մտքերը,— հարցրեց օտարական կինը։

— Սրանք հարավին հատուկ կրքոտ մարդիկ են, տիկին, և արժանի են Պալերմայի գեղեցիկ արևին։

Մի քանի երիտասարդ կանայք ծաղիկներով զարդարված գլուխներն առաջ ձգեցին՝ լսելու, թե ինչ էր ասում գնդապետը։

— Այս տարի նա բավական մեծ հարված հասցրեց մեր ռազմական կայազորի սպաներին,— շարունակեց նա,— մենք՝ գինվորականներս, ստիպված ենք վիճելու առիթներ որոնել՝ նրանից ազատվելու համար։

— Եթե նա Լովելաս* է, ավելի վատ,— նկատեց ծաղրական հայացքով մի կին,— տանել չեմ կարող այն մարդկանց, որոնց սիրում են բոլորը։

Իտալացի կոմսուհին մի քանի վայրկյան սպասեց, մինչև գնդապետը հեռանար իրենց մոտից և, հովհարով թեթևակի հարվածելով օրիորդ դը Նանժիի մատներին, ասաց.

— Այդպես մի խոսեք, դուք չգիտեք, թե մեր հասարակության մեջ որքան բարձր է գնահատվում այն տղամարդը, որ ցանկանում է սիրված լինել։

— Ուրեմն դուք գտնում եք՝ բավական է այդ մարդիկ ցանկանան, և հաջողությունը պատրաստ է...— պատասխանեց նշած, ծիծաղկոտ աչքերով երիտասարդ աղջիկը։

— Օրիորդ,— ասաց գնդապետը, որ մտանում էր նրան պարի հրավիրելու,— զգուշացնեք, գեղեցիկ Ռեյմոնը կարող է լսել ձեզ։

Օրիորդ դը Նանժին ծիծաղեց, բայց մնացած ամբողջ երեկոյի ընթացքում ընտրանիների խումբը, որի մասն էր կազմում նաև վերջինս, այլևս չհամարձակվեց խոսել դը Ռամիերի մասին։

---

* Լովելաս — XVII դարի անգլիացի բանաստեղծ և դրամատուրգ, որը պալատում հմայքի տեսակ էր վաստակել (Ծ. Բ.)

Գլուխ V

Պարոն դը Ռամիերը առանց տհաճության և նողկանքի նորից մխրճվեց հանդիսավոր, փողփողուն զգեստներով ամբոխի աշխարհը։

Այնուամենայնիվ նա ոչ մի կերպ չհաղթահարեց իր տրխրությունը։ Վերստին մուտք գործելով իր սովորական միջավայրը, հոգում խղճի խայթ արթնացավ՝ ամաչելով այն խելացնոր մտքերից, որ անարժան սիրո պատճառով էր ունեցել։ Նայում էր լույսերի ներքո կանանց փայփլող զգեստներին, լսում էր նրանց նուրբ ու խելամիտ զրույցները, թե ինչպես էին գովաբանում տաղանդի իրենց հատկանիշները, և այս հրաշալի ընտրանու մեջ, արքայական այս զարդարանքների մեջ, համեմված խոսակցությունների մեջ՝ նա ամեն վայրկյան, ամեն քայլափոխի հանդիմանում էր իրեն, որ մեղանչել է իր բախտի դեմ։ Սակայն, ամոթից բացի, Ռեյմոնին տանջում էր ավելի ճշմարիտ խղճի խայթը, քանի որ նրա սիրտը, որքան էլ քարացած լիներ, կանացի արցունքների դեմ անտարբեր չէր։

Այդ օրվա երեկույթին ամեն տեսակի պատիվ ու հարգանք շնորհված էր բոլորին անծանոթ մի երիտասարդ կնոջ, որն հատկապես այդ հասարակության մեջ, իր հայտնությամբ, ուշադրության էր արժանացել։ Միայն նրա հարդարանքի համեստությունը բավական էր, որ ցայտուն կերպով առանձնացներ նրան մյուս կանանցից, որոնք ոտքից գլուխ զարդարված էին ադամանդներով, փետուրներով ու ծաղիկներով։ Նրա միակ հարդարանքը սև վարսերի մեջ հյուսված մարգարտաշարերն էին։ Սպիտակաթույր վզնոցը՝ մետաքսե հագուստի և մերկ ուսերի անփայլ ճերմակության հետ, որոշ հեռավորության վրա միախառնվում էին, իսկ սրահներում իշխող ջերմությունը հալիվ նշմարվող նուրբ երանգ էր հաղորդում նրա այտերին, որը նման էր ձյան վրա բացված բենգալյան վարդի։

Չափազանց փխրուն, մանրակազմ, նրբակերտ, հմայիչ էակ էր նա, սալոնային գեղեցկություն, որը մոմերի պայծառ լուսավորության ներքո դառնում էր հեքիաթային, իսկ արևի շողը կխամրեր նրա ներկայությունից։ Այնքան թեթև էր պա-

ռում, որ թվում էր՝ քամու շունչը կարող է թռցնել նրան։ Բայց այդ թեթևությունը նաև անկյանք էր, հաճույք պարգևելուց զուրկ։ Նստած դիրքում կորացած էր, կարծես չափից դուրս փխրուն մարմինը ուժ չուներ նրան պահելու, իսկ երբ խոսում էր, և՛ ժպիտ կար դեմքին, և՛ տխրություն։ Երևակայական հեքիաթներն այդ ժամանակաշրջանում մեծ հաջողություն ունեին իրենց թարմությամբ։ Գրական այս ժանրի հմուտ հեղինակները երիտասարդ կնոջը համեմատում էին կախարդական աշխարհից ոգեկոչված հրաշալի հայտնության հետ, որ երազի նման կարող է գունատվել ու ցնդել այն պահին, երբ հորիզոնը սկսում է ճերմակել արևի առաջին ճառագայթների ներքո։

Տղամարդիկ հավաքվեցին նրա շուրջը՝ պարի հրավիրելու համար։

— Շտապեք,— ասաց իր ընկերոջը մի ռոմանտիկ երիտասարդ,— աքաղաղները շուտով կկանչեն, իսկ ձեր պարուհու ոտքերն այլևս հատակին չեն դիպչում։ Գրազ կգամ, որ արդեն չեք էլ զգում նրա ձեռքերի հպումը։

— Նայեցեք պարոն դը Ռամիերի թխորակ ու ինքնատիպ դեմքին,— ասաց արվեստագետ մի կին իր հարևանին,— անվիճելի է, չէ՞, որ նրա առնական կերպարանքը հրաշալի կերպով ընդգծվում է այդ դալուկ ու փոքրամարմին էակի կողքին։

— Այդ երիտասարդ կինը,— ասաց պարահանդեսի մասնակցուհիներից մեկը, որ բոլորի մասին տեղեկություն ուներ և հավաքների ժամանակ տեղեկատուի դերում էր հանդես գալիս,— խելագար Քարվախալի աղջիկն է, այն Քարվախալի, որը ցանկացավ արմատախիլ անել հովսեփականներին և, անանկանալով, գնաց Բուրբոն կղզում մեռնելու։ Այս նրբաբազեղ տարաշխարհիկ ծաղիկը, կարծում եմ, բավական հիմար ընտրություն կատարեց ամուսնության հարցում, իսկ նրա հորաքույրը ներկայումս արքունիքում պատվավոր տեղ է գրավում։

Ռեյմոնը մոտեցավ գեղադեմ կրեոլուհուն։ Տարօրինակ զգացում էր համակում նրան ամեն անգամ, երբ նայում էր այդ կնոջը։ Նա կարծես երազում արդեն տեսել էր այս գունատ ու տխուր դեմքը, բայց վստահ էր նաև, որ հանդիպել

է ինչ-որ տեղ։ Հայացքն այնպիսի գորովանքով էր իջնում Ինդիանայի դեմքին, ինչպիսին արտահայտում է սրտամոտ կերպարի հայտնության ժամանակ այն մարդը, որ կարծում է, թե ընդմիշտ կորցրել է նրան։ Ռեյմոնի համակ ուշադրությունը խռովեց այդ էակի հոգին, երբ զգաց իր վրա սևեռած հայացքը։ Համեստ, ամոթխած տեսքով, որպես այդ միջավայրին անսովոր կին, նա ավելի շուտ նեղվում էր, քան ուրախանում իր հաջողությամբ։ Ռեյմոնը սրահում մի պտույտ գործեց և, իմանալով, որ այդ կինը տիկին Դելմարն է, գնաց նրան պարի հրավիրելու։

— Դուք ինձ չեք հիշում,— ասաց Ռեյմոնը, երբ բազմության մեջ աննկատ մնացին,— իսկ ես անկարող էի մոռանալ ձեզ, տիկին։ Զնայած մի ակնթարթ միայն տեսա ձեզ, մշուշի միջից, բայց այդ պահին այնքան բարություն, այնքան գթասրտություն ցուցաբերեցիք իմ հանդեպ, որ...

Տիկին Դելմարը ցնցվեց։

— Ահ, այո, պարոն,— պատասխանեց աշխուժորեն,— այդ դուք եք... Ես նույնպես ճանաչեցի ձեզ։

Նա շիկնեց, կարծես վախենալով բարձրաշխարհիկ կյանքի պատշաճության սահմաններից դուրս գալ և նայեց շուրջը՝ համոզվելու համար, արդյո՞ք լսում են իրենց։ Երիտասարդության հմայքը զումարվեց բնական շնորհագեղությանը, և Ռեյմոնի սիրտը խոցվեց կրեոլուհու մի փոքր քողարկված, քնքուշ ձայնից, որ կարծես ստեղծված էր ազոթելու կամ օրհնելու համար։

— Շատ էի վախենում,— ասաց Ռեյմոնը,— որ երբեք առիթ չեմ ունենա շնորհակալություն հայտնելու ձեզ։ Զէի կարող ձեր տուն գալ, միաժամանակ գիտեի, որ քիչ եք երևվում բարձրաշխարհիկ հասարակության մեջ։ Վախենում էի նաև, որ, հանդիպելով ձեզ, պարոն Դելմարին կտեսնեմ ձեր կողքին, իսկ մեր փոխհարաբերություններն այնպիսին չեն, որ նման պարագայում հանդիպումը հաճելի լիներ։ Որքան երջանիկ եմ, որ վերջապես ներկայացավ պահը՝ հոգուս երախտիքի պարտքը հատուցելու։

— Ավելի հաճելի կլիներ,— պատասխանեց Ինդիանան,— պարոն Դելմարը մասնակից լիներ մեր խոսակցությանը։ Եթե նրան ավելի լավ ճանաչեիք, կհամոզվեիք, որ նա նույնքան

բարեսիրտ է, որքան կոպիտ է թվում։ Ներեցեք նրան. քիչ մնաց ձեր պատճառով մարդասպան դառնար, բայց նրա սրտից ավելի շատ արյուն քամվեց, քան՝ ձեր վերքից։

— Զխոսենք պարոն Դելմարի մասին, տիկին, ես ամբողջ հոգով ներում եմ նրան։ Հանցավոր եմ նրա դեմ և ինձ հասանելիք պատիժը կրեցի։ Մնում է մոռանալ այդ միջադեպը։ Բայց դուք, տիկին, դուք, որ այնպես նրբորեն ու մեծահոգաբար խնամեցիք ինձ, ամբողջ կյանքում կմնաք իմ հիշողության մեջ ձեր վարմունքով, ձեր մաքրամաքուր դեմքով, ձեր հրեշտակային բարությամբ և այս ձեռքերով, որ բարձրացրին իմ վերքին, [ձեռքեր, որոնք չկարողացա համբուրել...]

Այդ ասելիս Ռեյմոնը բռնել էր տիկին Դելմարի ձեռքը, պատրաստ վերսկսելու կաղրիլը։ Նա նրբորեն սեղմեց նրա մատները, և երիտասարդ կնոջ արյունն ամբողջությամբ ցայտեց սիրտը։

Երբ տիկին Դելմարին ուղեկցեց տեղը, տիկին դը Քարվախալը՝ Ինդիանայի հորաքույրը, դուրս էր եկել։ Պարող զույգերի շարքերը նոսրացել էին։ Ռեյմոնը նստեց Ինդիանայի կողքին։ Վարվեցողության անբռնազբոսիկությունը նրան հեշտությամբ էր տրվում, այն բխում էր սիրո հարցում ունեցած փորձից. [ցանկությունների ուժգնությունը, սիրո հանդեպ ցուցաբերած շտապողականությունը հաճախ ստիպում է տղամարդկանց հիմար վիճակի մեջ ընկնել։] Այն տղամարդը, որ իր զգացմունքները փոքրիշատե վատնել է, ավելի շատ աճապարում է դուրս գալ, քան սիրել։ Բայց և այնպես պարոն դը Ռամբերը երբեք այսքան խորապես չէր հուզվել, ինչպես պատահեց այս պարզ ու անմիջական կնոջ ներկայությամբ։ Գուցե հուզմունքի պատճառն այն էր, որ հիշում էր նրանց տանն անցկացրած գիշերը, ամեն դեպքում մի բան կասկածից վեր էր, երբ ոգևորված խոսում էր տիկին Դելմարի հետ, շուրթերը շարժվում էին սրտի թելադրանքով։

Կանանց հետ բացատրվելիս ճարտար խոսելու ունակություն ձեռք բերելու սովորությունը նրա խոսքերին այժմ տալիս էր համոզչականություն, որոնցով իսկ տարվում էր անփորձ Ինդիանան, չկասկածելով, որ այդ խոսքերն առաջին անգամ չէին ասվում։

Երբ Ռեյմոնը տիկին դը Քարվախալին և տիկին դը Դել-

մարին ուղեկցում էր դեպի կառքը, չգիտես ինչպես, հաջողացրեց Ինդիանայի փոքրիկ ձեռքը իր շուրթերին հպել։ Այդ կնոջ մատներին երբեք տղամարդու այրող և գաղտնի համբույր չէր դիպել, չնայած ծնվել էր արևավառ երկնքի տակ և տասնինը տարեկան էր, իսկ Բուրբոն կղզում ապրած տասնինը տարեկան աղջիկը համապատասխանում է մեր երկրի քսանհինգ տարեկան կնոջը։

Ինդիանան ծայրաստիճան հուզված էր. քիչ մնաց ճչար այդ համբույրից, և անհրաժեշտություն զգացվեց օգնել նրան կառք բարձրանալու։ Ռեյմոնը երբեք այսքան նրբագեղ էակի չէր հանդիպել։ Նունը՝ կրեոլուհին, առողջ կազմվածք ուներ, իսկ փարիզուհիները երբեք չեն ուշաթափվում, երբ նրանց ձեռքն են համբուրում։

«Թե՞ մի անգամ էլ տեսնեմ նրան, գլուխս ամբողջովին կկորցնեմ», մտածեց Ռեյմոնը հեռանալիս։

Հաջորդ օրն իսկ լիովին մոռացավ Նունին։ Միայն մի բան էր հիշում. վերջինս տիկին Դելմարի սպասուհին էր։ Հիմա դալկադեմ Ինդիանան էր ողջ ուշադրության կենտրոնում, նա էր լցնում իր բոլոր երազները։ Երբ Ռեյմոնն զգում էր, որ սիրահարվում է, սովորաբար ցրում էր մտքերը. ոչ թե ծնվող զգացմունքը խեղդելու, ոչ, ընդհակառակը, հեռացնելու համար բանականությունը, որն ստիպում էր իրեն հետևանքների մասին խորհել։ Նա չէր կարող տիրապետել իրեն, որպեսզի խեղդի կրծքի տակ ծավալվող փոթորկումները և ոչ էլ բոցավառել կրքերը, երբ զգում էր, որ մարում են ու ցնդում։

Հաջորդ օրը նրան հաջողվեց իրազեկ լինել պարոն Դելմարի առևտրական գործերով Բրյուսել մեկնելու մասին։ Գնալիս գնդապետը կնոջը վստահել էր տիկին դը Քարվախալին, որին ամենևին չէր սիրում, բայց տիկին Դելմարի միակ աղգականուհին էր։ Ինքը հասարակ զինվորի որդի լինելով և սերելով աննշան ու աղքատ ընտանիքից, որի համար ամաչում էր, թեպետ պնդում էր, որ կարմրելու պատճառ չունի, նա միշտ հանդիմանում էր կնոջը, թե իբր դրա համար արհամարհում է իրեն, բայց այդ բանն ամենևին չէր զգացվում Ինդիանայի կողմից։ Դելմարը մտածում էր, որ կարիք չկա նրան մտերմացնել իր անկիրթ, կիսագրագետ ազգականների հետ։ Չնայած նա չէր համակրում տիկին դը Քարվախալին, բայց չէր

էլ կարող հրաժարվել նրա նկատմամբ ունեցած հարգանքից հետևյալ պատճառով. տիկին դը Քարվախալը, սերելով իսպանական հայտնի ընտանիքից, այն կանանցից էր, որ միշտ իրենցից ինչ-որ բան ներկայացնում են։ Եվրոպայում Նապոլեոնի տիրապետության օրոք տիկին դը Քարվախալը ողջունել էր տիրակալի հաղթանակը և ամուսնու ու եղբոր հետ հարել հովսեփականների կուսակցությանը։ Սակայն ամուսնուն սպանեցին բոնապարտի անկումից հետո, իսկ Ինդիանայի հայրը ապաստանեց ֆրանսիական գաղութներում։ Այդ ժամանակ ճարպիկ ու նուրբ տիկին դը Քարվախալը հաստատվեց Փարիզում, որտեղ չգիտես, բորբոսյական ինչ-ինչ առուծախի միջոցով իր փայլուն անցյալի բեկորների վրա ստեղծեց նոր, հարմարավետ կյանք։ Խելամտության, խարդավանքների, Բուրբոնների հանդեպ անսահման նվիրվածության ու պաշտամունքի շնորհիվ ձեռք բերեց նաև արքունիքի համակրանքը, իսկ իր տունը, այնքան էլ շքեղ չլինելով հանդերձ, ամենաշատ հարգանքի արժանացածներից մեկը դարձավ և դասվեց արքունիքի շնորհներից օգտվող տների շարքում։

Հոր մահից հետո, երբ Ինդիանան ամուսնու՝ գնդապետ Դելմարի հետ Ֆրանսիա եկավ, տիկին դը Քարվախալը այնքան էլ հավանություն չտվեց այդ թույլ միությանը։ Բայց երբ նկատեց, որ պարոն Դելմարը բարելավում է իր աղքատիկ դրամագլուխը, իսկ ճարպկությունն ու խելամտությունը գործի մեջ արժեին մի ամբողջ օժիտ, Ինդիանայի համար գնեց Լանյիի փոքրիկ դղյակը և նրան պատկանող ֆաբրիկան։ Երկու տարվա ընթացքում պարոն Դելմարի առանձնահատուկ խելքի և սբր Ռոդոլֆ Բրաունի՝ կնոջ հեռավոր ազգականի, ներդրած դրամագլխի շնորհիվ, գնդապետի գործերը հաջող ընթացք ստացան, նա մարեց պարտքերը, և տիկին դը Քարվախալը, որի համար մարդու ամենաառաջին երաշխիքը հարստությունն էր, մեծագույն խանդաղատանքով համակվեց եղբոր աղջկա հանդեպ և խոստացավ իր ունեցվածքը նրան ժառանգել։ Ինդիանան, ամենևին փառքի չձգտելով, հորաքրոջը խնամքով և ուշադրությամբ էր շրջապատում։ Երախտագիտության զգացմունքից մղված՝ շահի մասին չէր էլ մտածում, սակայն գրնդապետի համար տիկին դը Քարվախալի հետ կապված այդ

երկու հասակացությունների միջև էական տարբերություն չկար։ Պարոն Դելմարը քաղաքական հարցերի վերաբերյալ երկաթի պես ամուր համոզմունքներ ուներ։ Իր մեծարգո կայսեր փառքը նրա աչքին անխորտակելի էր, որին պաշտպանում էր վաթսունմյա մանկան կույր համառությամբ։ Այդ պատճառով զնդապետը խոր համբերությամբ զինվելու մեծ ջանքեր էր թափում, որպեսզի ամեն առիթով չպայթեր տիկին դը Քարվախալի տանը կայացած հավաքույթների ժամանակ, ուր ռեստավրացիան էր միայն գովաբանվում։ Թե որքան տանջվեց խեղճ Դելմարը հինգ-վեց պառավ կեղծ բարեպաշտների կողմից, անկարելի է նկարագրել։ Հիմնականում այս տհաճ մթնոլորտն էր պատճառը, որ վատ էր վարվում կնոջ հետ։

Մանր թվացող այս հարցերը պարզելուց հետո նորից անդրադառնանք պարոն դը Ռամիերին։ Երեք օր անց նա արդեն տեղյակ էր Դելմարի տան հետ կապված բոլոր մանրամասնություններին, քանի որ մեծագույն եռանդով էր հետևել այն ամենին, ինչը կարող էր նրան Դելմարի ընտանիքի հետ մտերմացնել։ Նա հավատացած էր, որ, տիկին դը Քարվախալի հովանավորությանն արժանանալով, կարող էր տեսակցել Ինդիանայի հետ։ Երրորդ օրվա երեկոյան այցելեց մարքիզուհուն։

Սրահում չորս-հինգ բրածո դեմքեր կային, որոնք լրջորեն տարված էին թղթախաղով, և երկու-երեք պալատական երիտասարդներ, որոնք իրենցից ոչինչ չէին ներկայացնում, այդպիսիները հանդիպում են միայն երեքհարյուրամյա պալատական դասի ներկայացուցիչների մեջ։ Ինդիանան համբերությամբ ասեղնագործում էր հորաքրոջ համար։ Նա հակվել էր ձեռագործի վրա, արտաքուստ կլանված մեքենայական աշխատանքով և գուցե նաև գոհ, որ այս առիթով կարող է խուսափել շրջապատի մարդկանց դատարկախոսություններից։ Չեմ կարող ասել, արդյոք սև, երկար մազերի տակ դեմքը թաքցրած, ձեռագործի ծաղիկների վրա հակված՝ Ինդիանան մտաբերո՞ւմ էր ակնթարթային պահի ընձեռած հուզմունքը, որ նոր խոհ էր պարգևել իրեն, բայց երբ սպասավորը մի քանի այցելուների անուններ հայտնեց, տիկին Դելմարը հանկարծ ցնցվեց, տեղից թռավ։ Դա կատարվեց մեքենայաբար։ Չէր հիշում ում անունն էին տվել։ Աչքերը

հազիվ էր բարձրացրել ասեղնագործի վրայից, երբ էլեկտրական հոսանքի նման ինչ-որ մեկի ձայնը կարծես խփեց նրան, և Ինդիանան ստիպված եղավ հենվել աշխատասեղանին։

Գլուխ VI

Ռեյմոնի մտքով երբեք չէր անցել, որ պիտի հայտնվի այսքան մռայլ մթնոլորտով հագեցած սրահում, հանդիպի ցաք ու ցրիվ, տարորոշ կերպարանքների, որտեղ անհնարին էր արտասանել որևէ բառ, որ լսելի չլիներ տան բոլոր անկյուններում։ Թղթախաղով տարված պատկառելի տիկնայք կարծես հավաքվել էին այստեղ՝ միմիայն խանգարելու երիտասարդների զրույցները։ Եվ նրանց անաչառ դեմքերին Ռեյմոնն ասես կարդում էր ծերությանը հատուկ ծածուկ բավարարվածություն՝ վրեժխնդրության զգացում մյուսների հաճույքները խափանելու հարցում։ Նա հույս ուներ Ինդիանայի հետ ավելի մտերմիկ մթնոլորտում հանդիպել, քան նախորդ պարահանդեսում էր։ Իսկ հիմա ճիշտ հակառակն էր ստացվում։ Տիկին Դելմարին թռուցիկ ակնարկներ ուղղելիս՝ այս չնախատեսված դժվարություններն ավելի բորբոքեցին նրա ցանկասիրությունը, ավելի բոցավառեցին աչքերի հուրը, առավել աշխուժություն և հնարամտություն հաղորդեցին նրան։ Իսկ խեղճ Ինդիանայի համար դա նորություն էր։ Նա պաշտպանվելու հնարավորություն չուներ, որովհետև ոչ մի հարց անձամբ ուղղված չէր իրեն, բայց կամա-ակամա լսում էր բոցավառ սրտից բխող խոսքեր, հասկանում էր, որ սիրված է և ինքնաբերաբար վտանգավոր օղակի մեջ էր ներառնվում ու չէր դիմադրում։ Որքան համարձակ էր դառնում Ռեյմոնը, այնքան նեղվում էր Ինդիանան։

Տիկին դը Քարվախալն իրեն խելացի կին և հաճելի զրուցակից համարելու բոլոր հիմքերն ուներ։ Նա լսել էր պարոն դը Ռամիերի խելքի մասին և թղթախաղից հեռացավ, որպեսզի սիրո թեմայի շուրջ հաճելի բանավեճ սկսի նրա հետ։ Այդ ընթացքում նա ցուցաբերեց իսպանացուն հատուկ կիրք և գերմանացուն բնորոշ փիլիսոփայություն։ Ռեյ-

մոնը պատրաստակամությամբ ընդունեց մարտահրավերը և հորաքրոջը պատասխանելու քողի տակ եղբոր աղջկան հասցեագրեց այն ամեն ասելիքը, որ վերջինս կհրաժարվեր լսել, եթե առանձին լիներիս։ Խեղճ անպաշտպան դեռատի կինը, ենթարկվելով այսպիսի եռանդուն ու հնարագետ հարձակման, ուժ չէր գտնում խառնվելու այս փշոտ վիճաբանությանը։ Ինդիանային իր ողջ փայլով ներկայացնելու միտումով՝ հորաքույրը ջանում էր նրան ընդգրկել սիրո վերաբերյալ տեսական որոշ հարցերի մեջ։ Տիկին Դելմարը շիկնելով պատասխանեց, որ նրանց ասածներից ոչինչ չի հասկանում, իսկ Ռեյմոնը, տեսնելով նրա այտերի գունափոխությունը և կրծքի թրթիռը, ուրախությունից արբեց և ինքն իրեն խոստացավ այդ ամենը սովորեցնել նրան։

Նախորդ գիշերների նման, Ինդիանան այդ օրն էլ չկարողացավ քնել։ Արդեն ձեզ հայտնի է. նա երբեք չէր սիրահարվել. իսկ սիրտը վաղուց էր հասունացել սիրո համար, բայց ոչ մի տղամարդու չէր հաջողվել այդ զգացմունքը ներշնչել նրան։ Թիրտ ու տարօրինակ հայրն էր նրան գաստիարակել, սիրո երջանկությունը երբեք հասու չէր եղել դեռատի կնոջը։ Քաղաքականությամբ տարված, փառքի չհասնելու մորմոքից ծվատված՝ պարոն դը Քարվախալը ֆրանսիական գաղութներում դարձել էր ամենադաժան պլանտատորներից և տհաճ բնակիչներից մեկը։ Աղջիկը տառապել էր նրա զազրելի բնավորությունից։ Տեսնելով սարկության բերած չարիքների անվերջանալի պատկերը, կրելով միայնության և ուրիշից կախման մեջ գտնվելու տանջանքները, Ինդիանան ձեռք էր բերել թվացյալ համբերություն ամեն ինչի նկատմամբ։ Ստորադրյալների հետ Ինդիանան մեծահոգի էր և բարեսիրտ։ Բայց նա ուներ նաև երկաթյա համառություն, աննկարագրելի դիմադրողական ուժ՝ այն ամենի ու ամենքի նկատմամբ, ինչը ջանում էր ճնշել նրան։ Դելմարի հետ ամուսնանալով՝ միայն տիրոջը փոխեց, իսկ Լանյի տեղափոխվելով՝ մի բանտախուցը փոխարինեց մյուսով։ Ամուսնուն չէր սիրում, գուցե այն միակ պատճառով, որ ստիպում էին սիրել, հակառակվելու ներքին անհրաժեշտությունը նրա բնավորության գծերից մեկը դարձավ, հիմնական հատկա-

նիշը, որտի օրենքը։ Նրանից ոչինչ չէին պահանջում, կույր հնազանդությունից բացի։

Եվ այսպես, Ինդիանան հանգում էր ինչ-որ անծանոթ ցավ հոշոտում էր նրա երիտասարդությունը։ Անուժ էր, և քունը փախել էր աչքերից։ Բժիշկները զուր էին նրա մոտ հիվանդության որևէ ախտանշան փնտրում, այդպիսին գոյություն չուներ։ Մարմնի բոլոր մասերը հավասարապես թուլացել էին և կամաց-կամաց շարքից դուրս էին գալիս, սիրտը մարող կրակ լիներ ասես, աչքերը խամրում էին, արյունը շրջանառություն էր կատարում միայն ջղային ցնցումների և ջերմության բարձրացման ժամանակ։ Խեղճ դերուհին մոտ էր մահվան։ Բայց որքան էլ համակերպված լիներ ճակատագրին կամ հուսահատության մեջ լիներ, զգում էր սիրո անհրաժեշտությունը։ Այդ լռամած ու կոտրված հոգին, անկախ իրենից, մի նվիրված սիրտ էր տենչում, որ վերակենդանացներ իրեն։ Միակ անձնավորությունը, որին մինչ այդ սիրել էր, Նունն էր՝ իր տխուր օրերի աշխույժ ու արի ընկերուհին, իսկ իր հանդեպ բարեհաճություն ցուցաբերող միակ տղամարդը սառնարյուն զարմիկն էր՝ սրբ Ռալֆը։ Բայց ի՞նչ հոգեկան սնունդ կարող էր ստանալ հոշոտված, եռանդով լի մտածումների փոխարեն այդ խեղճ, կյանքից անտեղյակ և անուշադրության մատնված աղջիկը մի անգլիացուց, որի միակ կիրքը ազվեսի որսն էր։

Տիկին Դելմարը շատ դժբախտ էր։ Եվ երբ առաջին անգամ իր սառած մթնոլորտում զգաց երիտասարդ ու եռանդուն մարդու բոցակեզ շունչը, երբ քնքուշ ու շոյող խոսքերը արբեցրին նրան, և դողդոջուն շուրթերը շիկացած երկաթի պես եկան այրելու նրա ձեռքը, մոռացավ ամեն, ամեն բան՝ և՛ իր առջև դրված պարտականությունները և՛ պատգամված զգուշավորությունները, և՛ վտանգներով լի ապագան։ Նա վերհիշեց միայն տհաճ անցյալը, երկարատև տանջանքները, բռնակալ տերերին։ Չմտածեց անգամ, որ այդ երիտասարդը կարող էր խաբեբա կամ թեթևամիտ լինել։ Նրան տեսնում էր այնպես, ինչպես տենչում էր, ինչպիսին երազել էր, և Ռեյմոնը կարող էր նրան մոլորեցնել, եթե անկեղծ չլիներ։

Բայց մի՞թե կարող էր անկեղծ չլինել այդքան գեղեցիկ ու

սիրալիր կնոջ ներկայությամբ։ Ո՞ր կինն էր այդպիսի մեղմությամբ ու անմիջականությամբ ներկայացել իրեն։ Ո՞վ կարող էր նրան այդքան լիարժեք ու վստահելի ապագա խոստանալ։ Ինդիանան ծնված չէ՞ր արդյոք նրան սիրելու համար, այդ ստրուկ կինը, որ միայն մի նշանի էր սպասում՝ շղթաները խորտակելու, միայն մի բառի՝ նրան հեռանելու համար։ Ճակատագիրն, անշուշտ, Ռեյմոնի համար էր նախատեսել Բուրբոն կղզու այդ անզոր զավակին, որին ոչ ոք չէր սիրել, և անտարակույս առանց իրեն մեռնելու էր։

Այնուամենայնիվ, տիկին Դելմարի հոգուն համակած տենդագին երջանկությանը փոխարինեց սարսափի զգացումը։ Նա սկսեց մտածել խանդոտ, հեռատես, վրեժխնդիր ամուսնու մասին և վախեցավ։ Բայց, ոչ, նա իր մասին չէր մտածում, ինքը վարժված էր սպառնալիքների, վախենում էր այն մարդու համար, որ կենաց ու մահու կռիվ էր մղելու իր բռնակալի հետ։ Նա այնքան անտեղյակ էր հասարակական բարքերին, որ կյանքը ներկայացնում էր որպես վիպային ողբերգություն։ Լինելով երկչոտ, նա չէր համարձակվում սիրել, վախենում էր սիրած մարդուն կորստյան դատապարտել, ամենևին չէր խորհում իրեն սպառնացող վտանգի մասին։

Սրանում էր կայանում նրա ըմբոստության գաղտնիքը, առաքինությունը։ Հաջորդ օրը վճռեց խուսափել պարոն դը Ռամբերից։ Նույն երեկոյան պարահանդես էր կազմակերպված Փարիզի մեծահամբավ բանկատերերից մեկի տանը։ Տիկին դը Քարվախալը, որ անկիրք պառավի պես էր սիրում աշխարհիկ կյանքը, ուզում էր այնտեղ գնալ Ինդիանայի ուղեկցությամբ։ Բայց Ռեյմոնն էլ էր գալու, և Ինդիանան ինքն իրեն խոստացավ չներկայանալ։ Հորաքրոջ հալածանքներից խուսափելու համար տիկին Դելմարը, որ չէր կարող առանց հիմնավոր պատճառի հրաժարվել, ձևացրեց, թե ընդունում է առաջարկությունը. նաժիշտներին կարգադրեց հագցնել իրեն և սպասեց, մինչև որ տիկին դը Քարվախալը պատրաստվի։ Որից հետո հագավ տնային նրկար զգեստը, տեղավորվեց բուխարիկի մոտ և համբերությամբ զինվեց։ Երբ սեղմված իրանով, Վան Դեյկի հերոսուհիների նման ոտքից գլուխ զարդարված խպանուհին եկավ նրան տանելու,

Ինդիանան հայտնեց, որ հիվանդ է և ուժ չունի տնից դուրս գալու։ Զուր էր հորաքույրը պնդում վերականգնել ուժերը։

— Ամբողջ հոգով ցանկանում եմ գալ,— պատասխանեց Ինդիանան,— բայց, տեսնում եք, ոտքերիս վրա կանգնելու կարողություն չունեմ, միայն անախորժություն կպատճառեմ ձեզ։ Առանց ինձ գնացեք, սիրելի հորաքույր, շատ ուրախ կլինեմ, եթե հաճելի ժամանակ անցկացնեք։

— Առանց քեզ գնա՞լ,— բացականչեց տիկին դը Քարվախալը, որ ոչ մի գնով չէր ուզում հարդարանքը զուր անցներ և միաժամանակ սարսափում էր երեկոն միայնակ անցկացնելու մտքից,— բայց ի՞նչ եմ անելու այդ հասարակության մեջ, ես՝ պառավս, որի ներկայությունը փնտրում են միայն քո պատճառով։ Ի՞նչ կլինի իմ վիճակը առանց եղբորս աղջկա գեղեցիկ աչքերի, որոնք բարձրացնում են իմ արժեքը։

— Մի՞թե ձեր խելքն ավելի չարժի, քան իմ գեղեցիկ աչքերը, սիրելի հորաքույր,— պատասխանեց Ինդիանան։

Մարքիզուհի դը Քարվախալը միայն դրան էր սպասում, որ համոզեն իրեն, կարծես դրա կարիքն զգում էր և վերջապես մեկնեց։ Այդ ժամանակ Ինդիանան երեսը թաքցրեց ձեռքերի մեջ ու լաց եղավ։ Որովհետև դա մեծ զոհաբերություն էր իր կողմից, և նա հավատացած էր, որ նախորդ օրվա երջանիկ կախարդական կառույցն արդեն փլվել էր։

Բայց նույն ձևով չէր դատում Ռեյմոնը։ Առաջին բանը, որ պարահանդեսում նկատեց, պառավ մարքիզուհու հպարտորեն ցցված փետրափունջն էր։ Դղուր նրա շուրջը փնտրեց Ինդիանայի ճերմակ զգեստն ու սև մազերը։ Մոտեցավ։ Եվ լսեց, թե ինչպես էր նա մի տիկնոջ կիսաձայն ասում։

— Եղբորս աղջիկը հիվանդ է կամ, ավելի ճիշտ,— ավելացրեց նա հեղինակավորելու համար իր ներկայությունը պարահանդեսում,— երիտասարդ կնոջ քմահաճույք է։ Ցանկացավ մենակ մնալ, սրահում գիրք կարդալ, շատ երազկոտ կին է։

«Արդյոք ինձնից չի՞ խուսափում»,— մտածեց Ռեյմոնը։

Նա անմիջապես մեկնեց պարահանդեսից։ Հասավ մարքիզուհու տունը, դռնապանին ոչինչ չասելով՝ անցավ մոտից,

նախասրահում առաջին իսկ հանդիպած կիսարթուն սպասավորին հարցրեց տիկին Դելմարի մասին։

— Տիկին Դելմարը հիվանդ է։

— Դիտեմ։ Տիկին դը Քարվախալն է ուղարկել, տեղեկություններ պետք է ստանամ նրանից։

— Հիմա կհայտնեմ տիկնոջը...

— Կարիք չկա, տիկին Դելմարն ինձ չի մերժի։

Եվ Ռեյմոնն առանց զգուշացնելու ներս մտավ։ Բոլոր սպասավորները քնած էին։ Թախծոտ լռություն էր տիրում ամայացած բնակարանում։ Կանաչ պաստառով ծածկված միակ լամպը թույլ լուսավորում էր հյուրասրահը։ Ինդիանան լայն թիկնաթոռի մեջ մեջքով նստած էր դեպի դուռը և թախծոտ աչքերով նայում էր փայտածուխներից բարձրացող բոցկլտումներին, ինչպես այն երեկոյան, երբ Ռեյմոնը Լանյիի պատերի վրայով մագլցելով, մտել էր այդտեղ։ Բայց այդ օրը տիկին Դելմարի տխրությունն ավելի զգալի էր. անորոշ տառապանքին, աննպատակ ցանկություններին հաջորդել էին խույս տված ուրախությունը, խորտակված երջանկության ճառագայթները։

Ռեյմոնը պարահանդեսային թեթև կոշիկներով անաղմուկ առաջացավ փափուկ գորգի վրայով։ Ինդիանային տեսավ արտասվելիս, և երբ վերջինս շրջեց գլուխը, Ռեյմոնն արդեն նրա ծնկների առջև էր և բռնել էր նրա ձեռքերը, որ զուր ջանքերով Ինդիանան ուզում էր ազատել։ Եվ միայն այդ ժամանակ, հավատացնում եմ ձեզ, Ինդիանան անպատում երջանկությամբ նկատեց, թե ինչպես է խորտակվում դիմադրությունն ցույց տալու իր նախագիծը։ Զգաց, որ հոգու ողջ զորությամբ սիրում է այն մարդուն, որի համար ոչ մի խոչընդոտ գոյություն չունի և, հակառակ սիրած կնոջ կամքին, եկել է երջանկացնելու նրան։ Նա օրհնեց նախախնամությանը, որ ի չիք է դարձնում իր զոհաբերությունը և, փոխանակ հանդիմանելու Ռեյմոնին, քիչ մնաց շնորհակալություն հայտներ։ Ինչ վերաբերում է Ռեյմոնին, նա արդեն համոզված էր, որ սիրված է։ Կարիք չկար տեսնել արցունքների միջից փայլատակող ուրախությունը՝ համոզվելու համար, որ ինքն ունի զրության տերը և կարող է համարձակ գործել։ Ժամանակ չտվեց Ինդիանային խոսել և, դերերը փոխելով, ինքն սկսեց

հարցեր տալ նրան, ոչ մի բացատրություն չտվեց, թե ինչու է անակնկալ այցելել, դույզն անգամ չմտածելով իր վրա վերցնել մեղադրանքի որևէ նշույլ։

— Ինդիանա, դուք լաց եք լինում... ուզում եմ իմանալ... ինչո՞ւ եք հուզված։

Լսելով, որ անունով են դիմում իրեն, Ինդիանան ցնցվեց, սակայն այդ անսպասելի հուզումը համարձակություն ներշնչեց նրան։

— Ինչո՞ւ եք հարցնում, ես պարտավոր եմ լռել...

— Ինչ արած, ես ամեն ինչ գիտեմ, Ինդիանա։ Գիտեմ ձեր ամբողջ պատմությունը, ձեր ամբողջ կյանքը։ Այն ամենը, ինչ վերաբերում է ձեզ, իմ սրտին մոտ է, որովհետև այն սիրելի կրոջ, ինչ ձեզ է վերաբերում, անտարբեր անցնել չեմ կարող։ Ուզում էի ձեզ վերաբերող բոլոր տեղեկություններն ունենալ, բայց իմացածիս վրա ոչինչ չավելացրի։ Այն մեկ օրը, որ ձեր տանն անցկացրի, երբ ինձ արնաշաղախ ու ջարդված գրին ձեր ոտքերի առջև, երբ ձեր ամուսինը կատաղեց՝ տեսնելով իր գեղեցիկ կնոջը այդքան բարեհամբույր ձևով թեերն ինձ հենարան դարձրած, իսկ մեղմ շնչառությունը՝ բալասան, ինձ համար ամեն ինչ պարզ դարձավ։ Նա խանդում էր, օ՜, լավ եմ հասկանում նրան, ես էլ նրա վիճակում կլինեի, Ինդիանա, ավելի ճիշտ, նրա փոխարեն ես ինքնասպանություն կգործեի, որովհետև լինել ձեր ամուսինը, ձեր տերը և գրկի մեջ պահելով ձեզ՝ շարժանանալ ձեր սիրուն, շտիրել ձեր սրտին, նշանակում է ամենաթշվառ, ամենաստոր արարածը լինել։

— Աստված իմ, լռեցե՛ք,— բացականչեց Ինդիանան՝ ձեռքերով փակելով նրա բերանը.— լռեցե՛ք, մեղքի մեջ եք գցում ինձ։ Ինչո՞ւ եք իմ ներկայությամբ խոսում նրա մասին, ինչո՞ւ եք մղում ինձ շարախոսել նրան, եթե նա լսեր ձեր ասածնե՛րը... Բայց նրա մասին ես ոչ մի վատ բան չեմ ասել, թույլ չեմ տվել ձեզ այդ հանցավոր քայլը կատարել, ես նրան չեմ ատում, հարգում եմ, սիրում եմ...

— Ավելի լավ է ասեք, որ անասելիորեն վախենում եք նրանից, որովհետև այդ բռնակալը փշրել է ձեր սիրտը, և սարսափը նստած է ձեր սնարին այն ժամանակից ի վեր, ինչ դարձել եք այդ մարդու զոհը։ Դուք, Ինդիանա, անարգված

եք այդ տղամարդու կողմից, որի երկաթյա ձեռքը խոնարհեցրել է ձեր գլուխը և թառամեցրել ձեր կյանքը։ Խե՜ղճ աղջիկ, այդքան երիտասարդ, այդքան գեղեցիկ և այդքան տա-ղտապա՜ծ... Ես չեմ խաբի ձեզ, Ինդիանա, ձեզ նայում եմ այլ աչքերով, ոչ ուրիշների նման։ Ձեր կյանքի բոլոր գաղտնիքներն ինձ հայտնի են, և չմտածեք դրանք թաքցնել ինձնից։ Եվ թող նրանք, ովքեր միայն գեղեցկության համար են ձեզ նայում, միայն ձեր դալկությունն ու անձկությունն են տեսնում, թող ասեն «հիվանդ է...»։ Թո՛ղ ասեն։ Իսկ ես սրտով եմ հետևում ձեզ, իմ ամբողջ հոգին հոգատարությամբ ու սիրով է պարուրում ձեզ, ես գիտեմ ձեր ցավի գաղտնիքը։ Եթե ասված կամենար ու հանձնած լիներ ձեզ դժբախտիս, որը պատրաստ է գլուխը խփել քարին՝ այսքան ուշ հայտնվելու համար, գիտեմ, դուք հիվանդ չէիք լինի։ Կյանքովս եմ երդվում, Ինդիանա, այնքան կսիրեի ձեզ, որ դուք ևս նույն զգացմունքը կտածեիք իմ հանդեպ և այն ժամանակ կօրհնեիք ձեր լուծը։

— Բավական է, բավական է,— ինքնակորույս բացականչեց Ինդիանան դողդոջելով,— ցավ եք պատճառում ինձ։

Եթե, իրոք, մարդը երջանկությունից կարող է մեռնել, Ինդիանան այդ րոպեին շունչը կփչեր։

— Այդպես մի խոսեք ինձ հետ,— ասաց նա,— ես չեմ կարող երջանիկ լինել։ Մի փորձեք ցույց տալ երկրային դրախտը մահվան դատապարտվածիս։

— Մահվան դատապարտվա՜ծ,— բացականչեց Ռեյմոնը և գրկեց նրան,— դու մեռնե՜ս, Ինդիանա, մեռնես ապրելուց առա՜ջ, սիրելուց առա՜ջ... Ոչ, դու չես մեռնելու, ես թույլ չեմ տա, որովհետև իմ կյանքն այժմ կախված է քո կյանքից։ Դու իմ երազած կինն ես, այն մաքրամաքուր էակը, որին պաշտել եմ, այն պատրանքը, որ միշտ խույս է տվել ինձնից, այն շողշողուն աստղը, որ փայլում է իմ դիմաց ու կարծես ասում. «Դեռ քայլիր այս թշվառ կյանքում, և նախախնամությունը կուղարկի քեզ ուղեկցող հրեշտակին»։ Բոլոր ժամանակներում սահմանված ես եղել իմը լինելու, քո հոգին ձուլված է եղել իմ հոգուն, Ինդիանա։ Մարդիկ ու նրանց բիրտ օրենքներն են տնօրինել քեզ, ինձնից խլել են իմ ուղեկցորդուհուն, որ ասված է ընտրել ինձ համար, և ասված ինքն էլ երբեմն մոռանում է իր խոստումները։ Սակայն ինչ փույթ մարդիկ ու նրանց օրենքները, երբ սիրում եմ քեզ, թեկուզ ուրիշի գրկում, երբ դու էլ կարող ես սիրել ինձ՝ անիծյալիս, դժբախտիս, որ կորցրել եմ քեզ։ Տեսնո՞ւմ ես, Ինդիանա, դու ի՞նձ ես պատկանում, իմ հոգու երկրորդ կեսն ես, որին երկար ժամանակ փնտրում էի՝ մյուս կեսին միացնելու համար։ Իսկ հիմա ոչինչ չի կարող բաժանել մեզ...

— Նա՛, հենց նա կարող է բաժանել,— ընդհատեց տիկին Դելմարը, որն, իր սիրած մարդու զգացմունքների հորդումից զգացված, հաճույքով լսում էր նրան,— ավա՜ղ, դուք չեք ճանաչում նրան։ Նա այն մարդն է, որ ներել չգիտե, այն մարդը, որին անհնար է մոլորեցնել։ Ռեյմոն, նա ձեզ կըսպանի...

Ինդիանան գլուխը թաքցրեց նրա կրծքի վրա ու լաց եղավ։ Ռեյմոնը խանդաղատանքով գրկեց նրան ու բացականչեց.

— Թող գա՛, թող համարձակվի գալ ու հափշտակել այս պահի երջանկությունը։ Ձե՛մ վախենում նրանից։ [Մնա այստեղ, Ինդիանա, իմ կրծքին, այստեղ է քո ապաստանն ու ապավենը։ Սիրիր ինձ, և ես անխոցելի կլինեմ։] Դու գիտես, որ այդ մարդն ինձ սպանել չի կարող, արդեն անգեն գտնվել եմ նրա դիմաց։ Իսկ դու, իմ բարի հրեշտակ, սավառնում էիր իմ գլխավերևում, և թևերդ պահպանեցին ինձ։ Դու ոչ մի բանից մի վախեցիր, մենք կարող ենք շեղել նրա գայրույթը։ Այժմ արդեն քեզ համար էլ չեմ վախենում, որովհետև միշտ քո կողքին կլինեմ։ Եվ երբ այդ բռնակալը քեզ ճնշելու փորձանի, կպաշտպանեմ քեզ։ Անհրաժեշտության դեպքում կխլեմ քեզ նրա դաժան օրենքից։ Ուզո՞ւմ ես նրան սպանեմ։ Ասա, որ սիրում ես ինձ և եթե մահվան դատապարտես նրան, ես կդառնամ նրա դահիճը...

— Լռեցե՛ք, դուք սարսափեցնում եք ինձ։ Եթե ուզում եք որևէ մեկին սպանել, ինձ սպանեք, որովհետև արդեն ապրեցի մեկ օր և այլևս ոչինչ հարկավոր չէ ինձ...

— Որ այդպես է, մեռի՛ր, բայց երջանկությունից մեռիր,— բացականչեց Ռեյմոնը՝ շուրթերը հպելով Ինդիանայի շուրթերին։

Ահռելի փոթորիկ պայթեց կարծես նուրբ ծաղկի վրա.

Ինդիանան գոնեատվեց ու ձեռքը տանելով կրծքին՝ ուշաթափվեց։

Սկզբում Ռեյմոնին թվաց, թե գզվանքները նրա սառած երակներում արյունը կհոսեցնեն։ Իզուր էր ձեռքերը համբույրներով օծում, իզուր էր ամենաքնքուշ բառերով դիմում նրան։ Դա կամովին ուշաթափություն չէր, ինչպես հաճախ է պատահում մեր օրերում։ Տիկին Դելմարը երկար ժամանակ լուրջ հիվանդ էր, հաճախակի ենթարկվում էր ջղային ցնցումների, որոնք նույնիսկ ժամեր էին տևում։ Հուսահատված Ռեյմոնը ստիպված էր օգնության կանչել։ Հնչեցրեց զանգը։ Սպասուհին հայտնվեց և հանկարծ ձեռքից բաց թողեց սրվակը. Ռեյմոնին ճանաչելով՝ ճիչ արձակեց։ Վերջինս՝ անմիջապես տիրապետելով իրեն, մոտեցավ նրան ու ականջին շշնջաց.

— Ձայն չհանես, Նուն, գիտեի, որ այստեղ ես, քեզ համար եմ եկել, չէի մտածում տիրուհուդ հանդիպել, ինձ թվում էր, թե պարահանդեսում է։ Երբ ներս մտա, վախեցավ, ուշաթափվեց, զգույշ եղիր, ես գնում եմ։

Ռեյմոնը փախավ՝ երկու կանանց թողնելով մենակ։ Ամեն մեկն հիմա գաղտնիքի տեր էր, որի բացահայտումը ծանր էր անդրադառնալու թե մեկի, թե մյուսի վրա։

Գլուխ VII

Հաջորդ առավոտյան, երբ Ռեյմոնն արթնացավ, նրան հանձնեցին Նունի երկրորդ նամակը։ Բայց այս մեկն արհամարհանքով մի կողմ չնետեց, ընդհակառակը, շտապ բացեց, հավանաբար հույս ունենալով որևէ բան իմանալ տիկին Դելմարի մասին։ Այդպես էլ կար, սակայն խիստ անախորժ վիճակի մեջ էր ընկել Ռեյմոնը այս երկու բարդ սիրային կապերի պատճառով։ Երիտասարդ կրեոլուհին գրում էր, որ կարող է թաքցնել իր գաղտնիքը։ Առանց այդ էլ տառապանքն ու վախը նրա այտերը փոս են գցել, և տիկին Դելմարը, բնականաբար, նկատում է նրա հիվանդությունը, բայց հիմնական պատճառը, իհարկե, չգիտի։ Նունը վախենում է գնդապետի խստությունից, բայց առավել ևս՝ տիրուհու քնքշությունից։ Նա վստահ է, որ կարժանանա Ինդիանայի

ներողամտությանը, բայց ամոթից ու վշտից կմեռնի, եթե ստիպված լինի խոստովանել։ Ի՞նչ է անելու ինքը, եթե Ռեյմոնը չմտածի ազատել նրան ծանր ստորացումներից։ Վերջիվերջո Ռեյմոնը պարտավոր է զբաղվել իրենով, այլապես նա կընկնի տիկին Դելմարի ոտքերը և ամեն ինչ կխոստովանի։

Անսահմանորեն վախենալով այդ քայլից, պարոն դը Ռամիերի առաջին գործը եղավ հեռացնել Նունին տիրուհուց։

«Առանց իմ համաձայնության չփորձեք խոստովանել,— պատասխանեց նրան,— աշխատեք այս երեկո լինել Լանյիում։ Կգամ այնտեղ»։

Հետո երկար մտորեց, թե ինչ դիրք է բռնելու։ Նունը բավական խելացի էր և չէր կարող հույս դնել անհնար դարձած կապի վերականգնման վրա։ Նա երբեք չէր հանդգնել ամուսնության մասին խոսել, նա պարկեշտ ու մեծահոգի աղջիկ էր, ուստի Ռեյմոնն իրեն շատ մեղավոր չէր զգում։ Ինքն իրեն հանգստացնում էր, որ երբեք չէր խաբել Նունին, և վերջինս պետք է հասկանար, թե որն է եղել այս պատմության մեջ իր դերը։ Ռեյմոնին նյութական կողմը չէր հուզում. նա պատրաստ էր ունեցվածքի կեսը տրամադրել այդ խեղճ աղջկան, հաքստացնել նրան, իր վրա վերցնել նրա խնամակալության հարցերը, դիմել այն բոլոր հնարավոր միջոցներին, որ կթեկուզեր խիզճը։ Ռեյմոնի վիճակը շատ ավելի էր ծանրանում այն պատճառով, որ ստիպված էր խոստովանել, թե այլևս չի սիրում նրան, որովհետև չէր կարող ստել։ Չնայած հիմա տանջվում էր երդմնազանցության և ստոր արարքի պատճառով, բայց, ինչպես միշտ, անկեղծ էր։ Սովորական զգացմունք էր ածել Նունի հանդեպ, իսկ տիկին Դելմարին սիրում էր ամբողջ հոգով։ Ա՛ռ այսօր նա ո՞չ մեկին էր խաբել, ո՞չ մյուսին։ Ամբողջ հարցն այն էր, որ սրանից հետո էլ չպետք է ստեր։ Զգում էր, որ չէր կարող խաբել Նունին, ո՞չ էլ մահացու հարված հասցնել։ Անհրաժեշտ էր ընտրություն կատարել ստորության և դժբախտության միջև։ Ռեյմոնն իրեն շատ դժբախտ էր զգում։ Եվ առանց որոշում կայացնելու մոտեցավ Լանյիի պարահանդեսի դարպասին։

Իր հերթին, Նունը աննշան հույս էր փայփայում. հավանաբար որևէ կտրուկ պատասխան չէր ակնկալում։

«Դեռ սիրում է ինձ,— մտածում էր նա,— չի ուզում

լքել։ Բնական է, Փարիզում պարահանդեսների ժամանակ բոլոր կանանց կողմից սիրված է եղել, այդպես է որ կա, չէր կարող մտածել խեղճ հնգկուհու մասին։ Ավա՜ղ, ո՞վ եմ ես, որ հանուն ինձ այդքան մեծահամբավ, ավելի գեղեցիկ, ավելի հարուստ կանանց զոհարերի։ Ո՞վ գիտե,— միամտորեն մտածում էր նա,— գուցե հենց ինքը՝ Ֆրանսիայի թագուհի՞ն է սիրահարվել նրան»։

Համոզված էր, որ միայն հրապուրելով կարող էր նրան վերադարձնել, և միայն շքեղությունը կարող էր ներգործել սիրեկանի վրա։ Նունը նրան հմայելու միջոցը գտավ։ Հագավ տիրուհու զգեստը, Լանյի դղյակում տիկին Դելմարի ննջասենյակը տաքացրեց, բուխարիկը զարդարեց ջերմոցի ամենագեղեցիկ ծաղիկներով, սեղանին տեղավորեց տարբեր անուշաբույր գինիներ, մի խոսքով, հանդիպման համար շատ հաճելի միջավայր ստեղծեց, որի մասին առաջներում երբեք չէր մտածել։ Եվ երբ իրեն ոտքից գլուխ նայեց պատի մեծ հայելու մեջ, համոզվեց, որ ինքն ավելի գեղեցիկ է, քան այն ծաղիկները, որոնցով զարդարելու էր իրեն։

«Նա հաճախ էր կրկնում,— հիշեց Նունը,— որ իմ գեղեցկությունը զարդարանքի կարիք չունի, և ոչ մի պալատական կին, իր ադամանդների ողջ փայլի մեջ, իմ ժպիտը չարժե։ Այնինչ այդ արհամարհված կանայք հիմա գերել են նրան։ Դե, ինչ արած, պետք է ուրախ տեսք ընդունել, աշխույժ ու երջանիկ ձևանալ, գուցե այս գիշեր ետ ստանամ այն սերը, որը ներշնչել եմ նրան»։

Ռեյմոնը ձին թողեց ինչ-որ ածխագործի անտառային փոքրիկ տնակում, իր բանալիով բացեց այգու դռնակը, ներս մտավ։ Այս անգամ գողի պես բռնվելու վտանգ չկար. համարյա բոլոր սպասավորները գնացել էին տերերի հետ, պարտիզպանը կաշառված էր, և Լանյի կալվածքի բոլոր անկյունները սեփական տան նման ծանոթ էին նրան։

Ցուրտ գիշեր էր. թանձր մշուշը պարուրել էր այգու ծառերը։ Ճերմակ մառախուղի միջից Ռեյմոնը դժվարությամբ էր տարբերում մոխրագույն ծառաները, որոնք կարծես թափանցիկ շղարշ էին հագել։

Նա մի քանի բոպե թափառեց ոլորապտույտ ծառուղիներում՝ մինչև տաղավարի մոտ հասնելը, որտեղ Նունը սովորաբար սպասում էր նրան։ Աղջիկը ընդառաջ եկավ Ռեյմոնին մորթե վերարկուի մեջ փաթաթված, գլխաշորով գլուխը կապած։

— Այստեղ մնալ չենք կարող, շատ ցուրտ է,— ասաց Նունը,— հետևեք ինձ և մի խոսեք։

Ռեյմոնն անհուն նողկանքով լցվեց ինքն իր հանդեպ. նա տիկին Դելմարի տունն էր մտնելու որպես սենեկապանուհու սիրեկան։ Բայց անհրաժեշտ էր զիջել։ Նունը թեթև քայլերով գնում էր առջևից. հանդիպումը պետք է վճռական լիներ։

Անցան բակով. Նունը հանգստացրեց շներին. անաղմուկ բացեց դռները և, բռնելով Ռեյմոնի ձեռքը, լուռ ուղեկցեց մութ միջանցքներով։ Վերջապես նրան հասցրեց գեղեցիկ ու պարզ կահավորանքով շքեղանձն մի սենյակ, որտեղ ծաղկած նարնջենու ճյուղերն անուշ բույր էին տարածել։ Բազմաթև աշտանակների մեջ կաթնագույն մոմեր էին վառվում։

Նունը բենգալյան վարդերի թերթիկներ էր սփռել հատակին, բազմոցը ողողել էր մանուշակներով։ Գաղջություն էր տիրում սենյակում, իսկ բյուրեղապակիները փայլփլում էին սեղանին դրված հասուն մրգերի արանքից, որոնք պշրանքով ցույց էին տալիս իրենց ոսկեգենիկ մաշկը զամբյուղների մամռականաչի միջից։

Խավարը միանգամից վերածվեց վառ լուսավորության։ Առաջին պահին Ռեյմոնը շլացավ և ապշած մեխվեց տեղում, բայց անմիջապես գլխի ընկավ, թե որտեղ է գտնվում։ Կահավորման վրա իշխող նուրբ ճաշակն ու անկեղծ պարզությունը, կարմիր փայտից գրադարակներին շարված սիրավեպերն ու ճամփորդության թեմայով գրքերը, համբերությամբ ու թախիծով տոգորված անավարտ գեղեցիկ ասեղնագործը, քնարը, որի լարերը կարծես դեռ թրթռացնում էին սպասման տխուր երգեր, «Պոլի և Վերժինի» հովվերգական սիրավեպը նկարագրող գծանկարները, Բուրբոն կղզու բարձր լեռներն ու Սուրբ Պողոսի լազուր ափերը և հատկապես թանձր շղարշի վարագույրի հետևից հազիվ նշմարվող նեղլիկ մահճակալը, ճերմակ ու մաքուր, ինչպես կուսական անկողին, սնարին՝ օրհնված արմավենու ճյուղեր, որ հավանաբար հայրենի երկրից դուրս գալու օրն էր կարել. այս ողջ տեսարանը տիկին Դելմարին էր հիշեցնում, և Ռեյմոնին տարօրինակ

սարսուռ պատեց. նա մտածում էր. գուցե վերարկուի մեջ պարուրված կինը, որ ննջասենյակ էր ուղեկցել իրեն, Ինդիանան էր։ Այդ արտառոց միտքը կարծես հաստատվեց, երբ դիմացի հայելու մեջ իր ողջ հարդարանքով հայտնվեց ոտքից գլուխ ճերմակ հագած մի կերպարանք, կնոջ ուրվական, որ մանում է պարահանդես և ուսերից վար է սահեցնում թիկնոցը՝ ճառագայթող լույսերի մեջ ամբողջ հմայքով և կիսամերկ հայտնվելու համար։ Բայց դա երկվայրկյանի պատրանք էր. Ինդիանան այս անհամեստ հագուստը չէր հագնի... Նրա կուրծքը պետք է զգացվեր միայն թանձր շղարշի տակից, գուցե մազերը զարդարեր բնական քամելիաներով, բայց ոչ այսպիսի զգլխիչ անկանոնությամբ, ոտքերը կբանտեր ատլասե ոտնամանների մեջ, բայց այսպիսի անհամեստ հագուստ չէր հագնի, որ ընդգծեր նրա նուրբ սրունքները։

Նունը տիրուհուց ավելի բարձրահասակ ու լիքն էր, և զգացվում էր, որ ուրիշի հարդարանքի մեջ է։ Հմայիչ էր, բայց այդ հմայքը զուրկ էր ազնվականությունից։ Որպես կին նա գեղեցիկ էր, բայց դիցանույշ չէր։ Նա վայելքի էր կանչում, բայց երանություն չէր խոստանում։

Առանց գլուխը շրջելու, հայելու մեջ նրան երկար զննելուց հետո, Ռեյմոնը հայացքն ուղղեց այն ամենի վրա, որ կարող էր վերամարմնավորել Ինդիանայի սեփական արտացոլումը. երաժշտական գործիքները, նկարները, կուսական նեղլիկ մահճակալը։ Արբեց թեթևասահ բույրից, որ նրա մեկնելուց հետո մնացել էր այս սրբավայրում։ Սարսռաց այն ցանկալի մտքից, որ մի օր Ինդիանան իր առջև կբացեր այս դրախտի դռները։ Իսկ Նունը, նրա հետևում կանգնած, թևերը խաչած, ինքնամոռաց նայում էր Ռեյմոնին, կարծելով, որ իր հրապույրն էր ներգործել նրա վրա, ինչպես նաև՝ նրան դուր գալու անխնա ջանքը։

Վերջապես խզելով լռությունը՝ Ռեյմոնն ասաց.

— Շնորհակալ եմ այս հոգատարության համար, շնորհակալ եմ, հատկապես, որ ինձ այստեղ բերիք, բայց որքան ըմբոշխնեցի անակնկալ հաճելի պահեր, բավական է։ Դուրս գանք այս սենյակից, սա մեր տեղը չէ, ես պարտավոր եմ հարգել տիկին Դելմարին, նույնիսկ իր բացակայությամբ։

— Դժանորեն եք վարվում ինձ հետ,— պատասխանեց Նունը, որ ամենևին չէր հասկացել ակնարկը, բայց տեսնում էր նրա սառը և դժգոհ հայացքը,— դժանություն է ձեր արածը, հույս ունեի հաճելի լինել, իսկ հիմա ինձ վանում եք ձեզանից։

— Ո՜չ, սիրելի՜ Նուն, ձեզ երբեք չեմ վանի ինձանից։ Եկել եմ այստեղ լրջորեն խոսելու ձեզ հետ և ապացուցելու իմ հարգանքը ձեր հանդեպ։ Երախտապարտ եմ ինձ դուր գալու ձեր ցանկության համար, բայց միշտ էլ նախընտրել եմ զարդարված տեսնել ձեզ երիտասարդությամբ ու բնական շնորհագեղությամբ և ոչ թե այս օտարոտի հագուստներով։

Նունը կիսով չափ հասկացավ նրա ասածն ու լաց եղավ։

— Դժբախտ արարած եմ ես, —ասաց նա,— ատում եմ ինձ, որովհետև այլևս դուր չեմ գալիս... պետք է մտածեի, որ երկար չէիք կարող սիրել աղքատ ու անգրագետ մի աղջկա։ Ձեզ չեմ հանդիմանում։ Գիտեի, որ ինձ հետ չէիք ամուսնանա, բայց եթե միայն սիրեիք ինձ հարատև սիրով, ամեն ինչ կզոհաբերեի առանց ափսոսալու, ամեն դժվարություն կհանդուրժեի առանց տրտնջալու։ Ավա՜ղ, կործանված եմ, անպատվված... Կվոնդեն ինձ այս տնից։ Ես կյանք եմ տալու մի էակի, որ ինձնից ավելի դժբախտ է լինելու, և ոչ ոք չի խղճա ինձ... Բայց այս ամենի հետ կհամակերպվեմ, եթե շարունակեք սիրել ինձ։

Նունը երկար ժամանակ չէր հանգստանում։ Նա, հավանաբար, նույն բառերն ու արտահայտությունները չօգտագործեց, բայց միտքը նույնն էր, գուցե հազար անգամ ավելի գեղեցիկ, որ չեմ կարող կրկնել։ Ո՞ւր է թաքնված ճարտասանության գաղտնիքը, որ հանկարծակի ի հայտ է գալիս անգրագետ ու պարզունակ մարդկանց մոտ ճշմարիտ սիրո և խոր վշտի առկայության պայմաններում։ Նման դեպքերում բառերն այլ արժեք են ձեռք բերում։ Նման պայմաններում թելադրված զգացմունքի և նրան ուղեկցող շեշտադրության ազդեցության տակ պարզունակ մտքերը վեհություն են ստանում։ Եվ բարձրագույն սիրո զառանցանքին ենթարկված ամենահասարակ կինը ավելի զգայացունց է դառնում, ավելի համոզիչ, քան նա, որին կրթությունը սովորեցրել է ինքնատիրապետում և զսպվածություն։

Ռեյմոնը շոյված զգաց այդպիսի բարձր սեր ներշնչած լինելու համար և երախտագիտությունից, խղճահարությունից, գուցե նաև մի փոքր սնափառությունից դրդված՝ տարփանքով համակվեց նրա հանդեպ։

Արցունքները խեղդում էին Նունին։ Նա պոկել, նետել էր գլխի ծաղիկները, երկար մազերը փռվել էին լեցուն, շլացուցիչ ուսերին։ Եթե տիկին Դելմարը Ռեյմոնի աչքին պիտի փայլեր ստրկական լուծով ու տառապանքով, Նունը այդ պահին գերազանցում էր նրան իր գեղեցկությամբ։ Սիրուց ու վշտից շողում էր։ Պարտված Ռեյմոնը գրկեց նրան, նստեցրեց կողքին բազմոցի վրա և ջրամաններով բեռնավորված անվավոր սեղանը մոտեցնելով՝ նարնջի հյութ լցրեց ոսկեջրած բաժակի մեջ։ Նունը մի փոքր հանգստացավ, ավելի շատ նրա ցույց տված ուշադրությունից, քան հեղուկից, սրբեց արցունքները և Ռեյմոնի ոտքերի առջև ընկնելով՝ կրքով սկսեց համբուրել նրա ծնկներն ու ասաց.

— Առաջվա պես սիրիր ինձ, ասա, որ սիրում ես, և ես կբուժվեմ, կփրկվեմ։ Համբուրիր ինձ, և ես չեմ զղջա, որ կործանվելու եմ՝ թեկուզ մի քանի օր հաճույք պարգևելով քեզ։

Նունը փաթաթվեց Ռեյմոնին իր թուխ ու քնքուշ թևերով, երկար մազերը թափվեցին նրա վրա։ Սև ու խոշոր աչքերը տենդագին կարոտով ողողեցին նրան։ Եվ Նունը հմայեց Ռեյմոնին՝ երակներում հոսացող արյունով, արևելյան շնչով հագեցած ցանկասիրությամբ, որ կարող է բռնանալ անգամ ամենաուժեղ կամքի վրա։ Ռեյմոնն ամեն ինչ մոռացավ. և՛ որոշումներ, և՛ նոր սեր, և՛ սենյակ։ Փոխադարձեց Նունին տենդագին գգվանքներ, նույն բաժակի մեջ թաթախեց շրթները, և իրենց ձեռքի տակ գտնվող զգլխիչ գինիները նրանց գատողությունն ամբողջությամբ խլեցին։

Մշուշի մեջ թափառող Ինդիանայի հիշողությունը կամաց-կամաց եկավ միախառնվելու Ռեյմոնի արբեցումին։ Դեմ-դիմաց տեղավորված երկու մեծ հայելիներն իրար էին ուղարկում Նունի անհաշիվ պատկերները, որոնք կարծես լցվում էին սենյակի մեջ հազարաչափ տեսիլքներով։ Ռեյմոնը փորձում էր կրկնակի արտացոլման մեջ առանձնացնել ավելի նուրբ մի կերպարանք, և թվում էր, թե հանձինս վերջին մշուշապատ, աղոտ ստվերի՝ որսում էր տիկին Դելմարի նրբիրան, հեղաձկուն կերպարանքը։

Իսկ Նունը, թունդ խմիչքներից նույնպես ինքնակորույս, քանի որ առաջին անգամն էր համտեսում, այլևս չէր ընկալում սիրեկանի տարօրինակ խոսքերը։ Եթե նրա նման ինքն էլ զգոն լիներ, կհասկանար, որ ամենախոր զառանցանքի մեջ Ռեյմոնն ուրիշի մասին էր մտածում։ Նա կտեսներ, որ այդ մարդը համբուրում է Ինդիանայի կրած վզնոցն ու ժապավենները, շնչում է այն բույրը, որ հիշեցնում է նրան, ամուր ձեռքի մեջ ճմռթում է նրա կուրծքը քողարկող կերպասը։ Բայց Նունը այս ցնորքը վերագրում էր իրեն, երբ Ռեյմոնը տեսնում էր նրա մոտ միայն Ինդիանայի հագուստը։ Երբ համբուրում էր սև մազերը, նրան թվում էր, թե Ինդիանայի սև մազերն է համբուրում։ Ինդիանային էր տեսնում շերմզոլու բոցերի մեջ, որ Նունն իր ձեռքով էր վառել, այդ նա՛ էր կանչում իրեն ու ժպտում առագաստի շղարշի հասկանալի ապշության մեջ, անշարժ, ասես երազում, նաև այն պահին, երբ, սիրուց ու գինուց արբած, հերարձակ կրեոլուհու հետ ընկավ այդ համեստ ու անբիծ անկողնու վրա։

Երբ Ռեյմոնն արթնացավ, փեղկերի արանքից թեթև լույս էր թափանցում։ Բավական երկար ժամանակ ընկղմված անհասկանալի ապշության մեջ, անշարժ, ասես երազում պառկած էր շորս բոլորը, ինչպես նաև իր պառկած անկողինը։ Տիկին Դելմարի սենյակում կարգ ու կանոն էր իշխում։ Նունը քնել էր որպես թագուհի, առավոտյան արթնացել որպես սպասուհի։ Հավաքել էր ծաղիկներն ու անհետացրել ընթրիքի մնացորդները։ Կահույքը վերադասավորված էր։ Գիշերային գինարբուքից, զեխ սիրուց ոչ մի մասնող հետք չէր մնացել, և Ինդիանայի սենյակը վերստացել էր իր մաքուր ու պարկեշտ տեսքը։

Ամոթից ընկճված՝ նա վեր կացավ և ուզեց դուրս գալ սենյակից, բայց դուռը կողպած էր, պատուհանը երեսուն ոտնաչափ բարձրության վրա էր, նա ստիպված էր պտտվող անվին կապված Իքսիոնի* նման, խղճի խայթը սրտում, մնալ սենյակում։

* Իքսիոն — Թեսալիայի արքան, որին Զեսը անմահություն պարգևեց, բայց հետո պատժեց նրան Հերային հրապուրելու համար, կապելով հրկիզվող անիվից, որ հավերժ պտտվում է Տարտարոսում (ծ. բ.)։

Նա ընկավ ծնկների վրա, երեսը շրջած ճմռթված անկողնու կողմը, ամոթից շիկնած։

— Օ՜, Ինդիանա,— բացականչեց նա՝ ձեռքերը կոտրատելով,— ինչպես անպատվեցի քեզ, կարո՞ղ ես նման ստոր արարք ներել։ Բայց որքան էլ մեծահոգի գտնվես, ե՛ս չեմ ների ինձ։ Բարի, վստահելի Ինդիանա, մի ընդունիր ինձ, որովհետև չգիտես, թե ինչպիսի բիրտ ու չնչին մարդու ես ուզում հանձնել անմեղության գանձերը։ Օ՜, թշվառական, մեղսագործ, ստոր արարած. եթե արյունով կարողանայիր լվանալ այս անկողնու վրա թողած անարգանքիդ հետքերը։

Եվ Ռեյմոնն անկողինը ողողում էր արցունքով։

Այդ ժամանակ ներս մտավ Նունը՝ գլխաշորով ու գոգնոցով։ Ռեյմոնին ծնկաչոք տեսնելով, կարծեց, թե ազոթում է։ Նա չգիտեր, որ աշխարհիկ մարդը չի աղոթում։ Լուռ սպասեց, մինչև որ Ռեյմոնը բարեհաճեց նկատել իր ներկայությունը։

Ռեյմոնը, տեսնելով նրան, շփոթվեց, բայց քաջություն չունեցավ բարկանալու, ուժ չունեցավ բարեկամական որևէ խոսք ուղղելու նրան։

— Ինչո՞ւ ինձ բանտարկեցիք,— վերջապես խոսեց նա,— չե՞ք մտածում, որ լուսացել է, և այս տնից կարող եմ դուրս գալ միայն ձեզ խայտառակելու գնով։

— Իսկ դուք գնալու կարիք չունեք,— քնքշորեն պատասխանեց Նունը,— տանը մարդ չկա, իսկ բնակարանի այս հատվածն ընդհանրապես ոչ ոք չի այցելում, բոլոր բանալիներն ինձ մոտ են։ Ցերեկն էլ կմնաք այստեղ, իմ բանտարկյալն եք։

Այս որոշումը հուսահատության մեջ գցեց Ռեյմոնին։ Արգահատում էր սիրուհուն, բայց ստիպված էր համակերպվել, չնայած տանջվում էր այդ սենյակում գտնվելու մտքից, համենայն դեպս ինչ-որ անպարտելի դյութանք դեռ ուզում էր նրան այդտեղ պահել։

Երբ Նունը նրան մենակ թողեց՝ նախաճաշ բերելու համար, Ռեյմոնը ցերեկվա լույսով սկսեց զննել Ինդիանայի մենակ պահերի լուռ վկաները։ Բաց արեց գրքերը, թերթեց ալբոմները, բայց իսկույն ևեթ փակեց՝ վախենալով նոր պիղծ քայլ կատարել և հափշտակել կանացի գաղտնիքներ։ Ի վեր-

չո սկսեց քայլել սենյակում և հանկարծ նկատեց տիկին Դելմարի մահճակալի դիմացի պատին, ճոխ շրջանակի մեջ առնված մի մեծադիր դիմանկար, որը թանձր շղարշով էր ծածկված։

Հավանաբար Ինդիանայի դիմանկարն էր։ Ռեյմոնը վառվում էր այն տեսնելու ցանկությունից և, մոռանալով բոլոր տվայտանքները, բարձրացավ աթոռին, հանեց ապահով ասեղները և զարմանքով հայտնաբերեց հասակով մեկ կանգնած մի գեղեցիկ երիտասարդի պատկեր։

Գլուխ VIII

— Ինձ թվում է, ինչ-որ տեղ տեսել եմ այս դիմագծերը,— ասաց Ռեյմոնը, ջանալով անտարբեր տեսք ընդունել։

— Էհ, պարոն, լավ չէ, որ ուզում եք տիրուհուս գաղտնիքների մեջ թափանցել,— ասաց երիտասարդ աղջիկը՝ նախաճաշը դնելով սեղանին։

Ռեյմոնը զունատվեց։

— Գաղտնիքնե՞ր,— կրկնեց նա,— եթե այստեղ գաղտնիք կա, և դու ծանոթ ես դրան, ուրեմն, Նուն, դու կրկնակի հանցավոր ես, որ այս սենյակը բերիր ինձ։

— Էլ ինչ գաղտնիք,— ասաց Նունը ժպտալով,— եթե պարոն Դելմարն է օգնել կախելու Սըր Ռալֆի դիմանկարն է։ Տիրուհիս կարո՞ղ էր այդպիսի խանդոտ ամուսնուց գաղտնիք պահել։

— Ասում ես, սըր Ռա՞լֆ, ո՞վ է այդ սըր Ռալֆը։

— Սըր Ռոդոլֆ Բրաունը տիկին Դելմարի զարմիկն է, մանկության ընկերը, կարող եմ ասել, նաև իմ ընկերը։ Շատ բարի մարդ է։

Ռեյմոնը զարմացած ու անհանգիստ դիտում էր դիմանկարը։ Արդեն նշել ենք, որ սըր Ռալֆը, չնայած անարտահայտիչ դիմագծերին, գեղեցիկ տղամարդ էր, սպիտակամաշկ, վարդագույն այտերով, թավ այտմորուսով ու մազերով, միշտ գեղեցիկ հագնված, նա, ամեն դեպքում, չէր կարող որևէ ռոմանտիկ էակի հրապուրել, բայց կարող էր դուր գալ, հատկապես դրական նկարագիր ունեցող մարդկանց։ Սառնարյուն բարոնը նկարում որսորդական համազգեստով

էր, համարյա այնպես, ինչպես տեսանք նրան այս պատմության առաջին գլխում. շներով շրջապատված, իսկ արծաթափայլ մազերով Օֆելյան առաջին մասում էր, որպես զտարյուն շոտլանդական ցեղի շուն։ Սըր Ռալֆը մի ձեռքով բռնել էր որսորդական եղջերափողը, մյուսով՝ կտավի հետևի մասում կանգնած մոխրագույն, անգլիական ցեղի հրաշալի աշխատի սանձը։ Հոյակապ ստեղծագործություն էր, տոհմական ընտանիքին արժանի կտավ՝ իր բոլոր մանրամասներով, դիմագծերի անթերի կերտումով, բարեխղճորեն կատարված մի աշխատանք, որ կարող էր արցունք խլել դայակի աչքերից, շներին հալել տալ, հիացմունք պատճառել դերձակին։ Ճիշտն ասած, անարատահայտիչ էր միայն բնորդը։ Այնուհանդերձ, կտավը խորապես խոցեց Ռեյմոնին։

«Այ քեզ բա՜ն,— ասում էր ինքն իրեն,— ուրեմն այս երիտասարդ, թիկնեղ անգլիացին տիկին Դելմարի ննջարանում գանվելու արտոնությո՞ւն ունի։ Նրա հիմար դեմքը մըշտապես այստեղ է և սառնորեն դիտում է Ինդիանայի կյանքի ամենագաղտնի գործողությունները։ Հետևում է նրան, հսկում է, ծանոթ է նրա բոլոր շարժուձևերին, ամեն վայրկյան իշխում է նրա վրա։ Տեսնում է, թե ինչպես է գիշերները քնում, և որսում է նրա գաղտնի երազները։ Առավոտյան, երբ ցրտից դողալով՝ սպիտակ գիշերանոցով դուրս է գալիս անկողնուց, տեսնում է նրա բոբիկ ոտքերը գորգի վրա։ Եվ հագնվելու ժամանակ, երբ ամոթխածորեն փակում է պատուհանի վարագույրները, նույնիսկ արգելելով ցերեկվա լույսին անամոթաբար թափանցել իր սենյակը, երբ կարծում է, թե ինքը մեն-մենակ է, բոլորի հայացքից հեռու, այս ամբարտավան մարդը ըմբոշխնում է նրա հմայքները, որսորդական երկարաճիտ կոշիկներով այս մարդը մշտապես ներկա է գտնվում նրա հարգարանքին»։

Եվ բարձրաձայն ավելացրեց՝ դիմելով սպասուհուն.

— Սովորաբար այս կտավը միշտ կտորով ծածկվա՞ծ է։

— Միշտ,— պատասխանեց Նունը,— երբ տիկին Դելմարը բացակայում է։ Բայց մի՛ տանջվեք, կարիք չկա փակելու, տիրուհիս մի քանի օրից կվերադառնա։

— Այդ դեպքում, Նուն, լավ կանեք, եթե նրան ասեք, որ այս կերպարանքը ամբարտավան տեսք ունի... Պարոն Դելմարի փոխարեն կհամաձայնեի թողնել նրան այստեղ միայն աչքերը փորելուց հետո... Ահա թե որտեղ է ամուսինների հիմար խանդը, նրանք ամեն տեսակի ենթադրություն անում են և չեն նկատում, թե ինչ է կատարվում։

— Իսկ ձեզ ինչո՞ւ դուր չի գալիս բարի պարոն Բրաունի կերպարանքը,— ասաց Նունը՝ հավաքելով տիրուհու անկողինը,— շատ բարեհոգի մարդ է։ Առաջ այնքան էլ չէի սիրում նրան, որովհետև միշտ ականջիս հասնում էր, թե նա «եսասեր» է, և անընդհատ կրկնում էին տիկին Դելմարի ներկայությամբ, բայց այն օրից, ինչ նա ջանք չխնայեց ձեզ փրկելու...

— Ճիշտ է,— ընդհատեց Ռեյմոնը,— նա օգնեց ինձ, համաձայն եմ... Բայց դա արեց՝ միայն անսալով տիկին Դելմարի խնդրանքին...

— Որովհետև իմ տիրուհին շատ բարեսիրտ է,— ասաց խեղճ Նունը,— նրա ներկայությամբ ո՞վ բարի չի դառնում։

Երբ Նունը խոսում էր տիկին Դելմարի մասին, Ռեյմոնը հետաքրքրությամբ լսում էր նրան, իսկ խեղճ աղջիկը չէր էլ կասկածում։

Ցերեկը բավական խաղաղ անցավ։ Նունը չէր համարձակվում խոսք բացել իրեն հուզող թեմայի շուրջ։ Ի վերջո, երեկոյան, մեծ դժվարությամբ հաջողվեց նրան իր մտադրությունները պարզաբանել։

Ռեյմոնի միակ նպատակն էր ազատվել վտանգավոր վկայից և մի կնոջից, որին այլևս չէր սիրում։ Բայց ուզում էր նյութապես ապահովել նրա ապագան և վախվխելով առաջարկեց առատաձեռնորեն վարձատրել... Խեղճ աղջիկը վշտացավ այդ ստորացուցիչ առաջարկությունից, սկսեց մազերը պոկել և գլուխը ջարդ ու փշուր կաներ, եթե Ռեյմոնը ուժով հետ չպահեր նրան։ Այդ ժամանակ, օգտվելով բնության պարգևած լեղվական և մտավոր հնարքներից, Ռեյմոնը բացատրեց, որ այդ գումարը ոչ թե նրան է հատկացնում, այլ աշխարհ եկող երեխայի մորը։

— Դա իմ պարտականությունն է,— ասաց Նունին,— ես ժառանգություն եմ թողնում նրան, բայց ձեզ եմ տալիս, իսկ եթե անտեղի հպարտությամբ հրաժարվեք, կմեղանչեք նրա դեմ։

Նունը հանգստացավ, սրբեց արցունքները։

— Դե լավ,— ասաց նա,— կընդունեմ մի պայմանով. խոստացեք ինձ սիրել, որովհետև երեխայի հանդեպ ձեր պարտքը կատարելով, մոր հանդեպ նույն ձևով չեք վարվի։ Ձեր բարիքները հնարավորություն կտան նրան ապրել, բայց ձեր անտարբերությունը կսպանի ինձ։ Ձե՞ք կարող ձեր տանն ինձ տեղավորել որպես սպասուհի։ Ես պահանջկոտ չեմ, իմ փոխարեն մեկ ուրիշը ինչ-որ հնարքով ձեռք կբերեր իր ուզածը։ Թույլ տվեք ձեր ծառան դառնալ։ Տեղավորեք ձեր մոր մոտ։ Նա գոհ կմնա ինձնից, երդվում եմ, իսկ եթե դադարեք ինձ սիրել, գոնե կտեսնեմ ձեզ։

— Ձեր պահանջն անհնար է, սիրելի Նուն։ Այս վիճակով ոչ ոք ձեզ ծառայության չի վերցնի։ Իսկ մորս խաբել, նրա վստահությունը չարաշահել՝ սարսափելի կլինի մեր կողմից։ Ես երբեք այդ քայլին չեմ դիմի։ Գնացեք Լիոն կամ Բորդո։ Ես պարտավորվում եմ ամեն ինչ անել, մինչև որ կարողանաք երևալ մարդկանց աչքին։ Այդ ժամանակ կտեղավորեմ ձեզ իմ ծանոթներից մեկի տանը, նույնիսկ Փարիզում, եթե կամենաք... եթե չեք ուզում ինձնից հեռու գտնվել... բայց նույն հարկի տակ անհնար է...

— Անհնա՞ր է,— ցավատանջ հոգով, ձեռքերը միացրած բացականչեց Նունը,— հասկանում եմ, արհամարհում եք ինձ, ամաչում եք ինձ համար... Շատ լավ, ես ոչ մի հեռավոր քաղաք էլ չեմ գնա այս վիճակով, մենակ, լքված ու ստորացած, չեմ գնա մեռնելու հեռավոր մի անկյունում, որտեղ ընդմիշտ կմոռացվեմ ձեր կողմից։ [Ինչիս է պետք անուն և պատիվ։ Ես ուզում էի ձեր սիրը պահպանել...]

— Նուն, եթե վախենում եք, թե կխաբեմ ձեզ, եկեք ինձ հետ։ Նույն կառքով կմեկնենք ձեր ընտրած վայրը։ Ամեն տեղ, բացի Փարիզից կամ մորս տնից, կհետևեմ ձեզ, ոչինչ չեմ խնայի ձեզ համար...

— Այո, որպեսզի օտար քաղաքում տեղավորելու հաջորդ օրն իսկ լքեք ինձ որպես ավելորդ բեռ,— ասաց նա՝ դառնորեն ժպտալով,— Ոչ, պարոն, ոչ, ես մնում եմ, չեմ ուզում ամեն ինչ միանգամից կորցնել։ Ձեզ հետևելով, կարող էի զոհաբերել այն ամենաթանկ էակին, որին բոլորից շատ էի սիրում աշխարհում, նախքան ձեզ ճանաչելս, բայց այնքան

էլ չեմ վախենում անպատվությունից, որ միաժամանակ զոհաբերեմ և՛ սեր, և՛ ընկերություն։ Կընկնեմ տիկին Դելմարի ոտքերը, ամեն ինչ կպատմեմ նրան, հավատացած եմ՝ կնևրի, որովհետև բարի է և սիրում է ինձ։ Համարյա նույն օրն ենք ծնվել, իմ կաթնաքույրն է։ Երբեք իրարից չենք բաժանվել, նա չի թողնի, որ հեռանամ իր մոտից։ Ինձ հետ լաց կլինի, ինձ կխնամի, կսիրի իմ զավակին, իմ խեղճ զավակին, քանի որ ինքը երջանկություն չունեցավ մայր դառնալու, ո՞վ գիտե, գուցե որպես սեփական երեխայի հոգա... Ինչ հիմար եմ, ինչպե՞ս կարող էի լքել նրան, աշխարհում միակ մարդուն, որ կիսղնա ինձ...

Այս վճռականությունը Ռեյմոնին խոր հուսահատության մեջ էր գցել, երբ հանկարծ կառքի անիվների դղրդյուն լսվեց բակում։ Նունը սարսափահար վազեց պատուհանի մոտ։

— Տիկին Դելմարն է,— բացականչեց նա,— փախեք։

Շփոթի մեջ հետնամուտքի աստիճանների դռան բանալին անհնար եղավ գտնել։ Նունը բռնեց Ռեյմոնի ձեռքից ու արագ քաշեց իր հետևից դեպի միջացք, բայց կեսն էլ չէին անցել, որ լսեցին դիմացից եկող քայլերի աղմուկ։ Լսվեց տիկին Դելմարի ձայնը, և ուղեկցող սպասավորի մոմի լույսն ընկավ նրանց սարսափած դեմքերին։

Նունը հազիվ ժամանակ ունեցավ շրջվելու, անընդհատ հետևից քարշ տալով Ռեյմոնին։ Նորից վերադարձան ննջասենյակ։

Հարդարանքի փոքրիկ սենյակը, որ ապակեպատ դռնով էր բաժանվում ննջասենյակից, կարող էր որոշ ժամանակով ապաստարան նրան, բայց թաքնվելու ոչ մի հնարավորություն չկար. տիկին Դելմարը կարող էր անմիջապես այնտեղ մտնել։ Եվ որպեսզի հանկարծակի չհայտնաբերվեր, Ռեյմոնն ստիպված եղավ դեպի սենյակի խոռոչը և թաքնվեց վարագույրի հետևում։ Անհնար է, տիկին Դելմարն անմիջապես անկողին չէր մտնի, իսկ մինչ այդ, Նունը մի հնարք կգտներ նրան այդտեղից դուրս բերելու։

Ինդիանան աշխուժորեն մտավ սենյակ, նետեց գլխարկը մահճակալի վրա, քրոջ նման համբուրեց Նունին։ Սենյակը թույլ էր լուսավորված, և նա չնկատեց ընկերուհու հուզումը։

— Նշանակում է, սպասում էիր ինձ,— ասաց, մոտենա-

լով կրակին,— որտեղի՞ց իմացար, որ գալու եմ,— և առանց պատասխանի սպասելու՝ ավելացրեց,— պարոն Դելմարը վաղը գալու է։ Նամակն ստանալուն պես իսկույն մեկնեցի։ Պետք է նրան այստեղ դիմավորեմ և ոչ թե Փարիզում, դրա համար պատճառներ կան։ Հետո կպատմեմ։ Բայց սա ինչ բան է, կարծես այնքան էլ գոհ չես ինձ տեսնելով։

— Տխուր եմ,— ասաց Նունը, ծնկի գալով տիրուհու առջև կոշիկները հանելու համար,— ես էլ եմ ուզում խոսել ձեզ հետ, բայց ավելի ուշ։ Հիմա դնանք հյուրասրահ։

— Տեր աստված, սա ինչ դատողություն է, չէ՞ որ հիմա այնտեղ սառնամանիք է։

— Ո՛չ, կրակ կա։

— Ինչ ես ասում, հենց նոր անցա հյուրասենյակով։

— Բայց ընթրիքը ձեզ է սպասում։

— Չեմ ուզում ընթրել։ Եվ հետո պատրաստի ուտելիք չկա։ Դնա մորթե վզնոցս բեր, կառքի մեջ եմ թողել։

— Մի բիչ հետո։

— Իսկ ինչո՞ւ ոչ հիմա, գե գնա՛, գնա՛։

Այս խոսքերի հետ աշխուժորեն հրեց Նունին, իսկ վերջինս զգալով, որ համարձակություն ու պաղարյունություն է հարկավոր ցուցաբերել, մի քանի բոպեով լքեց սենյակը։ Նույն բոպեին տիկին Դելմարը ներսից կողպեց դուռը, հանեց մուշտակն վերարկուն, դրեց մահճակալի վրա, գլխարկի մոտ։ Շատ մոտ էր կանգնած Ռեյմոնին, վերջինս փորձեց հետ բաշվել։ Մահճակալը թեթև անիվների վրա էր ամրացած։ Երբ Ռեյմոնն ընկրկեց, մահճակալը նույնը ճռռիչով շարժվեց տեղից։ Տիկին Դելմարը խուճապի չմատնվեց, բայց զարմացավ՝ կարծելով, թե ինքն է հրել և վարագույրը մի փոքր բարձրացնելով՝ ներս նայեց և բուխարիկից արձակված թույլ լույսի տակ պատին գծագրված տղամարդու գլուխ տեսավ։

Սարսափի ճիչ արձակելով, զանգը հնչեցնելու և օգնության կանչելու համար նետվեց բուխարիկի կողմը։ Ռեյմոնը նպատակահարմար գտավ մեկ անգամ ևս գողի գերում հանդես գալ, քան ճշմարտությունը բացահայտել։ Եթե նախազգուշական միջոցների չդիմեր, տիկին Դելմարը կանչելու էր ծառաներին և խայտառակելու էր իրեն։ Հույսը դրեց ներշնչած սիրո վրա, և, նետվելով նրա կողմը, փորձեց խլացնել ճիչերը

և հեռացնել զանգից, կիսաձայն՝ շշնջալով, որպեսզի Նունը դուռն հետևից լսեր իրեն։

— Ես եմ, Ինդիանա, մի վախեցիր, ներիր ինձ, Ինդիանա։ Ներեցեք դժբախտիս, խելքս տարել եք, չկարողացա համակերպվել այն մտքի հետ, որ նախքան ձեզ տեսնելս՝ սրբվելու եք ձեր ամուսնուն։

Եվ այն պահին, երբ Ինդիանային հանգստացնելու և թույլ չտալու համար, որ զանգը հնչեցնի, կրծքին էր սեղմում նրան, Նունը անհանգստացած սկսեց դուռը թակել։ Ռեյմոնի գրկից ազատվելով, տիկին Դելմարը վազեց դուռը բացեց և ընկավ բազկաթոռի մեջ։

Գույնը զցած, մեռնելու պատրաստ Նունը նետվեց դռան կողմը, որ թույլ չտա եկող-կնացող ծառաներին արտառոց տեսարանին ներկա գտնվելու։ Տիրուհուց ավելի գունատ, դողացող ծնկներով, դռանը հենված՝ սպասում էր Ինդիանայի վճռին։

Ռեյմոնն զգաց, որ ճարպկությամբ միաժամանակ գեռ կարող է մոլորեցնել երկու կանանց։

— Տիկին,— ասաց նա՝ Ինդիանայի առջև ծնկի գալով,— իմ ներկայությունն այստեղ կարող է բռնություն թվալ։ Ահա ձեր ստրերի առջև ընկած ներում եմ հայցում։ Թույլ տվեք առանձին խոսել ձեզ հետ, միայն մի քանի բոպե, և ես կբացատրեմ ձեզ...

— Լռեցե՛ք, պարոն, և դուրս եկեք այստեղից,— գոռաց տիկին Դելմարը՝ վերագտնելով իր ողջ արժանապատվությունը,— դուրս եկեք հրապարակայնորեն։ Նույն, բաց արեք դուռը և թույլ տվեք պարոնին դուրս գալ, որպեսզի բոլոր ծառաները տեսնեն նրան, և այդ արարքի այպանանքը ինքը միայնակ կրի։

Նունը, կարծելով, որ ամեն ինչ հայտնաբերվել է, չոքեց Ռեյմոնի կողքին։ Տիկին Դելմարը, լռություն պահելով, զարմացած նայում էր նրան։

Ռեյմոնն ուզեց նրա ձեռքը բռնել, բայց Ինդիանան արագահատանքով հետ քաշեց։ Զայրույթից շիկնած՝ վեր կացավ և, դուռը ցույց տալով, կրկնեց.

— Դո՛ւրս եկեք, ասում եմ, դո՛ւրս այստեղից. դատոր արարք եք թույլ տալիս։ Ահա թե ինչպիսի միջոցներ էիք ուզում բա-

նեցնել, պարոն, գողի նման սենյակիս մեջ թաքնվելով։ Ուրեմն դուք սովորություն ունեք սողոսկել ընտանիքների մեջ։ Ուրեմն սա է անկեղծ սիրո մասին երեկվա ձեր խոստումը։ Այսպես էիք ուզում նենգուկ դառնալ ինձ, հարգել ու պաշտպանել իմ անձը։ Ահա թե ինչպիսին է ձեր պաշտամունքը։ Ձեր դեմ կանգնած է այն կինը, որ իր ձեռքերով խնամեց ձեզ, կյանքի վերակոչեց, ամուսնու զայրույթին արժանացավ։ Կեղծ երախտագիտությամբ հանդես գալով՝ նրան արժանավայել սեր խոստացաք և, ի հատուցումն իր խնամքների, ի հատուցումն իր հավատի, ցանկացաք օգտվել նրա քնից և ամենանենգ ճանապարհով, հնարավորին չափ շուտ, հասնել ձեր նպատակին։ Դուք կաշառել եք իմ սպասուհուն, համարյա սողոսկել եք անկողնուս մեջ, ձեզ արդեն երջանիկ սիրեկան եք պատկերացրել։ Դուք չեք վախենալ իմ ծառաների վստահությունը գնել այնպիսի մի պատճառաբանությամբ, որ զոյություն չունի... Գնացեք, պարոն, դուք ամեն ինչ արեցիք՝ հնարավորին չափ շուտ հուսախաբ անելու ինձ... Հեռացեք, ասում եմ, մեկ վայրկյան անդամ չմնաք իմ տանը, իսկ դուք, թշվառ աղջիկ, քանի որ բոլորովին չեք հարգում ձեր տիրուհու պատիվը, արժանի եք վտարման։ Հեռացե՛ք դռան մոտից, հրամայում եմ։

Զարմանքից և հուսահատությունից կիսամեռ՝ Նունը աչքերը հառել էր Ռեյմոնի վրա, կարծես բացատրություն էր պահանջում նրանից այս առեղծվածը պարզելու համար։ Հետո, մոլորված հայացքով, դողդոջուն քայլերով մոտեցավ Ինդիանային՝ ուժով բռնելով նրա թևը։

— Ի՞նչ ասացիք,— ճչաց նա զայրույթից ատամները սեղմած,— այս մարդը սիրո՞ւմ է ձեզ։

— Իբր թե չգիտեիր,— ասաց տիկին Դելմարը՝ արհամարհանքով հրելով նրան,— իբր թե չգիտեիր, թե ինչու է տղամարդը թաքնվում կնոջ առագաստի հետևում։ Ախ, Նուն,— ավելացրեց նա՝ տեսնելով աղջկա հուսահատությունը,— նենգություն էր քո արածը և երբեք մտքովս չէր անցնի, որ նման քայլի կարող էիր դիմել։ Դու ցանկացար ծախել իմ պատիվը, իսկ ես որքան էի հավատում քեզ...

Տիկին Դելմարը հեկեկում էր զայրույթից ու ցավից։ Նա երբեք այդքան գեղեցիկ չէր երևացել Ռեյմոնին, բայց վերջինս համարձակություն չուներ նայել նրա դեմքին, վիրավորված կնոջ հպարտությունը ստիպում էր նրան՝ խոնարհեցնել հայացքը։ Նա կանգնել էր կոտրված սրտով և վհատված էր Նունի ներկայությունից։ Եթե տիկին Դելմարի հետ առանձին գտնվեր, գուցե ուժ ունենար մեղմացնել նրա զայրույթը։ Բայց Նունի դեմքի արտահայտությունը սարսափելի էր. կատաղությունից ու ատելությունից դիմագծերն այլայլվել էին։

Դռան հարվածը երբեքին էլ ցնցեց։ Նունը նորից նետվեց դուռը փակելու, բայց տիկին Դելմարը, վճռականորեն մի կողմ հրելով նրան, հրամայական շարժումով Ռեյմոնին պարտադրեց սենյակի խորքում թաքնվել։ Մանր պահերի հատուկ ինքնաատիրապետումով, շալը գցեց ուսերին, կիսաբաց արեց դուռը և հարցրեց սպասավորին՝ գալու պատճառը։

— Պարոն Ռոդոլֆ Բրաունը հենց նոր ժամանեց,— պատասխանեց ծառան,— խնդրում է իմանալ, կընդունե՞ք իրեն։

— Ասացեք պարոն Ռոդոլֆին, որ շոյված եմ նրա այցելությունից, հիմա կգամ։ Հյուրասենյակը տաքացրեք, ընթրիքի պատրաստություն տեսեք։ Մի բոպե սպասեք, նախ բերեք պարտեզի հետնամուտքի դռան բանալին։

Ծառան գնաց։ Տիկին Դելմարն սպասեց կիսաբաց դռան մոտ՝ չցանկանալով լսել Նունին և հրամայաբար լռություն պահանջելով Ռեյմոնից։

Երբ բոպե չանցած ծառան նորից հայտնվեց։ Տիկին Դելմարը դուռը պահած իր և պարոն դը Ռամիերի միջև, վերցրեց բանալին, ծառային հրամայեց գնալ և շտապեցնել ընթրիքի պատրաստությունը։ Երբ սպասավորը հեռացավ, Ինդիանան դիմեց Ռեյմոնին.

— Իմ զարմիկի՝ սրբ Բրաունի ժամանումը ձեզ փրկում է այն ամոթաբեր աղմուկից, որ կցանկանայի ստեղծել ձեր անձի շուրջ։ Նա պատվախնդիր մարդ է և իր արյան գնով կպաշտպանի ինձ, բայց ես չէի կամենա ձեր պատճառով վտանգել այդպիսի արժանավոր մարդու կյանքը։ Թույլ եմ տալիս ձեզ հեռանալ առանց աղմկելու։ Նունն է ձեզ այստեղ բերել, ինքն էլ ձեզ կուղեկցի։ Հեռացե՛ք։

— Մենք դեռ կհանդիպենք, տիկին,— պատասխանեց Ռեյմոնը, չանալով հանգիստ տեսք ընդունել,— չնայած մեղա-

վոր եմ, բայց կարծում եմ, զղջալու եք իմ հանդեպ ցուցաբերած խստության համար։

— Պարոն, հույս ունեմ, որ այլևս չենք հանդիպի,— պատասխանեց Ինդիանան։

Դռան մոտ կանգնած Ինդիանան հարկ չհամարեց պատասխանել հրաժեշտի շարժումին, լուռ նայեց Ռեյմոնի և ամբողջ մարմնով դողացող թշվառ մեղսակցի հետևից։

Պարտեզի խավարում մենակ մնալով Նունի հետ, Ռեյմոնը սպասեց հանդիմանական խոսքերի, բայց Նունը ոչ մի բառ չասաց։ Ուղեկցեց նրան մինչև հետնամուտքի դռան մոտ, և երբ Ռեյմոնն ուզեց նրա ձեռքը բռնել, սա թողեց ու փախավ։ Պարոն դը Ռամիերը ցածր ձայնով կանչեց նրա հետևից, ուզում էր նրա մտադրությունն իմանալ, բայց Նունը չպատասխանեց, հայտնվեց պարտիզպանն ու ասաց.

— Հիմա գնացեք, պարոն, տիկինը ժամանել է, կարող են ձեզ նկատել։

Մահվան չափ տխուր՝ Ռեյմոնը հեռացավ։ Տխուր էր, որովհետև վիրավորել էր տիկին Դելմարին, իսկ Նունին համարյա մոռանալով՝ մտածեց միայն Ինդիանային հանգստացնելու մասին։ Նա այն մարդկանցից էր, որ, արգելքների հանդիպելիս, կատաղում են և կրքոտ ձևով կառչում են այնպիսի բաներից, որոնց տիրելն համարյա անհնարին է։

Երեկոյան, երբ տիկին Դելմարը, սբր Ռալֆի հետ անխոս ընթրելուց հետո, քաշվեց սենյակը, Նունը, սովորության համաձայն, չեկավ նրան օգնելու հանվելու համար։ Ինդիանան իզուր մի քանի անգամ հնչեցրեց զանգը, և երբ մտածեց, որ նրա կողմից դա բացահայտ բողոք է, դուռը փակեց ու պառկեց։ Բայց շատ ծանր գիշեր անցկացրեց. հենց լուսացավ, իջավ այգի։ Նա այրվում էր, անհրաժեշտ էր զովանալ, որպեսզի մարեր կուրծքը լափող հուրը։ Դեռ նախորդ օրն, այս ժամին, երջանիկ էր, տարված էր արբեցուցիչ նոր իրադարձություններով։ Քսանչորս ժամվա ընթացքում ինչպիսի՞ սարսափելի հուսախաբություն։ Նախ ամուսնու անսպասելի, ժամանակից շուտ վերադարձը։ Նա դեռ չորս-հինգ օր պետք է մնար Փարիզում. այդ ժամանակահատվածը նրա համար լինելու էր մի ամբողջ երջանիկ կյանք, հարատև կյանք, սիրո երկար երազ, որ զարթնելուց հետո այլևս չէր ընդհատվելու։

Բայց վաղորդայնի մեջ նա կամա թե ակամա հրաժարվեց դրանից, որպեսզի նորից կրեր լուծը, տիրոջն ընդառաջ գնար ու տիկին դը Քարվոխալի տանը չհանդիպեր Ռեյմոնին։ Հետո, այդ Ռեյմոնը խոր վիրավորանք էր հասցրել իրեն։ Վերջապես իր կյանքի ամենամտերիմ ընկերուհին, այդ երիտասարդ կրեոլուհին, որին այնքան սիրում էր, շարաշահել էր իր վստահությունը և հարգանքը։

Տիկին Դելմարն ամբողջ գիշեր հեկեկացել էր։ Այգու միջով հոսող գետի ափին խոտը ճերմակել էր առավոտյան ցողից. նա նետվեց այդ խոտերի մեջ։ Մարտ ամիսն ավարտին էր մոտենում, բնությունը զարթոնք էր ապրում։ Ցնցված առավոտյան ցրտին, հրապուրիչ էր շուրջբոլորը։ Ծածանվող քողի նման մառախուղը դեռ հանգստանում էր ջրերի վրա, թռչունները սիրո ու գարնան մասին առաջին երգերն էին փորձում։

Ինդիանան թեթևացավ, և ակնածանքով լի մի զգացում թափանցեց հոգու մեջ։

«Աստծո կամոք,— մտածում էր նա,— և նախախնամությամբ ամեն ինչ դաժանորեն լուսաբանվեց, և ինչպիսի՞ երջանկություն ինձ համար։ Այդ մարդը կարող էր մեղքի մեջ գցել ու կործանել ինձ։ Իսկ հիմա հայտնի են իր անարգ զգացմունքները, և կարող եմ զգուշանալ այդ փոթորկահույզ և դժնդակ կրքից, որ ծլարձակում էր նրա կրծքի տակ... Կսիրեմ ամուսնուս... Կլանամ, Համենայն դեպս, կենթարկվեմ, չեմ հակառակի և կերջանկացնեմ նրան։ Ինչ որ հաճելի չէ նրան, կաշխատեմ խուսափել դրանից, որովհետև հիմա ինձ հայտնի է պերճախոսության արժեքը, որին տիրապետում են տղամարդիկ, դրա օգտագործման ուժը, որ կիրառում են կանանց դեմ։ Եթե աստված ինձ գթա, ո՞վ գիտե, գուցե շուտափույթ մահ կուղարկի, և իմ տանջանքները վերջ կգտնեն...»։

Դիմացի ափի ուռիների հետևից ջրաղացն արդեն սկսել էր աղմկել՝ պարոն Դելմարի ֆաբրիկայի աշխատանքն սկսելու համար։ Դեռը, նոր բարձրացրած ջրարգելակների խոռոչի մեջ նետվելով, սկսել էր խլրտալ։ Տիկին Դելմարը մելամաղձոտ հայացքով հետևում էր ջրի արագահոս ընթացքին, երբ հանկարծ եղեգների մեջ ծփացող մուգ գույնի մի բան

տեսավ։ Գեսի հոսանքը ջանում էր քարշ տալ այն։ Ինդիանան վեր կացավ, կախվեց ջրի վրա և պարզորոշ նկատեց կանացի հագուստներ. հագուստներ, որ շատ լավ ծանոթ էին իրեն։ Սարսափից քարացավ, իսկ գետը անընդհատ առաջ էր նետվում և քարերի արանքից մի դիակ էր քարշ տալիս ու հասցնում տիկին Դելմարին...

Գործարանի բանվորների ուշադրությունը գրավեց սրտաճմլիկ մի ճիչ։ Տիկին Դելմարը ուշաթափվել էր գետափին, իսկ Նունի դիակը ծփում էր ջրերի վրա, նրա կողքին։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Գլուխ IX

Անցել է երկու ամիս։ Լանյի տանը, որտեղ ձեզ տեղափոխել էի աշնանային մի իրիկուն, ոչինչ չի փոխվել։ Միայն գարունն է սկսել բացվել՝ կենդանություն հաղորդելով մոխրագույն քարե երիզների մեջ ամփոփված կարմիր պատերին և գարավոր մամուռից գեղնած կղմինդրներին։ Տան բնակիչները վայելում են երեկոյի մեղմությունն ու ներթափանցող բույրերը։ Վերջալույսը ոսկեզօծել է լուսամուտների ապակիները, իսկ գործարանի աղմուկը խառնվել է սգարակի ձայներին։ Պարոն Դելմարը, նախամուտքի աստիճաններին նստած, թռչող ծիծեռնակների վրա հրացանով նշան բռնելու վարժություններ է անում։ Ինդիանան նստել է հյուրասենյակի պատուհանի առջև, ասեղնագործում է և ժամանակ առ ժամանակ տխուր նայում է գնդապետի անխիղճ զբաղմունքին։ Օֆելյան ցատկոտում, անհանգիստ կլանչում է խիստ անսովոր որսի առկայությամբ։ Իսկ սրբ Ռալֆը, աստիճանների բարձր բազրիքին նստած, անտարբեր հայացքով նայում է մեկի հաճելի զբաղմունքին, մյուսի ցավով լի հայացքին։

— Ինդիանա,— ձայն տվեց հանկարծ գնդապետը՝ հրացանը ցած դնելով,— դե թողեք այդ գործը, այնպես եք հոգնեցնում ձեզ, կարծես ժամավճարով եք աշխատում։

— Դեռ չի մթնել,— պատասխանեց տիկին Դելմարը։

— Ինչ անենք, պատուհանից դուրս նայեք, բան եմ ասելու։

Ինդիանան հնազանդվեց, իսկ գնդապետը, մոտենալով լուսամուտին, որ համարյա գետնին էր կպած, ծեր ու խանդոտ ամուսնուն հատուկ կատակով ասաց.

— Քանի որ այսօր լավ եք աշխատել ու խելոք եք մնացել, խիստ հաճելի նորություն եմ հայտնելու։

Տիկին Դելմարը փորձեց ժպտալ. այդ ժպիտը պիտի հուսահատեցներ գնդապետին, եթե նրբանկատ լիներ։

— Ուրեմն իմացեք,— շարունակեց նա,— ձեզ ձանձրույթից դուրս բերելու համար վաղը նախաճաշի եմ հրավիրել ձեր խոնարհ երկրպագուներից մեկին։ Հիմա կհարցնեք՝ ո՞ւմ, շարաճճի կին, չէ՞ որ մեծ հավաքածու ունեք։

— Երևի բարի ծերուկ քահանան է,— ասաց տիկին Դելմարը, որն ավելի էր տխրում ամուսնու զվարթությունից։

— Ոչ, ոչ, ամենևին։

— Ուրեմն Շայլիի քաղաքապետը կամ Ֆոնտենբլոյի ծեր նոտարը։

— Խորամանկ, դուք շատ լավ գիտեք, որ խոսքը նրանց մասին չէ։ Դե, Ռալֆ, ասացեք տիկնոջը այն մարդու անունը, որ լեզվի ծայրին է, բայց չի ուզում արտասանել։

— Այդքան նախապատրաստելու կարիք չկա, որպեսզի հայտնեք պարոն դը Ռամիերի անունը,— սառնորեն ասաց սըր Ռալֆը՝ սիգարը նետելով,— կարծում եմ, նրա համար այնքան էլ մեծ նշանակություն չունի դա։

Արյունը ցայտեց տիկին Դելմարի դեմքին, նա ձևացրեց, թե ինչ-որ բան է փնտրում հյուրասենյակում և, սիրապետելով իրեն, հանգիստ վերադարձավ տեղը։

—Հավատացած եմ, որ կատակում եք,— ամբողջ մարմնով դողալով՝ ասաց Ինդիանան։

— Ընդհակառակը, ամենայն լրջությամբ եմ խոսում, վաղը ժամը տասնմեկին նա այստեղ կլինի։

— Ինչպե՞ս, դուք ընդունում եք մի մարդու, որ գաղտնիք կորզելու նպատակով սողոսկել էր ձեր տուն, և քիչ էր մնացել սպանեիք նրան... Երկուսդ էլ շատ խաղաղասեր եք և շուտ եք մոռանում վիրավորանքները։

— Ձեր օրինակին եմ հետևում, շատ սիրելի տիկին, նա այնքան լավ ընդունելության է արժանացել ձեր կողմից, երբ այցելել է ձեզ ձեր հորաքրոջ տանը, որ...

Ինդիանան գունատվեց։

— Ամենևին ինձ չեմ վերագրում այդ այցելությունը,— շտապ պատասխանեց նա,— ինձ ամենևին չի հուզում դա, իսկ ձեր փոխարեն չէի ընդունի նրան։

— Բնույթով բոլոր կանայք էլ ստախոս են ու խորամանկ։ Ինձ ասել են, որ պարահանդեսի ժամանակ մինչև լույս պարել եք նրա հետ։

— Ստել են։

— Ձեր հորաքույրն է ասել։ Եվ հետո կարիք չկա արդարանալու, նա այնքան էլ վատ մարդ չէ, ձեր հորաքույրն է ցանկացել և օգնել է նրան, որ այս հանդիպումը կայանա։ Պարոն Ռամիերը վաղուց է փորձում մտերմանալ ինձ հետ։ Նա նրբանկատորեն և առանց իմ գիտության կարևոր ծառայություններ է մատուցել իմ արդյունաբերության ընդլայնմանը, իսկ ես այնքան էլ վայրենի չեմ, որքան պատկերացնում եք, բացի այդ, չեմ ուզում անծանոթ մարդու պարտքի տակ մնալ, այդ պատճառով որոշեցի հատուցել նրան իր մատուցած ծառայության դիմաց։

— Եվ ինչպե՞ս։

— Բարեկամություն հաստատելով նրա հետ։ Եվ ահա, այս առավոտ սըր Ռալֆի հետ գնացինք Սերսի։ Այնտեղ ծանոթացանք Ռամիերի մոր հետ, հրաշալի կին է, շատ հաճելի և ճոխ տուն ունեն, ճաշակով կահավորված, առանց շափազանցության, և կարևորն այն է, որ ամենևին չես զգում, որ ազնվականի ընտանիքում ես գտնվում, որովհետև իրենց անունով բնավ չեն հպարտանում։ Եվ հետո, այդ Ռամիերը անուշիկ երիտասարդ է, հրավիրեցի մեզ հետ նախաճաշելու և ֆաբրիկան այցելելու։ Նրա եղբոր մասին էլ լավ տեղեկություններ քաղեցի ու համոզվեցի, որ նա չի կարող վնասել ինձ՝ օգտվելով իմ կիրառած միջոցներից, մի խոսքով, նախընտրում եմ այդ ընտանիքին օգտակար լինել, քան մեկ ուրիշին, մանավանդ որ յուրաքանչյուր գաղտնիք, վաղ թե ուշ, երևան է գալիս, և իմ հնարքները կարող են ծիծաղելի դառնալ, եթե ընդհանրապես այսպիսի արագությամբ արդյունաբերությունը առաջընթաց ապրի։

— Իսկ ես, սիրելի Դելմար,— ասաց Ռալֆը,— ինչպես գիտեք, երբեք չեմ խրախուսել ձեզ՝ գործերի վերաբերյալ գաղտնիքներ պահելու համար։ Ազնիվ քաղաքացու պարտքն է յուրաքանչյուր հայտնագործություն ի սպաս դնել և՛ իր ընտանիքին, և՛ հայրենիքին, իսկ եթե ես...

— Գրողը տանի, սըր Ռալֆ, մարդասիրական զգացմունքից ելնելով՝ դուք էլի ձերն եք պնդում... Հավանաբար կուզենայիք հավատացնել, թե ձեր ունեցվածքը ձեզ չի՞ պատկանում, իսկ եթե վաղը ժողովուրդը ցանկանա վերցնել այն

ձեզանից, դուք պատրաստակամորեն կփոխանակե՞ք հիսուն հազար ֆրանկի եկամուտը մաղախով ու ցուպով։ Ձեզ նման կարիքին, որ սիրում է սուլթանի պես ճոխ կյանք վարել, չի սազում խոսել հարստությունն արհամարհելու մասին։

— Ես մարդասիրության մասին չեմ խոսում,— պատասխանեց սըր Ռալֆը,— իմ ասածն այն է, որ հարցին խելամտորեն մոտենանք. եսասիրությունը մեզ մղում է մարդկանց լավություն անել, որպեսզի թույլ չտանք՝ նրանք մեզ վատություն անեն։ Բոլորին հայտնի է, եսասեր եմ։ Վարժվել եմ այդ բառին, այլևս չեմ ամաչում, ուստիանասիրել եմ ամեն տեսակի առաքինություն և հանգել եմ այն եզրակացության, որ ամեն ինչի հիմքում ընկած է անձնական շահը։ Սերն ու բարեպաշտությունը, որոնք արտաքուստ վեհ զգացմունքներ են, գուցե ամենից շատ են հիմնված շահի վրա, հայրենասիրությունը նրանցից հետ չի մնում, հավատացեք։ Ես այնքան էլ չեմ սիրում մարդկանց, բայց ոչ մի գնով չեմ ցանկանա ապացուցել այդ բանը, որովհետև վախենում եմ նրանցից այնքան, որքան որ չեմ հարգում նրանց։ Ուրեմն, մենք երկուսս էլ եսասեր ենք. ես խոստովանում եմ, դուք ժխտում եք։

✓ Նրանց միջև հակայական բանավեճ ծավալվեց, յուրաքանչյուրն իր հերթին ջանում էր ապացուցել մյուսի եսասիրությունը։ Տիկին Դելմարն օգտվեց առիթից և քաշվեց իր սենյակը մտքերին անձնատուր լինելու՝ անակնկալ նորությունն իմանալուց հետո։

Ոչ միայն արժի նրա հոգեկան ապրումների մասին ձեզ տեղյակ պահել, այլև բացահայտել այն մարդկանց հոգեվիճակը, որոնք այս կամ այն կերպ նունի մահվան պատճառը դարձան։ Ե՛վ ընթերցողը, և՛ ես համոզված ենք, որ այդ դժբախտ արարածը հուսահատության այնպիսի հոգեցունց վիճակում խեղդվեց, երբ վճռականությունն իր գերագույն աստիճանին է հասնում։ Բայց քանի որ Ռեյմոնի մոտից հեռանալուց հետո, հավանաբար, խկուն ղղյակ չէր վերադարձել, և դրանից հետո ոչ ոք չէր տեսել նրան, ուստի դժվար էր կռահել նրա միտումնավոր քայլը. և ոչ մի հիմնավոր ապացույց չկար պնդելու, որ նրա կյանքն ինքնասպանությամբ էր ընդհատվել։

Երկու հոգի միայն հաստատապես կարող էին ասել, որ Նունը գիտակցաբար էր այդ միջոցին դիմել. պարոն դը Ռամիերը և Լանյիի պարտիզպանը։ Մեկի վիշտը թաքնվեց հիվանդության քողի տակ, մյուսի սարսափն ու խղճի խայթը ստիպեցին լռություն պահպանել։ Սըր Ռալֆը կարծածից ավելի շրջահայաց էր. ինչ-որ ներքին զգայողությամբ, նաև՝ պատճառաբանված, խոր կասկածներ ուներ, որ այս հարցում միակ մեղավորը պարոն Ռամիերն էր, բայց այդ մասին ոչ մեկին ոչինչ չասաց, մտածելով այդ քայլի անօգտակարության ու դաժանության մասին. կարիք չկար մեղադրել մի մարդու, որ առանց այն էլ բավականին դժբախտ պետք է զգար իրեն՝ խղճի վրա այդպիսի արատ ունենալով։ Իսկ գընդապետին ակնարկեց պարոն Ռամիերի վերաբերյալ ունեցած կասկածների մասին, զգուշացնելով՝ անհրաժեշտաբար գաղտնի պահել տիկին Դելմարից մանկության ընկերուհու ինքնասպանության հետ կապված ենթադրությունները. նրա լուրջ հիվանդությունը թույլ չէր տալիս հուզումներ կրել։ Այսպիսով, այդ դժբախտ աղջկա մահվանը վերաբերվեցին այնպես, ինչպես նրա սիրո հետ։ Ընդհանուր լուռ համաձայնությամբ որոշվեց Ինդիանայի ներկայությամբ երբեք չխոսել նրա մասին և շուտով ընդհանրապես դադարեցին խոսել։

Սակայն զգուշությունները իզուր էին, որովհետև տիկին Դելմարը ճշմարտության վերաբերյալ նույնպես կասկածներ ունենալու հիմքեր ուներ, նրան թվում էր, թե իր ծանր հանգիմանությունները, որ ճակատագրական այդ երեկոյին հասցեագրել էր անբախտ աղջկան, բավական էին, որ Նունը արագ որոշում կայացներ։ Օրհասական պահին Ինդիանան ուրաչինը նկատեց գետի վրա ծփացող դիակը, և առանց այն էլ նրա խռովված հանգիստը, տխուր սիրտը վերջին հարվածը ստացան։ Դանդաղ առաջացող հյուծումը այժմ սկսել էր արագընթաց քայլեր կատարել։ Այդ երիտասարդ, հավանաբար նաև ուժեղ հոգու տեր կինը հրաժարվում էր բուժվել և, անհեռատես ու կոպիտ ամուսնուց թաքցնելով իր տվայտանքները, կամաց-կամաց մեռնում էր վշտի և հուսահատության ծանրության տակ։

«Դժբախտությո՞ւն, ինչպիսի՞ դժբախտություն,— սենյակ մտնելով բացականչեց նա, երբ ամուսինը հայտնեց Ռեյմոնի

գալստյան լուրը,— անեծք թող տեղա այդ մարդու գլխին, որ հուսահատություն և մահ սերմանելու համար մտավ այս տունը։ Աստված իմ, ինչո՞ւ եք թույլ տալիս, որ նա կանգնի ձեր և իմ միջև, որ կամովին տնօրինի իմ ճակատագիրը, որ ցանկացած պահին ձեռքը մեկնելով ասի. «Նա իմն է։ Ես կասասանեմ նրա բանականությունը, կխորտակեմ նրա կյանքը, իսկ եթե դիմադրի՝ սուգ կսփռեմ նրա շուրջը, խղճի խայթով, զղջումով ու սարսափով կպարուրեմ նրան»։ Աստված իմ, որքանո՞վ է արգարացի, որ մի խեղճ կին այսքան փորձությունների ենթարկվի»։

Ինդիանան դառնորեն հեկեկում էր։ Ռեյմոնին հիշելով՝ նունն էր աչքի առաջ գալիս, սրտաճմլիկ հիշողություններ էին զարթնում նրա հոգում։

«Խեղճ Նուն, մանկության օրերի խեղճ ընկերուհիս, հայրենակցուհիս, միակ բարեկամս,— ցավով ասում էր նա,— այդ մարդն է քո դահիճը։ Որքան քեզ, այնքան էլ ինձ համար դժնդակ եղավ այս պատմությունը։ Իսկ որքա՜ն էիր սիրում ինձ, դու միակ մարդն էիր, որ զգում էիր իմ ցավերը և կարողանում էիր անկեղծ զվարթությամբ մեղմել դրանք, որքան դժբախտ եմ քեզ կորցնելու համար։ Դրա՞ համար այդքան հեռուներից բերի հասցրի քեզ այստեղ։ Ի՞նչ խորամանկ քայլով կարողացավ այդ մարդը վստահությունդ շահել և ստիպել քեզ՝ նման ստոր արարք գործել։ Ա՜խ, նա ճարպկորեն խաբեց քեզ, իսկ դու միայն զայրույթիս պահին հասկացար սխալդ։ Շատ խիստ վարվեցի քեզ հետ, Նուն, դաժանության հասնող խստությամբ հուսահատության մղեցի քեզ և մահվանդ պատճառը դարձա։ Դժբախտ աղջիկ, գոնե մի քանի ժամ սպասեիր, քամին թեթև ծղոտի նման կքշեր, կտաներ ցասումս։ Ինչո՞ւ չեկար գրկիս մեջ լաց լինելու, ինչո՞ւ ինձ չասացիր. «Ես խաբվել եմ, չեմ հասկացել, թե ինչ եմ անում, բայց գիտեք, թե որքան եմ հարգում ձեզ ու սիրում»։ Այն ժամանակ կսեղմեի կրծքիս, միասին լաց կլինեինք, և դու չէիր մեռնի։ Մեռնե՞լ, այդքան երիտասարդ, այդքան գեղեցիկ, կյանքով այդքան լեցուն։ Մեռնե՞լ տասնիներ տարեկան հասակում այդպիսի սարսափելի մահով»։

Այսպես ողբալով ընկերուհու մահը, Ինդիանան անգիտակցաբար ողբում էր երեք օրվա պատրանքի կորուստը, իր կյանքի լավագույն օրերը, միակ օրերը, որ ապրել էր, որովհետև այդ երեք օրվա ընթացքում այնպիսի կրքով էր սիրել, որ Ռեյմոնն անգամ, իր անսահման ինքնավստահությամբ, չէր կարող պատկերացնել։ Բայց որքան էլ կույր և ուժգին լիներ այդ սերը, վիրավորանքն ավելի խորն էր. այդպիսի զգայուն հոգում ծնված առաջին սերը միշտ մաքուր ու փրփրուն է լինում։

Բայց Ինդիանան շատ ավելի տուրք էր տալիս ամոթին ու վիրավորանքին, քան՝ կանխամտածված որոշմանը։ Չեմ կասկածում՝ Ռեյմոնը ներման կարժանանար, եթե մի քանի րոպե ունենար իր տրամադրության տակ՝ նրան համոզելու համար։ Սակայն դժբախտ պատահարը խանգարել էր, որ նա իր սիրուն ապավիներ, ճարպկություն հանդես բերեր, իսկ տիկին Դելմարն անկեղծորեն հավատում էր, որ ատում է նրան։

Գլուխ X

Ավելի քան երբեմն, Ռեյմոնն ուզում էր տիկին Դելմարի սիրուն ու ներողամտությանն արժանանալ, և պատճառն ամենևին սնապարծությունը կամ խոցված ինքնասիրությունը չէր։ Դա մեծ բան չէր։ Պարզապես նրան թվում էր, թե ոչ մի կնոջ սեր, ոչ մի երկրային երջանկություն չէր կարող հավասարվել Ինդիանայի սիրուն։ Նա այդպիսին էր. արկածախնդրությունների, սիրո ապրումների անհագ պահանջը բղկտում էր նրա սիրտը։ Սիրում էր աշխարհիկ կյանքը իր օրենքներով ու խոչընդոտներով, որովհետև դա պայքարի ու դիմադրության ոգով էր սնուցում նրան, և նա վախենում էր, որ հասարակության հիմքերի խախտումը կտաներ բարքերի անսովոր ազատության, որի ընթացքում վայելքը կդառնար խիստ մատչելի և կկորցներ ընդհանրապես պայքարի հրապույրը։

Բայց և այնպես, սիրելի ընթերցող, չմոռանաք, որ Նունի մահը չհուզեց նրան։ Ռեյմոնն առաջին պահին արգահատանքով լցվեց իր անձի նկատմամբ և ատրճանակները լցրեց՝ քունքին պարպելու հաստատ միտումով։ Բայց գովասանքի արժանի մի զգացում կանխեց որոշումը. ի՞նչ էր անելու մայրը... պառաված, թուլացած մայրը... այդ խեղճ կինը, որի կյանքն

այնքան հոգումնախառն ու տանջալից էր եղել և ապրում էր միայն զավակի համար՝ իր միակ ունեցվածքի, իր միակ հույսի համար։ Արժե՞ր փշրել նրա սիրտը, կրճատել նրա վաղանցիկ օրերը։ Իհարկե, ոչ։ Հանցանքը քավելու լավագույն միջոցը ամբողջությամբ մորը նվիրվելն էր։ Եվ այս որոշումով գնաց Փարիզ, մոր մոտ։ Ամեն ջանք գործադրեց՝ մոռացնել տալու նրան համարյա ամբողջ ձմեռվա ընթացքում մեն-մենակ թողած լինելու տխուր պատկերը։

Ռեյմոնն անհավատալի ներգործություն ուներ շրջապատի մարդկանց վրա, որովհետև, չնայած երիտասարդին հատուկ սխալներին ու մոլորություններին, բարձր էր կանգնած հասարակության մյուս անդամներից։

Ռեյմոնը ստեղծագործում էր. պատճառը նյութական կարիքը չէր, նա հարուստ էր։ Գրում էր, որովհետև գրական հակումներ ուներ և, ինչպես ինքն էր ենթադրում, դա պարտքի զգացման մղումն էր։ Նրա առանձնահատկությունն այն էր, որ տաղանդավոր ձևով կարողանում էր հերքել ակնհայտ ճշմարտությունը, և դրա համար կառավարությունը բարձր գնահատեց նրան, որովհետև այդ նույն կառավարությանն ավելի օգուտ տվեց իր «անաչառ հակասականությամբ», քան դեկավար անդամներն իրենց կույր նվիրվածությամբ։ Նա արժեքավոր մարդ էր համարվում այդ նորաստեղծ փայլուն հասարակության մեջ, որը ցանկանում էր հրաժարվել նախկին դասային արտոնություններից՝ միաժամանակ պահպանելով նրա առավելությունները։

Այս դասակարգի երիտասարդ ներկայացուցիչներն իրոք ավելի մեծ տաղանդով էին օժտված, քան նրանք, ովքեր դեռ հակված էին պաշտպանել անդունդի մեջ գլորվող հասարակությանը, և, իրենք էլ կախված լինելով երկու վտանգների միջև, հանգիստ ու խաղաղ պայքարում էին իրենց կլանող դաժան ճշմարտության դեմ։ Հայրությամբ համոզմունք ստեղծել ամեն տեսակի թվացյալ իրողության նկատմամբ և ժամանակավորապես այն ներշնչել համոզմունքից զուրկ մարդկանց, դա շատ մեծ արվեստ է։ Շփոթ առաջացնելով նրանց ուղեղում, իրենց բոլոր հատկություններով գերազանցություն են ձեռք բերում, մի բան, որ հասանելի չէ պարզունակ ու կոպիտ էակներին, ովքեր չեն սովորել խեղաթյուրել ճշմարտությունը։

Բավական էր միայն Ռեյմոնը վերադառնար հասարակության գիրկը, իր հարազատ միջավայրը, որպեսզի մաշկի վրա զգար նրա կենսաբար ու թարմ ազդեցությունը։ Նրան հուզող սիրային փորձիկ միջադեպերը ժամանակավորապես իրենց տեղը զիջեցին ավելի ընդարձակ ու փայլուն հետաքրքրություններին։ Այստեղ էլ նա հանդես բերեց նույն համարձակությունը, նույն եռանդը։ Եվ երբ զգաց, որ Փարիզի ընտրյալները առիթ են փնտրում իր հետ ծանոթություն հաստատելու, հասկացավ, որ երբեք այսքան շատ չէր սիրել կյանքը։ Մի՞թե մեղավոր էր, որ, մոռանալով գաղտնապես տանջող խղճի խայթը, հայրենիքին ծառայություն մատուցելու համար՝ իրեն շնորհված դափնիներն ընդունեց։ Երիտասարդ հոգու մեջ, գործող ուղեղում, եռուն ու ամրակազմ մարմնի մեջ ողջ հորձանքով հոսող կյանքն էր զգում։ Ճակատագիրն, անկախ իրենից, երջանկություն էր պարգևում, և նա սկսեց ներում հայցել անհանգիստ սովերից. այն երբեմն գալիս էր իրավիկու երազները, որովհետև, ընդդեմ մահվան սարսափի, Ռեյմոնը մարդկանց մեջ էր նեցուկ փնտրում։

Վերադառնալով նախկին կյանքին, նա իսկույն զգաց, որ սիրային անուրջներն ու ռոմանտիկ արկածները, միախառնվելով քաղաքական-փիլիսոփայական հայացքներին ու փառասիրական ձգտումներին, կրկին սկսել են զբաղեցնել իր մտքերը։ Փառասիրություն բառը չեմ կապում ո՛չ նյութականի, ո՛չ էլ փառամոլության հետ. դրանց կարիքը Ռեյմոնն ամենևին չէր զգում, նրան հետաքրքրում էր միայն արիստոկրատ մարդկանց շրջապատում ձեռք բերելիք հեղինակությունն ու ժողովրդականությունը։

Կրկնակի արկածային սիրո ողբերգական խպումից հետո տիկին Դելմարին երբեմն տեսնելու հույսը նա կորցրել էր։ Բայց որքան շատ էր մտածում ձեռքից բաց թողած գանձի մասին, այնքան վերակենդանանում էր ցանկությունը, դրա հետ միասին՝ կամքն ու վստահությունը։ Նա սկսեց ծանրութեթև անել իր դեմ ծառանալիք խոչընդոտները, հասկացավ, որ ամենադժվար հաղթահարելիքները կապված էին նախ և առաջ Ինդիանայի հետ։ Ուրեմն առաջին հերթին հարկավոր

էր հարձակումից պաշտպանվել՝ ամուսնու համակրանքը նվաճելով։ Վաղուց էր այս գաղափարը ծնվել նրա գլխում։ Խանգոտ ամուսիններն են, հատկապես, հակված այս կարգի ծառայություններ մատուցել։

Այս միտքը հղանալուց տասնհինգ օր հետո Ռեյմոնն արդեն բռնել էր Լանյի տանող ճանապարհը. նրան նախաճաշի էին սպասում։ Կարծում եմ, ինձնից չեք պահանջի մանրամասնորեն նկարագրել, թե ինչպիսի ճարպկությամբ պարոն Դելմարին առաջարկեց իր ծառայությունները և այդպիսով հաճոյացավ նրան։ Նախընտրում եմ հարևանացիորեն ներկայացնել գնդապետի բնավորության գծերը, քանի որ իմ պարտականությունն է՝ վերլուծել այս պատմության հերոսների կերպարները։

Ձեզ հայտնի՞ է, թե դավառում ում են «պատվավոր մարդ» համարում. նրան, ով ապօրինաբար հարևանի հողը չի խլում, պարտապաններից մեկ սու ավելի չի վերցնում, իրեն ողջունող յուրաքանչյուր մարդու առջև գլխարկ է հանում, մեծ ճանապարհների վրա երիտասարդ աղջիկների չի բռնաբարում, ոչ մեկի մառանը չի հրդեհում, իր այգու անկյունում ոչ մի անցորդի չի կողոպտում։ Միայն թե այդ անձնավորությունը սրբորեն ընդունի կյանքը և համերկրացիների դրամապանակը. նրանից ավելին չի պահանջվում։ Նա կարող է ծեծել կնոջը, ծառաների հետ վատ վարվել, սնանկացնել իր որդիներին. դա ոչ մեկին չի վերաբերում։ Հասարակությունը դատապարտում է միայն իրեն վնասող արարքները, անձնական կյանքը նրա իրավասությունից դուրս է։

Այսպիսին էր պարոն Դելմարի բարոյական կերպարը։ Նա յուրացրել էր միայն հասարակության կողմից ընդունված մի պայմանագիր. «Յուրաքանչյուրն իր ունեցվածքի տերն է»։ Հոդեկան զգացումներն համարում էր կանացի թուլություն և ավելորդ նրբություն։ Տխմար, աննրբանկատ, անկիրթ լինելով հանդերձ, ավելի լավ վերաբերմունքի էր արժանանում, քան շատ-շատերը, որոնք բանիմաց էին ու բարեհոգի։ Պարոն Դելմարը լայնաթիկունք էր, ամրաբազուկ, կատարելապես տիրապետում էր թրին ու սուսերին և միաժամանակ տարբերվում էր ուրիշներից մռայլ տրամադրությամբ ու խոսվկանությամբ։ Նա չէր հասկանում կատակները, և միշտ նրան

թվում էր, թե ծաղրում են իրեն, ուստի հարմար պատասխան չգտնելով՝ պաշտպանվում էր՝ կատակներներին սպառնալով և նրանց պարտադրելով լռել։ Նրա նախասիրած անեկդոտները, խոսակցությունն անընդհատ պտտվում էին մենամարտերի, տուրուդմփոցների շուրջ, որի պատճառով անունը միշտ ուղեկցվում էր «քաջարի» մակդիրով։ Շատերի կարծիքով, լայն թիկունքը, երկար բեղերը, թունդ հայհոյանքը, չնչին առիթով սուրը պատյանից դուրս քաշելը զինվորականի անվիճելի արիության դրավականն են։

Պատվախնդրության հարցում երբեմն խիստ մանրուքի հասնող նրբանկատություն դրսևորելով, պարոն Դելմարը մեծ վարպետությամբ կարող էր լավագույն ձևով պաշտպանել իր շահերը, բնավ չանհանգստանալով այլոց վրա թողած լավ կամ վատ ազդեցությունից։ Նրա պատիվը օրենքն էր, իսկ ամբողջ բարոյականությունը՝ իր իրավունքը։ Նա այն լոր ու մանրախնդիր առաքինի անձնավորություններից էր, որոնք պարտքով դրամ չեն վերցնում, վախենալով չվերադարձնել, և ոչինչ փոխ չեն տալիս, վախենալով հետ չստանալ. այն պատվավոր անձի նման, որ ոչինչ չի վերցնում և ոչինչ չի տալիս. այն մարդու նման, որ նախընտրում է մեռնել, քան՝ արքունական անտառներից մի խուրձ խոտ վերցնել, բայց պատրաստ է նաև առանց այլևայլության սպանել դիմացինին՝ իր պարտեզից մեկ շյուղ վերցնելու համար։ Մտածելով միայն օգուտի մասին, ուրիշին չէր վնասում։ Երբեպատում ոչ մեկի գործին չէր խառնվում՝ վախենալով որևէ մեկին ծառայություն մատուցել։ Բայց երբ գտնում էր, որ դա պատվի գործ է, ջանք ու եռանդ չէր խնայում, նույնիսկ սպասելական մեծահոգություն էր հանդես բերում։ Երեխայի պես վստահող, բրոնակալի պես կասկածամիտ՝ հավատում էր կեղծ երդումին և տարակուսանքով էր լցվում անկեղծ խոստման հանդեպ։ Ինչպես զինվորական ծառայության մեջ, այնպես էլ կյանքում, նրա համար ամեն ինչ ամփոփվում էր ձևի մեջ։ Նա ամեն հարցում ղեկավարվում էր համընդհանուր կարծիքներով, որի պատճառով առողջ բանականությունն ու դատողությունը ոչ մի դեր չէին կատարում որոշումների հարցում և եթե մեկ անգամ ասեր. «Այսպես է ընդունված», կարծում էր, թե անվիճելի փաստ է առաջադրել։

Հակասական կերպարներ էին ինքն ու կինը. գնդապետը կնոջը հասկանալ ու գնահատել չէր կարող, ո՛չ մտածողությամբ, ո՛չ հոգով ու սրտով։ Եվ, ինչ խոսք, ստրկական համակերպվածությունը կնոջ հոգում բույն էր դրել մի տեսակ տհաճ առաքինությամբ ու լռակյացությամբ, որ շատ դեպքերում անտեղի էր։ Տիկին Դելմարը այնքան էլ չէր հավատում ամուսնու բարեհոգությանը. նա լոր էր, իսկ կինը դաժան էր համարում նրան։ Դելմարի պոռթկումների մեջ ավելի շատ կոպտություն կար, քան զայրույթ, շարժումների մեջ ավելի շատ անտաշություն կար, քան ամբարտավանություն։ Բնականից լոր մարդ չէր, խղճահարության պահեր ունենում էր, որոնք հասցնում էին զզվանքի, իսկ այդպիսի դեպքերում զառնում էր բավական զգայուն։ Պատերազմները կոպտացրել էին նրան, եթե կինը այդքան նրբանկատ ու բնքուշ չլիներ, նա վարժեցրած գայլի պես հնազանդ կդառնար, բայց քանի որ Ինդիանան չէր համակերպվում իր ճակատագրի հետ, ուստի գնդապետը ջանք չէր թափում այն թեթևացնելու։

Գլուխ XI

Լանչի ագարակի բակում կատաղից իջնելով՝ Ռեյմոնն զգաց, որ սիրտը թուլանում է։ Նա մտնելու էր մի տուն, որի հետ կապված էին այնքան սարսափելի հիշողություններ։ Խոհերն ու կիրքը միաձուլվելով՝ կարող էին հաղթահարել սրտում գալարվող հուզմունքները, բայց այդ պահին խղճի խայթը նույնքան ուժգին էր իշխում, որքան ցանկասիրությունը։

Առաջին մարդը, որին հանդիպեց, սըր Ռալֆ Բրաունն էր՝ իր անփոփոխ որսորդական համազգեստով և շոտլանդացի լորդի նման շներով շրջապատված։ Ռեյմոնին թվաց, թե իր դեմ կանգնած է այն նկարը, որի վրա ուշադրություն էր դարձրել տիկին Դելմարի ննջասենյակում։ Քիչ անց հայտնվեց գնդապետը, և նախաճաշը մատուցվեց, իսկ Ինդիանան չկար։ Բիլիարդի սենյակի առջևով անցնելիս, երբ Ռեյմոնը մտավ նախասրահ, վերհիշեց բոլորովին այլ առիթով տեսած նույն տեղերը և այնքան վատ զգաց իրեն, որ նույնիսկ մոռացավ այդտեղ գալու նպատակը։

— Տիկին Դելմարը կտրականապես հրաժարվո՞ւմ է իջնել,— դժգոհությամբ հարցրեց գնդապետը հավատարիմ ծառա Լըլիեվրին։

— Տիկինը վատ է քնել,— պատասխանեց Լըլիեվրը,— իսկ Նունը... ներեցեք, դարձյալ այդ գրողի տարածի անունը բերանս եկավ, ուզում էի ասել օրիորդ Ֆանին, պատասխանեց, որ տիկինն այժմ հանգստանում է։

— Չի կարող պատահել, հենց նոր տեսա նրան իր սենյակի պատուհանի առջև։ Ֆանին սխալվում է։ Գնացեք հայտնեք տիկնոջը, որ նախաճաշը մատուցված է... կամ, ավելի շուտ, սըր Ռալֆ, սիրելի բարեկամս, չեի՞ք կամենա անձամբ բարձրանալ և տեսնել՝ ձեր զարմուհին իրո՞ք հիվանդ է։

Եթե ծառայի կողմից դժբախտ աղջկա անվան պատահական արտասանումը ուժեղ ցնցեց Ռեյմոնին, ապա գնդապետի առաջարկությունը զայրույթի ու խանդի տարօրինակ զգացմունք արթնացրեց նրա հոգում։

«Նրա սենյակո՞ւմ,— մտածեց նա,— ոչ միայն նկարն է կախել, դեռ անձամբ էլ ուզարկում է։ Այս անգլիացին այնպիսի արտոնություններ ունի, որ ամուսինն անգամ չի օգտվում դրանցից»։

Պարոն Դելմարը կարծես գուշակեց Ռեյմոնի միտքը։

— Թող ձեզ չզարմացնի,— ասաց նրան,— պարոն Բրաունը մեր տան բժիշկն է, և հետո՝ մեր զարմիկն է, անվնահեր երիտասարդ է, որին սիրում ենք ամբողջ հոգով։

Տասը րոպե անցել էր, բայց Ռալֆը չէր վերադառնում։ Ռեյմոնն անհանգիստ էր, անաբամագիր։ Չէր ուտում, հայացքն անընդհատ դռան կողմն էր։ Վերջապես անգլիացին հայտնվեց։

— Ինդիանան իսկապես վատառողջ է,— ասաց նա,— պատվիրեցի անկողին մտնել։

Նա սեղան նստեց և հանգիստ տեսքով, մեծ ախորժակով սկսեց ուտել։ Նույնը կրկնեց գնդապետը։

«Անտարակույս ինձ շհանդիպելու պատրվակ է,— մտածեց Ռեյմոնը,— երկուսն էլ չեն հավատում հիվանդությանը, իսկ ամուսինը կնոջից ավելի շատ դժգոհ է, քան մտահոգված նրանով։ Հիանալի է, գործերս ավելի լավ ընթացք են ստանում, քան կարծում էի»։

Դժվար կացությունն ավելի ամրապնդեց կամքը, իսկ Նունի պատկերը իսպառ ջնջվեց այդ մռայլ կամարների տակ, որոնք առաջին պահին սարսափից կամել էին նրան տեղում։ Ռեյմոնն սկսեց տեսնել միայն տիկին Դելմարի թեթևասահ սավերը այդ հարկի տակ։ Հյուրասենյակում, գործունյա մարդու տեսք ընդունած, զրուցում էր ու միաժամանակ ուսումնասիրում նրա ասեղնագործած ծաղիկները։ Նույնիսկ դիպավ մեսաքոե թելերին, շնչեց նրա փոքրիկ մատների թոլված բույրը։ Ինդիանայի սենյակում արդեն տեսել էր այդ ձեռագործ աշխատանքը. այն ժամանակ նա նոր էր սկսել, իսկ հիմա կերպասը ողողված էր ծաղիկներով, որոնք բացվել էին նրա տաք շնչից, ցողվել ամենօրյա արցունքով։ Ռեյմոնն զգաց, որ իր արցունքներն էլ են կախվել թարթիչներից, և ինչ-որ գաղտնի զգացման ներքո բարձրացրեց թախծոտ հայացքը այն մելամաղձոտ հորիզոնի վրա, որ Ինդիանան սովորություն ուներ նայել, նկատեց հեռավոր Սերսիի սպիտակ պատկերը, որոնք առանձնանում էին սև հողերի տեսադաշտի վրա։

Գնդապետի ձայնը ընդոստ պոկեց նրան իր անուրջներից.

— Իսկ հիմա գնանք, սիրելի հարևան,— ասաց նրան,— ժամանակն է, որ վարձահատույց լինեմ ձեզ և խոստումս իրագործեմ։ Ֆաբրիկան աշխատում է, իսկ բանվորները բոլորն էլ տեղում են։ Ահա թուղթ ու մատիտ, կարող եք նշումներ կատարել, եթե կամենաք։

Ռեյմոնը հետևեց գնդապետին, լուրջ ու հետաքրքիր տեսքով ուսումնասիրեց ֆաբրիկան, դիտողություններ արեց, որոնք ապացուցում էին, թե քիմիայի բնագավառը և մեքենաշինությունը հավասարապես ծանոթ են իրեն, մեծագույն համբերությամբ լսեց պարոն Դելմարի անվերջանալի գիտական մեկնաբանությունները, համաձայնեց նրա մի քանի մտքերի հետ, մյուսները չընդունեց, մի խոսքով, այնպես ներկայացրեց, թե իրը ամեն ինչ խիստ հետաքրքրում է իրեն, այնինչ հավատալ չէր մտածում այդ ուղղությամբ, բանի որ նրա մտքերն ամբողջությամբ կենտրոնացած էին տիկին Դելմարի շուրջ։

Ինչ խոսք, Ռեյմոնը գիտակ մարդ էր և գաղափար ուներ ամեն տեսակի հայտնագործություններից։ Բացի սրանից, նա իրոք ուզում էր եղբորը օգտակար լինել, որն իր ամբողջ կարողությունը ներդրել էր նույնանման, բայց ավելի ընդարձակ ձեռնարկության մեջ։ Պարոն Դելմարի մասնագիտական իմացությունները, միակ առավելությունը, որով օժտված էր այդ մարդը, հնարավորություն տվին Ռեյմոնին խոսակցության շատ հարմար թեմա ընտրել։

Սրբ Ռալֆը վատ առևտրական էր, բայց խելացի բաղաքացու։ Ֆաբրիկայում շրջելիս շատ կարևոր դիտողություններ արեց տեսանելի հարցերը կարգավորելու վերաբերյալ։ Բանվորները, տեսնելով, որ իրենց դիմաց կանգնած է բանիմաց մարդ, ջանացին պարզերես դուրս գալ, իրենց հերթին ցուցաբերելով խելք ու կարողություն։ Ռեյմոնն ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ լսում, պատասխանում էր բոլոր հարցերին, բայց մտածում էր միմիայն իր սիրո մասին, հանուն որի եկել էր։

Երբ ֆաբրիկայի մեքենաների հետ կապված հարցերն սպառվեցին, խոսք բացվեց գեսի հոսանքի արագության ուժի վերաբերյալ։ Պարոն Եկան շենքից և, բարձրանալով ամբարտակի վրա, ավագ աշխատակցին պատվիրեցին բարձրացնել ջրարգելակի փակիչները, որպեսզի տեսնեն ջրի հոսքի տարբերությունը։

— Նեղեցեք, պարոն,— ասաց ավագ աշխատողը՝ դիմելով պարոն Դելմարին։ Նա ուշադրությունը կենտրոնացրել էր ջրի մակարդակի բարձրացման վրա, որը հասնելու էր տասնհինգ ոտնաչափի,— այս տարի հասավ տասնյոթի։

— Ե՞րբ, հավանաբար սխալվում եք,— ասաց գնդապետը։

— Ներողություն, պարոն, Բելգիայից ձեր վերադառնալու նախօրեին էր, ավելի ճիշտ, այն պիշեր, երբ օրիորդ Նունին խեղդված գտան։ Նրա մարմինն անցավ ա՛յ այն ամբարտակի տակով և այստեղ կանգնեց, պարոնի կանգնած տեղում։

Այսպես ողողված խոսելով՝ բանվորը ցույց էր տալիս Ռեյմոնի ոտքերը։ Դժբախտ երիտասարդը դիակի պես գունատվեց։ Սարսափահար հայացք նետեց ոտքերի տակ հոսող գետին և, տեսնելով ջրի մեջ արտացոլված դալուկ դեմքը, նրան թվաց, թե դիակը դեռ զարկվում էր ջրին այնտեղ, և եթե պարոն Բրատնը նրա թևից չբռներ և ափից չհեռացներ, ընկնելու էր գետը։

— Հնարավոր է,— ասաց գնդապետը, որ ոչինչ չէր նկատել, նրանի մասին էլ չէր մտածում, և Ռեյմոնի հետ կատարված փոփոխությունը ոչ մի կասկածի տեղիք չտվեց,— արտակարգ դեպք է, իսկ ջրի հոսքի միջին ուժը... Բայց ի՞նչ կատարվեց ձեր երկուսի հետ,— ասաց նա միանգամից՝ ընդմիջելով խոսքը։

— Ոչինչ,— պատասխանեց սրբ Ռալֆը,— շրջվելիս պարոնի ոտքը կոխեցի, ներեցեք, երևի շատ ցավեցրի։

Սրբ Ռալֆն այնպիսի հանդարտությամբ պատասխանեց հարցին և այնքան բնական շեշտով, որ Ռեյմոնն էլ համոզվեց դրանում։ Քաղաքավարական մի քանի խոսքեր փոխանակվեցին, և զրույցը շարունակվեց։

Մի քանի ժամ անց, Ռեյմոնը, տիկին Դելմարին չտեսած, մեկնեց Լանյիից։ Ամեն ինչ հուսացածից լավ էր. նա միայն վախենում էր Ինդիանայի անտարբեր հայացքից ու հանգիստ տեսքից։

Հաջորդ անգամ, երբ նորից այցելեց, ավելի լավ վիճակում չէր։ Գնդապետն այս անգամ մենակ էր։ Ռեյմոնը ամեն հնարք բանեցրեց՝ հրապուրելու նրան և ճարպկորեն, զարմանալի կերպով համաձայնեց նրա մտքերի հետ, գովեց Նապոլեոնին, որին չէր սիրում, բողոքեց կառավարության ստոր բարբարությունից դեմ, որ անուշադրություն էր մատնել մեծ բանակի հուշակավոր վետերաններին ու արհամարհում էր նրանց, իր գաղափարներին հակասող մտքերի մեջ խորացավ այնքան, որքան հնարավոր էր ընդլայնակվել, և բազմաթիվ դավանանքներից ընտրեց այնպիսիները, որ կարող էին շոյել պարոն Դելմարի հավատամքը։ [Նույնիսկ ինքն իրեն հակասեց, որպեսզի կարողանա շահել նրա վստահությունը] Ներկայացավ որպես աշխարհիկ, կերուխումներ սիրող, ուրախ, անտարբեր, անառակ անձնավորություն։

«Հազիվ թե կարողանա նվաճել կնոջս...— մտածեց գնդապետը, նայելով հեռացող Ռեյմոնի հետևից, հետո ծիծաղեց ինքն իրեն ու եզրակացրեց,— հրաշալի տղա է։

Տիկին դը Ռամիերն այդ ժամանակ Ներսիսում էր։ Ռեյմոնը դավաճանեց տիկին Դելմարի հմայքն ու խելքը և, առանց առաջարկելու, խորամանկորեն կարողացավ ներշնչել մորը՝ այցելել Ինդիանային։

— Ի միջի այլոց,— ասաց տիկին դը Ռամիերը,— միակ հարևանուհին է, որին չեմ ճանաչում, քանի որ ես եմ ավելի ուշ բնակվել այս վայրում, ուրեմն ես պետք է նախաձեռնություն հանդես բերեմ։ Եկող շաբաթ միասին կգնանք Լանյի։

Այդ օրը եկավ։

«Այլևս չի խուսափի ինձնից»,— մտածեց Ռեյմոնը։

Իսկապես, տիկին Դելմարն այլևս չէր կարող խուսափել ընդունելության անհրաժեշտ պարտականությունից, տեսնելով տարեց անծանոթ կնոջը կառքից իջնելիս, անձամբ գնաց դիմավորելու նրան դղյակի սանդղամուտքի առջև։ Անմիջապես ճանաչեց նրա ուղեկցին՝ Ռեյմոնին, և հասկացավ, որ նա է խարեությամբ հարկադրել մորը այս քայլին դիմելու։ Նրա սրտում ծագած դժգոհությունը ուժ ներշնչեց տիրապետելու իրեն և արժանապատվել ընդունելություն ցույց տալու։ Տիկին դը Ռամիերին հարգանքով ու սիրալիրությամբ ընդունեց, բայց Ռեյմոնի հանդեպ ցուցաբերած սառնությունն այնքան մեծ էր, որ վերջինս թվաց, թե այլևս չի դիմանա։ Նա վարժված չէր այդպիսի արհամարհանքի, հպարտությունը խոցվեց, որովհետև անզոր էր դարձել դիմադրավիլու այս վիճակը ու չէր կարողացել մի հայացքով Ինդիանայի մեջ փոխել իր հանդեպ ունեցած քամահրանքը։ Այդ ժամանակ ձևացնելով, թե ամենևին ուշադրություն չի դարձնում նրա կամակորությանը, կանանց մենակ թողնելու համար թույլտվություն խնդրեց և գնաց այգի՝ պարոն Դելմարի մոտ։

Ինդիանան կամաց-կամաց դիմեց այդ կնոջ հրապույրին, ինչպես լինում է նորբ խելքի, ազնիվ հոգու տեր անձնավորությունների ներկայությամբ, ներգրավվելով նրա կողմից առաջարկած թեմաների մեջ, և իր հերթին, տիկին դը Ռամիերի պես, ինքն էլ նրա նկատմամբ լցվեց բարությամբ, քնքշությամբ, ջերմությամբ։ Նա մայր չէր տեսել, իսկ տիկին դը Քարվախալը, ճիշտ է, չէր խնայում նվիրատվություններն ու հանձնախոսությունները, բայց հեռու էր մայր լինելուց։ Այդ էր պատճառը, որ հոգով ու սրտով կապվեց Ռեյմոնի մոր հետ։

Երբ Ռեյմոնը եկավ մորը տուն ուղեկցելու, կառք բարձրանալու ժամանակ նկատեց, թե ինչպես էր Ինդիանան տիկին դը Ռամիերի մեկնած ձեռքը հպում շուրթերին։ Եղեռ Ինդիա-

նան որևէ մեկի հետ մտերմանալու պահանջ ուներ։ Նա մենակ էր ու դժբախտ. ամենափոքր հետաքրքրությունը, և ընչին ուշադրությունն անգամ ոգևորությամբ էր ընդունվում նրա կողմից։ Եվ հետո մտածում էր, որ տիկին դը Ռամիերը կարող էր Ռեյմոնի լարած թակարդից պաշտպանել իրեն։

«Ընկնեմ այդ հրաշալի կնոջ գիրկը,— արդեն մտածում էր նա,— և անհրաժեշտության դեպքում ամեն ինչ կպատմեմ նրան։ Կաղաչեմ, որ փրկի ինձ իր որդուց, և մոր զգոնությունը կհսկի նրա և ինձ վրա»։

Այլ կերպ էր պատում Ռեյմոնը։

«Իմ լավ մայրիկ,— մտածում էր նա Սերսի վերադառնալու ճանապարհին,— նրա սիրալիրությունն ու բարությունը հրաշքներ են գործում։ Որքան եմ պարտական նրան. կրթությամբ, կյանքում ունեցած հաջողություններով, հասարակության մեջ գրված դիրքով։ Ինձ պակասում է միայն երջանկությունը, որ կարող եմ ձեռք բերել՝ նրա միջոցով Ինդիանայի նման կնոջ սիրտը շահելով»։

Ինչպես տեսնում ենք, Ռեյմոնը սիրում էր մորը, որովհետև շատ էր զգում նրա կարիքը, որովհետև բարեկեցիկ կյանք էր ապահովել իրեն։ Այդպես են սիրում իրենց մորը բոլոր երես առած երեխաները։

Մի քանի օր անց Ռեյմոնը երեք օրվա հյուրընկալության հրավեր ստացավ Սերսիի և Լանյիի միջև գտնվող Բելրիվի հրաշալի կալվածքից, որ պատկանում էր սըր Ռալֆ Բրաունին։ Շրջակայքի լավագույն որսորդների հետ Ռեյմոնն էլ էր հրավիրված այն գազանների որսին, որոնք ավերում էին սեփականատիրոջ այգիներն ու անտառները։ Ռեյմոնը չէր սիրում Ռալֆին, որսորդությունը նույնպես չէր հետաքրքրում նրան։ Բայց տիկին Դելմարը զարմիկի տանը մեծ հյուրընկալության առիթով հանդես էր գալու տանտիրուհու դերում, և Ինդիանային տեսնելու հույսով պարոն դը Ռամիերն իսկույն համաձայնեց։

Ամբողջ հարցն այն է, որ սըր Ռալֆն այս անգամ ոչ մի հույս չէր կապում տիկին Դելմարի հետ, վերջինս նախապես պատճառաբանել էր, որ հիվանդ է։ Գնդապետը միշտ զայրանում էր, երբ մտածում էր, թե կինը զվարճանալու առիթներ է փնտրում, և ավելի էր զայրանում, երբ իր առաջարկությունից հետո Ինդիանան հրաժարվում էր դրանցից։

— Ինչ է, դուք ուզում եք բոլորին հավատացնել, թե ես փակի տակ եմ պահում ձեզ,— ասաց նրան,— ձեր պատճառով խանդոտ ամուսնու անուն եմ վաստակում, ծիծաղելի մարդու դերում եմ հանդես գալիս, այլևս չեմ ուզում շարունակել այս խաղը։ Բացի այդ, ինչպե՞ս կբացատրեք այս անտարբեր վերաբերմունքը ձեր զարմիկի հանդեպ։ Մի՞թե սազում է ձեզ, չէ՞ որ մենք պարտական ենք նրան մեր ձեռնարկությամբ ու հաջողություններով։ Մերժել այդքան չնչին մի ծառայությո՞ւն. նա ձեր կարիքն է զգում, իսկ դուք թերանում եք։ Չեմ հասկանում ձեր քմահաճույքները. ովքեր ինձ դուր չեն գալիս, միշտ օգտվում են ձեր բարեհաճությունից, իսկ նրանց, ում ես եմ համակրում, դժբախտություն ունեն ձեր հակակրանքին արժանանալու։

— Ինձ թվում է, անտեղի եք հանդիմանում,— պատասխանեց տիկին Դելմարը,— իմ զարմիկին սիրում եմ եղբոր նման, իսկ այդ բարեկամությունը վաղուց էր հաստատված մեր միջև, երբ ընդունեցիք այն։

— Իհարկե՛, իհարկե՛, դրանք միայն գեղեցիկ խոսքեր են, ես շատ լավ գիտեմ, որ նրան՝ այդ խեղճ մարդուն, անզգա եք համարում, նա ձեր աչքին եսասեր անձնավորություն է, որովհետև սիրավեպեր կարդալ չի սիրում, և ինչ-որ սատկած շան համար լաց չի լինում։ Եվ հետո, խոսքը միայն նրան չի վերաբերում. ինչպե՞ս վերաբերվեցիք պարոն դը Ռամիերին, որը, աստված վկա, հրաշալի անձնավորություն է։ Տիկին դը Քարվախալը ներկայացրեց նրան, դուք շատ լավ ընդունեցիք, իսկ ես դժբախտություն ունեցա բարեկամական կապեր ստեղծել նրա հետ, և անմիջապես, հանձին նրա, տեսաք մի անտանելի մարդու. երբ նա այցելից մեզ, դուք գնացիք քնելու։ Ինչ է, ուզում եք վերաբերմունքից զուրկ մարդու դե՞ր տալ ինձ։ Ժամանակն է այս ամենին վերջ տալու, և դուք էլ պետք է ապրեք բոլորի նման։

Ռեյմոնը մտածեց, որ ծրագրերի իրականացման համար կարիք չկար շատ մեծ գորովանք հանդես բերել. [անտարբերության սպառնալիքը, համարյա բոլոր կանանց նկատմամբ, ովքեր հավատացած են, թե սիրված են, հաջողությամբ է պսակվում։] Երբ եկավ սըր Ռալֆի տունը, առավոտվանից բոլորն արդեն որսի էին գնացել, իսկ տիկին Դելմարը գալու

էր ընթրիքի ժամին։ Այդ ժամանակամիջոցին Ռեյմոնն սկըսեց մտածել իր ծավալելիք հետագա գործողությունների մասին։ Ուղղում մի միտք փայլատակեց. նախ և առաջ պետք է արդարացում գտներ, իսկ ժամանակը մոտենում էր։ Տրամադրության տակ երկու օր կար, և այսպիսով ժամանակի բաժանում կատարեց. օրվա մնացած մասն ավարտել նրա սրտում հույզեր արթնացնելով, հաջորդ օրը համոզել, երկու օր անց երջանկանալ։ Նայեց ժամացույցին և մինչև իսկ բոպիներով հաշվարկեց ձեռնարկած քայլի հաջողության կամ պարտության հնարավորությունները։

Գլուխ XII

Արդեն երկու ժամ կլիներ, որ նստած էր հյուրասրահում, երբ կից սենյակից լսեց տիկին Դելմարի մեղմ, ցածր ձայնը։ Ռեյմոնն այնքան էր տարված գայթակղելու ծրագրով, որ կարծես վերածվել էր սեփական ստեղծագործությամբ ոգեվորված հեղինակի, դատը պաշտպանող փաստաբանի, իսկ Ինդիանային տեսնելու պահին նրա հուզմունքը կարելի էր համեմատել ամբողջովին դերի մեջ մտած այն դերասանի հուզմունքի հետ, որը, դրամատիկական գործի գլխավոր հերոսուհու դիմաց կանգնած, այլևս չի տարբերում բեմական շինծու զգացմունքները իրականից։

Ռեյմոնն Ինդիանային այնքան փոխված տեսավ, որ հակառակ իր ջղագրգիռ վիճակին, խղճահարության անկեղծ զգացմունք սողոսկեց սիրտը։ Վիշտն ու հիվանդությունն այնքան խոր հետքեր էին թողել նրա դեմքին, որ համարյա կորցրել էր գեղեցկությունը։ Հիմա, ավելի շուտ, հարկավոր էր հաղթանակ ձեռք բերել, քան հաճույքի մասին մտածել, բայց Ռեյմոնը պարտավորված զգաց այդ կնոջը երջանկություն ու կյանք պարգևել։

Տեսնելով նրան այդքան դժգույն ու տխուր, մտածեց, որ համառ կամքի դեմ պայքարելու կարիք չէր զգացվելու։ [Մի՞թե այդքան փխրուն մի էակ կարող էր իր մեջ ուժգին դիմադրություն պարփակել։]

Որոշեց նախ և առաջ վախեցնել, խոսելով նրա ճակատագրի, առողջական վիճակի մասին, որից հետո խոսել ամենալավ կյանքի մասին՝ նրա հոգում ապրելու հույս արթնացնելով։

— Ինդիանա,— դիմեց նրան՝ հրաշալի կերպով թաքցնելով ինքնավստահ տոնը անսահման խոր վշտի քողի տակ,— ա՞յս տեսքով նորից պիտի տեսնեի ձեզ։ Չէի կարծում, որ երկար սպասումներից հետո մեծ դժվարությամբ ձեռք բերված պահը այսքան խոր ցավ էր պատճառելու ինձ։

Տիկին Դելմարը նման խոսակցություն չէր սպասում։ Ընդհակառակը, կարծում էր, թե, ոչ մեղքի ծանրությունն զգալով, Ռեյմոնն իր ներկայությամբ պիտի շփոթվեր ու երկչեր, իսկ սա փոխանակ մեղանչելու, հանցանքը և ապրումները խոստովանելու, իրեն էր կարեկցում և վշտակցում։ Եվ ընկճվեց, կուրծքը, որովհետև խղճմտանք էր արթնացնում մի մարդու մոտ, որը դրա կարիքը, ինչպես կարծում էր, ավելի շատ էր զգում։

Որևէ ֆրանսուհի, աշխարհիկ մի կին, նման նուրբ հանգամանքներում գլուխը չէր կորցնի, բայց Ինդիանայի համար անսովոր վիճակ էր. նա չէր սիրապատում ոչ ճարպիկ խաղերին, ոչ էլ իր դիրքի առավելություններից օգտվելու ձևական անհրաժեշտությանը։ Այս խոսքերի ազդեցության տակ աչքի առջևով տանջանքների մի ամբողջ պատկեր անցավ, և կոպերի ծայրին արցունքի կաթիլներ շողացին։

— Իրոք հիվանդ եմ,— ասաց նա հոգնած ու թուլացած՝ նստելով Ռեյմոնի առաջարկած բազկաթոռին,— շատ հիվանդ եմ, պարոն, և իրավունք եմ վերապահում ինձ խոսել ձեզ հետ այդ մասին։

Ռեյմոնը հույս չուներ, որ գործերն այդքան արագ ընթացք կստանան։ Նա, ինչպես ասում են, կառչեց առիթից և, բռնելով նրա նիհարած ու սառը ձեռքը, բացականչեց.

— Ինդիանա, [այդպես մի խոսեք, մի պնդեք, թե ես եմ ձեր տանջանքների պատճառը, ցավից և ուրախությունից կդժվեմ։]

— Ուրախությունից,— կրկնեց Ինդիանան՝ տխրությամբ և զարմանքով լի խոշոր կապույտ աչքերը հառելով նրա վրա։

— Ուզում էի ասել՝ հույսից, քանզի եթե ես եմ ձեզ վիշտ պատճառել, տիկին, գուցե հնարավորություն կունենամ վերացնել այն։ Միայն մի խոսք,— ավելացրեց նա՝ ծնկի գալով նրա առջև բազմոցից գլորված բարձի վրա,— և ես պատրաստ եմ արյունս տալ ձեզ, կյանքս...

— Ախ, լռեցեք,— դառնորեն ասաց Ինդիանան՝ ձեռքը ետ քաշելով,— դուք ստորաբար երդմնազանց եղաք, իսկ հիմա կարո՞ղ եք ձեր գործած չարիքի դեմն առնել։

— Միակ ցանկությունս դա է, կկատարե՛մ,— բացականչեց Ռեյմոնը՝ փորձելով նորից բռնել նրա ձեռքը։

— Շատ ուշ է,— ասաց Ինդիանան,— կարո՞ղ եք վերադարձնել ընկերուհուս, քրոջս։ Վերադարձրե՛ք Նունին, միակ բարեկամիս։

Մահացու պաղություն սողոսկեց Ռեյմոնի երակների մեջ։ Նա արդեն չէր կարող կեղծել հուզմունքը։ Կան այնպիսի զգացմունքներ՝ հզոր և ահարկու, որոնք արհեստական միջոցների չեն ենթարկվում։ «Ամեն ինչ գիտի,— մտածեց նա,— և դատապարտում է ինձ»։

Ոչ մի բան այնքան չէր նսեմացնում նրան, որքան իր հասցեին ուղղված հանդիմանությունը այն անձնավորության կողմից, որ ակամա իր մեղսակիցն էր դարձել։ Եվ ամենացավալին այն էր, որ Նունին ողբում էր նրա մրցակցուհին։

— Այո, պարոն,— ասաց Ինդիանան՝ բարձրացնելով արցունքով ողողված դեմքը,— դո՛ւք եք մեղավոր...

Բայց տեսնելով Ռեյմոնի գունատությունը՝ լռեց։ Դեմքի գույնն ահավոր էր. նա դեռ երբեք այդպես չէր տառապել։

Այդ միջոցին հոգու ողջ բարությունը և այդ մարդուց ստացած քնքշանքը, իր կամքից անկախ, նորից համակեցին տիկին Դելմարին։

— Ներեցեք,— ասաց նա վախեցած,— մեծ ցավ եմ պատճառում ձեզ, շատ եմ տառապել։ Նստեցեք, ուրիշ հարցերի շուրջ խոսենք։

Այս անսպասելի քնքշությունը և մեծահոգությունը անսահման հուզեցին Ռեյմոնին։ Հոգուց հառաչներ դուրս թռան։ Նա Ինդիանայի ձեռքը մոտեցրեց շուրթերին, արցունքով ու համբույրով ողողեց։ Մինչև այդ օրը նա չէր կարողացել արտասվել, և սրանք Նունի մահից հետո թափված առաջին

արցունքներն էին։ Ո՜հ, ճակատագիր, հենց Ինդիանան պիտի կարողանար նրա սրտից դուրս քաշել ճնշող բեռը։

— Եթե այդպես ողբում եք նրա մահը,— ասաց Ինդիանան,— որին համարյա չեք ճանաչել, եթե այդպես հուզվում եք նրա համար, որի մահվան պատճառը իմ խստությունն էր, այլևս չեմ համարձակվի կշտամբել ձեզ։ Միասին ողբանք նրա մահը, թող նա այնտեղից՝ երկնային արքայությունից, տեսնի մեզ։ Թող մեզ ների։

Սառը քրտինք պատեց Ռեյմոնի ճակատին։ Ճիշտ է, «որին համարյա չեք ճանաչել» նախադասությունը ամբողջովին ցրեց մորմոքող կասկածը, բայց մահացած աղջկա հիշատակի ոգեկոչումը, որ դուրս էր գալիս Ինդիանայի նբրբակերտ շուրթերից, սնահավատ սարսափով պատեց նրան։ Չկարողանալով ինքն իրեն տիրապետել, վեր կացավ, մոտեցավ բաց պատուհանին, նստեց գոգին՝ թարմ օդ շնչելու։ Ինդիանան լուռ էր. նրան խոր հուզմունք էր համակել։ Տեսնելով, որ Ռեյմոնը երեխայի պես լաց է լինում և թույլ կնոջ պես կորցնում է ինքնատիրապետումը, գաղտնի ուրախություն ապրեց։

«Բարեսիրտ մարդ է,— մտածեց Ինդիանան,— սիրում է ինձ, ջերմ ու ազնիվ հոգու տեր է։ Մեղավոր է, բայց նրա զղջումը ամեն ինչ փոխում է. արժանի է ներման»։

Նա քնքուշ հայացք նետեց Ռեյմոնի վրա, և նախկին վստահությունը լցվեց սրտի մեջ, հանցանքի պատճառով ծնված խղճի խայթը վերագրեց սիրահարվածի տառապանքներին։

— Բավական է լաց լինեք,— ասաց տիկին Դելմարը՝ վեր կենալով և մոտենալով նրան,— ե՛ս եմ սպանել նրան, միակ մեղավորը ես եմ։ Ամբողջ կյանքում խղճի խայթից պիտի տանջվեմ, խանդին ու կասկածին տուրք տվի, անարգեցի, մինչև հոգու խորքը վիրավորեցի այդ աղջկան։ Նրա վրա թափեցի ցասմանս հուրը, որ ձեր պատճառով էր բռնկվել։ Դուք, դո՛ւք միայն ինձ վիրավորեցիք, իսկ ես խեղճ ընկերուհուս պատժեցի։ Շատ դաժան վարվեցի նրա հետ...

Տիկին Դելմարի այտերը շիկնեցին։

— Գուցե սխալվել եմ, մեղադրելով ձեզ այն խոր վշտի պատճառով, որ այդ սարսափելի գիշերը համակեց ինձ,— ասաց նա,— բայց չեմ կարող մոռանալ ձեր անխոհեմու-

թյունը և վիրավորանքը։ Ձեր ռոմանտիկ և մեղավոր մտադրությունը շատ վշտացրեց ինձ։ Այն ժամանակ կարծում էի, թե սիրում եք ինձ, բայց նույնիսկ չեք հարգել։

Հանկարծ Ռեյմոնը միանգամից վերագտավ ուժերը, կամքը, սերը, հույսը։ Մռայլ մտքերը մղձավանջի պես ցրվեցին։ Սթափվեց և կրկին իրեն զգաց երիտասարդացած, առողջ, ցանկություններով լի, ապագայի նկատմամբ հույսի և սիրո հավատով լցված։

— Եթե դուք ինձ ատում եք, նշանակում է մեղավոր եմ,— ասաց նա՝ ընկնելով Ինդիանայի ոտքերը,— եթե սիրում եք, ուրեմն մեղք չունեմ և բնավ մեղավոր չեմ եղել։ Ինդիանա, խնդրում եմ, ասացեք, [սիրո՞ւմ եք ինձ։

— Իսկ դուք վաստակե՞լ եք այդ սերը։]

— Ք՝ո սերը վաստակելու համար պետք է աստվածացնեմ քեզ...

— Լսեք,— ասաց Ինդիանան, չհեռացնելով նրա ձեռքը, խոշոր և թաց աչքերը, որոնցում ժամանակ առ ժամանակ ցոլում էր անշող մի կրակ, դարձնելով նրա կողմը,— իսկ դուք դիտե՞ք ինչ է նշանակում սիրել ինձ նման մի կնոջ... Ոչ, չգիտեք։ Ձեզ թվում էր, թե հաճելի ժամանց է սպասում ձեզ։ Իմ սրտի մասին դատեցիք այն հղփացած սրտերի նման, որոնց վրա փորձել եք ձեր կարճատև իշխանությունը։ Դուք չգիտեք, ես դեռ երբեք չեմ սիրել, այդ իսկ պատճառով չեմ փոխի իմ մաքուր, կուսական սիրտը սառն ու բարոյազրկված սրտի հետ, իմ խանդավառ սերը՝ ավյունից զուրկ սիրո հետ, իմ ողջ կյանքը՝ մեկ անցողիկ օրվա հետ։

— Ինդիանա, չափազանց մեծ սիրով եմ ձեզ սիրում։ Ես նույնպես երիտասարդ ու բոցավառ սիրտ ունեմ, որը գուցե, արժանի չէ ձեր սիրուն, բայց չկա մի մարդ, որի սիրտը արժանի լինի ձեզ։ Ես գիտեմ, ինչ է հարկավոր ձեզ սիրելու համար։ Այսօր հասկացա։ Մի՞թե ինձ ծանոթ չէ ձեր կյանքը, մի՞թե այդ մասին չեմ խոսել ձեզ հետ, առաջին օրը, պարահանդեսում, երբ հնարավորություն ունեցա մի քանի խոսք փոխանակել ձեզ հետ։ Մի՞թե չեմ կարողացել ձեր սիրտը այն առաջին հայացքի մեջ, որ ինձ վրա նետեցիք։ Եվ ի վերջո, ինչո՞վ կարող էի հրապուրվել, եթե ոչ ձեր գեղեցկությամբ։ Օ՜, անկասկած, այդ գեղեցկությունը

կարող է նաև ինձնից ավելի քիչ խանդավառ, տարիքով ինձնից ավելի մեծ մարդու գլուխը պտտեցնել, բայց ես պաշտում եմ այս նուրբ ու շնորհագեղ կերպարանքը, որովհետև այն իր մեջ պարփակում է անրիծ ու աստվածային հոգի որովհետև երկնային հուրն է նրան կենդանություն պարգևում և հանձին ձեզ՝ ոչ միայն կին եմ տեսնում, այլև՝ հրեշտակ։

— Ինձ հայտնի է, որ դուք տաղանդավոր գովերգակ եք, բայց հույս չունենաք սնափառություն արթնացնել իմ մեջ։ Գովեստների կարիք չեմ զգում։ [Ինձ միայն անկեղծ սեր է հարկավոր։ Անմնացորդ եմ ուզում սիրվել, անվերադարձ, անսահման սիրով։ Հարկավոր է ինձ համար ամեն ինչ զոհել՝ հարստություն, համբավ, պարտականություն, գործեր, համոզմունք, ընտանիք, ամեն, ամեն բան, պարոն, որովհետև նույն նվիրվածությունն եմ դնելու հակառակ նժարին և ուզում եմ, որ հավասարակշռությունը պահպանվի։] Համոզվո՞ւմ եք այժմ, որ այդպես չեք կարող սիրել ինձ։

Ռեյմոնի համար դա նորություն չէր։ Նա շատ կանանց էր հանդիպել, որոնք սերը լրջորեն էին ընկալել։ Դժբախտաբար մեր հասարակության համար որքան էլ այդ օրինակները հազվադեպ են, այնուամենայնիվ նա գիտեր, որ սիրո վերաբերյալ երդումները պատվի հետ ոչ մի առնչություն չունեն, գարձյալ ի բարեբախտություն մեր հասարակության։ Երբեմն նույնիսկ այն կինը, որ հանդիսավոր խոստում էր պահանջել իրենից, առաջինը ինքն էր գրժել։ Այս անգամ էլ ամենքին չտարօրինեց տիկին Դելմարի պահանջներից, ավելի հիշտ, այլևս չուզեց մտածել ոչ անցյալի, ոչ ապագայի մասին։ Նա տարվեց Ինդիանայի նրբագեղությամբ ու սիրատուր հմայքով, մարմնապես այդքան թույլ, բայց հոգով ու բանականությամբ ուժեղ այդ կնոջով։ Նա այնքան գեղեցիկ էր, այնքան կենսունակ, այնքան վճռական իր կամքը թելադրելիս, որ Ռեյմոնը նրա ծնկների առջև հմայքից քարացել էր։

— Երդվում եմ,— ասաց Ինդիանային,— հոգով ու մարմնով պատկանել քեզ, նվիրաբերել ամբողջ կյանքս, արյունս, հրաժարվում եմ սեփական կամքից, վերցրու բո-

լորը, ամեն ինչին տեսրինիր՝ հարստությանս, պատվիս, խրդ-ճիս, բանականությանս, իմ ողջ էությանը։

— Լռեցե՛ք,— ընդհատեց նրան Ինդիանան,— զարմիկս է գալիս։

Իրոք, սառնարյուն Ռալֆ Բրաունը մեծ հանդարտությամբ մտավ սենյակ, շատ զարմացած և անչափ ուրախ՝ տեսնելով զարմուհուն, որին չէր սպասում։ Թույլտվություն խնդրեց համբուրել նրան՝ երախտագիտության զգացումից մղված, հակվեց նրա կողմը և իրենց երկրի սովորության համաձայն երկար համբուրեց շուրթերը։

Ռեյմոնը զայրույթից գունատվեց, և հազիվ էր Ռալֆը դուրս եկել սենյակից՝ մի քանի հրաման արձակելու, մոտեցավ Ինդիանային և ուզեց շնչել այդ ամբարտավան համբույրի հետքերը, բայց տիկին Դեյմարը, հանգարտ ետ մղելով նրան, ասաց.

— Հիշեք, դեռ շտկելու շատ բաներ կան, եթե ուզում եք, որ հավատամ ձեզ։

Ռեյմոնը չհասկացավ այս մերժման նրբությունը, զգաց միայն, որ մերժված է, և ատելությամբ լցվեց սըր Ռալֆի հանդեպ։ Որոշ ժամանակ անց նկատեց, որ սըր Ռալֆը, երբ Ինդիանայի հետ շշուկով էր խոսում, նրան «դու»-ով էր դիմում, և Ռեյմոնը պատրաստվեց աշխարհիկ մարդու զսպվածությամբ հետապնդել սըր Ռալֆի՝ երջանիկ տարփածուի, զգուշավորություններ։ Սակայն հանդիպելով երիտասարդ կնոջ մաքուր հայացքին, շիկնեց իր նվաստացուցիչ կասկածների համար։

Սրեկոյան Ռեյմոնը նոր միտք հղացավ։ Շատ հյուրեր էին հավաքվել, հետաքրքրությամբ լսում էին նրան, և նա ամենևին չթաքցրեց իր տաղանդի հիմնական հատկանիշները։ Նեյացի մտքեր էր հայտնում, Ինդիանան, հարկադրաբար լսելով իրեն, առաջին սիրո ուրախությունը պիտի ճաշակեր։ Բայց իր ուղղամտության ու պարզության պատճառով, ընդհակառակը, սարսափեց Ռեյմոնի շնորհքներից։ Փորձեց մաքառել այդ կախարդական հզորության դեմ, որ Ռեյմոնը տարածում էր իր շուրջը, մի տեսակ մոգական ազդեցություն, որ երկինքը կամ դժոխքն է պարգևում որոշ մարդկանց։ Այդ հմայքի ուժն այնքան մեծ է, որ ոչ մի սովորա-

կան մահկանացու չի կարող դիմադրել, և միաժամանակ այնքան վաղանցիկ է, որ ոչ մի հետք չի թողնում։ Այդ մարդկանց մահվանից հետո բոլորը զարմանում են, թե իրենց կյանքի ընթացքում ինչո՞ւ այդքան ազնիվ հանեցին։

Պահեր էին լինում, որ Ինդիանան այդ փայլից շլանում էր, բայց իսկույն տխրելով մտածում էր, որ իրեն ոչ թե փառք, այլ երջանկություն է հարկավոր։ Սարսափով հարց էր տալիս իրեն. կարո՞ղ էր արդյոք այդ մարդը, կյանքին այդքան տարբեր կողմերից նայելով, այդքան գրավիչ հետաքրքրություններ ունենալով՝ ամբողջ հոգով զոհաբերվել, ամեն տեսակի փառամոլություն նվիրաբերել միայն իրեն։ Իսկ հիմա լսելով, թե ինչպես էր արժեքավորում, ճարպկորեն, կրքոտությամբ ու սառնասրտությամբ ինչպես էր քայլ առ քայլ պաշտպանում այնպիսի թեզեր, որ սակարկելի էին և իրենց սիրո հետ ոչ մի առնչություն չունեցող հետաքրքրություններ էին, վախենում էր նրա կյանքում աննշան տեղ գրավել, այնինչ Ռեյմոնն ամեն ինչ էր նրա համար։ Սարսափով մտածում էր, որ ինքը համառորեն ձեռք բերված երեք օրվա տենչանք էր եղել, իսկ Ռեյմոնը իր ողջ կյանքի երազանքն էր։

Հյուրասենյակից դուրս գալիս, երբ Ռեյմոնը թեև առաջարկեց Ինդիանային, ականջին սիրո մի քանի խոստովանություն շշնջաց, բայց վերջինս տխուր պատասխանեց.

— Դուք բավական խելացի եք։

Ռեյմոնը հասկացավ հանդիմանությունը և հաջորդ օրն առավոտից իրիկուն մնաց տիկին Դեյմարի մոտ։ Մյուս հյուրերը, որոնք որսորդությամբ էին զբաղված, լիակատար ազատություն շնորհեցին նրանց։

Ռեյմոնը պերճախոս էր։ Ինդիանան խիստ կարիք էր զգում հավատալու գոնե նրա ասածների կեսին։ Ֆրանսուհի՛ն, դուք չգիտեք, թե ինչ է կրեոլուհին։ Անկասկած, դուք ջուտ չեք համոզվի, որովհետև ձեզ չեն կարող խաբել ու դավաճանել։

Գլուխ XIII

Սրբ սրբ Ռալֆը վերադարձավ որսից և սովորականի պես մոտեցավ տիկին Դելմարին՝ զարկերակը քննելու, Ռեյմոնը, որ ուշադիր հետևում էր Ռալֆին, նրա հանգարտ դեմքին նկատեց զարմանքի ու հաճույքի աննկատ մի նրբերանգ։ Որից հետո, չգիտես ինչ խորհրդավոր մտքերի ազդեցության տակ, այդ երկու տղամարդկանց հայացքները խաչաձևվեցին, և սրբ Ռալֆի սևեռուն, ցոլացող հայացքի ներքո Ռեյմոնի սև աչքերը ակամա խոնարհվեցին։ Օրվա մնացած մասը բարոնեսա Ռալֆի սովորական զուսպ վերաբերմունքը տիկին Դելմարի հանդեպ փոխվեց ինչ-որ յուրահատուկ հոգածության. հատուկ ուշադրության կամ խղճահարության նման մի բան նկատվեց նրա դեմքին, եթե առհասարակ որևէ զգացմունք կարող էր արտացոլել նրա դեմքը։ Բայց Ռեյմոնն իզուր էր ջանում գուշակել, թե ինչն էր հուզում Ռալֆին՝ վա՞խը, հո՞ւյսը. Ռալֆն անթափանցելի էր։

Հանկարծ Ռեյմոնը, որ կանգնած էր տիկին Դելմարի բազկաթոռից մի քայլ հեռավորության վրա, լսեց Ռալֆի կիսաձայն խոսքերը.

— Զարմանում եմ, լավ կանեիր, եթե վաղը դու էլ ձիով դուրս գայիր զբոսանքի։

— Բայց ձեզ քաջ հայտնի է,— պատասխանեց Ինդիանան,— որ ես առայժմ ձի չունեմ։

— Մենք քեզ համար ձի կգտնենք, ուզո՞ւմ ես մեզ հետ որսի գալ։

Տիկին Դելմարը փորձեց դանազան պատճառաբանություններով առաջարկությունը մերժել։ Ռեյմոնը հասկացավ, որ Ինդիանան նախընտրում էր մնալ իր հետ, բայց նկատեց նաև, որ զարմիկը տարօրինակ համառությամբ ուզում էր խանգարել նրա մտադրությունը։ Անմիջապես հեռանալով իր խոսակիցներից, Ռեյմոնը մոտեցավ Ինդիանային և միացավ սրբ Ռալֆի պնդումներին։ Նա տհաճությամբ էր համակված տիկին Դելմարի ինքնակոչ խնամակալի հանդեպ և որոշեց թուլացնել նրա զգոնությունը։

— Տիկին, եթե դուք համաձայնեք մասնակցել որսին,— ասաց Ինդիանային,— ինձ կքաջալերեք հետևելու ձեր օրինակին։ Ես այնքան էլ չեմ սիրում որսորդությամբ զբաղվել, բայց մեծ երջանկություն եմ համարում ձեր ուղեկիցը լինել...

— Այդ դեպքում կգնամ,— անզգուշաբար դուրս թռավ Ինդիանայի բերանից։

Նա Ռեյմոնի հետ քաղցանշանակ հայացք փոխանակեց, բայց որքան էլ ակնթարթային լիներ այդ հայացքը, Ռալֆն իսկույն որսաց այն, և Ռեյմոնն ամբողջ երեկոյի ընթացքում չկարողացավ նայել Ինդիանային, առանց հանդիպելու պարոն Բրաունի հայացքին, կամ որևէ խոսք փոխանակել նրա հետ, որ լսելի չլիներ։ Ատելության և մինչև իսկ խանդի զգացումի ալիք բարձրացավ նրա ներսում։ Ի՞նչ իրավունքով այդ զարմիկը, ընտանիքի այդ բարեկամը, իր սիրած կնոջ դաստիարակի դերն էր ստանձնել։ Նա մտքում երդվեց, որ սրբ Ռալֆը պիտի զղջար դրա համար, և ամբողջ ժամանակ առիթներ փնտրեց զայրացնելու նրան, առանց վարկաբեկելու տիկին Դելմարին, բայց դա անհնարին էր։ Սրբ Ռալֆը մեծ հարգանքով էր վերաբերվում՝ իր հյուրերի հետ, սառը և արժանավայել քաղաքավարությամբ, և չէր փորձում խառնվել որևէ ակնարկության կամ հակաճառության։

Առավոտյան, նախքան հավաքի փողհարումը, հյուրընկալը հանդիսավոր տեսքով մտավ Ռեյմոնի սենյակը։ Նրա կեցվածքի մեջ սովորականից ավելի չորություն էր նկատվում, և Ռեյմոնի սիրտը մենամարտելու անհամբեր ցանկությունից՝ սկսեց ուժգին բաբախել։ Բայց խոսքը պարզապես վերաբերում էր Ռեյմոնի Բելոիվ բերած հեծկան ձիուն, որ մտադիր էր վաճառել։ Հինգ րոպեում առևտուրը կայացավ. սրբ Ռալֆը ոչ մի սակարկություն չարեց գնի վերաբերյալ և գրպանից մի տրցակ ոսկի հանելով՝ խիստ տարօրինակ սառնասրտությամբ բուխարիկի գոգին հաշվեց դրանք, առանց ուշադրություն դարձնելու Ռեյմոնի բողոքներին՝ այդքան մեծ ճշգրտություն և մանրակրկիտություն հանդես բերելու համար։ Դուրս գալու ժամանակ սրբ Ռալֆը շրջվեց ու ասաց.

— Պարոն, այսօրվանից ձին ինձ է պատկանում։

Ռեյմոնը հասկացավ նրա նպատակը. Ռալֆն ուզում էր

խանգարել իրեն որսին մասնակցել, և բավական չոր ձայնով հայտնեց, որ ինքը նպատակ չուներ ոտքով որսի գնալ։

— Պարոն,— պատասխանեց սըր Ռալֆը մի փոքր վերամբարձ տոնով,— ինձ ծանոթ են հյուրընկալության օրենքները...— և դուրս եկավ սենյակից։

Սըր Ռեյմոնը ներքև իջավ, տիկին Դելմարը, հեծյալի հանդերձանքով, ուրախ խաղում էր Օֆելյայի հետ. նրա բատիստե թաշկինակը շնիկը պատառոտում էր։ Ինդիանայի այտերը թեթևակի շիկնել էին, աչքերում վաղուց անհետացած ցոլքեր էին փայլփլում։ Նա կրկին գեղեցկացել էր, սև մազերի խոպոպները դուրս էին թափվել փոքրիկ գլխարկի տակից, այդ սանրվածքը նրան խիստ հմայիչ էր դարձրել, իսկ վերից վար կոճկված մահուդե համազգեստը ընդգծում էր նրա նուրբ ու ճկուն իրանը։ Կրեոլուհիների գլխավոր հմայքը, ըստ իս, դիմագծերի և մարմնի համաչափության, ինչպես նաև շափազանց նրբության մեջ է, որոնց շնորհիվ նրանց մոտ երկար ժամանակ պահպանվում է մի տեսակ մանկական անմեղ գեղեցկություն։ Իր ծիծաղկուն, չարաճճի տեսքով Ինդիանան, թվում էր, տասնհինգ տարեկան աղջիկ է։

Նրա հմայքից ցնցված՝ Ռեյմոնը ներքուստ ցնծում էր իր հաղթանակի գիտակցումից, նա դիմեց Ինդիանային՝ նրա գեղեցկության հասցեին ուղղելով խիստ մաշված մի հաճոյախոսություն։

— Անհանգստանում էիք իմ առողջական վիճակի համար,— ցածրաձայն ասաց Ինդիանան,— տեսնո՞ւմ եք, ես ուզում եմ ապրել։

Ռեյմոնը երջանիկ ու երախտագիտական հայացքով պատասխանեց նրան։ Սըր Ռալֆն անձամբ էր բերում իր զարմուհու ձին։ Ռեյմոնը ճանաչեց. դա իր վաճառած ձին էր։

— Այդ ինչպե՞ս,— զարմացած բացականչեց տիկին Դելմարը, որ նախորդ օրը տեսել էր Ռեյմոնին դղյակի բակում ձիավարելիս,— պարոն դը Ռամիերը մի՞թե այդպիսի բարյացակամությամբ զիջում է իր ձին։

— Երեկ հիանում էիք այս կենդանու գեղեցկությամբ և հեզությամբ, այնպես չէ՞,— ասաց սըր Ռալֆը,— այսօրվանից այն ձեզ է պատկանում։ Ցավում եմ, սիրելիս, որ հնարավորություն չունեցա ավելի շուտ նվիրել։

— Սկսում եք կատակել, զարմիկ,— ասաց տիկին Դելմարը,— ոչինչ չեմ հասկանում, շնորհակալություն ո՞ւմ հայտնեմ, պարոն դը Ռամիերի՞ն, որ զիջում է իր հեծկանին, թե՞ ձեզ, որ, ըստ երևույթին, խնդրել եք պարոնին այդ քայլին դիմել։

— Քո զարմիկին շնորհակալություն հայտնիր, նա գնել է այս ձին, որպեսզի քեզ նվիրի,— ասաց պարոն Դելմարը։

— Իսկապե՞ս,— ասաց տիկին Դելմարը, շոյելով գեղեցիկ կենդանուն այն աղջնակի ուրախությամբ, որին առաջին անգամ զարդեր են նվիրում։

— Մենք համաձայնվել ենք, այնպես չէ՞. դու իմ բազկաթոռների համար կերպասե գեղեցիկ ասեղնագործ ծածկոցներ պիտի պատրաստես, դրա փոխարեն ես ձի եմ նվիրելու քեզ։ Դե՛, բարձրացիր մեջքին, մի վախեցիր։ Բնավորությանն արդեն ծանոթ եմ, այս առավոտ փորձել՝ եմ։

Ինդիանան փաթաթվեց սըր Ռալֆի պարանոցին, հետո ցատկեց Ռեյմոնի ձիու մեջքին ու համարձակորեն արշավեց բակի մեջ։

Այս մտերմիկ տեսարանը տեղի էր ունենում Ռեյմոնի աչքի առջև։ Նրա համար շատ ծանր էր նայել, թե ինչպես են այդ մարդիկ իր ներկայությամբ անկեղծ ու վստահելի կերպով իրար կապված, և չնայած ինքը սիրում էր կրքոտությամբ, այնուամենայնիվ, հնարավորություն չուներ թեկուզ մեկ օրով տիրանալ Ինդիանային։

— Որքա՞ն երջանիկ եմ,— ասաց տիկին Դելմարը, կանչելով նրան իր մոտ, երբ մայրուղի դուրս եկան,— կարծես այդ բոլորի Ռալֆը զուշակել է, թե որն է ամենաթանկագին ընծան։ Իսկ դուք, Ռեյմոն, ուրախ չե՞ք, որ ձեր հեծկանը իմ տրամադրության տակ է։ Օ՜, նա կդառնա իմ ամենասիրելի ընկերը։ Ինչպե՞ս եք անվանել նրան, ասացեք, ուզում եմ պահել ձեր տված անունը...

— Այստեղ ամենաերջանիկ մարդը այժմ ձեր զարմիկն է, որ կարողանում է ձեզ նվիրատվություններ անել, և որին ուրախ-ուրախ համբուրում եք։

— Մի՞թե,— պատասխանեց Ինդիանան ծիծաղելով,— խանդո՞ւմ եք նրան՝ մեր բարեկամության և բացահայտ համբույրների համար։

— Հանգի՞լ, գուցե, Ինդիանա, չգիտեմ։ Բայց երբ այդ էրիտաարգ կարմրաթուշ զարմիկը շուրթերը հպում է ձեր շուրթերին, երբ գրկում է ձեզ՝ թամբին նստեցնելու համար, հանձնելով ձեզ այն ձին, որ ես եմ վանառել, խոստովանում եմ, շատ եմ տատապում։ Ոչ, տիկին, երջանիկ չեմ, անելով ձեզ իմ սիրած ձիու սիրուհին դարձած, երջանիկ կլինեի, եթե ես ընծայած լինեի, բայց առատրականի դերում հանդես գալ՝ միջոց ընձեռելով մեկ ուրիշին ձեզ հանելի զառնալ... դա սրբ Ռալֆի կողմից իմ հասցեին ուղղված և նրբորեն կազմակերպված ստորացում է։ Եթե համոզվեմ, որ դիտումնավոր է արել, անպայման վրեժ կլուծեմ նրանից։

— Օ՜, այս խանդը բոլորովին չի սազում ձեզ։ Աղգակցական կապի համար մի՞թե նախանձում եք, մի՞թե չեք զգում, որ դուք և ես անսովոր կապի մեջ ենք, և միայն դո՛ւք պետք է կերտեք ինձ համար հրաշքների երջանիկ մի աշխարհ։ Ես արդեն սկսում եմ դժգոհել ձեզնից, Ռեյմոն, ինձ թվում է, թե ձեր ինքնասիրությունը խոցված է այդ խեղճ զարմիկի պատճառով։ Թվում է, թե դուք ավելի մեծ նշանակություն եք տալիս նրա հանդեպ տածած բարեկամական բացահայտ սիրուն, քան՝ այն խոր, գաղտնի զգացմունքին, որ ունեմ մեկ ուրիշի հանդեպ։

— Ներիր, ներիր, Ինդիանա, մեղավոր եմ, ես արժանի չեմ քեզ, բարի, քնքուշ Հրեշտակ, բայց խոստովանեմ, որ շատ եմ տանջվում՝ տեսնելով քո հանդեպ այդ մարդու ունեցած անսահման արտոնությունները։

— Արտոնություննե՞ր, նա՞, Ռեյմոն, դուք չգիտե՞ք, թե ինչպիսի սուրբ երախտագիտական զգացմունքով ենք շղթայված իրար, դուք չգիտե՞ք, որ նրա մայրն իմ մորաքույրն է, որ նույն հովտում ենք ծնվել, որ պատանեկան տարիներին նա հսկել է իմ մանկությունը, որ միակ հենարանս է եղել, իմ միակ դաստիարակը, Բուրբոն կղզում՝ իմ միակ ուղեկիցը, որ նա ամենուր հետևել է ինձ, լքել է իր հայրենիքը, որպեսզի ապրի այնտեղ, որտեղ ես եմ եղել, մի խոսքով, միակ մարդն է, որ սիրում է ինձ և անհանգստանում է ինձ համար։

— Ասոփա՞ծ իմ, Ինդիանա, ձեր բոլոր ասածները ավելի են խորացնում վերքս։ Ուրեմն, ձեզ շա՞տ է սիրում այդ անպիտանին։ Իսկ դուք գիտե՞ք, թե ե՞ս որքան եմ սիրում։

— Ա՜, չմամեմատենք։ Եթե միևնույն բնույթի զգացմունքը ձեզ մրցակիցներ դարձներ, պիտի նախընտրեի նախկինը։ Բայց մի վախեցիք, Ռեյմոն, երբեք ձեզնից չեմ պահանջի Ռալֆի նման սիրել ինձ։

— Ուրեմն, բացատրեք, խնդրեմ, ո՞վ է այդ մարդը։ Անհնար է թափանցել նրա ապառաժե դիմակի տակ։

— Ուզում եք ե՞ս ներկայացնեմ իմ զարմիկի առավելությունները,— ասաց Ինդիանան ժպտալով,— խոստովանում եմ, որ դժվար է. այնքան եմ սիրում նրան, որ միայն կդողամ, իսկ ինչպիսին որ կա, վախենում եմ ձեզ դուր չգա։ Փորձեք օգնել ինձ, դե՞, ըստ ձեզ, ինչպիսի՞ն է նա։

— Նրա դեմքը (ներեցեք, եթե վիրավորում եմ ձեզ) դատարկ մարդու տպավորություն է թողնում, մինչդեռ, երբ բարեհաճում է խոսել, ասածների մեջ և՛ խելք կա, և՛ մակարդակ, բայց այնքան զվկամությամբ ու սառնորեն է անում այդ ամենը, որ իր գիտելիքները ոչ մեկին օգուտ չեն տալիս, իսկ վարվելակերպը սառեցնում է ամենքին։ Հետո, նրա մտածելակերպի մեջ ընդհանուր ու ծանր բան կա, որ արտահայտությունները դարձնում է աղոտ։ Կարծում եմ, նրա ուղեղը հագեցած է այս ու այնտեղից քաղած մտքերով և շատ պարզունակ, միջակ անձնավորություն է, հետևաբար չի կարող իր սեփական մտքերն ունենալ։ Նա այն մարդն է, որ հասարակության կողմից ընդունվում է որպես լրջախոհ անձնավորություն։ Նրա ամենամեծ առավելությունը լրջությունն է, մնացած դերը կատարում է անտարբերությունը։

— Այդ նկարագրի մեջ ճշմարտություն կա,— պատասխանեց Ինդիանան,— բայց մի ուրիշ հանգամանք ևս կա։ Դուք համարձակորեն հայտնում եք ձեր կասկածները, որ ես չէի փորձի վճռականապես հայտնել, չնայած Ռալֆին ճանաչում եմ ծնվածս օրից։ Ճիշտ է, շատ հարցերի նայում է այլ աչքերով, դա նրա ամենամեծ թերությունն է, բայց դրանում մեղավոր չէ, այդպիսի կրթություն է ստացել։ Կարծում եք, առանց կրթության նա դատարկամի՞տ կլիներ։ Իսկ ես հակառակն եմ կարծում։ Ուզում եմ մի դրվագ պատմել

նրա կյանքից, որպեսզի բացահայտեմ նրա բնավորությունը։ Ի զժբախտություն իրեն, մի եղբայր ուներ, որին ծնողները բացահայտորեն նախընտրում էին։ Այդ եղբայրն ուներ շատ փայլուն հատկանիշներ, որոնք բացակայում էին Ռալֆի մոտ։ Հեշտությամբ էր սերում դասերը, արվեստի բոլոր բնագավառների հանդեպ հակումներ ուներ, սրամիտ էր։ Նրա դեմքն ավելի արտահայտիչ էր, բայց ավելի քիչ համաչափ, քան Ռալֆինը։ Քնքուշ էր, սիրալիր, զգոնությամբ, մի խոսքով, հաճելի անձնավորություն էր։ Ռալֆը, ընդհակառակը, ձախորդ էր, թախծոտ, անհաղորդ, սիրում էր առանձնանալ, դանդաղ էր սովորում դասերը և չէր ցուցադրում գիտելիքները։ Ծնողները, երբ նկատեցին երկու եղբայրների միջև եղած տարբերությունը, սկսեցին վատ վերաբերվել Ռալֆին։ Ավելին, տատիկին։ Վաղ մանկությունից նա դարձավ մոայլ, երազկոտ, անհաղթահարելի երկչոտությունը համակեց նրա ողջ էությունը։ Նույնիսկ իր իսկ անձի նկատմամբ ատելություն էին ներշնչել նրան, արհամարհանք։ Հուսահատվեց կյանքից և տանջահին տարեկան հասակում հիվանդացավ դառնաթախծությամբ. Անգլիայի երկնքի ներքո հյուծվեց մարմինը, իսկ Բուրբոն կզզու շոգ երկնքի տակ՝ հոգին։ Հաճախ է ինձ պատմել, որ մի օր կամովին հեռացել է տնից՝ ծովում խեղդվելու նպատակով, բայց երբ ծովափին նստած սկսել է մտորել կատարելիք քայլի մասին, տեսել է ինձ, սեմմորթ տանտուփս գրկում, իր մոտ գնալիս։ Այդ ժամանակ ես հինգ տարեկան էի։ Ասում են շատ սիրունիկ երեխա եմ եղել և մոայլ զարմիկիս հանդեպ այնպիսի հատուկ վերաբերմունք եմ ունեցել, որ ոչ մեկի կողմից նա չէր զգացել։ Ճիշտն ասած, նա շատ հոգատար ու սիրալիր էր իմ հանդեպ, մի բան, որ իմ հայրական տան մեջ անսովոր երևույթ էր ինձ համար։ Երկուսս էլ դժբախտ էինք և հասկանում էինք իրար։ Ռալֆը ինձ սովորեցնում էր իր մայրենի լեզուն, իսկ ես թոթովում էի իմ լեզվով։ Իսպաներենի և անգլերենի խառնուրդով զուցե պետք է բացատրել Ռալֆի բնավորությունը։ Երբ փաթաթվեցի նրան, նկատեցի, որ լաց է լինում, և առանց հասկանալու՝ ես էլ լաց եղա։ Այդ ժամանակ սեղմեց ինձ կրծքին, և, ինչպես ավելի ուշ ասաց

այդ մասին, երդվեց միայն ինձ համար ապրել, որովհետև լքված էր, եթե չասենք՝ ատելի դարձած մի երեխա, իսկ իր բարեկամությունը անհրաժեշտաբար կարող էր օգտակար լինել ինձ։ Այդ ժամանակվանից դարձա նրա սեփական գոյության միակ կապը։ Եվ համարյա այլևս չլքեցինք իրար։ Մեր ազատ ու առողջ օրերն անց էինք կացնում լեռների առանձնության մեջ։ Բայց երևի ձանձրալի է լսել մեր մանկության պատմությունը, զուցե կնախընտրեիք ձիարշավել և հասնել որսատեղի՞ն։

— Խենթ...— ասաց Ռեյմոնը՝ բռնելով տիկին Դելմարի ձիու սանձից։

— Լավ, կպատմեմ,— շարունակեց Ինդիանան,— էդմոնդ Բրաունը՝ Ռալֆի ավագ եղբայրը, քսան տարեկան հասակում մահացավ, մայրն էլ վշտից մահացավ, իսկ հայրը անմխիթար վիճակում էր։ Ռալֆն ուզեց նրա ցավը մեղմել, բայց պարոն Բրաունի սառնությունը, որով պատասխանեց նրա փորձերին, ավելացրեց Ռալֆի բնական երկչոտությունը։ Ժամերով լուռ ու տխուր նստում էր հուսահատ ծերունու կողքին, չհանդգնելով որևէ բառ, մի քաղցր խոսք ուղղել նրան. շատ էր վախենում անտեղի, ոչ մխիթարական խոսքեր դուրս տալ։ Հայրը մեղադրեց նրան անզգայության մեջ, իսկ էդմոնդի մահը խեղճ Ռալֆին ավելի զժբախտացրեց ու հեռացրեց բոլորից։ Նրա միակ մխիթարությունը ես էի։

— Ինչ էլ որ ասեք, նրան խղճալ չեմ կարող,— ընդհատեց Ռեյմոնը,— բայց ձեր և նրա կյանքում մի բան կա, որ չեմ կարող բացատրել. ինչո՞ւ չամուսնացավ ձեզ հետ։

— Հիմա ստույգ պատճառը կիմանաք,— շարունակեց Ինդիանան,— երբ հարսնացու աղջիկ դարձա, Ռալֆը, որ ինձնից տասը տարով մեծ է, մի բան, որ մեր բնության համար հսկայական տարբերություն է, քանի որ կանանց մանկությունը շատ կարճ է տևում, նա արդեն ամուսնացել էր։

— Սբր Ռալֆը որբևայրի՞ է, երբեք չեմ լսել նրա կնոջ մասին։

— Այդ մասին չակնարկեք։ Կինը երիտասարդ էր, հարուստ, գեղեցիկ, բայց էդմոնդին էր սիրել, նրանք պետք է ամուսնանային, և երբ շահերից ու ընտանեկան հանգամանք-

Նէրբից եկնելով՝ սոփոված ամուսնացավ Ռալֆի հետ, նույնիսկ չչանաց թաքցնել առելությունը ամուսնու հանդեպ։ Ռալֆը, անհրաժեշտաբար, նրա հետ մեկնեց Անգլիա և երբ կնոջ մահից հետո վերադարձավ Բուրբոն կղզի, ես ամուսնացել էի պարոն Դելմարի հետ և մեկնելու էի Եվրոպա։ Ռալֆը փորձեց մենակ ապրել, բայց միայնությունը բարդացրեց նրա վիճակը։ Չնայած ինձ հետ երբեք չի խոսել տիկին Ռալֆ Բրաունի մասին, բայց համոզված եմ, որ նրա հետ ավելի գժբախտ է զգացել իրեն, քան հայրական տունը, իսկ թարմ ու ծանր հիշողություններ միանում էին նրա լսական տխրությանը։ Նորից հիվանդացավ և դրանից հետո վճռեցինք իր սուրճի պլանտացիաները և եկավ հաստատվելու Ֆրանսիայում։ Շատ յուրօրինակ ձևով նեղկայացավ ամուսնուս, և շատ պիտի ծիծաղեի, եթե այդ արժանավոր Ռալֆի մտերմությունը ինձ չտուգեր։ «Պարոն,— ասաց նրան,— սիրում եմ ձեր կնոջը։ Ե՞ս եմ մեծացրել նրան, նա իմ քույրն է, դեռ ավելին՝ իմ աղջիկը։ Աշխարհում միակ բարեկամս է և միայն նրան եմ սիրում։ Բարեհաճեք թույլ տալ ինձ հաստատվել այստեղ, երեքով միասին կապրենք։ Լսել եմ, որ մի փոքր խանդում եք ձեր կնոջը, բայց լսել եմ նաև, որ պատվախնդիր և առաքինի մարդ եք։ Եթե պատվովս երդվեմ, որ երբեք չեմ սիրահետել ձեր կնոջը և երբեք չեմ մտածի այդ մասին, կարո՞ղ եք առանց անհանգստանալու ընդունել ինձ որպես ձեր կնոջ եղբայր։ Ինձ հավատո՞ւմ եք, պարոն»։

Պարոն Դելմարը զինվորականի ազնիվ խոսքը երբեք չի դրժի. և նա այդ անկեղծ հայտարարությունը ընդգծված վստահությամբ ընդունեց։ Մինչդեռ մի քանի ամիս շարունակ ուշադիր հետևում էր, որ այդ վստահությունը, որով այդքան հպարտանում էր, մինչև վերջ հասնի։ Հիմա այն շատ հաստատուն է, ինչպես Ռալֆի անընկճելի ու խաղաղ հոգին։

— Իսկ դուք համոզվա՞ծ եք, Ինդիանա,— ասաց Ռեյմոնը,— որ սրբ Ռալֆը չի խաբում ինքն իրեն՝ երդվելով, որ երբեք որպես կին չի սիրել ձեզ։

— Տասներկու տարեկան էի, երբ մեկնեց Բուրբոն կղզուց՝ կնոջ հետ Անգլիայում ապրելու համար, տասնվեց տարեկան էի, երբ ինձ ամուսնացած գտավ և ավելի շատ ուրախությամբ լցվեց, քան տխրեց։ Հիմա Ռալֆը շատ է ծերացել։

— Քանինը տարեկան հասակո՞ւմ։

— Մի ծիծաղելի, Դելմքով երիտասարդ է, բայց կրած տանջանքների պատճառով սիրտը մաշվել է, և Ռալֆն այլևս ոչ մեկին չի սիրի, որպեսզի չտանջվի։

— Ոչ էլ ձե՞զ։

— Ոչ էլ ինձ։ Նրա բարեկամությունը սովորության ուժ է ձեռք բերել. նախկինում, երբ հանձն առավ հսկել իմ մանկությունը և խնամակալել ինձ, այդ ամենը անում էր մեծահոգաբար, այն ժամանակ ես նրան սիրում էի այնպես, ինչպես այսօր նա է ինձ սիրում, որովհետև զգում էի նրա կարիքը։ Այսօր ամբողջ հոգով երախտագիտության պարտքս եմ հատուցում անցյալի հանդեպ, և իմ կյանքը հոսում է նրա կյանքը հանելի և ուրախ դարձնելու համար ջանքերով։ Բայց երբ երեխա էի, ավելի շատ բնազդով էի սիրում նրան, քան սրտով, իսկ նա հասուն մարդ դառնալուց հետո ավելի քիչ սրտով է սիրում, քան բնազդով։ Ես անհրաժեշտություն եմ դարձել նրա համար, որովհետև համարյա միայն ես եմ սիրում նրան։ Բայց հիմա պարոն Դելմարն էլ է վստահեցնում, թե կապված է նրա հետ և համարյա նույնքան սիրում է նրան. նրա պաշտպանական զերը, որ նախկինում այնպես թաքարար էր հանդես գալիս հորս բռնակալության դեմ, այժմ ամուսնուս նեղկայությամբ դարձել է նույնը ու զգուշավոր։ Վատ չի զգում իմ տանջանքները տեսնելով, միայն թե ինձ մոտ լինի. ինքն իրեն հաշիվ չի տալիս, ես դժբախտ եմ, թե ոչ, բավական է, որ ապրում եմ։ Վիճակիս բարվոքման համար նույնիսկ նեցուկ չի կանգնում, որովհետև կընդհարվի պարոն Դելմարի հետ և կխոսվի իր կյանքը։ Այնքան է լսել իր հասցեին ուղղված՝ «չոր սրտի տեր» արտահայտությունը, որ ինքն էլ է համոզվել դրանում, և սիրան իրոք ցամաքել է անգործությունից։ Ինքն է թողել, որ քարանա։ Եթե մեկնումեկը սիրեր նրան, կարող էր այս մարդու հոգին ծաղկեցնել, բայց այդպիսի

սեր նա չի տեսել, և հոգին թառամել է։ Հիմա նրա երջանկությունը հանգստի մեջ է, հաճույքը՝ կյանքի լավ պայմանների մեջ։ Հոգսեր չունի, ուրիշները նրան չեն հուզում։ Ռալֆը բառիս բուն իմաստով եսասեր է։

— Ավելի լավ,— ասաց Ռեյմոնը,— այլևս չեմ վախենում նրանից։ Եթե կամենաք, նույնիսկ կսիրեմ նրան։

— Այո, սիրեք նրան, Ռեյմոն,— պատասխանեց Ինդիանան,— դրա համար նա երախտապարտ կլինի ձեզ։ [Կարևոր չէ, թե ինչու են մեզ սիրում, այլ՝ ինչպես են սիրում։ Երջանիկ է այն մարդը, որին սիրում են, ինչ պատճառով էլ լինի։]

— Ինչ որ ասում եք, Ինդիանա,— վրա բերեց Ռեյմոնը, գրկելով նրա նուրբ ու ճկուն մեջքը,— միայնակ ու տխուր սրտի ողբ է, բայց ուզում եմ իմանաք, թե ինչու և ինչպես եմ ձեզ սիրում, հատկապես՝ ինչու։

— Ինձ երջանկացնելու համար, այնպես չէ՞,— պատասխանեց երիտասարդ կինը՝ տխուր կրքով լեցուն հայացքը բարձրացնելով։

— Որպեսզի կյանքս տամ քեզ,— պատասխանեց Ռեյմոնը՝ շրթները հպելով Ինդիանայի ծածանվող մազերին։

Եզրնրափոքը մոտիկ տեղից զգուշություն աղդարարեց։ Դա սրը Ռալֆն էր, որ նրանց տեսել կամ չէր տեսել։

Գլուխ XIV

Երբ որսի շներին բաց թողեցին, Ռեյմոնը զարմացավ՝ տեսնելով Ինդիանայի դեմքին կատարված փոփոխությունը։ Նա աշխուժացավ, աչքերը փայլեցին, այտերը շիկնեցին, ուսնգերն ուռեցին՝ մատնելով նրա անհասկանալի ինչ-որ հոգեկան տագնապի կամ բավականության կանխավայելումը։ Եվ հանկարծ, թողնելով Ռեյմոնին ու եռանդով խթանելով ձիու կողերին, նետվեց Ռալֆի հետքերով։ Ռեյմոնը չգիտեր, որ Ռալֆի և Ինդիանայի միահամուռ միակ մոլությունը որսն էր։ Նա անտեղյակ էր նաև, որ այդ փխրուն և արտաքուստ երկչոտ թվացող կնոջ մեջ այդքան առնականություն, արիություն կար, [այնպիսի խելագար քաջություն, որ երբեմն երևան է գալիս ամենաթույլ մարդկանց մոտ] որպես ցղային ցնցում։

Ռեյմոնը սարսափեց՝ տեսնելով, թե ինչպես է Ինդիանան անվախ սլանում՝ իրեն հանձնած այդ ձիու քմահաճույքին, որին դեռ լավ չէր ճանաչում, համարձակորեն ձիու սանձը ուղղում մացառուտների մեջ, զարմանալի ճարպկությամբ խուսափում ճյուղերից, որոնք դյուրաբեկորեն մտրակում էին դեմքը, անցնում էր փոսերի վրայով առանց տատանվելու, հանդգնում էր վստահորեն մտնել փափուկ կավահողի մեջ, չէր մտահոգվում, որ կարող է կոտրել նուրբ մարմնի մասերը։ Նրան միայն մի միտք էր հուզում. առաջինը հասնել վարազի մոտ նրա թողած թարմ հետքերով։ Նման վճռակամությունը ահաբեկեց Ռեյմոնին և հուսախաբ արեց նրան։ [Տղամարդիկ, հատկապես սիրեկանները, միամիտ մի ցանկություն ունեն. պաշտպան կանգնել թույլ կանանց և ոչ թե հիանալ նրանց քաջությամբ։] Խոստովանում եմ, Ռեյմոնը սարսափեց, երբ զգաց, թե սերը որքան մեծ համարձակություն և վճռականություն է ներշնչել նրան։ Դա համակերպվող խեղճ նոնը չէր, որ, փոխանակ պայքարելու իր դժբախտության դեմ, նախընտրել էր խեղդվել դեռևս։

«Եթե նրա սերն այդքան անանձնական է ու կատաղի, ինչպես նրա նախասիրությունները,— մտածեց Ռեյմոնը,— եթե նա այդպիսի հուզումով ու անընկճելիորեն ինձ հետևի, ինչպիսի համառությամբ հետևում է վարազին, նշանակում է, ոչ մի հասարակական կարծիք չի խոչընդոտի նրան, ոչ մի օրենք չի ներգործի նրա վրա. նա կկործանի ինձ։ Հանուն այս կնոջ մնում է զոհաբերել իմ ապագան։

Սարսափելի և հուսահատ ճիչեր, որոնց միջից որոշակի տարբերվում էր տիկին Դելմարի ձայնը, Ռեյմոնին դուրս բերին խոհերից։ Վերջինս անհանգստացած խթանեց ձին, և նույն պահին նրա մոտ հայտնվեց Ռալֆը՝ հարցնելով՝ լսե՞լ էր արդյոք այդ տագնապալի ճիչերը։

Իսկույն նրանց ընդառաջ եկան սարսափած որսահետաղները, որոնք անկանոն գոռում-գոչյուններով հայտնեցին, որ վարազը սլացել է տիկին Դելմարի վրա և ձիուց ցած գլորել

նրան։ Մյուս որսորդները, ավելի ահարեկված, կանչեցին սրբ Ռալֆին, որի օգնությունն անհրաժեշտ էր վիրավորին։

— Անօգուտ է,— ասաց վերջին հասնողը,— այլևս հույս չկա, ձեր խնամքի կարիքն այլևս չի զգացվում։

Այդ սարսափելի պահին Ռեյմոնը նկատեց պարոն Բրաունի դունատ ու մռայլ դեմքը։ Վերջինս չդուռաց, չկորցրեց ինքնատիրապետումը, ձեռքերը չփոփոխեց, նա միայն վերցրեց որսորդական գանակը և անպլիսյան հատուկ սառնությամբ պատրաստվեց իր իսկ կոկորդը կտրել, երբ մի ոստյունով Ռեյմոնը թռավ ու խլեց նրա ձեռքի զենքը և քարշ տվեց նրան ճիշերի ուղղությամբ։

Ռալֆին թվաց, թե երազում է տեսնում տիկին Դելմարին, որ նետվել էր նրան ընդառաջ և առաջարկում էր շուտափույթ հասնել գնդապետի մոտ։ Վերջինս գետնին ընկած՝ կյանքի նշաններ ցույց չէր տալիս։ Ռալֆն շտապեց նրա երակից արյուն բաց թողնել, երբ համոզվեց, որ պարոն Դելմարը չի մահացել։ Ազդրը կոտրված էր, նրան իսկույն տեղափոխեցին գոյակ։

Պարզվեց, որ իրարանցման մեջ ամուսնու փոխարեն, սխալմամբ, տիկին Դելմարի անունն էին տվել կամ, ավելի ճիշտ, Ռալֆին և Ռեյմոնին թվացել էր, թե նրա մասին էին լսել, քանի որ նա էր նրանց ուշադրության կենտրոնում։

Ինդիանային ոչինչ չէր պատահել, բայց վախից և հուզմունքից ուժ չուներ քայլելու։ Ռեյմոնը նրան պահել էր թևերի մեջ՝ ներողամտությամբ լցված նրա կանացի թույլ սրտի հանդեպ, տեսնելով, թե որքան հուզված է ամուսնու դրժբախտությունից, որին, ճիշտն ասած, ավելի շատ հիմքեր ուներ ատելու, քան խղճալու։

Սրբ Ռալֆը վերագտել էր իր սովորական հանգստությունը, միայն արտառոց դալկությունն էր մատնում նրա ապրած խոր հուզումը, չէ՞ որ ամբողջ կյանքում միայն երկու հոգու էր սիրել, որոնցից մեկին քիչ էր մնացել կորցներ։

Ռեյմոնը այդ հուզումնալից ու զառանցագին պահերի մեջ բանականությունը պահպանած միակ անձնավորությունն էր, որ կարող էր սառնասրտորեն տեսնել շուրջը կատարվող իրադարձությունները և կարողացել էր զգալ, թե որքան մեծ էր Ռալֆի սերը զարմուհու հանդեպ, և որքան թույլ էր ու

անհամեմատելի այդ սերը գնդապետի նկատմամբ։ Այս միջադեպը, որ գալիս էր դրականապես հաստատելու Ինդիանայի կարծիքը, ոչ միայն Ռեյմոնի աչքից չվրիպեց, այլ նաև այդ տեսարանին ներկա գտնվող մյուս մարդկանցից։

Ռեյմոնը տիկին Դելմարի մոտ երբեք խոսք չբացեց Ռալֆի ինքնասպանության փորձի մասին, որի վկան էր եղել։ Այս գաղտնիքի պահպանումն, անխոս, եսասիրության և ատելության արդյունք էր, բայց դուք, անշուշտ, կներեք Ռեյմոնին, որովհետև, ինչպես հայտնի է, սիրահարվածները միշտ խանդոտ են լինում։

Վեց շաբաթ անց գնդապետին մեծ զմվարությամբ տեղափոխեցին Լանլի, բայց դրանից հետո նա վեց ամիս չշարժվեց տեղից, որովհետև կոտրվածքը կպչելուն պես, սուր հոդացավեր հաջորդեցին այդ նույն մասում, և աննկարագրելի տանջանքները նրան գամեցին անկողնին։ Նա արժանացավ կնոջ ամենակատարյալ խնամքին։ Կինը չլքեց ամուսնու սնարը և անտրտունջ տարավ նրա բիրտ ու դժան բնավորությունը, զինվորականի ցասման պոռթկումները, հիվանդ մարդու քմահաճությունները։

Չնայած այս տխուր կյանքին, Ինդիանայի առողջական վիճակը վերականգնվեց. նա օրեցօր ծաղկում էր ու գեղեցկանում, երջանկությունը բույն էր դրել նրա սրտում։ Ռեյմոնը սիրում էր ճշմարիտ սիրով։ Ամեն օր այցելում էր Ինդիանային։ Ոչ մի խոշընդոտ չէր խանգարում տեսնելու տիկին Դելմարին։ Ռեյմոնի համար նրա ամուսնու հիվանդությունը ցավ չէր, համակերպվել էր այն մտքի հետ, որ չէր կարող Ինդիանային առանձին տեսնել։ Իր մի հայացքը բավական էր, որ Ինդիանան ամբողջ օրը երջանիկ զգար։ Վերջինս կյանքից այլևս չէր բողոքում, հոգին լցված էր, երիտասարդությունը՝ արդարացված, և նա միայն դրա համար էր ապրում։

Առանց զգալու այդ ամենը, գնդապետը Ռեյմոնի հանդեպ բարեկամաբար տրամադրվեց։ Պարզամտորեն հավատաց հարևանի պարտականության մեջ մտնող այցելություններին ու իր պատճառով անհանգստացած մարդուն։ Տիկին դը Ռամիերի հաճախումները նույնպես ապացուցեցին այդ, իսկ Ինդիանան վերջինիս հետ կապվեց մեծ կրքով

ու ոգևորվածությամբ։ Այսպիսով, կնոջ երկրպագուն ամուսնու բարեկամը դարձավ։

Շաբունակական այս հանդիպումների պատճառով Ռեյմոնը և Ռալֆը, կամքից անկախ, նույնպես մտերմացան։ Նրանք իրար դիմում էին «սիրելի բարեկամ»-ով։ Առավոտները և իրիկունները իրար ձեռք էին սեղմում։ Եթե մեկը մյուսին խնդրանքով էր դիմում, անպայման սկսում էին «մեծ հույսեր եմ կապում ձեր բարեկամեցողության հետ» նախադասությամբ կամ նման այլ արտահայտություններով։ Ի վերջո, երբ մեկը խոսում էր մյուսի մասին, ասում էր. «Իմ ընկերն է»։

Բայց հնարավորին չափ որքան էլ անկեղծություն էին ցուցաբերում, այնուամենայնիվ միմյանց չէին սիրում։ Ամեն հարցում հակառակ կարծիքի էին, ոչ մի ընդհանուր համակրանք չկար, նույնիսկ տիկին Դելմարի հանդեպ տածած նրանց սերը այնպիսի տարբեր ձևերով էր արտահայտվում, որ նրանք ավելի շատ հեռանում էին միմյանցից, քան՝ մտերմանում։ Տարօրինակ հաճույք էին վայելում՝ մեկմեկու հակաճառելով և հնարավորին չափ գցելով մեկը մյուսի տրամադրությունը, հանդիմանական խոսքեր ուղղելով իրար, որոնք, ճիշտ է, ասվում էին ընդհանուր առմամբ, բայց սուր էին ու կծու։ Հիմնական վեճը շատ հաճախ սկսում էր քաղաքական թեմաներից և ավարտվում էր բարոյախոսություններով։ Սրեկոները սովորաբար հավաքվում էին պարոն Դելմարի բազկաթոռի շուրջը, և վիճաբանությունն սկսում էր ծայր առնել ամենամանր հարցերից։ Մշտապես պահպանում էին պահանջվող քաղաքավարական օրենքները, որ մեկին իր փիլիսոփայությունն էր պարտադրում, մյուսին՝ հասարակության մեջ իրեն պահել կարողանալու հմտությունը։ Եվ վիրավորում էին իրար երկիմաստության քողի տակ, իսկ դնդապետը հրճվում էր դրանից, քանի որ բնույթով ռազմատենչ էր ու կռվազան, իսկ կռվելու հաճույքից զրկված էր։ Այս կարգի վիճաբանություններն այժմ դուր էին գալիս նրան։

Կարծում եմ, քաղաքական հայացքները մարդուն լիովին բնորոշում են։ Ասացեք ինձ միայն, թե ինչ եք մտածում և ինչ եք ոգում, կասեմ, թե որոնք են ձեր քաղաքական հա-

մոզմունքները։ Ի ծնե որ հասարակությանը կամ որ կուսակցությանը պատկանի անհատը, վաղ թե ուշ նրա բնավորությունը վեր է բարձրանում նախապաշարմունքներից կամ հայեցակետերից՝ միակցվելով կրթությանը։ Երևի իմ համոզմունքները ծայրահեղ են թվում ձեզ, բայց, ասացեք, խնդրեմ, ի՞նչ լավ բան կարելի է սպասել այն մարդուց, որը հանդիսատ համակերպվում է կառավարության ստեղծած այնպիսի համակարգերի հետ, որոնք մերժում են մարդասիրությունն ու վեհանձնությունը։ Ցույց տվեք ինձ մեկին, որը անհրաժեշտություն համարի պատժի առավելագույն չափը՝ մահապատիժը, և որքան էլ այդ անձնավորությունը կրթված և սկզբունքային լինի, հավատացնում եմ, իրար նկատմամբ համակրանք ունենալ չենք կարող։ Եթե այդ մարդը ցանկանա ինձ անհայտ ճշմարտության դասեր տալ, ոչ մի արդյունքի չի հասնի, որովհետև, հակառակ բոլոր ցանկություններիս, նրան հավատալ չեմ կարող։

Գաղափարական բոլոր տեսանկյուններից Ռալֆը և Ռեյմոնը տարբերվում էին իրարից, մինչդեռ նախքան ծանոթանալը ոչ մեկը կայուն կարծիք չուներ։ Բայց այն ժամանակից սկսած, ինչ տաք վիճաբանությունների մեջ մտան, յուրաքանչյուրը մյուսի առաջ քաշած հարցերը ժխտելով, ամեն մեկն իր համար ամբողջական անհերք համոզմունք ստեղծեց։ Ռեյմոնն ամեն առիթով պաշտպանում էր տիրող հասարակության շահերը, Ռալֆը քննադատում էր նրա բոլոր տեսակետները։

Հեշտ է բացատրել, թե ինչու էր այդպես. Ռեյմոնը երջանիկ էր, հասարակության կողմից լավ ընդունված։ Ռալֆը ճանաչել էր միայն կյանքի դառը կողմերը և տհաճություններ էր ճաշակել։ Մեկի համար ամեն ինչ շատ լավ էր, մյուսը ամեն ինչից դժգոհ էր։ Մարդիկ ու հանգամանքները խստորեն էին հանդես եկել Ռալֆի դեմ, իսկ Ռեյմոնին հագեցնելու աստիճան բավարարել էին։ Եվ երկուսն էլ՝ թե՛ Ռալֆը, թե՛ Ռեյմոնը, երեխաների պես ամեն ինչ բխեցնում էին անձնականից, վերջնական դատողություններ անում սոցիալական կարգերի շուրջը, մեծ-մեծ հարցեր բարձրացնում, որոնց հասու չէր նրանցից և ոչ մեկը։

Ռալֆը հույսեր էր կապում հանրապետության հետ, որտեղից վտարում էր ամեն տեսակի չարիք, նախապաշարում-

նոր, անարդարություններ. նախագիծ, որը պետք է ապավիներ հիմնավորապես նոր ստեղծվող մարդկային հասարակությանը։ Ռեյմոնը կողմնակից էր ժառանգաբար հասած միապետությանը և նախընտրում էր, ինչպես ինքն էր ասում, կառափնաբաններից և հեղվող ամեղ արյունից բարձրացող շարիքները, նախապաշարումները, անարդարությունները։

Երբ ծայր էր առնում վիճաբանությունը, գնդապետն սկզբում միշտ համակարծիք էր Ռալֆին։ Ատում էր Բուրբոններին և, իր տեսակետը հայտնելիս, հակակրանքի թունդ բառեր էր օգտագործում։ Բայց Ռեյմոնին շուտով հաջողվեց ճարպիկորեն գրավել նրան իր կողմը, ապացուցելով, որ միապետությունը սկզբունքով ավելի մոտ է կանգնած Նապոլեոնի տիրակալությանը, քան՝ հանրապետությանը։ Ռալֆը համոզելու մեջ շատ անհարակ էր, այդ խեղճ բարոնետը միամիտ էր ու ձախորդ, տրամաբանությունը չոր էր, համոզմունքները բացարձակ էին, ոչ մի ճշմարտություն չէր մեղմացնում և ոչ մեկին չէր խնայում։

— Ներեցեք,— ասաց գնդապետին, երբ վերջինս անիծում էր անգլիական կառավարությանը՝ Ֆրանսիայի գործերին միջամտելու համար,— ի՞նչ վատ բան է արել այդ կառավարությունը անձամբ ձեզ, մի մարդու, որին խելամիտ և գատող եմ համարում, ձեր դեմ ազնվորեն պայքարող այդ ազգությունը։

— Ազնվորե՞ն,— կրկնեց Դելմարը՝ ատամները կրճատացնելով և թափահարելով անթացուպը։

— Թող տերությունները իրենք լուծեն իրենց քաղաքական ներքին հարցերը,— շարունակեց սըր Ռալֆը,— որքանով կողմնակից ենք այն կառավարությանը, որն արգելում է մեզ քննարկել մեր իսկ շահերը։ Եթե ժողովուրդը պատասխանատու է իր օրինական պետության սխալների համար, մի՞թե Ֆրանսիացին ամենամեղավորը չէ։

— Ճիշտ է,— բացականչեց գնդապետը,— ամո՛թ Ֆրանսիային, որ հրաժարվեց Նապոլեոնից և օտարերկրացիների սվիններով գահին նստեցրեց իր թագավորին։

— Ես չեմ ասում, որ դա Ֆրանսիայի համար ամոթաբեր է,— շարունակեց Ռալֆը,— ես ասում եմ, որ դա Ֆրանսիայի դժբախտությունն է։ Խղճում եմ նրան, որ այդքան

թույլ ու հիվանդոտ հանդես եկավ այն օրը, երբ, ազատվելով իր բռնակալից, ստիպված եղավ ընդունել խղճուկ սահմանադրության հրովարտակը՝ ազատության ծաղրանմանակը, որին սիսեցիք հարգանքի տուրք մատուցել, փոխանակ այսօր հրաժարվելու նրանից և պայքարելու կատարյալ, ճշմարիտ ազատության համար...

Այդ ժամանակ Ռեյմոնն ընդունեց սըր Ռալֆի առաջարկած մարտահրավերը. որպես հրովարտակի ջերմեռանդ պաշտպան, նա նույնպես ազատության կողմնակից էր և հրաշալիորեն ապացուցում էր Ռալֆին, որ մեկը մյուսի արտահայտությունն է. եթե հրովարտակը ոչնչանար, ինքն անձամբ կխորտակեր իր կուռքը։ Ջուր էր սըր Ռալֆը մաքառում պարոն դը Ռամիերի հմտորեն շարադրած փաստարկների դեմ, վերջինս հիանալի ճարպկությամբ ապացուցում էր, որ սրանից ավելի ազատ կառավարություն եթե ստեղծվեր, անտարակույս բերելու էր 1793 թվականի հասարակական կարգի խանգարումներին, իսկ ժողովուրդը դեռ հասունացած չէր այդպիսի ազատության համար, և երկիրն անմիջապես կվերափոխվեր անարխիայի։ Սըր Ռալֆը գտնում էր, որ անհեթեթություն էր բանտել սահմանադրությունը մի քանի կետերի մեջ, որ այն, ինչ բավարարում էր սկզբում, ավելի ուշ չէր արդարացնելու իրեն, ապաքինվող հիվանդի օրինակն էր մեջ բերում, որի պահանջները օրավուր մեծանում են։ Բայց այս ընդհանուր հարցերի շուրջ, որ համառորեն պնդում էր պարոն Բրաունը, Ռեյմոնը հակաճառում էր, թե հրովարտակը թույլ օղակ է, որ այն փոփոխվելու է Ֆրանսիայի պահանջներից ելնելով, նրան տալով ընդարձակվելու հնարավորություն, որ հետագայում ժողովրդի պահանջներն է բավարարելու, չնայած այժմ միայն թագավորի պահանջներն է բավարարում։

Ինչ վերաբերում է Դելմարին, նա 1815 թվականից ի վեր բոլորովին չէր փոխել հայացքները։ Այդ հարցում խիստ համառ էր, ինչպես գոբլենցի տարագիրները, որոնց միշտ սուր ծաղրի էր ենթարկում։ Այդ ծերացած մանուկը ոչինչ չէր հասկացել Նապոլեոնի անկման ողբերգությունից։ Նա միայն ճակատամարտի պարտությունն էր տեսնում, որի մեջ հասարակական կարծիքն էր հաղթանակ տարել։ Անընդհատ

խոսում էր դավաճանության և ծախված հայրենիքի մասին, կարծես ամբողջ աղը կարող էր դավաճանել անհատին, կարծես Ֆրանսիան թույլ էր տվել, որ մի քանի գեներալներ հափշտակեն իրեն։ Մեղադրում էր Բուրբոնների բռնակալության մեջ և երանությամբ էր հիշում Կայսրության լավ օրերը, մոռանալով, որ այդ ժամանակ հողի աշխատավորի ձեռքեր էին պակասում, և շատ ընտանիքներ զրկված էին հանապազօրյա հացից։ Նա պախարակում էր Ֆանշեի ոստիկանությունը և գովաբանում Ֆուշեին։ Այս մարդը դեռ Վաթերլոյի օրերով էր ապրում։

— Բարեկամս,— ասաց Ռալֆը,— արդարամիտ եղեք, զժգոհում եք, որ Ռեստավրացիան թագավորական իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց չի հատուցել և միաժամանակ դրամական օգնություն է ցույց տալիս տաբագիրներին։ Ասացեք, խնդրեմ, եթե Նապոլեոնը վաղը իր ամբողջ հզորությամբ երկրի գլուխ կանգնի, լավ կլինի՞, եթե զրկի ձեզ իր բարեհաճությունից և այն նվիրաբերի լեգիտիմատականներին։ Ամեն մեկը իր և իր համախոհների գիծն է պաշտպանում։ Սա է վիճելի հարցը և պայքարը անձնական շահերի համար, որ շատ քիչ է հետաքրքրում Ֆրանսիային։ Այսօր դուք, որ նույնպիսի անօգնական մի ծերունի եք, ինչպես տաբագիր նախկին մարտիկները, երբ բոլորդ էլ տառապում եք հոգացավից, ամուսնացած եք և ամեն ինչից զզված, ոչ մեկդ օպտակար չեք կարող լինել ձեր հայրենիքին։ Մինչդեռ նա է կերակրում բոլորիդ, իսկ դուք բողոքում եք նրա դեմ։ Երբ հանրապետական կարգերը հաստատվեն, հաշվի չեն առնվի ձեր պահանջները, և դա արդարացի կլինի։

Այսպիսի ընդհանուր, բայց ակնհայտ ճշմարտությունները խոցում էին գնդապետի սիրտը, որ նա ընդունում էր որպես անձնական վիրավորանք, իսկ Ռալֆն իր ողջ բանականությամբ չէր ընկալում, թե իր հարդանքին արժանացած մարդը որքան նեղմիտ էր ու սահմանափակ զատողության տեր, այդ պատճառով վիճաբանության ժամանակ չէր խնայում նրան։

Նախքան Ռեյմոնի հայտնվելը, այս երկու մարդկանց միջև լուռ համաձայնություն էր կայացել. խուսափել նման

նրբանկատ թեմաներից, որոնց քննարկումը կարող էր մեկընդմիշտ փշրել նրանց համոզմունքները։ Բայց Ռեյմոնը նրանց խաղաղ կեցության մեջ ներդրեց ամեն տեսակի մանր խարամանկություններ, կեղծ փաստաբանություններ, որոնք ժամանակակից քաղաքակրթության մտահնարանքն էին։ Նրանց սովորեցրեց վիճաբանության քողի տակ ամեն ինչ ասել իրար, մեկը մյուսին հանդիմանել, վիրավորել։ Նրանց առօրյա կյանքում մտցրեց քաղաքական վեճեր, որոնք շատ հարգի էին այդ ժամանակվա սալոններում, որովհետև Հարյուր օրվա ատելի կրքերն սկսել էին հանդարտվել և այլ բնույթ կրել։ Բայց գնդապետը պահպանել էր իր համոզմունքները, իսկ Ռալֆը մեծ սիրալ գործեց՝ մտածելով, որ անհրաժեշտ է լսել բանականության ձայնը։ Պարոն Դելմարը օրեցօր ավելի էր չարանում նրա դեմ և մտերմանում Ռեյմոնի հետ, որը, առանց մեծ զիջումների, կարողանում էր սիրաշահել գնդապետին և նրա ինքնասիրությունը չխոցել։

Գլուխ XV

Չնայած այդ մշտական վեճերին, տիկին Դելմարը, ապավինած իր երիտասարդությանը, փայլուն ապագա էր կանխատեսում։ Նա իր առաջին երջանկությունն էր ապրում, բուռն երևակայությամբ, սիրատենչ սրտով ձեռք էր բերում այն ամենը, ինչի կարիքն զգում էր։ Հնարամտորեն կենդանի ու անմեղ ուրախություններ էր ստեղծում իր համար և դրանցով լրացնում էր ճակատագրի պատահականորեն ընձեռած բարիքները։ Ռեյմոնը սիրում էր նրան։ Իրոք նա չէր ստում, երբ Ինգիանային ասում էր, թե կյանքում միակ սերը նա է եղել։ Երբեք այդքան մաքուր ու երկարատև սիրով չէր սիրել որևէ մեկին։ Այդ կնոջ ներկայությամբ ամեն ինչ մոռանում էր. հասարակությունը, քաղաքական հարցերը ջնջվում էին նրա ուղեղում։ Ռեյմոնին դուր էր գալիս այն մտերմիկ կյանքը, այն ընտանեկան մթնոլորտը, որոնցով նրան շրջապատել էր Ինգիանան։ Հիանում էր այդ նուրբ արարածի համբերությամբ և ուժով, զարմանում էր նրա մտքի և բնավորության հակասությամբ, զարմանում էր, հատկապես, որ իրենց միջև կայացած առաջին հանդիսավոր հա-

ծանձնությունից հետո նրա պահանջները այդքան շնչին էին։ Նա բավարարվում էր վայրկենական, հազվադեպ տրվող երջանկությամբ և ինքնամոռաց ու կուրորեն սիրում էր Ռեյմոնին։ Ինդիանայի համար սերը նոր և վեհանձն զգացմունք էր։ Հազարավոր նուրբ ու ազնիվ զգացմունքներ միախառնվում էին դրան և ուժ էին ներարկում սրտին, մի բան, որ Ռեյմոնին հասու չէր։

Ինչ վերաբերում է Ռեյմոնին, ապա նա շատ տառապեց Ինդիանայի ամուսնու և զարմիկի մշտնջենական ներկայությունից։ Նա կարծում էր, որ այս սերն էլ անցած սերերի պես պիտի լիներ, բայց Ինդիանան ստիպել էր նրան, որ ինքը բարձրանա նրա մակարդակին։ Ցթուլացող հսկողությունը, դժվարություններին դիմանալը, համակերպվածությունը, երջանկությամբ լի գաղանի հայացքները, որ այնքան պերճախոս էին դարձնում Ինդիանայի աչքերը, և որոնց մեջ Ռեյմոնը կարդում էր համբորեն ասված խոսքեր, առինքնող ժպիտը, երբ խոսակցության ժամանակ հանկարծահաս մի արտահայտություն միացնում էր նրանց սրտերը. առայժմ սրանք էին միայն Ռեյմոնին նուրբ զգացողություն և հոգեհարազատ հաճույք պարգևում, որոնք ընդունել էր շնորհիվ իր սուր մտքի և ստացած դաստիարակության։

Ինչպիսի՜ տարբերություն այս անարատ էակի, որն ամենևին չէր պիտակցում, թե կարող էր իր սերը ողբերգական վախճանի հանգել, և այն կանանց միջև, որոնք միայն շտապողականություն էին հանդես բերում մեռանալու իր հետ, ձևացնելով միաժամանակ, թե խուսափում են այդ կապից։ Երբ պատահաբար Ռեյմոնն առանձին էր մնում Ինդիանայի հետ, վերջինիս այտերը չէին շիկնում, հապճեպորեն չէր փախցնում հայացքը։ Ոչ, նրա անբիծ ու խաղաղ աչքերը միշտ նայում էին Ռեյմոնին արբեցումով լի, հրեշտակային ժպիտն անընդհատ խաղում էր նրա վարդագույն շուրթերին, այն աղջնակի պես, որին ծանոթ է միայն մայրական համբույր։ Տեսնելով նրան այդքան անհոգդոզդ, սիրատենչ, անրիծ, միմիայն իր զգացմունքին ապավինած, չդդալով անգամ, թե սիրեցյալին ինչպիսի տանջանքների է մատնում, երբ վերջինս նրա ոտքերի առջև նստած՝ այլևս չէր համարձակվում աղամարդու դերում հանդես գալ, վախենալով

տեսքման դառնալ նրա անուրջներին, և ինքնասիրությունը ստիպում էր Ռեյմոնին՝ դառնալ նույնքան առաքինի, ինչպես Ինդիանան էր։

Բոլոր կրեոլուհիների նման, տիկին Դելմարն էլ կրթություն չուներ և մինչ այդ երբեք չէր մտածել իր ներկայությամբ լուրջ նյութերի շուրջ տեղի ունեցող վիճաբանություններին մասնակցելու։ Նրան դաստիարակել էր սըր Ռալֆը, որը համարում չուներ կանանց խելքի և դատողության մասին, չավարարվել էր մի քանի անհրաժեշտ ու կարևոր գիտելիքներ հաղորդել կենսաբանական հարցերի վերաբերյալ։ Ինդիանան աղոտ պատկերացում ուներ ընդհանուր պատմության մասին, իսկ յուրաքանչյուր լուրջ վերլուծություն նրան մատնու շատ ձանձրացնում էր։ Շնորհիվ Ռեյմոնի խելամտության ու բանաստեղծական լեզվի, որով նրբորեն կարողանում էր ներկայացնել ամենալոր առարկաները, Ինդիանան սկսեց լսել և փորձեց հասկանալ նրա ասածները, հետո երկյուղորեն համարձակվեց այնպիսի միամիտ հարցեր տալ, որոնցից հասարակության մեջ մեծացած որևէ տասնամյա աղջնակ կարող էր հեշտությամբ գլուխ հանել։ Ռեյմոնին հաճելի էր լուսավորել այդ կուսական միտքը, որ կարծես բացվում էր ընդունելու միայն իր հայացքները, սակայն, հակառակ այդ անրիծ ու պարզ հոգու վրա ունեցած իշխանության, նրա սոփեստությունները երբեմն դիմադրության էին հանդիպում։

Ինդիանան հակազրվում էր քաղաքակրթության շահերին, սկզբունք դարձնելով բանականության և մարդկության անմիջական պաղատիարները և պարզագույն օրենքները. նրա ընդդիմությունները, որ վայրի անկեղծության արդյունք էին, երբեմն Ռեյմոնին նեղ կացության մեջ էին դնում և միշտ հիացմունք պատճառում իրենց մանկական ինքնատիպությամբ։ Ռեյմոնը լուրջ աշխատանքի էր լծվել, չանք չէր խնայում կամաց-կամաց նրան իր հավատքին, իր սկզբունքներին մերձեցնելու։ Նա հպարտանալու տեղ կունենար, եթե կարողանար ստիպել Ինդիանային մաքուր և բնական համոզմունքներով ներարկվել իրենց, բայց երբեմն դժվարությունների էր հանդիպում։ Ռալֆի վեհ հայացքները, աննկուն հակակրանքը հասարակության արատների հանդեպ, ուրիշ օրենքների ու բարքերի հաստատման հետ կապված անհամբեր

սոլասումները, այս ամենը Ինդիանայի մեջ բուն դրած ախուր հիշողություններ էին, որոնց ավելի հաճախ էր նա դիմում։ Բայց Ռեյմոնը միանգամից մահացու հարված էր հասցնում իր ախոյանին, պնդելով, որ ներկայի հանդեպ ունեցած Ռալֆի ատելությունը նասսիրության արդյունք է։ Ռեյմոնը ջերմեռանդորեն իր համակրանքն էր հայտնում թագավորի ընտանիքի նկատմամբ և, ցուցաբերելով անսահման նվիրվածություն, ներկայացնում նրա վտանգներով հղի հերոսական հատկանիշները, խոսում էր պապենական հավատքի հանդեպ ունեցած հարգանքի մասին, իր կրոնական համոզմունքների մասին, որոնք, ինչպես ինքն էր ասում, մեկնաբանության կարիք չէին զգում, քանի որ դրանք ընդունում էր բնազդով ու տենդաբար։ Այնուհետև խոսում էր իր նմաններին սիրելու երջանկության մասին, ներկա սերունդին հարգելու և մարդասիրության մասին, երկրին ծառայություններ մատուցելու մասին, չէր ընդունում վտանգավոր նորամուծությունները, ներքին խաղաղությունը պահպանելու կողմնակից էր, բայց եթե անհրաժեշտություն զգացվեր՝ անպայման կար ամբողջ արյունը, մի կաթիլ անգամ չխնայելով վերջին հայրենակցի համար։ Նկարագրում էր այս բոլոր ուտոպիաները այնպիսի արվեստով ու հմայված, որ Ինդիանան մեծաղույն պահանջ էր զգում սիրել ու հարգել այն ամենը, ինչ սիրում ու հարգում էր Ռեյմոնը։ Անհերքելի փաստ էր դարձել Ռալֆի հասարությունը, և երբ նա ասում էր կանգնում որևէ վեհ գաղափարի, բոլորը ժպտում էին։ Պարզ էր, որ այդպիսի պահերին նրա միտքն ու հոգին անհարիր էին։ Ավելի լավ չէ՞ր հավատալ Ռեյմոնին, որ այնքան ջերմ, լայն, բաց սիրտ ուներ։

Այնինչ լինում էին պահեր, երբ Ռեյմոնը համարյա մոռանում էր իր սիրո մասին, և նրա ուղեղը գործում էր միայն Ռալֆի հանդեպ ունեցած հակակրանքի շուրջը։ Տիկին Դելմարի կողքին տեսնում էր սոսկ սրբ Ռալֆին, որն իր չոր ու սառը դատողությամբ հանդգնում էր հարձակվել իր՝ բարձրաշնորհ մարդու վրա, որ այնքան ազնվական ախոյանների էր զգեստնել։ Նա խիստ ստորացած էր զգում՝ տեսնելով իրեն այդքան խղճուկ հակառակորդի դիմաց և ընկճում էր նրան իր սիրաճախոսության ծանրության տակ, գործի էր դնում ողջ

տաղանդը, և Ռալֆը, ապշահար, դանդաղորեն հավաքելով մտքերը, ավելի դանդաղ արտահայտելով դրանք, զգում էր իր լիակատար անզորությունը։ Հաճախ այնպես է պատահում, որ ցանկանում ես լավ գործ կատարել, բայց հակառակն է ստացվում։ Այդպես էլ եղավ սրբ Ռալֆի հետ. խղճի ձայնին անսալով՝ ուզեց նրբորեն մոռենալ հարցին, և վախեցած, որ կարող է խղճի դեմ գործել, սխալ քայլ կատարեց. նա չհայտնեց Նունի մահվան բուն պատճառը։ Այլապես Ինդիանան կմտածեր Ռեյմոնի հանդեպ տածած սիրո մասին։ Ավելի ուշ կտեսնենք, թե ինչու պարոն Բրաունը համարձակություն չունեցավ զարմուհուն լուսաբանել այդքան կարևոր մի հարց, և որոնք էին այն ծանր մտատանջությունները, որ նա լռության մատնեց։ Երբ որոշեց վերջնականապես խոսել այդ մասին, արդեն ուշ էր։ Ռեյմոնը ժամանակ էր շահել՝ հաստատելու իր իշխանությունը։

Անակնկալ մի միջադեպ ստստանեց գնդապետի և նրա կնոջ ապագան. Բելգիայի առևտրական հիմնարկություններից մեկը, որից կախում ուներ Դելմարի ձեռնարկության բարեհաջողությունը, միանգամից սնանկացավ, և գնդապետը, հազիվ ապաքինված, շատ շտապ մեկնեց Անդվերպեն։

Տեսնելով, որ ամուսինը դեռ թույլ է, և ցավերը չեն ամոքվել ամբողջապես, կինը որոշեց ուղեկցել նրան, բայց գնդապետը, որին կատարյալ կործանում էր սպառնում, վախեցավ իր ճամփորդությունը փախուստի վերագրվի, այդ պատճառով ուզեց կնոջը թողնել Լանյիում, որպես վերադարձի առհավատչյա։ Մերժեց նաև սրբ Ռալֆի ընկերակցությունը, խնդրելով նեցուկ կանգնել տիկին Դելմարին, եթե որևէ անհանգստացած կամ շտապող պարտատեր անախորժություն պատճառեր նրան։

Այս ծանր օրերին Ինդիանան վախենում էր, որ ընդմիշտ կմնկնեն Լանյիից, և Ռեյմոնից կհեռանա, բայց վերջինս վստահեցրեց նրան, որ գնդապետը անկասկած կհաստատվի Փարիզում։ Երդվեց ամենուր հետևել նրան այս կամ այն պատրվակով, և դյուրահավատ կինը նույնիսկ ինչ-որ չափով ուրախացավ իրենց հասած դժբախտության համար, որովհետև հնարավորություն էր ունենում փորձելու Ռեյմոնի սիրը։ Ինչ վերաբերում է վերջինիս, նորությունը լսելուց հետո տար-

տամ հույս փայփայեց, անհամբեր ու անդադար աշխատող մի մտածմունք սկսեց դրդդնել նրա ուղեղը. վերջապես մենակ էր մնալու Ինդիանայի հետ. դա վեց ամսվա ընթացքում ընձեռված առաջին առիթն էր։ Թվում էր, թե տիկին Դելմարը երբեք չէր խուսափել իրենից, չնայած ինքը չէր շտապում հաղթանակի հասնել իր սիրո մեջ, որի պարզությունը, մաքրությունը ուրույն հաճույք էին պատճառում նրան, հանգիստ գեպս, նա մտածում էր, որ ազամարդկային պատվի հարց էր բռնած գործը մինչև վերջ հասցնելը։ Նա ուրիշների ներքայությամբ արժանապատվորեն նա էր մղում ամեն տեսակի խորամանկ ակնարկություն տիկին Դելմարի և իր միջև կայացած հարաբերությունների վերաբերյալ։ Նիստ համեստորեն վստահեցնում էր բոլորին, որ իրենց միջև միայն նուրբ ու խաղաղ բարեկամական զգացմունք գոյություն ունի, և ոչ մի դեմ, նույնիսկ ամենամտերիմ ընկերոջը չխոստովանեց, որ արդեն վեց ամիս է, ինչ անսահմանորեն սիրված է, բայց ոչինչ չի քաղել այդ սիրուց։

Ռեյմոնը մի փոքր հուսախաբվեց, նկատելով, որ իր հրաժարությամբ սրբ Ռալֆը սկսել էր փոխարինել պարոն Դելմարին. առավոտ կանուխ գալիս էր Լանյի, ուշ երեկոյան վերադառնում Բելրիվ։ Եվ քանի որ Ռեյմոնն ու Ռալֆը, ամեն մեկն իր տուն գնալու համար, որոշ ճանապարհ պետք է միասին անցնեին, սրբ Ռալֆը մինչև անգամ անտանելի, շնչտված քաղաքավարությամբ իր մեկնումի պահը հարմարեցնում էր Ռեյմոնի հետ։ Այս երևույթն անչափ տհաճ էր պարոն դը Ռամիերի համար, իսկ տիկին Դելմարը նույնիսկ վիրավորվեց, երբ զգաց, որ իր հանդեպ անվստահությամբ են լցված, ու բռնակալական նկրտումներ կան իր անձի հանդեպ։

Ռեյմոնը չէր համարձակվում գաղտնի տեսակցություն խնդրել. ամեն անգամ, երբ փորձում էր այդ քայլին դիմել, տիկին Դելմարն իրենց առաջադրած պայմաններն էր հիշեցնում։ Այնինչ գեղատեսի մեկնումից հետո ութ օր անցել էր, և նա կարող էր շուտով վերադառնալ։ Հարկավոր էր առիթից օգտվել։ Հաղթանակը զիջել սրբ Ռալֆին՝ Ռեյմոնի համար անպատվություն էր։ Մի առավոտ աննկատ Ինդիանայի ձեռքի մեջ սահեցրեց հետևյալ նամակը.

«Ինդիանա, ուրեմն ինձ այնպես չե՞ք սիրում, ինչպես ես՝ ձեզ։ Հրեշտակս, դժբախտ եմ, և դուք չեք նկատում այդ։ Տխրում եմ, անհանգստանում ոչ թե իմ, այլ՝ ձեր ապագայի համար, այդ պատճառով ուր էլ որ լինեք, հետևելու եմ ձեզ, ապրելու և մեռնելու եմ այնտեղ՝ հույսով։ Սակայն սարսափում եմ ձեր ծայրաստիճան ազքատությունից. իմ խեղճ աղջիկ, այնքան թույլ եք ու փխրուն, ինչպե՞ս եք դիմանալու զրկանքներին։ Հարուստ ու առատաձեռն զարմիկ ունեք, հավանաբար ձեր ամուսինը կհամաձայնի նրա ձեռքից վերցնել այն. ինչը կմերժի ինձ։ Ռալֆը կրարելավի ձեր կյանքը՝ նյութապես ապահովելով ձեզ, իսկ ես ոչինչ չեմ կարողանա անել ձեզ համար։

Ուրեմն, տեսնո՞ւմ եք, սիրելի բարեկամ, մոռացվելու և վշտանալու պատճառ ունեմ։ Դուք հերոս եք, ոչ մի բանից չեք վախենում, չեք ուզում, որ ցավեմ ձեզ համար։ Ուժերս պահպանելու համար, ախ, որքան եմ զգում ձեր քաղցր բառերի, ձեր անուշ հայացքի կարիքը։ Բայց անհնարադեպ ճակատագրով այս օրերին, երբ հույս ունեի օրերս ազատության մեջ ձեր ոտքերի առջև անցկացնել, տառապանքի ավելի մեծ բաժին հասավ ինձ։

Մի բան միայն, Ինդիանա, կարո՞ղ եք գոնե մեկ ժամով առանձնանալ ինձ հետ, որպեսզի արտասվեմ ձեր ճերմակաթույր ձեռքերի վրա, պատմեմ ձեզ իմ տառապանքների մասին, իսկ ձեր մեկ բառը կմխիթարի ինձ և վստահություն կներշնչի։

Այնուհետև, Ինդիանա, մանկական մի թմահանույք ունեմ, սիրահարի թմահանույք. ուզում եմ ձեր ենթասանյակը մտնել։ Ոչ, մի սարսափեք, իմ քնքուշ կրեոլուհի, ես արդեն մեկ անգամ վարձատրվել եմ հանդգնության համար և սովորել եմ ոչ միայն հարգել ձեզ, այլև վախենալ ձեզանից։ Սա է պատճառը, որ ուզում եմ մտնել ձեր սենյակը, ծունկ չոքել այն տեղում, որտեղ այնքան խստորեն զայրացաք իմ դեմ և որտեղ, հակառակ իմ համարձակության, չհանդգնեցի նայել ձեր աչքերին։ Ուզում եմ դեմքս խոնարհել այդ տեղի վրա, ակնածանքի ու երջանկության մի ամբողջ ժամ անցկացնել։ Ինդիանա, միակ երախտիքը, որ պահանջում եմ քեզնից, այն է, որ ձեռքդ դնես սրտիս և մաքրագործես գործածս մեղքից,

Հանգստացնես, եթե արագ բաբախի, և վերադարձնես նրան հույսը, եթե, իհարկե, ինձ արժանի ես համարում քեզ։ Օ՜, այո, ուզում եմ ապացուցել, որ հիմա այդպիսին եմ, որ քեզ լավ եմ հասկանում և երկրպագում եմ քեզ այն ամենասուրբ ու անբիծ զգացումով, որով ոչ մի կույս մինչև հիմա չի երկրպագել Մարիամ Աստվածածնին։ Ուզում եմ վստահ լինել, որ այլևս ինձնից չես վախենում, ինձ այնքան ես հարգում, որքան ես եմ պաշտում քեզ։ Կրծքիդ հենված՝ ուզում եմ հրեշտակների մեկ ժամվա կյանքով ապրել։ Ասա, Ինգիանա, ուզո՞մ ես այդպես լինի։ Մեկ ժամ միայն. առաջինը, գուցեն՝ վերջինը։

Ժամանակն է, որ ինձ հավատաս, Ինգիանա, վերադարձնես ինձ քո վստահությունը, որն այնպես դաժանորեն խլվել է ինձնից և այդքան թանկ դնվել։ Դու ինձնից դժգո՞հ ես, ասա, մի՞թե վեց ամիս շարունակ քո բաղկաթոռի մոտ չեմ անցկացրել ժամանակս, իմ ամբողջ գորովանքով, որպեսզի հիանամ քո ձյունաճերմակ պարանոցով, չե՞մ հակվել ձեռագործիդ վրա, որպեսզի սև գանգուրներիդ միջից ըմբոշխնեմ անուշ բույրդ, որ ամենաքնքուշ քամու հոսանքն էր բերում քո նրբատած անկյունից։ Այսպիսի հնազանդությունը մի՞թե արժանի չէ մի համբույրի, քրոջ համբույրի, եթե կամենում ես, ճակատիդդ քաղած համբույրի։ Մեր պայմաններին հավատարիմ կմնամ, երդվում եմ։ Քեզնից ոչինչ չեմ պահանջի... Իսկ դո՞ւ, դաժան արարած, ոչինչ չե՞ս ուզում շնորհել ինձ։ Ինքդ բեկնի՞ց ես վախենում։

Տիկին Դելմարը բարձրացավ իր ննջասենյակը՝ նամակը կարդալու։ Անմիջապես պատասխանեց և պարտեզի դռնակի բանալու հետ, որ շատ լավ ծանոթ էր Ռեյմոնին, նամակի պատասխանը անկասելիորեն հանձնեց նրան։

«Քեզնից վախենա՞մ, Ռեյմոն, օ՜, ոչ, հիմա այլևս չեմ վախենում։ Ինձ քաջ հայտնի է, թե որքան ես սիրում ինձ։ Անձնուրաց կերպով, հավատում եմ։ Արի։ Ինձնից էլ չեմ վախենում, բայց դու չգիտես, թե որքան եմ քեզ սիրում... Մեկնեցեք այստեղից սովորականից շուտ, որպեսզի Ռալֆը

չկասկածի։ Վերադարձեք կեսգիշերին, ձեզ ծանոթ է մեր այդին և տունը, ահա և դռնակի բանալին, դուռը փակեք ձեր հետևից»։

Այս միամիտ և վեհանձն վստահությունը Ռեյմոնի դեմքը պատեց ամոթի շիկնանքով, չնայած ինքն էր ցանկացել ներշնչել նրան այդ ցանկությունը, որպեսզի հետո օգտվեր առիթից, հույսը դնելով գիշերվա, առիթների, արկածախնդրության վրա։ Եթե Ինգիանան գեթ մի փոքր երկյուղած լիներ, կորստյան կմատնվեր, բայց հանգիստ էր, իր խղճի ձայնին էր լսում։ Ռեյմոնը երդվեց նրան զգջալու առիթ չտալ։ Իմիջիայլոց, նրա համար կարևորը մի գիշեր սենյակում անցկացնելն էր, որպեսզի իր իսկ աչքում հիմարի տեղ չանցներ, Ռալֆի զգուշավորությունը ի չիք դարձներ և կարողանար ներքուստ ծիծաղել նրա վրա։ Անձնական բավարարվածության համար էր այդ քայլին դիմում, որի կարիքը խիստ զգում էր։

Գլուխ XVI

Այդ երեկո Ռալֆն իրոք անտանելի էր դարձել։ Ոչ մի անգամ այդքան անճարակ, այդքան պաղ ու ձանձրալի չէր եղել։ Այդ ամենի հետ ոչ մի բառ տեղին չէր ասում, իսկ նրա ամենատհաճ քայլերից մեկն այն էր, որ, չնայած ժամանակն ուշ էր, չէր պատրաստվում մեկնել։ Տիկին Դելմարը կարծես փշերի վրա լիներ։ Նա մերթ ժամացույցին էր նայում, որ արդեն ժամը տասնմեկն էր ցույց տալիս, մերթ՝ քամու տակ հռնչացող դռանը, մերթ՝ զարմիկի անհանդուրժելի կերպարանքին, որ կանգնել էր ուղիղ իր դիմաց՝ բուխարիկի առջև, և հանգիստ նայում էր կրակին, դույզն անգամ չկասկածելով, որ իր ներկայությունը խիստ ավելորդ է։

Այնինչ սրը Ռալֆի անշարժ դիմագծերը, քարացած արտահայտությունը հոգեմաշ ու խոր հուզումներ էին թաքցնում իրենց դիմակի տակ։ Այս մարդու աչքից ոչինչ չէր վրիպում, որովհետև ամեն ինչի նայում էր սառնասրտությամբ։ Ռեյմոնի ձևական մեկնումը չէր մոլորեցրել նրան, շատ լավ եկատում էր տիկին Դելմարի հուզումը։ Ինքը նրանից ավելի էր տանջվում և երկմտում՝ հայտնե՞ր ճշմարտությունը, հանուն Ինգիանայի, թե ոչ։ Մյուս կողմից վախենում էր խոովել

նրա հոգին. նա խուսափում էր դրանից։ Վերջիվերջո նա, ցանկանալով լավություն անել զարմուհուն, հավաքեց ներքին բոլոր ուժերը և խզեց լռությունը.

— Հիշում եմ,— անսպասելիորեն ասաց նա, հետևելով մտքի ընթացքին, որն այնքան մտահոգում էր իրեն,— ճիշտ մեկ տարի առաջ նստած էինք՝ դուք և ես, այս բուխարիկի առջև, ինչպես հիմա։ Պատի ժամացույցը համարյա նույն ժամն էր ցույց տալիս, դրսում մոայլ եղանակ էր և ցուրտ, այս գիշերվա պես... Վատ էիք զգում, և տխուր մտքեր էին պաշարել ձեզ։ Այդ օրվա մասին մտաբերելիս՝ սկսում եմ հավատալ նախազգացումներին։

«Ո՞ւր է ուզում հասնել»,— մտածեց տիկին Դելմարը՝ անհանգստությունն ու զարմանքը իրար խառնած նայելով զարմիկին։

— Հիշո՞ւմ ես, Ինդիանա,— շարունակեց Ռալֆը,— այդ օրը սովորականից ավելի վատ էիր զգում։ Այսօրվա պես հիշում եմ խոսքերդ. նրանք կարծես արձագանքում են ականջներիս մեջ. «Ինձ ցնորվածի տեղ կարող եք դնել,— ասացիր դու,— բայց մեր շուրջը վտանգ է պատրաստվում և կախված է մեկնումեկիս գլխին, հավանաբար՝ իմ,— հետո ավելացրիր,— այնպես եմ հուզված, կարծես մեծ փոփոխություն է սպասվում իմ կյանքում, վախենում եմ...»։ Սրանք քո սեփական խոսքերն են, Ինդիանա։

— Այլևս հիվանդ չեմ,— պատասխանեց Ինդիանան՝ միանգամից գունատվելով, ինչպես այն օրը, որի մասին հիշեցնում էր սըր Ռալֆը,— այլևս չեմ հավատում սին վախերին...

— Իսկ ես հավատում եմ,— ասաց Ռալֆը,— որովհետև այդ գիշեր դու մարգարեացար, Ինդիանա, մեծ վտանգ էր սպառնում մեզ, դժնդակ սավերները պաշարել էին այս խաղաղ տունը...

— Ասված իմ, ձեզ չեմ հասկանում...

— Հիմա կհասկանաս, խեղճ բարեկամ։ Այդ իրիկուն Ռեյմոն ըր Ռամիերը մուտք գործեց այստեղ... Հիշո՞ւմ ես՝ ինչ վիճակում...

Ռալֆը մի քանի վայրկյան ընդմիջում տվեց՝ չհամարձակվելով բարձրացնել աչքերը զարմուհու վրա։ Քանի որ վերջինս չէր պատասխանում, շարունակեց.

— Ես ստիպված էի նրան կյանքի վերակոչել և արեղի ավելի շատ քս պահանջները բավարարելու համար, քան՝ ենթարկվելով մարդկային խղճի ձայնին։ Բայց իրականում, Ինդիանա, ի դժբախտություն ինձ, պահպանեցի այդ մարդու կյանքը։ Իրոք, ես եմ ամեն տեսակի դժբախտության պատճառը։

— Չեմ հասկանում, ի՞նչ դժբախտության մասին եք խոսում,— շոյությամբ պատասխանեց Ինդիանան։

Նա խորապես վիրավորված էր այն բացատրության համար, որ կանխապես մտածում էր լսել։

— Ուզում եմ այն խեղճ արարածի մահվան մասին խոսել,— ասաց Ռալֆը,— եթե նա չլիներ, այդ աղջիկը կապրեր, եթե այդ դժնդակ սերը չլիներ, այդ գեղեցիկ ու պատվավոր աղջիկը, որ այնքան սիրում էր ձեզ, հիմա ձեր կողքին կլիներ...

Մինչև այս խոսքերը լսելը՝ տիկին Դելմարը ոչինչ չէր հասկանում։ Նա մինչև հոգու խորքը զայրանում էր Ռալֆի տարօրինակ ու չար արտահայտություններից, որն ուզում էր հանդիմանել իրեն՝ պարոն ըր Ռամիերի հանդեպ տածած զգացմունքի համար։

— Բավական է,— ասաց նա՝ վեր կենալով։

Բայց Ռալֆը ոչ մի ուշադրություն չդարձրեց նրա ասածին։

— Ինձ միշտ զարմացրել է մի բան,— ասաց նա,— որ չեք գուշակել այն հիմնական պատճառը, թե պարոն ըր Ռամիերին ինչն էր ստիպել պատերի վրայով անցնել ու գալ այստեղ։

Կայծակնային արագությամբ մի կասկած անցավ Ինդիանայի սրտով, ծնկները դողացին, և նստեց բազկաթոռին։

Դանակն ուղիղ սրտի մեջ էր խրվել ու խոր վերք բացել։ Ռալֆը նոր միայն գիտակցեց, թե ինչ ներգործություն էին ունեցել իր բառերը, և սարսափեց իր արարքից։ Նա այժմ մտածում էր միայն իր ամենասիրած էակին հասցրած ցավի մասին, զգաց, որ սիրտը փշրվում է։ Ռալֆը դառնորեն կարտասվեր, եթե լաց լինել կարողանար։ Բայց տարաբախտը օժտված չէր արտասուք թափելու հատկությամբ, ոչ մի հրմտություն չուներ ճարտարությամբ թարգմանելու սրտի լեզուն։ Արտաքուստ թվացող սառնությունը, որով դիմեց այդ դա-

Ժանաբարո գործողությանը, Ինդիանայի աչքում նրան փոխարկեց դահճի։

— Առաջին անգամն է,— ասաց տիկին Դելմարը կոկիծով,— որ ձեր հակակրանքը պարոն գր Ռամիերի հանդեպ դրդում է ձեզ անարժան քայլի դիմելու։ Բայց չեմ հասկանում, թե ինչու ձեր վրեժխնդրության հետ կապեցիք ինձ շատ սիրելի անձնավորության հիշողությունը, որի դժբախտ մահվան հիշատակը մեզ համար պետք է սրբազան լիներ։ Ես ոչ մի հարց չեմ տվել ձեզ, սըր Ռալֆ, չեմ հասկանում՝ ինչի մասին եք խոսում։ Թույլ տվեք այլևս չլսել ձեզ։

Նա վեր կացավ տեղից և պարոն Բրաունին թողեց մենակ, ապշած ու ընկճված։

Ռալֆը կանխատեսել էր, որ ճշմարտության լուսաբանումը ի վնաս իրեն էր լուծվելու։ Ներքին ձայնն իրեն թելադրել էր զգուշացնել Ինդիանային՝ ինչ հետևանք էլ ունենար, և նա այդ արեց ամենակոպիտ ձևով, իր ընդունակության սահմաններում, խիստ ձախորդ միջոցի դիմելով։ Բայց ճիշտ չէր կանխատեսել հնացած դեղամիջոցի ուժգնությունը։

Նա հուսահատ հեռացավ Լանյիից և մոլորյալ տեսքով սկսեց թափառել անտառում։

Կեսգիշերին Ռեյմոնը մոտեցավ այգու դռնակին։ Բաց արեց, բայց ներս մտնելու ժամանակ զգաց, որ ճակատին սառը քրտինք էր պատել։ Ինչի՞ն էր պետք այս ժամադրությունը, երբ որոշել էր առաքինի մնալ։ Իսկ այդ անմեղ հանդիպումով, եղբայրական համբույրով, այդ պահին ապրած տանջանքների դիմաց, վարձատրված պիտի զգա՞ր իրեն։ Եթե հիշում եք, թե ինչ հանգամանքներում մի գիշեր սողոսկեց ծառուղիների մեջ, գաղտագողի մտավ այգի, այդ ժամանակ միայն կհասկանաք, ինչպիսի հոգեկան արիություն էր հարկավոր՝ նույն ճանապարհն անցնելու համար և գնալ զվարճանալու, որը ծանր հիշողություններ էր արթնացնում։

Հոկտեմբերի վերջին Փարիզի շրջակայքում եղանակը սովորաբար խոնավ է ու մառախլապատ, հատկապես երեկոյան, գետերի ափերին։ Ճակատագրի բերումով աշնանային այդ գիշերը ողողված էր կաթնաճերմակ լույսով, ինչպես անցած գարնան գիշերները։ Ռեյմոնն անորոշ քայլերով մտավ մշուշապատ ծառերի մեջ, անցավ տաղավարի առջևով, որտեղ

ձմռանը խորդենիների շատ գեղեցիկ հավաքածու կար։ Մի հայացք նետեց դռան վրա, և անկախ իրենից սիրտն սկսեց ուժգին բաբախել այն արտառոց մտքից, թե ուր որ է այն բացվելու է, և այնտեղից դուրս է գալու վերարկուի մեջ փաթաթված մի կին... Ռեյմոնը քմծիծաղ տվեց իր նախապաշարմունքի համար և շարունակեց ճանապարհը։ Այնուամենայնիվ, որքան մոտենում էր գետին, այնքան ցուրտ էր զգում, և սիրտը սեղմվում էր։

Ծաղկանոց հասնելու համար հարկավոր էր գետն անցնել, իսկ միակ ճանապարհը մի ափից մյուսը գցած կամուրջն էր։ Ջրի մակերեսին մշուշն ավելի թանձր էր, և Ռեյմոնը կառչեց բազրիքից, որպեսզի չընկնի գետափին ուռած եղեգնուտի մեջ։ Այդ ժամանակ լուսինն սկսեց բարձրանալ և, փորձելով ճեղքել ամպերը, թույլ շողեր թափեց նուրբ քամուց և ջրի ալիքներից օրորվող եղեգների վրա։ Տերևների միջով և գետի վրայով սահող քամու մեջ կարծես հեծեծանքներ լսվեցին, որ նման էին մարդկային ձայնի։ Ռեյմոնի կողքով հանկարծ թույլ հեծկլտոց անցավ, և եղեգները շարժվեցին։ Մի կացար, ուռնաձայներից վախեցած, թռավ։ Ջրափին ապրող այդ թռչունների ճիչը հար և նման է լքված նորածնի լացին, իսկ երբ դուրս է թռչում եղեգնուտից, հիշեցնում է շրահեղձի արձակած վերջին ճիչերը։ Գուցե կմտածեք, թե Ռեյմոնը թուլամորթ և փոքրոգի մարդ էր. ատամները կափկափում էին, և քիչ էր մնացել ընկներ, բայց իսկույն զգալով, թե որքան ծիծաղելի է այդ վախը, անցավ կամուրջը։

Երբ կես ճանապարհին էր հասել, բազրիքի մյուս ծայրին նրա դիմաց ցցվեց մարդկային աղոտ մի կերպարանք, կարծես միտում ուներ իր ճանապարհը փակել։ Ռեյմոնի ուղեղը մթագնեց, մտքերը խառնվեցին, նա կորցրեց տրամաբանելու ընդունակությունը, միանգամից ետ շրջվեց և թաքնվեց ծառերի ստվերում՝ ակնդետ ու սարսափած նայելով այդ աղոտ հայտնությանը, որ ծածանվելով ու անորոշ ուրվագծումով գամվել էր տեղում, ինչպես գետի վրա նստած մշուշը և լուսնի գողդոջուն շողը։ Ռեյմոնն սկսել էր ինքն իրեն համոզել, որ դա իր ուղեղի երևակայության արդյունքն է, և այն, ինչը մարդու տեղ էր դրել, ծառի ստվեր է կամ թփուտ, երբ հանկարծ նկատեց, որ այն որոշակիորեն շարժվում է և գալիս ուղիղ իր կողմը։

Այդ պահին, եթե նրա ոտքերը չդավաճանեին, ամբողջ արագությամբ պիտի փախչեր. նա սարսափելի վախեցած էր, ինչպես գերեզմանատան կողքով, գիշերով անցնող երեխան, երբ խոտերի շրշյունները նրան թվում են իր հետևից ընկած օդաթռիչ թեթև քայլեր։ Բայց Ռեյմոնն անշարժացավ տեղում և իրեն պահելու համար փաթաթվեց ուռենու բնին, պատըսպարվեց։ Այդ ժամանակ սբր Ռալֆը, բաց գույնի վերարկուի մեջ պարուրված, որ երեք քայլ հեռավորության վրա նրան երևաց, ուրվականի կերպարանքով, անցավ Ռեյմոնի կողքով և գնաց նրա եկած ճանապարհով։

«Զախորդ լրտես,— մտածեց Ռեյմոնը՝ տեսնելով, որ իր հետքերն է փնտրում,— հսկողիդ պարտականության մեջ ես կմոլորեցնեմ քեզ, և քանի դեռ պահակություն կանես այստեղ, ես այնտեղ կերջանկանամ»։

Նա թռչունի նման թեթև, սիրահարի նման վստահ անցավ կամրջով։ Սարսափը ցրվել էր։ Նունը բնավ գոյություն չէր ունեցել, իրական կյանքն արթնանում էր չորս դին։ Ինդիանան այնտեղ իրեն էր սպասում, Ռալֆն այստեղ հսկում էր՝ իր ճանապարհը փակելու համար։

— Հսկի՛ր,— ուրախ ասաց Ռեյմոնը, տեսնելով, թե ինչպես հեռվում, հակառակ ափին, նա փնտրում էր իրեն,— հսկի՛ր ամբողջ գիշեր, սիրելի Ռոդոլֆ Բրաուն, անպաշտոն բարեկամ, պահպանի՛ր իմ երջանկությունը, իսկ եթե շներն արթնանան, եթե ծառաներն անհանգստացած ձայն տան, հանգստացրո՛ւ նրանց, լռեցրո՛ւ և ասա՛. ն՛ս եմ հսկում, քնե՛ք խաղաղությամբ։

Այլևս ոչ մի մտատանջություն, ոչ մի խղճի խայթ, ոչ մի առաքինություն չմնաց Ռեյմոնի համար, նա շատ թանկ էր վճարել մոտալուտ ժամվա փոխարեն։ Երակներում սառած արյունն այժմ ուղեղն էր ներխուժում մեծ հորձանքով։ Քիչ առաջ մահվան դալուկ սարսափը, մահատեսիլ, չարագույժ երազներն էին, իսկ հիմա՝ ճշմարիտ, կրակոտ սերը, կյանքի անձնուրաց ուրախությունները։ Ռեյմոնն իրեն առույգ ու երիտասարդ զգաց, ինչպես չարագուշակ երազից հետո, որ առավոտյան, պատանեկի նման պարուրվում է մարդուն, իսկ արևի զվարթ ճառագայթը արթնացնում է նրան և աշխուժացնում։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Գլուխ XVII

Սբր Ռալֆի մոտից հեռանալուց հետո տիկին Դելմարը փակվեց սենյակում, և հազար ու մի փոթորկահույզ մտքեր պաշարեցին հոգին։ Առաջին անգամ չէր, որ մութ կասկածները ստվերներ էին նետում նրա երջանկության երեսուն կառույցի վրա։ Պարոն Դելմարն արդեն քանի-քանի անգամ խոսակցության մեջ թույլ էր տվել աններքանկատ կատակներ, որոնք սովորաբար որպես հաճոյախոսություն էին հնչում Ռեյմոնի հացեին։ Շնորհավորում էր նրան իր սիրային գործերում։ Նույնիսկ կողմնակի մարդիկ կարող էին գուշակել նրա սիրային արկածները։ Ամեն անգամ, երբ տիկին Դելմարը խոսում էր պարտիզպանի հետ, նունի անունը ամենատարբեր առիթներով հիշատակվում էր որպես ճակատագրական անխուսափելիություն, որի կողքին, չգիտես ինչ ընդհանուր կապով, նշվում էր պարոն դը Ռամիերի անունը, կարծես այդ գեղջուկի ուղեղում նրանք մեխված լինեին կողք կողքի և, անկախ իրենից, հալածում էին նրան։ Տիկին Դելմարը զարմացած էր պարտիզպանի տարօրինակ ու անտեղի հարցերից, նա շփոթվում էր իր իսկ բառերի մեջ ամենաչնչին հարցերի շուրջ, կարծես խղճի խայթ էր ծանրացել նրա վրա և, փորձելով ինչ-որ բան թաքցնել, ավելի էր մատնում իրեն։ Առաջ Ռեյմոնի հուշմունքի մեջ Ինդիանան նույն հետքերն էր նկատում, բայց չէր ուզում հետամտել, չնայած անհանգստանում էր դրա համար։ Հատկապես մի հանգամանք կարող էր նրան լուսարանած լիներ որոշ հարցերի վերաբերյալ, եթե սիրտը փակած լիներ կասկածների դեմ։ Նունի մասին շատ թանկարժեք մատանի էին հայտնաբերել, որ տիկին Դելմարը տեսել էր նրա մահվանից առաջ։ Երիտասարդ աղջիկն ասել էր, որ գտել է։ Ողբերգական օրվանից տիկին Դելմարը մատից չէր հանել վշտի այդ գրավականը և ամեն անգամ նկատել էր Ռեյմոնի գունատվելը, երբ իր ձեռքն էր բռնել ու մոտեցրել

շուրթերին։ Մի անգամ նույնիսկ Ռեյմոնը աղաչել էր այլևս երբեք չխոսել Նոմի մասին, որովհետև համարում էր, թե ինքն էր եղել նրա մահվան պատճառը, և երբ Ինդիանան փորձել էր այդ ցավատանջ միտքը հեռացնել նրանից, իրեն վերագրելով ամեն ինչ, Ռեյմոնը պատասխանել էր.

— Ոչ, սիրելի Ինդիանա, ձեզ մի մեղադրեք, դուք չգիտեք, թե որքան ծանր է իմ մեղքը։

Այդ դառնաշունչ ու մթին բառերը սարսափեցրել էին տիկին Դելմարին. նա համարձակություն չէր ունեցել խորանալու դրանց մեջ, իսկ հիմա, երբ սկսեց նույնիսկ վերլուծել մանրամասնությունները, ուժ չգտավ կառչել դրանցից և ի մի բերել մտքերը։

Բաց արեց լուսամուտը և տեսնելով, թե որքան խաղաղ է գիշերը, որքան գեղեցիկ է գունատ լուսինը հորիզոնի արծաթաջրած ամպերի հետևում, և հիշելով, որ Ռեյմոնը գալու է, իսկ գուցե արդեն այդում է, անրջելով այն երջանկության մասին, որն ակնկալում էր սիրո այդ խորհրդավոր ժամին, անիծեց Ռալֆին, որ մի քանի բառով թունավորել էր հույսերը և մեկընդմիշտ խորտակել անդորրը։ Նույնիսկ առելությամբ լցվեց նրա հանդեպ, այն դժբախտ մարդու հանդեպ, որ հորն էր փոխարինում, զոհաբերում էր ապագան, որովհետև իր ապագան Ինդիանայի բարեկամության հետ էր կապված, իսկ հանուն նրա փրկության՝ որոշել էր կորցնել այդ միակ ունեցվածքը՝ բարեկամությունը։

Ինդիանան չէր կարողացել թափանցել նրա հոգու խորքը, ինչպես որ չէր կարողացել ճանաչել Ռեյմոնին։ Նրա անարգարությունը ոչ թե բխում էր ապերախտության զգացմունքից, այլ՝ անգիտությունից։ Համակված խոր սիրով, նա ի վիճակի չէր այդպես հանգիստ ընդունել դրա պատճառած հարվածները։ Մի պահ ամբողջ մեղքը դցեց Ռալֆի վրա, նախընտրելով նրան դատապարտել, քան կասկածել Ռեյմոնին։

Բացի այդ, նա ժամանակ չուներ մտքերն ամփոփելու, որոշումներ կայացնելու. Ռեյմոնը գալիս էր։ Գուցե հենց նրան էր տեսնում կամրջակի մոտ թափառելիս։ Այդ պահին ինչպիսի ատելությամբ պիտի լցվեր Ինդիանան Ռալֆի հանդեպ, եթե ճանաչած լիներ նրա կերպարանքը, որն ամեն

վայրկյան անհետանում էր մշուշի մեջ՝ նմանվելով Շանզելիզեի զարպասների մոտ այն ուրվականներին, որոնք ջանում են արգելել մեղավորի մուտքը։

Հանկարծ նրա գլխում տարօրինակ ու անհեթեթ միտք ծագեց, որը հատուկ է անհանգիստ ու դժբախտ արարածներին։ Նա ուզեց բախտախաղի դնել իր ճակատագիրը և Ռեյմոնին ենթարկել անակնկալ ու արտառոց փորձության։ Այդ խորհրդավոր միջոցին դիմելուց անմիջապես հետո ասահմանների վրա լսվեցին Ռեյմոնի ոտնաձայները։ Վազեց դուռը բացելու և իսկույն վերադարձավ իր բազկաթոռի մեջ։ Այնքան հուզված էր, որ կարծում էր ուշաթափվելու է, բայց այս անգամ էլ, ինչպես իր տարած բոլոր հոգեկան ցնցումների ժամանակ, չկորցրեց ուղեղի պարզությունը, հոգեկան արիությունը։

Ռեյմոնը գունատ ու շնչակտուր հրեց դուռը, նա անհամբեր էր նորից տեսնելու լույսը և մերձենալու իրականությանը։ Ինդիանան մեջքով էր շրջված, նա պարուրվել էր մորթե վերարկուի մեջ։ Զարմանալի պատահականությամբ այն նույն վերարկուն էր, որ Նոնը Ռեյմոնի հետ այդում հանդիպելու վերջին օրը գցել էր վրան։ Չգիտեմ, հիշո՞ւմ եք, թե՝ ոչ, Ռեյմոնին այդ օրը մի պահ անիրական միտք էր պատարել, թե վերարկուի մեջ փաթաթված ու թաքնված կինը տիկին Դելմարն էր։ Իսկ հիմա նույն հայտնությունը տեսնելով՝ բազկաթոռի մեջ տխուր նստած, թրթռացող ու գունատ լույսի տակ, նույն տեղում, որի հետ այնքան հիշողություններ էին կապված, նույն սենյակում, ուր չէր մտել իր կյանքի ամենաազնվագույն զիշերից հետո, ուր ամեն մի իր ծանր հիշողություններ էր արթնացնում, կամքից անկախ նահանջեց ու կանգնեց դռան շեմին, սարսափած հայացքը չկտրելով այդ անշարժ կերպարանքից, վախկոտի նման դողդողալով այն մտքից, թե տեսիլքն ուր որ է շրջվելով՝ երևան կհանի ջրահեղձ կնոջ կապտած դեմքը։

Տիկին Դելմարը վստահ էր, թե ինչ տպավորություն է գործելու Ռեյմոնի վրա։ Գլխին փաթաթել էր հնդիկներին հատուկ մի գլխաշոր, անփութորեն կապել այն, ինչպես կրեոլուհիներն են անում։ Այդպես էր անում նաև Նոնը։

Սարսափը տիրեց Ռեյմոնին, նա քիչ մնաց մեջքի վրա փռվեր գետնին, կարծելով, թե նախապաշարումներն իրականանում են։ Բայց, վերջապես ճանաչելով այն կնոջը, որին պատրաստվում էր գայթակղել, մոռացավ իր նախկին զոհին ու մոտեցավ Ինդիանային։ Վերջինս խիստ լուրջ ու մտախոհ տեսք ուներ, անթարթ նայում էր Ռեյմոնին, ավելի շուտ ուշադիր, քան քնքուշ հայացքով, նա ոչ մի շարժում չկատարեց՝ անմիջապես իր մոտ կանչելու սիրեցյալին։

Նման ընդունելությունից զարմացած՝ Ռեյմոնը այս կերպարանափոխությունը վերագրեց ողջախոհ անձկության և երիտասարդ կնոջը վերապահված զսպվածության։ Նա ծունկ չոքեց Ինդիանայի առջև ու ասաց.

— Սիրելիս, վախենո՞ւմ եք ինձանից։

Եվ իսկույն նկատեց, որ տիկին Դելմարի ձեռքին ինչ-որ բան կա, ամենայն լրջությամբ այն սփռել էր իր ոտքերի տակ։ Ռեյմոնը կռացավ և տեսավ անկանոն երկարությամբ սև մազերի մի խուրձ, որ թվում էր հապշտապ էին կտրված։ Ինդիանան հավաքում և ձեռքերի մեջ հարթեցնում էր այդ վարսերը։

— Ճանաչեցի՞ք այս մազերը,— հարցրեց Ռեյմոնին, նրա վրա ուղղելով թափանցիկ հայացքը, որտեղից տարօրինակ ցոլքեր էին ցայտում։

Ռեյմոնը տատանվեց, հայացքը տարավ գլխաշորին և կարծես հասկացավ։

— Ցարաճճի,— ասաց նրան՝ մազերը վերցնելով,— ինչո՞ւ եք կտրել։ Այնքան գեղեցիկ էին, շատ էի սիրում։

— Երեկ հարցնում էիք,— ասաց Ինդիանան՝ ջանալով ժպտալ,— կարո՞ղ եմ արդյոք մազերս զոհաբերել ձեզ։

— Օ՜, Ինդիանա,— բացականչեց Ռեյմոնը,— դու գիտես, որ սրանից հետո է՛լ ավելի գեղեցիկ կերևաս իմ աչքին։ Ինձ տուր դրանք։ Ես չեմ ուզում ափսոսալ, որ ամեն օր այդքան մեծ հիացմունք պատճառող մազերդ այլևս չեն գարդարելու գլուխդ։ Հիմա ես կարող եմ ցանկացածս պահին համբուրել դրանք, ինձ տուր, նրանք անբաժան կլինեն ինձանից...

Բայց այդ հարուստ մազափունջը ձեռքը վերցնելուց հետո, որի միջից մի քանի թելեր հառնում էին մինչև հատակ, Ռեյմոնին թվաց, թե շատ չոր են, կոշտ. նրա մատները երբեք այս զգացողությամբ չէին շոշափել Ինդիանայի գանգուրները։ Մարմնով մի տեսակ ջղային դող անցավ՝ զգալով այդ մազերի սառնությունը և ծանրությունը, որոնք կարծես վազուց էին կտրված, երբ նկատեց, որ դրանք կորցրել են իրենց փայլը, բույրը և կենաց ջերմությունը։ Ավելի մոտեցրեց աչքերին և իզուր փնտրեց նրանց մեջ կապույտ արտացոլումը, որ ագռավի թևերի գույնն էր հիշեցնում. սրանք սեփ-սև էին, ինչպես սնամորթների կամ հնդկացիների մազերը, մեռած ծանրությամբ...

Ինդիանայի փայլակնացայտ ու թափանցող հայացքը անընդհատ հետևում էր Ռեյմոնի աչքերին։ Վերջինս իրենից անկախ շրջեց հայացքը երեսուսուն կիսաբաց արկղերի կողմը, որտեղից գուցե էին եկել նույն մազերի մի քանի փնջեր։

— Սրանք ձերը չեն,— ասաց նա՝ քաշելով գլխաշորը տիկին Դելմարի գլխից։

Իրենց ողջ ճոխությամբ նրա մազերը թափվեցին ուսերն ի վար։ Բայց Ինդիանան մի շարժումով ետ մղեց Ռեյմոնին և շարունակելով ցույց տալ կտրված մազերն՝ ասաց.

— Ուրեմն, սրանք ձեզ ծանոթ չե՞ն։ Երբեք չե՞ք հիացել սրանցով, չե՞ք շոյել։ Գուցե խոնավ զիշե՞րն է նրանց բույրը տարել։ Ոչ մի հիշողություն չե՞ք պահել, ոչ մի կաթիլ արցունք չունե՞ք նրա համար, որ այս մատանին է կրել։

Ռեյմոնն ընկավ բազկաթոռի մեջ։ Նույնի մազերը թափվեցին գողացող ձեռքից։ Ծանր ապրումների տակ ուժասպառ էր եղել։ Տաքարյուն մարդ էր, երակներում արյունը արագ էր հոսում, ջղերը շուտ էին գրգռվում։ Ուստիպ գլուխ տարբերաց և ուշակորույս փոփոխ հատակին։ Երբ ուշքի եկավ, տիկին Դելմարը կողքին ծնկի չոքած՝ ողողում էր նրան արցունքով և ներում հայցում, բայց Ռեյմոնն զղաց, որ այլևս չի սիրում նրան։

— Դուք ինձ սարսափելի ցավ պատճառեցիք,— ասաց Ինդիանային,— մի ցավ, որ երբեք չեք կարող ամոքել։ Զգում եմ, զուր ինձ երբեք չեք վերադարձնի այն վստահությունը, որ ունեի ձեր սրտում։ Հենց նոր ցույց տվեցիք ինձ, թե որքան մեծ վրեժխնդրություն ու դաժանություն է պարփակվել ձեր մեջ։ Խեղճ նույն, խեղճ դժբախտ աղջիկ։ Երա հանդեպ եմ սիրալ զորձել և ոչ թե ձեր. նա՛ իրավունք ուներ վրեժ-

խնդիր լինելու, բայց չարեց այդ բանը։ Ինքնասպանություն գործեց հանուն իմ ապագայի։ Իսկ դուք, տիկին, ընդունակ չէիք այդպես վարվելու... Տվեք ինձ այդ մազերը, դրանք ի՞նձ են պատկանում, ի՞մն են։ Միակ բանը, որ մնում է այն կնոջից, որ իսկական սիրով է ինձ սիրել... Դժբախտ Նուն, դու այլ սիրո էիր արժանի։ Եվ այդ դո՞ւք եք հանդիմանում ինձ, տիկին, նրա մահվան համար, դուք, որին սիրեցի նրան մոռանալու գնով, խղճի խայթի սարսափելի տանջանքները դիմագրավելու գնով։ Ձեր խոստացած մեկ համբույրի համար անցա գետը, անցա կամրջով, մենամենակ, սարսափը կողքիցս անպակաս, իմ ոճրի դժոխային տեսիլքներից հալածված։ Եվ երբ հայտնաբերեցիք, թե ինչ զառանցագին կրքով եմ ձեզ սիրում, ձեր կանացիական եղունգները խրեցիք սրտիս մեջ, որպեսզի մնացած մի քանի կաթիլ արյունը պեղելով՝ կարողանաք ձե՛զ համար հոսեցնել։ Ա՜խ, երբ արհամարհեցի այդքան նվիրյալ մի զգացմունք, ընդունելու համար այսքան դաժան մի սեր, ոչ միայն հիմարացա, այլև հանցագործ դարձա։

Տիկին Դելմարը ոչինչ չպատասխանեց։ Նրա անշարժ դիրքը, գունատությունը, ուսերի վրա թափված մազերը, ակնդետ հայացքը Ռեյմոնի մոտ խղճահարություն առաջացրին։ Ռեյմոնը բռնեց նրա ձեռքը։

— Այնինչ,— ասաց նա,— քո հանդեպ ստածած սերս այնքան կույր է, որ կարողանում եմ մոռանալ կատարվածը, զգում եմ և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ կյանքս մաշող հանցանքը, և՛ այն կոպտությունը, որ իմ հանդեպ կիրառեցիր։ Սիրիր ինձ, և ես կներեմ քեզ։

Տիկին Դելմարի հուսալքությունը նրա սիրեկանի սրտում նորից արթնացրեց ցանկասիրություն և հպարտության զգացմունք։ Տեսնելով, թե որքան է վախենում իր սերը կորցնելուց, տեսնելով, թե ինչպիսի խոնարհությամբ ու համակերպվածությամբ է պատրաստ ընդունել իր պահանջները ապագայում, որպեսզի անցյալի ներողամտությանն արժանանա, Ռեյմոնը մտաբերեց, թե ինչ գնով էր մոլորեցրել Ռալֆի զգոնությունը և զգաց իր դիրքի առավելությունը։ Մի քանի բոպե ձևացրեց, թե խորապես տխրել և ընկել է մոայլ մտքերի մեջ, հազիվհազ արձագանքեց Ինդիանայի արցունքներին ու շոյանքներին, սպասեց, որ նրա սիրտը կոտրվի հեծեծանքների մեջ, որ նա զգա, թե որքան ծանր է լքված լինել, որ վշտից ու վախից կորցնի արիությունը։ Եվ միայն այն ժամանակ, երբ տեսավ նրան իր ոտքերի առջև կիսամեռ վիճակում, ուժասպառ եղած այդ կնոջը, որի կյանքը կարծես մեկ բառից էր կախված, միանգամից կատաղի շարժումով քաշեց նրան իր կողմը և սեղմեց կրծքին։ Ինդիանան շառաչեց և թուլացած՝ երեխայի նման տրվեց նրա համբույրներին։ Համարյա անգիտակից էր։

Բայց հանկարծ, կարծես երազից արթնանալով, պոկվեց նրա այրող գգվանքներից, վազեց սենյակի մյուս ծայրը, որտեղ սրբ Ռալֆի նկարն էր կախված և, ասես ապավինելով այդ լուրջ, բայց ճակատով, հանգիստ շրթունքներով մարդուն, սեղմվեց նրան, զողզոջուն, մոլորյալ տեսքով, անասելի սարսափը դեմքին։ Իսկ Ռեյմոնին թվաց, թե նա հուզվել էր իր գրկի մեջ, որ ինքն իրենից էր վախենում, որ արդեն իրեն էր պատկանում։ Շտապեց մոտը, հրամայաբար պոկեց նրան իր անկյունից, հայտնեց, որ եկել էր այստեղ խոստումները պահպանելու միտումով, բայց իր հանդեպ գործած դաժանությունը ազատագրում էր իրեն երդումից։

— Ես հիմա,— ասաց նա,— այլևս ոչ ձեր ճորտն եմ, ոչ ձեր դաշնակիցը։ Ես այն մարդն եմ, որ խելակորույս սիրում է և իր գրկի մեջ սեղմում է ձեզ, իսկ դուք չար եք, քմահաճ, բայց գեղեցիկ, խելագար ու պաշտելի։ Քաղցր ու վստահեցնող բառերով կարող էիք զսպել իմ ոգևորվածությունը, եթե երեկվա նման մեղմ ու մեծահոգի լինեիք, ես էլ սովորականի պես քնքուշ ու ենթարկվող կլինեի։ Բայց դուք տակնուվրա արեցիք իմ սերը, խառնեցիք իմ բոլոր մտքերը, մի ծայրահեղությունից մյուսին մղեցիք ինձ. ես դարձա վախկոտ, հիվանդոտ, կատաղած, հուսահատ մի անձնավորություն։ Հիմա ստիպված եք երջանկացնել ինձ, այլապես կկորցնեմ հավատս ձեր նկատմամբ, այլևս չեմ կարող սիրել ձեզ ու մեծարել։ Ներիր, Ինդիանա, ներիր, եթե վախեցնում եմ քեզ, դու ես մեղավոր, այնքան տանջանք պատճառեցիր ինձ, որ դատողությունս էլ կորցրի։

Ինդիանան դողում էր ամբողջ մարմնով։ Կյանքի փորձ չունենալով, կարծում էր, թե դիմադրելն անկարելի է։ Նա

պատրաստ էր զիջել, ոչ թե հանուն սիրո, այլ՝ վախից։ Ուժասպառ եղած մաքառում էր Ռեյմոնի գրկում և վերջապես հուսահատ ձայնով ասաց.

— Մի՞թե ընդունակ եք ուժ բանեցնել ինձ վրա։

Ռեյմոնը ցնցվեց, չնայած իր մարմնական ուժին, թուլությունը, բարոյական դիմադրությունը հաղթեցին, բաց թողեց նրան՝ կոպտորեն ետ վանելով իրենից։

— Երբե՞ք,— բացականչեց նա,— ավելի լավ է մեռնել, քան տիրել քեզ հակառակ քո կամքին։

Միանգամից ծունկ չոքեց Ինդիանայի առջև, և այն, ինչ ուզեցը կարող էր իրականացնել սրտի փոխարեն, այն, ինչ բանաստեղծական երևակայությունը կարող էր հաղորդել զգացմունքին, Ռեյմոնը ներդրեց ջերմեռանդ ու վտանգավոր աղոթքի մեջ։ Եվ երբ նկատեց, որ նա չէր հանձնվում, անհրաժեշտաբար զիջեց. սկսեց հանդիմանել Ինդիանային, որ իրեն չի սիրում։ Նա գիտակցում էր, թե որքան արգահատելի ու զավեշտական քայլի է դիմում և մի փոքր էլ ամաչում էր, որ գործ ունի միամիտ կնոջ հետ և կարող է համոզել նրան իր խոսքերով։

Այս հանդիմանությունը ավելի շուտ ներգործեց Ինդիանայի վրա, քան այն բոլոր բացականչությունները, որոնցով Ռեյմոնը զարդարել էր իր խոսքը։

Բայց հանկարծ Ինդիանան կարծես ինչ-որ բան հիշեց։

— Ռեյմոն,— ասաց նրան,— նա, որ այդքան սիրում էր ձեզ... նա, որի մասին քիչ առաջ խոսում էինք... հավանաբար ոչինչ չի մերժել ձեզ, այնպես չէ՞...

— Ոչինչ,— ասաց Ռեյմոնը համբերությունից դուրս գալով նման անտեղի հիշեցման համար,— դուք, որ ամեն վայրկյան մտածել եք տալիս ինձ նրա մասին, այնպես արեք, որ մոռանամ նրա մեծ սերը։

— Լռեք,— շարունակեց Ինդիանան մտախոհ ու լրջորեն,— մի փոքր քաջություն ունեցեք, դեռ ուզում եմ խոսել։ Թերևս այնքան մեղավոր չեք եղել իմ հանդեպ, որքան կարծել եմ։ Ինձ համար հաճելի կլինի ձեզ ներել այն բանի դիմաց, որ ընդունել եմ որպես վիրավորանք... Ասացեք, ուրեմն, երբ ձեզ այստեղ տեսակցելի բերի... ո՞ւմ համար էիք եկել, նրա՞, թե՞ ինձ համար...

Ռեյմոնը երկմտեց, հետո մտածելով, որ ճշմարտությունը շուտով կպարզվի տիկին Դելմարի համար, եթե մինչև հիմա երևան չէր եկել, պատասխանեց.

— Նրա համար։

— Դե ինչ, այսպես ավելի լավ է,— տխուր ասաց նա,— նախընտրում եմ դավաճանությունը վիրավորանքից։ Մինչև վերջ անկեղծ եղեք, Ռեյմոն։ Երբվանի՞ց էիք իմ սենյակում, երբ ներս մտա։ Իմացեք, որ Ռալֆն ամեն ինչ գիտի, և եթե ուզեք նրան հարցնել...

— Կարիք չկա սրբ Ռալֆի մատնությանը դիմելու, տիկին։ Նախորդ օրվանից էի այստեղ։

— Եվ գիշերն ա՞յս սենյակում անցկացրիք։ Ձեր լռությունը բավարարում է իմ հարցին։

Երկուսն էլ մի քանի րոպե լուռ էին։ Հետո Ինդիանան վեր կացավ, ուզում էր բացատրվել, երբ հանկարծ ինչ-որ հարված դռան վրա՝ սառեցրեց արյունը երակներում։ Նրանք անշարժացան, չհամարձակվելով նույնիսկ շնչել։

Դռան տակի ճեղքից մի փոքրիկ թուղթ սահեց ներս։ Ծոցատետրից պոկված էջի վրա հազիվ ընթեռնելի ձեռագրով մատիտով գրված էր. «Ձեր ամուսինն այստեղ է։ Ռալֆ»։

Գլուխ XVIII

— Նենգորեն հնարված ստախոսություն,— ասաց Ռեյմոնը, հենց որ Ռալֆի թեթև ոտնաձայները հեռացան,— սրբ Ռալֆը լավ դասի կարիք է զգում, այնպիսի դաս տամ նրան, որ...

— Արգելում եմ,— ասաց Ինդիանան սառը և վճռական տոնով,— ամուսինս այստեղ է։ Ռալֆը երբեք չի ստել։ Կորած ենք երկուսով։ Ժամանակ կար, որ այդ մտքից սարսափում էի, այսօր նշանակություն չունի ինձ համար։

— Որ այդպես է,— ասաց Ռեյմոնը ոգևորված գրկելով նրան,— եթե մահ է սպառնում մեզ, պատկանիր ինձ։ Ներիր իմ բոլոր հանցանքները և թող այս գերագույն պահին վերջին բառդ պատկանի սիրուն, իմ վերջին շունչը՝ երջանկությանը։

— Այս սարսափելի բոպեն, որ արիություն է պահանջում մեզնից, կարող էր իմ կյանքի ամենագեղեցիկ պահը լինել, բայց դուք փչացրիք։

Կառքի անիվների դղրդյուն լսվեց բակում, և դղյակի դռան զանգը կոպիտ ու անհամբեր ձեռքի տակ սկսեց զընգզնգալ։

— Ինձ ծանոթ է զանգը քաշելու այս եղանակը,— ասաց Ինդիանան՝ ուշադիր լսելով և անտարբեր ձայնով,—Ռալֆը չի խաբել, բայց ժամանակ ունեք փախչելու։ Գնացեք...

— Ոչ, չեմ ուզում,— բացականչեց Ռեյմոնը,— կասկածում եմ, որ այստեղ կեղտոտ դավաճանություն կա, և դուք միակ զոհը չեք դառնալու։ Ձեմ գնա, կրծքով կպաշտպանեմ ձեզ...

— Ոչ մի դավաճանություն էլ չկա... Լսում եք, չէ՞, ծառաներն արթնացան, և երկաթե ճաղերը բացվում են... Փախեք, ծաղկանոցի ծառերը կթաքցնեն ձեզ, և հետո լուսինը դեռ ամպերի հետևում է, էլ ոչ մի խոսք, գնացեք։

Ռեյմոնն ստիպված էր հնազանդվել. Ինդիանան նրան ճանապարհեց մինչև ներքև, աստիճանների ծայրը, ուշադիր սկսեց զննել ծաղկանոցի ծառերը։ Զորս բոլորը լուռ էր, հանգիստ երկար մնաց վերջին աստիճանի վրա, սարսափած լսելով Ռեյմոնի ոտնաձայները խճաքարերի վրա, մոռանալով ամուսնու գալստյան մասին։ Ինչ փույթ նրա կասկածներն ու զայրույթը, միայն թե Ռեյմոնը զերծ լիներ վտանգից։

Իսկ Ռեյմոնը արագ, բայց թեթև քայլերով անցավ գետն ու այգին։ Հասավ դռնակի մոտ և հուզմունքի մեջ դժվարությամբ բացեց այն։ Ոտքը հազիվ էր դռնից դուրս գցել, որ սըր Ռալֆը կանգնեց նրա դիմաց և ասաց իր մշտական սառնարյունությամբ ու հանգստությամբ, կարծես այդ հանդիպումը կայացած լիներ պաշտոնական վայրում.

— Բարի եղեք վստահել ինձ բանալին։ Փնտրելու դեպքում, եթե ինձ մոտ հայտնաբերվի, անպատասխանություն չէ։

Ռեյմոնը կնախընտրեր մահացու վիրավորանք կրած լինել, քան մեծահոգաբար այդպես ծաղրի ենթարկվել։

— Ես այն մարդը չեմ, որ անկեղծ ծառայությունը մոռանամ,— ասաց Ռալֆին,— բայց նրանցից եմ նաև, որ

գիտեն վրեժ լուծել վիրավորանք հասցնողից և պատժել դավաճանությունը։

Սըր Ռալֆը ո՞չ ձայնի ելևէջը փոխեց, ո՞չ դեմքը արտահայտությունը։

— Ինձ պետք չէ ձեր երախտագիտությունը,— պատասխանեց նա,— իսկ վրեժխնդրությունից չեմ վախենում։ Բայց հիմա խոսելու ժամանակը չէ։ Ահա ձեր ճանապարհը, մտածեք տիկին Դելմարի պատվի մասին։

Եվ անհետացավ։

Հուզումնալից գիշերն այնպես էր խռովել Ռեյմոնի հոգին, որ նա պատրաստ էր հավատալու կախարդանքի ուժին։ Լուսաբացին հասավ Սերսի և ջերմելով մտավ անկողին։

Իսկ տիկին Դելմարը ամուսնու և զարմիկի հետ մասնակցեց ճաշի՝ կատարյալ հանգիստ ու ինքնատիրապետում պահպանելով։ Նա դեռ չէր հասցրել խորհել իր վիճակի մասին, գործում էր միայն բնազդով, որ պարտադրում էր իրեն սառնասրտություն և բանականություն։ Ինդիանը մոայլ էր ու մտահոգ։ Նա ամբողջապես կլանված էր գործերով, խանգի մասին մտածելու ժամանակ չուներ։

Երեկոյան Ռեյմոնը ուժ գտավ մտաբերելու իր սիրո մասին, բայց զգաց, որ այդ սերը շատ է նվազել։ Նա սիրում էր արդեն լիներ հաղթահարել, բայց նաև խուսափում էր տհաճություններից, իսկ հիմա կանխատեսում էր բազմաթիվ այդպիսիները։ Ի վերջո հիշեց, որ պարտավոր էր տեղեկանալ Ինդիանայի մասին։ Ծառային ուղարկեց Լանյիի շուրջը թափառելու և տեղեկություններ բերելու անցուդարձի վերաբերյալ։ Լրտերը նրան հանձնեց տիկին Դելմարի հետևյալ նամակը։

«Հույս ունեի, որ այս գիշեր կկորցնեմ բանականությունս կամ կյանքս։ Ի դժբախտություն ինձ, պահպանեցի և՛ մեկը, և՛ մյուսը, բայց կաշխատեմ չարտնջալ, իմ տանջանքը ես իմ վաստակել, ե՛ս ընտրեցի այս փոթորկահույզ կյանքը, իսկ այսօր ստորություն կլինի նահանջել։ Չգիտեմ, դուք մեղավոր եք, թե ոչ, չեմ ցանկանում իմանալ, այս թեմային այլևս չենք անդրադառնա, այնպես չէ՞։ Երկուսիս էլ մեծ ցավ է պատճառում, ուրեմն, թող սա լինի վերջինը։

Դուք մի խոսք ասացիք, որ մեծագույն ուրախություն պատճառեց ինձ։ Խեղճ Նուն, դու, որ հիմա երկնային արքայությունում ես, ներիր ինձ, դու այլևս չես տանջվում, չես սիրում, դուցե խղճում ես ինձ... Դուք ասացիք, Ռեյմոն, որ ինձ համար եք զոհել այդ դժբախտին, որ ինձ ավելի շատ եք սիրել... Օ՜, մի ժխտեք, այդպես էլ ասացիք, այնքան մեծ կարիք եմ զգում հավատալու այդ խոսքերին, որ հավատում եմ։ Այնինչ, այդ գիշերվա ձեր վերաբերմունքը, ձեր պնդումները, շփոթմունքը ինձ կասկածի մեջ գցեցին։ Ներում եմ ձեզ. այդ պահին դուք շատ հուզված էիք, իսկ այժմ հնարավորություն ունեք խորհելու և վերադառնելու ձեզ, պատասխանեք, կարո՞ղ եք հրաժարվել նման սիրուց։ Ես սիրում եմ ձեզ ամբողջ հոգով, կարծում եմ, որ կարող եմ ներշնչել ձեզ նման անարատ սեր։ Բացի այդ, երկար-բարակ չէի խորհել ապագայի մասին, մտքերս այդքան հեռու չէին թափանցել, և չէի սարսափում, որ մի օր, ձեր նվիրվածությունից պարտված, պիտի զոհաբերեի հանուն ձեզ իմ խիղճն ու պատիվը։ Բայց այսօր ամեն ինչ այլ է, իմ գալիք հետագա կյանքում տեսնում եմ միայն սոսկալի ընդհանրություն Նունի հետ։ Օ՜, եթե ինձ նրա չափ չեք սիրում... եթե հավատայի դրան... Այնինչ նա ինձնից ավելի գեղեցիկ էր, շատ ավելի գեղեցիկ։ Ինչո՞ւ նախընտրեցիք ինձ։ Նշանակում է, այլ կերպ եմ սիրված և ավելի ջերմ սիրով... Ահա այն ամենը, ինչ ուզում էի ասել։ Կարո՞ղ եք հրաժարվել իմ սիրեկանը լինելուց, ինչպես նրանն եք եղել։ Այդ դեպքում թերևս շարունակեմ հարգել ձեզ, հավատալ ձեր խղճի խայթին, անկեղծությանը, սիրուն, այլապես այլևս մի մտածեք իմ մասին, երբեք ինձ չեք տեսնի։ Գուցե մեռնեմ վշտից, բայց նախընտրում եմ մահը, քան իջնել այն աստիճանին, որ ձեր սիրուհին դառնամ»։

Ռեյմոնն անհարմար վիճակում էր, չգիտեր ինչ պատասխանել։ Նման հպարտությունը վիրավորում էր նրան, մինչև հիմա չէր պատկերացնում, որ իր գիրկը նետված կինը կարող էր բացահայտորեն դիմադրել և պատճառաբանել այդ դիմադրությունը։

«Ինձ չի սիրում,— մտածեց նա,— չոր սիրտ ունի, գոռոզ է...»։

Այդ պահից դադարեց սիրել։ Նա ոտնակոխ էր արել իր ինքնասիրությունը, հուսախաբ արել ևս մի հաղթանակի հույս, խափանել հաճույքի սպասումը։ Ինդիանան հիմա նրա համար նույնիսկ Նուն չէր։ Խեղճ Ինդիանա, իսկ ինքն ուզում էր ավելին լինել։ Նրա հախուռն սերը անտեսվեց, կույր հավատն արհամարհվեց։ Ռեյմոնը երբեք չէր հասկացել նրան, էլ ինչպե՞ս կարող էր սիրել երկարատև սիրով։

Ջայրույթի մեջ երդվեց հաղթանակի հասնել։ Ոչ թե հպարտությունը նրան մղեց այդ երդումին, այլ՝ վրեժխնդրությունը։ Նրա համար այլևս նշանակություն չուներ երջանկության տիրումը, ուզում էր համառությունը պատժել, ոչ թե ցանկանում էր տիրել կնոջ մարմնին, այլ ընկճել այդ կնոջը։ Երդվեց թեկուզ մեկ օրով դառնալ նրա սիրեկանը և հետո լքել, որպեսզի նրան իր ոտքերի առջև ընկած տեսնելու հաճույքն ըմբոշխնի։

Առաջին տպավորության տակ գրեց հետևյալ նամակը։

«Ուզում ես խոստանամ... խելագա՞ր, ինչպե՞ս կարող ես մտածել այդ մասին։ Խոստանում եմ ինչ ցանկանաս, որովհետև պատրաստ եմ բոլոր հարցերում հնազանդվել քեզ։ Իսկ եթե երդմնազանց լինեմ, ո՜չ ասա՛ծու, ո՜չ քո առջև ինձ մեղավոր չեմ զգա։ Ինդիանա, եթե սիրեիր, այդ դժան փորձությանը չէիր ենթարկի ինձ, չէիր ստիպի, որ դրժեմ խոսքս, չէիր ամաչի իմ սիրուհին դառնալ։ Բայց ձեզ թվում էր, թե պիտի նվաստանայիք իմ դրիում...»։

Ռեյմոնն զգաց, որ ինքն իրենից դուրս է եկել, պատռեց նամակը և որոշ ժամանակ խորհելուց հետո մեկ ուրիշը գրեց։

«Խոստովանում եք, որ քիչ էր մնացել այս գիշեր կորցնեիք դատողությունը, իսկ ես՝ ամբողջովին կորցրի։ Մեղավոր եղե՞լ եմ, ո՜չ, ավելի ճիշտ, խելագար եմ եղել։ Մոռացեք տանջանքի ու զառանցանքի պահերը։ Հիմա հանգիստ եմ։ Մտածեցի, որ դեռ արժանի եմ ձեզ... Օրհնյալ լինես, երկ-

նային հրեշտակ, որ փրկեցիր ինձ ինձնից, որ հիշեցրիր, թե ինչպես պետք է սիրեմ քեզ։ Իսկ այժմ հրամայիր, Ինգիանա, ես քո սարուկն եմ, դու այդ լավ գիտես։ Կյանքս կտամ, որպեսզի մեկ ժամ անցկացնեմ քո գրկում, բայց կարող եմ ամբողջ կյանքում տառապել՝ քո մի ժպիտին արժանանալու համար։ Կլինեմ քո բարեկամը, քո եղբայրը և ոչ մի բան ավելի։ Եթե տանջվեմ, չես իմանա։ Եթե քո ներկայությամբ արյունս եռա, հոգիս հրկիզվի ձեռքիդ դիպչելու պահին, եթե ստվերը փակի ալքերս, շրթներիդ քաղցր համբույրը՝ քույրական համբույրը, այրի հակատս, արյանս կպարտադրեմ խուզարկվել, ճակատիս՝ պաղել, բերանիս՝ հարգալից խոսքեր բարբառել։ Ես մեղմ կլինեմ, հնազանդ, դժբախտ, եթե դա քեզ երջանկություն է պարգևելու, և դու հրճվելու ես իմ ցավից, միայն թե լսեմ քեզնից, որ սիրում ես ինձ։ Օ՜, ասա. վերադարձրու հույսս և ուրախությունս։ Ասա, ե՞րբ ենք հանդիպելու։ Անտեղյակ եմ. գիշերվա գեղքերն ի՞նչ ընթացք ունեցան։ Ինչո՞ւ այդ մասին ոչինչ չես գրել և թողել ես, որ մինչև լույս տանջվեմ։ Կարլոսը ձեր երեքին տեսել է այգում զբոսնելիս։ Գնդապետը, քսա նրա, կամ հիվանդ է, կամ տխուր, բայց ոչ զայրացած։ Նշանակում է, այդ Ռալֆը մեզ չի մատնել։ Տարօրինակ մարդ։ Բայց որքանո՞վ կարող ենք ապավինել նրա պարկեշտությանը, և ինչպե՞ս կարող եմ երևալ Լանչիում, երբ մեր բախտը նրա ձեռքում է։ Այնինչ, կհանդգնեմ։ Եթե հարկ լինի, մինչև իսկ ստորանալ՝ նրան աղաչելու գնով, կփշրեմ հպարտությունս, կհաղթահարեմ ատելությունս, ամեն ինչ կանեմ, միայն թե քեզ չկորցնեմ։ Մեկ բառ ասա միայն, և ես պատրաստ կլինեմ ամբողջ կյանքում այնքան խղճի խայթ կրել, որքան հնարավոր է. քեզ համար կլքեմ մորս, քեզ համար ամեն տեսակի հանցանք կգործեմ։ Ա՜խ, եթե իմանայիր, Ինգիանա, որքան անսահման է սերս...»։

Գրիչն ընկավ Ռեյմոնի ձեռքից. սարսափելի հոգնած էր, ալքերը փակվում էին։ Ջնայած դրան, կարգաց գրածը՝ համոզվելու համար, թե կիսաբուն վիճակում մտքերը պա՞րզ էին արտահայտված, բայց այնքան ուժասպառ էր, որ անկարող էր հասկանալ։ Կանչեց ծառային, հանձնարարեց մեկնել

Լանչի մինչև արևածագը, իսկ ինքը քնեց այն մարդուն հատուկ խորունկ ու հաճելի քնով, որն իրենից գոհ է։

Տիկին Դելմարն ամենևին չքնեց, հոգնած էր, ամբողջ գիշեր զրել էր, իսկ երբ Ռեյմոնի նամակն ստացավ, իսկույն պատասխանեց։

«Շնորհակալություն, Ռեյմոն, շնորհակալություն, դուք վերադարձրիք իմ ուժն ու կյանքը։ Հիմա կարող եմ ամեն ինչ հաղթահարել, ամեն ինչի հետ համակերպվել, քանի որ ինձ սիրում եք, և ամենածանր փորձությունները ձեզ չեն սարսափեցնում։ Այո, մենք կհանդիպենք, ոչ մի բան չի կանխի մեր որոշումը։ Ռալֆը թող տնօրինի մեր գաղտնիքը, ինչպես հարմար է գտնում, այլևս ինձ ոչինչ չի հուզում, դու ինձ սիրում ես, նույնիսկ ամուսնուցս չեմ վախենում։

Ուզում եք իմանալ ինչպե՞ս են մեր գործերը... Մոռացա երեկ այդ մասին գրել ձեզ։ Գործերը տխուր շրջադարձ ունեն, մենք սնանկացել ենք։ Խոսք է գնում Լանչին վաճառելու մասին, նույնիսկ խոսք կա, որ գաղութում ենք հաստատվելու... Բայց ինչ փույթ։ Հիմա ոչնչի մասին մտածել չեմ կարող։ Միայն մի բան է հայտնի, մենք երբեք չենք բաժանվի... երդվել ես, Ռեյմոն։ Հույսս դնում եմ երդումիդ վրա, իսկ դու հույսդ իմ արիության վրա դիր։ Ինձ ոչ մի բան չի սարսափեցնի, ոչ մի բան հետ չի կանգնեցնի իմ որոշումից, իմ տեղը քո կողքին է, և միայն մահը կարող է խանգարել»։

«Կանացի ոգևորվածություն»,— ասաց Ռեյմոնը՝ ճմռթելով նամակը,— ռոմանտիկ ծրագրերը, վտանգավոր ձեռնարկումները գրգռում են նրանց թույլ երևակայությունը, ինչպես դառնահամ դեղերն են հիվանդին ախորժակ տալիս։ Հասա իմ նպատակին, ե՛ս եմ գրության տերը, իսկ ինչ վերաբերում է խելացնոր անզգուշություններին, որոնցով սպառնում է ինձ, դեռ կտեսնենք։ Միշտ այդպիսին են եղել թեթևամիտ և խաբեբա արարածները, միշտ պատրաստ՝ անկարելին ձեռնարկելու և առաքինությունը մեծահոգություն համարելու, որը տարփողում է պահանջում։ Այս նամակը կարդալով ո՞վ կմտածի, որ նա համբույրների մեջ այդքան ժլատ է և խնայում է գգվանքները»։

Նույն օրը գնաց Լանյի։ Ռալֆին այնտեղ չէր, գնդապետը բարեկամաբար ընդունեց նրան և վստահեց իր գաղտնիքը։ Ռեյմոնին տարավ այգի, որպեսզի ավելի հանգիստ մթնոլորտում խոսի և այստեղ հայտնեց, որ ամբողջովին սնանկացել է, իսկ գործարանը վաճառքի էր հանելու վաղվանից։ Ռեյմոնն իր ծառայություններն առաջարկեց։ Դելմարը մերժեց։

— Ոչ, բարեկամս,— ասաց նրան,— առանց այն էլ ինձ միշտ տանջել է այն միտքը, որ իմ ունեցվածքի համար Ռալֆին եմ պարտական։ Առիթ էի փնտրում վարձահատույց լինել։ Սեփականությանս վաճառքը թույլ կտա միանգամից մարել բոլոր պարտքերս։ Ճիշտ է, դրանից հետո ինձ ոչինչ չի մնա, բայց արհամարհելու չի պակասում, եռանդուն եմ, գործեր վարելու ունակություն ունեմ։ Ապագան մեր առջևում է։ Ես արդեն կառուցել եմ իմ փոքրիկ կարողության հատակագիծը, կարող եմ վերսկսել։ Պարտավոր եմ այդ անել կնոջս համար, նա երիտասարդ է, չեմ կարող նրան կարիքի մեջ թողնել։ Բուրբոն կղզում մի փոքրիկ տուն ունի, ուզում եմ այնտեղ հաստատվել և վերսկսել առևտրական գործերս։ Մի քանի տարվա ընթացքում, տասը տարուց ոչ ուշ, հույս ունեմ, որ կհանդիպենք...

Ռեյմոնը սեղմեց գնդապետի ձեռքը՝ մաքում ծիծաղելով ապագայի նկատմամբ ունեցած նրա հավատի համար. տասը տարվա մասին խոսում էր այնպես, ասես խոսքը մեկ օրվան էր վերաբերվում, այնինչ նրա ճաղատ գլուխը և թուլացած մարմինը, երբուն գոյությունը մաշված կյանքի գրավականն էին։ Համենայն դեպս, ձևացրեց, թե կիսում է նրա հույսերը։

— Ուրախ եմ, տեսնելով,— ասաց գնդապետին,— որ անհաջողությունները չեն ընկճում ձեզ։ Նման պարագայում զգում եմ ձեր տղամարդկությունը և անկուն բնավորությունը։ Իսկ տիկին Դելմարը նույնքա՞ն տղամարդ է այս հարցում։ Չե՞ք վախենում, որ առարկի ձեր մեկնումի ծրագրերի դեմ։

— Տհաճ բան կստացվի,— պատասխանեց գնդապետը,— բայց կանայք ստեղծված են հնազանդվելու և ոչ թե խորհուրդներ տալու համար։ Իմ որոշման մասին դեռ Ինդիանային վերջնականապես չեմ հայտնել։ Ձեզնից բացի, այստեղ ոչ մեկը չկա, որից բաժանվելու համար ափսոսամ։ Համենայն

դեպս կանխազգում եմ, արցունքներ են լինելու և ջղային ցնցումներ, թեկուզ միայն հակադրվելու համար... Գրողը տանի այդ կանանց... Մի խոսքով, ինչ էլ պատահի, հույս դնում եմ ձեզ վրա, սիրելի Ռեյմոն, պետք է կնոջս խոսք հասկացնեք։ Նա ձեզ վստահում է. կիրառեք բոլոր միջոցները, որ չարտասվի։ Տանել չեմ կարող արցունքներ։

Ռեյմոնը խոստացավ վերադառնալ հաջորդ օրը և հայտնել տիկին Դելմարին ամուսնու որոշման մասին։

— Մեծ ծառայություն մատուցած կլինեք,— ասաց գնդապետը,— Ռալֆին ինձ հետ ագարակ կտանեմ, որպեսզի ազատ զրուցեք նրա հետ։

«Դրանից լավ բան չէր էլ կարող լինել»,— մտածեց Ռեյմոնը մեկնելու ժամանակ։

Գլուխ XIX

Պարոն Դելմարի ծրագրերն ամբողջովին համապատասխանում էին Ռեյմոնի ցանկությանը. նա կանխատեսում էր, որ վախճանին հասած սերը ապագայում, բացի անախորժություններից ու բարդություններից, ոչինչ չէր տալու իրեն։ Զափազանց գոհ էր, որ հանգամանքներն այդքան բարեհաջող ընթացք էին ստանում և ազատում իրեն հետագա անխուսափելի և այդ սպառված, տխուր սիրո կապանքներից։

Այժմ Ռեյմոնին մնում էր օգտվել տիկին Դելմարի փոթորկահույզ սիրո վերջին պահերից և հետո, իր հաջողակ ճակատագրին ապավինած, ազատվել հետագա արցունքներից ու հանդիմանություններից։

Այսպիսով, հաջորդ օրը Լանյի գնաց այդ չարաբաստիկ ոգևորությունը մինչև վերջ հասցնելու նկատառումով։

— Իսկ ձեզ հայտնի՞ է, Ինդիանա,— տեղ հասնելուն պես ասաց Ռեյմոնը,— թե ինչ դեր է առաջարկում ինձ ձեր ամուսինը։ Համենայն դեպս, շատ տարօրինակ մի հանձնարարություն։ Ես պետք է ազաչեմ ձեզ, որ մեկնեք Բուրբոն կղզի, ձեզ մղեմ այն բանին, որ լքեք ինձ, հոշոտեմ իմ իսկ ձեռքերով սիրտս ու կյանքս։ Ի՞նչ եք կարծում, լավ փաստաբան չի՞ ընարել։

Տիկին Դելմարի մոայլ լրջությունը ինչ-որ չափով կանխարգելեց նրա կեղծ զեղումները։

— Ինչո՞ւ եք այս ամենն ինձ ասում,— ասաց Ինդիանան,— վախենում եք տատանվե՞մ, վախենում եք ենթարկվե՞մ։ Վստահ եղեք, Ռեյմոն, որոշումս անխախտ է։ Երկու գիշեր լուսացրել եմ բոլոր հնարավոր միջոցների շուրջը մտորելով և արդեն գիտեմ, թե ինչ եմ անելու, գիտեմ, թե ինչի դեմ եմ պայքարելու, ինչ եմ զոհելու, ինչ եմ արհամարհելու։ Պատրաստ եմ անցնել ճակատագրիս այս դժվարին ուղին։ Դուք ինձ առաջնորդ և նեցուկ կլինեք, այնպես չէ՞։

Ռեյմոնը մի պահ վախեցավ նրա սառնարյունությունից և համարյա հավատաց այդ խելագար սպառնալիքներին, բայց հետո չանաց համոզել ինքն իրեն, որ Ինդիանան ամենևին չի սիրում իրեն. նա այդպես էր վարվում այն պարզ պատճառով, որ այս ամենը համապատասխանում էր գրքերից քաղած իր հրաբորբ զգացմունքներին։ Ռոմանտիկ սիրուհուց ետ չմնալու համար ամենաճարտար լեզվով դիմեց աննախադեպ դրամատիկականության և հաջողությամբ մոլորեցրեց Ինդիանային։ Բայց յուրաքանչյուր անկողմնակալ, սառը զատող հանդիսատեսի համար գաղտնիք չէ, որ սիրային թեմայով այդ բեմադրության մեջ բացակայում էր անկեղծությունն ու բնականությունը։ Ռեյմոնի զգայացունց սիրո ճոռոմաբանությունը, բանաստեղծական ոգևորվածությունը սառն ու դաժան հակասություն էին կազմում Ինդիանայի ճշմարիտ ու պարզորեն արտահայտված զգացմունքների հետ։ Մեկի մոտ բանականությունն էր իշխում, մյուսի մոտ՝ սիրտը։

Համենայն դեպս Ռեյմոնը մի փոքր վախենում էր, որ Ինդիանան կիրագործեր իր խոստումները, եթե ճարպկորեն չկանխեր նրա նախագծերը, այդ պատճառով համոզեց նրան հնազանդություն և անտարբերություն խաղալ, մինչև հասներ ամուսնու դեմ բացահայտորեն հանդես գալու պահը։ Ըստ Ռեյմոնի, հարկավոր էր, նախքան մտադրությունն իրագործելը, հեռանալ Լանյիից, որպեսզի այդ խայտառակ տեսարանը ապասավորների ներկայությամբ տեղի չունենար, և կարողանային խուսափել Ռալֆի վտանգավոր միջամտությունից։

Իսկ Ռալֆը ելքեց իր դժբախտ բարեկամներին։ Չուր չանաց համոզել, որ ընդունեն իր ողջ կարողությունը, Բելոիվի դղեկը, Անգլիայից ստացվող եկամտահարկերը, գաղութի տընկատանների վաճառքը, բայց գնդապետն անդրդվելի մնաց։ Նա Ռալֆի հանդեպ առաջվա բարեկամական զգացմունքը չէր տածում, այլևս չէր ուզում պարտավորված զգալ իրեն։ Թող Ռալֆը Ռեյմոնի խելքն ու ճարպկությունն ունենար, տեսնենք չէ՞ր համոզի նրան, բայց երբ Ռալֆը ամենապարզ կերպով ձևակերպեց միտքը և արտահայտեց զգացմունքները, խեղճ բարոնեսին թվաց, թե ամեն ինչ ասված է, և մտածեց, որ այսուհետև անհույս էր մեկնումեկի կարծիքը փոխել։ Այդ ժամանակ վարձով տվեց Բելոիվ դղյակը և պարոն Դելմարի ու նրա կնոջ հետևից, մինչև նրանց Բուրբոն կղզի մեկնելը, գնաց Փարիզ։

Լանյին վաճառքի հանվեց ֆաբրիկայի հետ՝ իր բոլոր հարմարություններով ու միջոցներով։ Տիկին Դելմարի համար ամեոը շատ տխուր ու մոայլ անցավ։ Ճիշտ է, Ռեյմոնը փարիզում էր, համարյա ամեն օր այցելում էր, ուշադիր էր նրա հանդեպ, քնքուշ, բայց հաղիվ մեկ ժամ մոտ մնալուց հետո մեկնում էր։ Գալիս էր, երբ ընթրիքն ավարտված էր, իսկ երբ գնդապետը պատրաստվում էր դուրս գալ գործերը կարգադրելու, նա նույնպես գնում էր մասնակցելու ինչ-որ երեկոյի։ Ձեզ արդեն հայտնի է, որ բարձր հասարակության միջավայրը Ռեյմոնի տարերքն էր, կյանքը։ Ամբողջ միտքն ու կարողությունը, նաև դիրքը կենտրոնացնելու համար՝ նրան օդի պես անհրաժեշտ էին աղմուկը, շարժումը, ամբոխը։ Մտերմիկ շրջանակում կարողանում էր սիրելի դառնալ, աշխարհիկ կյանքում փայլում էր, և նա այլևս այս կամ այն խմբավորման հարող մարդը, նրա բարեկամը չէր. նա տաղանդավոր, մեծ խելքի տեր անձնավորություն էր, որ պատկանում էր բոլորին, և հանրությունն էր նրա հայրենիքը։

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, Ռեյմոնն իր սկզբունքներն ուներ։ Երբ զգաց, որ գնդապետը մեծ վստահությամբ է լցված իր հանդեպ, բարեկամաբար է ընդունում իրեն, պատվավոր և անկեղծ մարդու տեղ գնում, միջնորդ կարգելով իրեն՝ կնոջ և ամուսնու միջև, որոշեց արդարացնել այդ վստահությունը, արժանի լինել այդ բարեկամությանը, հաշտեցնել ամուսնուն և կնոջը, հրաժարվել Ինդիանայի նախապատվությունից, քանի որ դա խանգարելու էր Դելմարի ան-

գորը։ Նա նորից վերափոխվեց բարոյական, առաքինի մարդու, ամեն ինչին նայեց փիլիսոփայորեն։ Իսկ որքան տեսեց այդ, կտեսնեք ինքներդ։

Ինդիանան ամենևին չէր հասկանում փոփոխության պատճառը և անասելի շափով տանջվում էր, տեսնելով նրա անուշադրությունը իր հանդեպ։ Բայց և այնպես, ի երջանկություն նրա, մտքում չէր ուզում խոստովանել իր հույսերի վերջնական փլուզումը։ Հեշտությամբ խաբվում էր և ուզածն էլ այդ էր. չէ՞ որ իրական կյանքն այնքան դառն է ու ծանր։ Ամուսինը օրեցօր անտանելի էր դառնում։ Մարդկանց աչքում փորձում էր տոկուն, անհոգ երևալ, ցույց տալ, որ երբեք չի կորցնում արիությունը, իսկ ընտանիքի ներսում դառնում էր կատաղած, պահանջկոտ երեխա։ Ինդիանան նրա ցասման զոհն էր, և պետք է խոստովանել, շատ դեպքերում՝ իր իսկ մեղքով։ Եթե ժամանակին այս կինը ձայն ունենար, նրբորեն, բայց վճռականապես բողոքեր, պարոն Դելմարը, որ միայն կոպիտ մարդ էր, կամաչեր շար երևալուց։ Նրա սիրտը մեղմելուց, նրան իր բռան մեջ հավաքելուց հեշտ բան չկար, բայց դրա համար անհրաժեշտ էր իջնել նրա մակարդակին և դուրս չգալ նրա իմացության սահմաններից, գաղափարների ոլորտից։ Բայց Ինդիանան աննկուն ու հպարտ էր և չէր ենթարկվի, չնայած միշտ անխոս հնազանդվում էր, բայց դա ստրկուհու լռություն և ենթարկվածություն էր, ատելության պատճառով էր հնազանդ դարձել և դժբախտության պատճառով՝ պատվարժան։ Տեսնելով, որ իր ցանկությունները չեն իրագործվում, կամքն անտեսվում է, հետևաբար, արդյունքն այն չէ, ինչ կուզեր տեսնել, պարոն Դելմարն սկսում էր կատաղել, բայց երբ Ինդիանան, թեկուզ մեկ բառով, շատ հանգիստ ու սառը տոնով ապացուցում էր, որ իր արարքը ճիշտ ու ճիշտ համապատասխանում է նրա հրամանին, գնդապետն իսկույն ինքն իր դեմ էր զայրանում։ Ճշգիմ ինքնասիրությամբ, կոպիտ զգացմունքներով մարդու համար, որպիսին էր պարոն Դելմարը, այս հանգամանքը անտանելի տանջանք էր պատճառում և մահու չափ ամոթալի դառնում։

Այսպիսի պահերին նա կսպաներ իր կողակցին, եթե ապրեր Զմյուռնիայում կամ Կահիրեում։ Այնինչ սրտի խորքում սիրում էր այդ թույլ էակին, որ կախում ուներ իրենից և իր

սխալների գաղտնիքը ջերմեռանդ զգուշավորությամբ թաքցնում էր։ Սիրում էր նրան թե խղճում, չեմ կարող ասել։ Բայց ինքը կուզեներ սիրված լինել, քանի որ հպարտանում էր Ինդիանայի կրթությամբ և իր նկատմամբ ունեցած առավելությամբ։ Գնդապետը կրարձրանար իր իսկ աչքին, եթե կինը բարեհաճեր զիջել, հրաժարվեր իր իսկ մտքերից և համոզմունքներից։ Երբ առավոտյան Ինդիանայի սենյակն էր մտնում կռվելու միտումով և նրան քնած էր տեսնում, չէր համարձակվում արթնացնել։ Լուռ դիտում էր։ Նրան սարսափեցնում էր կնոջ կազմվածքի նրբությունը, այտերի գալկությունը, մելամաղձոտ, հանգիստ տեսքը և համակերպված դժբախտությունը, որ արտահայտում էր այդ անշարժ ու անխոս դեմքը։ Նրա դիմագծերի մեջ գտնում էր հազար ու մի հանդիմանություն, խղճի խայթ, զայրույթ և վախ։ Ամոթից կարմրում էր, զգալով, որ այդքան թույլ մի էակ իր ճակատագրում մեծ դեր ուներ։ Ինքը, որ երկաթե մարդ էր, սովոր էր հրամայել ուրիշներին, սովոր էր տեսնել, որ բերանից դուրս թռած մեկ բառի հետ հեծելավաշտերը, կատաղի ձիերը, ռազմիկները միանգամից մարտի նետվեն։ Եվ ահա այս կինը, որ համարյա երեխա էր, որքա՜ն հոգսեր էր պատճառում իրեն։ Ստիպում էր ինքն իրեն հաշիվ տալ գործած արարքների համար, իր ցանկությունների շուրջը մտորել, շատ բան փոխել, շատ բաներից հրաժարվել. և այս ամենի դիմաց ոչ մի անգամ չէր բարեհաճել ասել ամուսնուն. «Դուք իրավացի չեք, խնդրում եմ, այլ կերպ վարվեք»։ Երբեք, երբեք իրենից որևէ բան չէր խնդրել, երբեք չէր հասել այն մակարդակին, որ ամուսնուն հավասարը հավասարի պես ընդուներ և զգար իրեն որպես նրա կյանքի ընկեր։ Եթե գնդապետն ուզեր, մի ձեռքով կհպվեր այդ փխրուն կնոջը, որը գուցե իր ներկայությամբ երազում էր ուրիշի մասին և նույնիսկ քնի մեջ անհնազանդ էր։ Այդ բոպեներին ուզում էր խեղդել նրան, մազերից բռնած՝ ստրերի տակ գցել, որ ստիպեր նրան մեղայի գալ։ Բայց կինն այնքան նուրբ էր, քնքուշ և գունատ, որ սկսում էր խղճալ նրան, ինչպես երեխան է խղճում ճնճղուկին, որին ուզում է խեղդել։ Եվ այդ երկաթե մարդը հեկեկում, լաց էր լինում կնոջ նման, հեռանում էր, որպեսզի հնարավորություն չտա նրան ուրախանալ՝ իր աչքերի մեջ արցունք տեսնելով։

Ճշմարիտն ասած, չգիտեմ ով էր նրանցից ավելի դժբախտ. կի՞նը, թե՞ ամուսինը։ Կնոջ դաժանությունը գալիս էր բարությունից, ինչպես ամուսնու բարությունը՝ թուլությունից։ Ինդիանան բավական համբերատար էր, այնինչ, գնդապետը համբերություն չուներ։ Կնոջ թերությունները արժանիքների հետևանքով էին առաջացել, իսկ ամուսնու արժանիքները՝ թերության։

Խիստ անհամապատասխան այս զույգի շուրջը հավաքվում էր բարեկամների սովոր մի խումբ, որ չանում էր մտերմացնել նրանց։ Ոմանք դա անում էին անգործությունից, մյուսները սիրում էին քթները խցկել ուրիշների գործերի մեջ, երրորդ խումբը սխալ էր ընկալում բարեկամի պարտականությունը։ Ոմանք կնոջ կողմն էին բռնում, մյուսները՝ ամուսնու։ Այս մարդիկ տեր և տիկին Դելմարների պատճառով վիճում էին, մինչդեռ ամուսինները երբեք չէին կռվում, քանի որ Ինդիանայի մշտական հնազանդությունը, ինչ էլ պատահեր, գնդապետին թույլ չէր տալիս վիճաբանության հասնել։ Հետո գալիս էին այնպիսի մարդիկ, որ, ոչինչ չհասկանալով հանդերձ, ուզում էին օգտակար լինել։ Սրանք խորհուրդ էին տալիս տիկին Դելմարին հնազանդ լինել, չնկատելով, որ այդ հատկությունը նրա մոտ նույնիսկ չափազանցված է։ Մյուսներն ամուսնուն խորհուրդ էին տալիս անզիջում լինել և իր հեղինակությունը ոտքի տակ չդցել։ Սրանք կարճամիտ, ինքնասիրություն չունեցող մարդիկ էին, մշտապես վախի մեջ, թե իրենց շահերին կարող են դիպչել։ Այսպիսիները միշտ սատար են կանգնում իրար, նրանց հնարավոր է ամենուրեք հանդիպել՝ անընդհատ ուրիշների ոտքի տակ քարշ գալիս և աչքի ընկնելու համար՝ անընդհատ աղմկելիս։

Նույնիսկ այստեղ՝ Փարիզի դարպասների հետևում գավառը եկավ խառնվելու խեղճ ամուսինների գործին։ Ֆոնտենբլոյի և Մելունի հարուստ ընտանիքներից շատերը ձմռանը տեղափոխվեցին մայրաքաղաք և ներմուծեցին իրենց գավառական սովորությունները։ Այս սիրալիր ծանոթներն ամեն ինչ արեցին, որ վերջնականապես խափանեն Դելմար զույգի հարաբերությունները։ Վերջիններիս դժբախտությունն այդ պատճառով գնալով ծավալվեց, և ամենևին չնվազեց երկկողմանի անզիջողությունը։

Ռալֆը խելամտորեն չխառնվեց նրանց ընտանեկան վիճերին։ Տիկին Դելմարն սկզբում կասկածում էր, որ նա ամուսնուն կհրահրի իր դեմ, համենայն դեպս՝ կփորձի զրկել Ռեյմոնին իրենց տուն հաճախելուց, բայց շուտով համոզվեց, որ անտեղի մեղադրանք էր բարդել նրա վրա։ Գնդապետի կատարյալ հանգստությունը և վերաբերմունքը պարոն դը Ռամիերի հանդեպ զարմիկի անժխտելի լռության ապացույցն էր։ Այդ ժամանակ Ինդիանան ցանկացավ շնորհակալություն հայտնել նրան, բայց Ռալֆն զգուշորեն խուսափեց այդ նյութին վերաբերող յուրաքանչյուր բացատրությունից։ Երբ Ինդիանան առանձին էր մնում Ռալֆի հետ, վերջինս կանխում էր խոսք բացելու նրա փորձերը և ձևացնում էր, թե չի հասկանում։ Սա այնքան նուրբ հարց էր, որ տիկին Դելմարը չկարողացավ որոշում կայացնել Ռալֆին ստիպելու, որ խոսեն այդ թեմայի շուրջը, փորձեց միայն իր սիրալիր վերաբերմունքով, նուրբ ուշադրությամբ զգացնել տալ նրան իր երախտագիտությունը։ Բայց Ռալֆը ձևացրեց, թե ոչինչ չի նկատում, և նրա զսպող մեծահոգությունը խոցեց Ինդիանայի ինքնասիրությունը։ Վախենալով, որ այս քայլով հանցավոր կնոջ դեր է կատարում, խստարարո վկայից իբր մեծահոգություն հայցելով, Ինդիանան նորից սառը և զուսպ դարձավ խեղճ սրբի Ռալֆի նկատմամբ։ Ինդիանային թվաց, թե նրա վարմունքը, ավյալ դեպքում, նսասիրության վառ վկայություն է, չնայած Ռալֆը սիրում էր իրեն, բայց այլևս չէր հարգում, իր ներկայությունը բավարարում էր նրան, ինչպես նաև նրա կողմից ընդունված իր սովորությունները և այն խնամքը, որ ասանց զլանալու տիկին Դելմարը շռայլում էր նրա համար։ Եվ ի վերջո եկավ այն եզրակացության, որ Ռալֆին ամենևին չէր հուզում այն միտքը՝ ինքը մեղավո՞ր էր, թե ոչ, կամ, թեկուզ, խիզճը մաքո՞ւր է ամուսնու հանդեպ։

«Ահա թե որն է կանանց նկատմամբ նրա արհամարհանքը։ Նրա աչքում կանայք ընտանի կենդանիներ են, որոնք պիտանի են միայն կարգ ու կանոն սահմանելու տան մեջ, ճաշ պատրաստելու, թեյ մատուցելու, նա պատիվ չի համարում նրանց հետ հարցեր պարզաբանել։ Նրանց սխալ արարքները նրան չեն հուզում, միայն թե անձամբ իրեն չվերաբերեն և չխանգարեն իր առօրյա կյանքի սովորությունները։

Ռալֆը գործ չունի իմ հոգեկան ապրումների հետ, նրան միայն իմ ձեռքերն են հարկավոր, որպեսզի քաղցր թխվածքներ պատրաստեն նրա համար, տավիղի լարերը հնչեցնեն։ Նրա ինչի՞ն է պետք, որ ուրիշին եմ սիրում, որ գաղտնի թախծում եմ, որ մահացու կերպով կքում եմ լծի տակ։ Ես նրա աղախինն եմ, նրան ուրիշ ոչինչ հարկավոր չէ»։

Գլուխ XX

Ինդիանան այլևս չէր հանդիմանում Ռեյմոնին. վերջինս այնքան վատ էր պաշտպանվում, որ Ինդիանան վախենում էր վերջնականապես համոզվել նրա մեղավորության մեջ։ Դավաճանությունից ավելի նրան հուզում էր լքված լինելը։ Այլևս չէր կարող հրաժարվել նրա հանդեպ ունեցած հավատից, ապագայի նկատմամբ Ռեյմոնի խոստումնալից հույսից։ Պարոն Դելմարի և Ռալֆի կողքին անցնող կյանքը դարձել էր նողկալի, և եթե չհուսար, որ շուտով ազատվելու է այդ երկու ողամարդկանց իշխանությունից, նույնպես ինքնասպանություն կգործեր։ Հաճախ էր մտածում այդ մասին և ինքն իրեն ասում էր. եթե Ռեյմոնը իր հետ վարվեր այնպես, ինչպես Նունի հետ, անտանելի ապագայից ազատվելու համար իրեն ոչինչ չէր մնա անելու, եթե ոչ՝ Նունին միանալ։ Այս սև մտքերն անընդհատ հետապնդում էին նրան և ինչ-որ չափով հանգստացնում։

Մեկնումի նշված ժամկետը մոտենում էր։ Գնդապետը կնոջ կողմից որևէ դիմադրություն չէր նկատում։ Ամբողջ օրը կարդի էր գցում գործերը, օրը մեկ պարտքերն էր մարում։ Տիկին Դելմարը, իր որոշման մեջ վստահ, հանգիստ նայում էր այս նախապատրաստական աշխատանքներին։ Որովհետև ինքն էլ իր հերթին էր պատրաստվում պայքարել իր առջև ծառացած դժվարությունների դեմ։ Նախ և առաջ փորձեց հորաքրոջը՝ տիկին կը Քարվախալին ապավինել և խոստովանեց նրան այդ ճանապարհորդության հետ կապված տհաճ զգացողության մասին։ Իսկ պառավ մարքիզուհին, հուսալով, որ եղբոր աղջկա գեղեցկությունը հրապույրի խայծ կարող է

դառնալ իր սալոնի մշտական այցելուների համար, հայտարարեց, որ գնդապետի պարտքը կնոջը Ֆրանսիայում թողնելն է, բարբարոսություն համարելով ենթարկել նրան ծանր տանջանքների, ծովային հոգնեցուցիչ ճամփորդությանը, վտանգել նրա կյանքը, երբ վերջերս էր նա վերականգնել առողջությունը։ Իսկ Ինդիանայի պարտքը պառավ հորաքրոջ մոտ մնալն էր, նրան խնամելը։ Սկզբում պարոն Դելմարն այդ ակնարկներն ընդունեց որպես զառամյալ կնոջ քմահաճույք, բայց հետո ստիպված եղավ ավելի մեծ ուշադրություն նվիրել նրա ասածներին, երբ տիկին դը Քարվախալը պարզորեն հասկացրեց, որ միայն այս պայմանի իրականացման դեպքում Ինդիանան կարող է դառնալ իր ժառանգորդուհին։ Չնայած Դելմարը փողասեր էր, այն մարդու նման, որ ամբողջ կյանքի ընթացքում անընդհատ դիզում է, այնուամենայնիվ, հպարտություն էլ ուներ և վճռականապես հայտարարեց, որ կինն ամենուրեք, ամեն գնով պարտավոր է հետևել իրեն։ Մարքիզուհին խորապես համոզված էր, որ յուրաքանչյուր գիտակից մարդու համար դրամը բացարձակ իշխանություն էր, այդ իսկ պատճառով պարոն Դելմարի պատասխանը վերջնական չհամարեց։ Բայց շարունակեց քաջալերել եղբոր աղջկա դիմադրությունը, խոստանալով հասարակությունից նրա վարքագիծը պաշտպանելու պատասխանատվությունն իր վրա վերցնել։ Միայն բանաստեղծության և փառամոլության մոլուցքով տարված այսպիսի անընբանկատ ուղեղով կինը կարող էր փակել բոլորի աչքերն իրական պատճառների դեմ՝ Ինդիանայի մեկնումից հրաժարումը արդարացնելու համար։ Պարոն դը Ռամիերի հանդեպ Ինդիանայի տածած զգացմունքը սոսկ ամուսնու համար էր գաղտնիք, բայց քանի որ տիկին Դելմարը ոչ մի առիթ չէր տվել այս թեմայի վերաբերյալ աղմուկ բարձրացնելու, մարդիկ այդ գաղտնիքը շշուկով էին իրար փոխանցում։ Իսկ տիկին դը Քարվախալի ներկայությամբ շատ-շատերն էին խոսել այդ մասին։ Խելագար պառավը չափազանց շոյված էր. նրա ուղածն այն էր, որ եղբոր աղջիկը հասարակության «մոդայիկ» անդամը դառնա, իսկ Ռեյմոնի սիրահետումը շատ լավ նախասկիզբ էր։ Այնինչ տիկին դը Քարվախալն իր բնավորությամբ ամենևին չէր համապատասխանում գահակալության շրջանի մոդայիկ կանանց։ Ռեստավրա-

ցիան այդ կարգի մարդկանցից պահանջում էր առաքինություն, և քանի որ արքունիքը պահանջում էր անդրդվելի «վարք», մարքիզուհին այդ պատճառով ամենից շատ խուսափում էր խայտառակ աղմուկից, որ կարող է սնանկացնել և կորստյան մատնել մարդկանց։ Տիկին Դյուբարիի օրոք իր սկզբունքների մեջ նա ավելի քիչ օրինապահ էր, իսկ թագաժառանգուհու իշխանության ժամանակ դարձավ խիստ բծախնդիր անձնավորություն։ Բայց այս ամենն արտաքուստ էր այդպես։ Նա իր վրդովմունքն ու արհամարհանքը պահում էր ակնառու սխալներ նկատելիս և խայտառակ որևէ արարք դատապարտելու համար միշտ սպասում էր, թե այն ինչով կավարտվի։ Ամուսնական անհավատարմությունը, քանի դեռ գաղտնիք էր, պաշտպանություն էր գտնում նրա մոտ։ Իսպանուհին էր զարթնում նրա մեջ, երբ խոսքը վերաբերում էր փակ փեղկերի ետևում տեղի ունեցող սիրային արկածներին, և մեղավոր էր նա, ով չէր կարողանում թաքնվել հետաքրքրասերների ամբոխից։ Իսկ Ինդիանան՝ սիրատենչ ու անաղարտ, սիրահարված և զուսպ այդ կինը, մեծ հետաքրքրություն էր ներկայացնում տիկին դը Քարվախալի համար։ Վերջինս մտածում էր, որ արժեր զբաղվել նրանով։ Այսպիսի կինը ցանկացած դեպքում կարող էր այդ կեղծ հասարակության յուրաքանչյուր ազդեցիկ մարդու հմայել և դիմակալել ամենափափկանկատ հանձնարարությունների հետ առնչված վտանգներին։ Մարքիզուհին հույս ուներ օգուտ քաղել նրա անարատ հոգուց և արտաքին փայլից։ Եվ՝ ղե Ինդիանա, բարեբախտաբար ճակատագիրը՝ խափանելով հորաքրոջ բոլոր սպասելիքները, նրան գցեց տառապանքի ուղին, և այսպիսով նա խուսափեց տիկին դը Քարվախալի սարսափելի պաշտպանությունից։

Ռեյմոնին ամենևին չէր հուզում այն միտքը, թե ինչպես էր այսուհետև դասավորվելու Ինդիանայի կյանքը։ Սիրային այդ պատմությունը վերին աստիճանի զզվեցրել ու ձանձրացրել էր նրան։ Իսկ եթե մարդ իր սիրեցյալի ներկայությամբ ձանձրանում է, նշանակում է՝ նա կորցրել է իր հետաքրքրությունն ու նշանակությունը։ Բարեբախտաբար Ինդիանան իր պատրանքի օրհասի մեջ դեռ ոչինչ չէր նկատում։

Մի օր, վաղ առավոտյան պարահանդեսից տուն վերադառնալով, Ռեյմոնը Ինդիանային գտավ իր ննջասենյակում։ Նա եկել էր կենդիշերին և արդեն հինգ ժամ է, ինչ սպասում էր Ռեյմոնին։ Տարվա ամենացուրտ օրերն էին. Ինդիանան նստել էր հանգած բուխարիկի առջև, գլուխը հենել ձեռքերին, տանջվում էր ցրտից ու անհանդիստ վիճակից այնպիսի մի մոայլ համբերությամբ զինված, որ կյանքն էր ուսուցանել։ Նա գլուխը բարձրացրեց, երբ Ռեյմոնը հայտնվեց։ Վերջինս, զարմանքից քարացած, Ինդիանայի գունատ դեմքին արհամարհանքի կամ հանդիմանության հետքեր չտեսավ։

— Ձեզ էի սպասում,— քնքշությամբ ասաց տիկին Դելմարը,— երեք օր է չեք երևացել, իսկ այդ ընթացքում այնպիսի իրադարձություններ են տեղի ունեցել, որոնց մասին պետք է անհապաղ տեղեկանայիք. երեկ գիշեր դուրս եկա տնից, որպեսզի հայտնեմ ձեզ։

— Ի՜նչ անհավատալի անզգուշություն,— ասաց Ռեյմոնը՝ զգուշությամբ իր ետևից փակելով դուռը,— ծառաներս գիտեն ձեր մասին, նրանք հայտնեցին, որ այստեղ եք։

— Ձեմ էլ փորձել գաղտնի պահել իմ անձը,— սառնորեն պատասխանեց Ինդիանան,— իսկ ինչ վերաբերում է ձեր օգտագործած բառին, կարծում եմ ճիշտ չընտրեցիք։

— Ասացի՝ անզգուշություն, ավելի ճիշտ կլիներ խելագարություն ասել։

— Ես կասեի՝ «քաջություն»։ Բայց նշանակություն չունի. լսեք ինձ, պարոն Դելմարն ուզում է երեք օրից մեկնել Բորդո, այնտեղից՝ գաղութ։ Իսկ մենք պայմանավորվել էինք, որ եթե բռնություն բանեցնի՝ պաշտպանելու եք ինձ։ Կասկածից վեր է, որ այդպես էլ կլինի, որովհետև երեկ երեկոյան, երբ հայտնեցի իմ որոշման մասին, բանտարկեց ինձ իմ սենյակում։ Պատուհանից դուրս եկա, տեսեք, ձեռքերս արյունոտված են։ Հավանաբար, հիմա փնտրում են ինձ, բայց Ֆելիքը Բելոիվում է. նա չի կարող հայտնել իմ տեղը։ Որոշեցի թաքնվել, մինչև պարոն Դելմարը հաշտվի ինձ լքելու մտքի հետ։ Մտածե՞լ եք ինձ որևէ տեղ պատսպարելու, իմ փախուստը կազմակերպելու մասին։ Վաղուց ձեզ չեմ տեսել և չգիտեմ՝ ինչ մտադրություններ ունեք ներկայումս։ Մի օր, երբ կասկածի էի հայտնում ձեր վճռի վերաբերյալ, պատաս-

խանեցիք, որ սերն առանց վստահության չեք պատկերացնում, նշեցիք այն մասին, որ երբեք չեք կասկածել ինձ, համոզեցիք, որ անարդարացի եմ ձեր նկատմամբ, ամեն կերպ ջանացիք ապացուցել, որ սխալվում եմ, և այդ ժամանակ, վախենալով անարժան լինել ձեզ, թոթափեցի վտանգավոր կասկածները և չփորձեցի ներկայացնել զուտ կանացի հազար ու մի պահանջ, որ այնքան նսեմացնում է սերը։ Համակերպվեցի այն մտքի հետ, որ ձեր ուշադրությունից դուրս գցեցիք ինձ, հնարավորություն չտեղծեցիք առանձին հանդիպելու, ամեն անգամ խուսափեցիք որևէ բացատրություն տալ ինձ։ Այս ամենով հանդերձ, հավատացի ձեզ։ Երկինքն է վկա, երբ անհանգստությունն ու վախը կրծում էին սիրտս, վանում էի որպես հանցավոր մտքեր։ Այսօր եկել եմ հավատքիս տուրքն ստանալու, ասացեք, ընդունո՞ւմ եք իմ զոհաբերությունը։

Հասել էր վճռական պահը։ Ռեյմոնն զգաց, որ այլևս կեղծել չէր կարող։ Տեսնելով, որ իր իսկ լարած թակարդն է ընկել, հուսահատված, կատաղած, խելքը թոցրած, սկսեց կոպտել ու հայհոյել։

— Գժվել եք, ինչ է,— բացականչեց նա՝ ընկնելով բազկաթոռի մեջ,— այդ ի՞նչ սիրո մասին եք երազում։ Ասացեք, խնդրեմ, սպասուհիների համար գրված ո՞ր վեպերում եք ուսումնասիրել հասարակությունը։

Հետո միանգամից ընդհատեց խոսքը, նկատելով, որ շատ կոպիտ է դարձել ու սկսեց մտքում փնտրել նույն բովանդակությունն արտահայտող այլ բառեր, որպեսզի ազատվի նրանից առանց ավելորդությունների։

Բայց Ինդիանան հանգիստ էր, այն մարդու նման, որ պատրաստ էր արդեն ամեն ինչ լսել։

— Շարունակեք,— ասաց նա՝ թևերը ծալելով կրծքին, և զգաց, թե ինչպես են սրտի զարկերն աստիճանաբար դանդաղում,— լսում եմ ձեզ, հավանաբար դեռ շատ բան ունեք ասելու։

«Մեկ անգամ ես զիմենք երեակայությանը, սիրո մի տեսարան ես սարքենք», մտածեց Ռեյմոնը և աշխույժ թռավ տեղից։

— Երբեք,— բացականչեց նա,— երբեք այդպիսի զոհաբերություն ընդունել չեմ կարող։ Երբ ասացի, որ կընդունեմ, գլուխ գովեցի, Ինդիանա, կամ, ավելի ճիշտ, ինքս ինձ պախարակեցի, որովհետև միայն ստոր արարածը կարող է անպատվել սիրած կնոջը։ Կյանքը վատ ճանաչելով, դու չհասկացար, թե որքան վտանգավոր որոշում ես կայացրել։ Իսկ ես, վախենալով քեզ կորցնել, չուզեցի մտածել այդ մասին...

— Դրա փոխարեն կարողանում եք հիմա արագ մտածել,— ասաց Ինդիանան՝ քաշելով ձեռքը, որ Ռեյմոնն ուզում էր բռնել։

— Ինդիանա,— շարունակեց նա,— մի՞թե չես տեսնում, որ հերոսությամբ ինձ մղում ես անպատվաբեր արարքի և մեղադրում ես ինձ, որ ուզում եմ արժանի մնալ քո սիրուն։ Կշարունակեի՞ր ինձ սիրել, ասա, միամիտ և անփորձ կին, եթե հանուն իմ հաճույքի զոհաբերեի քո կյանքը և հանուն իմ շահի՝ քո հեղինակությունը։

— Խիստ հակասական մտքեր եք արտահայտում,— ասաց Ինդիանան,— եթե ձեր կողքին մնալով՝ երջանկություն եմ պարգևում ձեզ, ինչո՞ւ եք վախենում հասարակական կարծիքից։ Այն ավելի թանկ է ձեզ համար, քան ե՞ս։

— Ախ, Ինդիանա, ինձ համար չեմ պահպանում այն...

— Ուրեմն ի՞նձ համար է։ Կանխազգում էի ձեր երկմտանքը, և որպեսզի հանեմ ամեն տեսակի պատասխանատվություն ձեր վրայից, բոլոր նախաձեռնումները վերցրի իմ ձեռքը. չսպասեցի ձեր գալուն, որ պոկեք ինձ ամուսնու ճանկերից, նույնիսկ չխորհրդակցեցի ձեզ հետ, թե ինչպես ընդմիշտ հեռանամ տնից։ Այժմ վճռական քայլը կատարված է, և ձեր խիղճը չի կարող ձեզ տանջել։ Ռեյմոն, ես անպատվված եմ։ Ձեր բացակայությամբ հաշվում էի ժամացույցի քայլերը, որոնք անցնելով՝ ավելացնում էին իմ անարդանքը, և, չնայած այն բանին, որ այժմ իմ ճակատը նույնքան մաքուր է, որքան երեկ, հասարակության աչքին արդեն կորած կին եմ։ Դեռ երեկ կանանց սրտում ինձ համար պահված գութ կգտնեի, այսօր միայն արհամարհանքի կարժանանամ։ Նախքան գործելս, այս ամենը կշռադատել եմ։

«Կանացի զզվելի կանխատեսում»,— մտածեց Ռեյմոնը։

Եվ այստեղ սկսեց համոզել Ինդիանային դատական այն կատարածուի նման, որ եկել է կահույքը վերցրելու։

— Չափազանցնում եք ձեր արարքի նշանակությունը,— ասաց նրան քնքուշ տոնով ու հայրաբար,— ոչ, բարեկամս, սխալը դեռ կարելի է շտկել։ Կպարտադրեմ իմ ծառաներին լռել...

— Իսկ իմ ծառաներին նույնպե՞ս կպարտադրեք լռել, որոնք այս պահին, անկասկած, հուզված փնտրում են ինձ։ Իսկ ամուսինս, ի՞նչ եք կարծում, խաղաղորեն կպահի՞ գաղտնիքը, ի՞նչ եք կարծում, կուզենա՞ ետ ընդունել ինձ, այն բանից հետո, որ մի գիշեր ձեր հարկի տակ եմ անցկացրել։ Ինչ է, գուցե խորհուրդ կտայիք վերադառնալ տո՞ւն, ընկնել ոտքերն ու աղաչել նրան, որ, իբրև շնորհ, նորից շղթա հագցնի վզիս, որի տակ փշրվել է կյանքս, թոշնել է երիտասարդությունս։ Առանց ափսոսալու կհամաձայնեք, միգուցե, որ ձեր անչափ շատ սիրած կինը մտնի մեկ ուրիշի տիրապետության տակ, երբ դո՛ւք եք նրա ճակատագրի տերը, երբ կարող եք ամբողջ կյանքում պահել նրան ձեր դրկի մեջ, երբ նա այստեղ է, ձեր կողքին, ձեր կարողության սահմաններում և առաջարկում է ընդմիշտ մնալ ձեզ մոտ։ Դուք ինչ-որ չափով նողկանք չե՞ք զգա կամ չե՞ք սարսափի, եթե քիչ հետո այդ կնոջը հանձնեք անդրդվելի տիրոջը, որը գուցե միայն նրա համար է սպասում, որ սպանի նրան։

Կայծակի արագությամբ միտք փայլատակեց Ռեյմոնի ուղեղում։ Ժամանակն էր այդ կնոջ հպարտությունը կոտրել. այսպիսի պահ այլևս նրան չէր ընձեռվելու։ Նա եկել էր ամեն տեսակի զոհաբերություն կատարելու. ինքը չէր ուզում, իրեն զոհաբերություն պետք չէր, իսկ այդ կինը կանգնել էր դիմացը հպարտ ինքնավստահությամբ, չենթարկվելով ոչ մի վտանգի, նախապես ամեն ինչ կշռադատած։ Ռեյմոնը ելք էր որոնում ազատվելու այդ չպահանջված ինքնազոհությունից կամ ինչ-որ ձևով օգտվելու դրանից։ Իրեն Դելմարի մեծ բարեկամն էր համարում, շատ էր գնահատում նրա վստահությունը, ուստի չէր կարող տիրանալ կնոջը։ Նա որոշեց միայն զգվանքներով բավարարվել։

— Իրավացի ես, Ինդիանա,— կրակոտ հայացքով բացականչեց նա,— ստիպում ես ինձ առաջվա մարդը դառնալ, երբեք ես արթնացնում իմ մեջ, որոնք սառել էին սոսկ այն պատճառով, որ մտածում էի գալիք վտանգների մասին և

վախենում էի խայտառակել քեզ։ Ներիր ավելորդ զգուշությանս համար և հասկացիր, թե որքան քնքշություն և ճշմարիտ սեր է ամփոփված իմ մեջ։ Քաղցր ձայնիցդ եռում է արյունս, ջերմ բառերիցդ կրակ է լցվում երակներիս մեջ, ներիր, ներիր ինձ, որ այս սուրբ պահին, երբ իմն ես, այլ բաների մասին եմ մտածել, թույլ տուր մոռանամ բոլոր վտանգները, որ ճնշում են մեզ, ծնկալոք շնորհակալություն հայտնեմ ինձ պարգևելիք երջանկության համար, թույլ տուր ամբողջապես ըմբոշխնեմ այս քաղցր պահը, որ անցկացնում եմ ոտքերիդ առջև և կյանքիս գնով նույնիսկ չեմ կարող հատուցել։ Թող փոքրիկ գալ ու խլել քեզ իմ ոգևորությունից այդ հիմար ամուսինը, որ փականքի տակ է պահում քեզ և կոպիտ արարքներից հետո հանգիստ քնում է, թող համարձակվի գալ ու պոկել քեզ իմ գրկից, սիրելի՛ս, կյա՛նքս։ Այսուհետև այլևս նրան չես պատկանում, իմ հոմանուհի, իմ կողակից, իմ սիրուհի...

Այսպես խոսելով, Ռեյմոնը կամաց-կամաց ոգևորվեց իր իսկ խոսքերից, ինչպես ստացվում էր սովորաբար նրա մոտ, երբ փորձում էր որևէ մեկին համոզել իր զգացմունքի մեջ։ Դրությունը խիստ բարենպաստ էր, ռոմանտիկական, համարձակ քայլերով հղի։ Ռեյմոնը, որպես ասպետական տոհմի իսկական ժառանգորդ, սիրում էր վտանգի հետ խաղալ։ Դրրսից լսվող յուրաքանչյուր աղմուկի հետ թվում էր՝ ամուսինն է գալիս կնոջը պահանջելու և ծարավի է ախոյանի արյանը։ Նման հանգամանքներում սիրային տարփանք փնտրել գրգռիչ հույզերի մեջ՝ Ռեյմոնի հոգուն շատ մոտ էր։ Քառորդ ժամ ինքնամոռաց գգվանքի մեջ սիրեց տիկին Դելմարին, շռայլեց զգլխիչ պերճախոսության բոլոր հմայքները։ Նրա խոսքն իրոք համոզիչ էր, խաղի մեջ անկեղծ։ Այս տաքարյուն մարդու համար սերը արվեստ էր, որ զարգարում է կյանքը։ Սեր խաղաց և հավատաց իր խաղին։ Ամո՛թ այդ հիմար կնոջը։ Հաճույքով հանձնվեց նրա կեղծիքներին, երջանիկ զգաց իրեն, հույսով և ուրախությամբ լցված՝ ճառագայթեց, ամեն ինչ ներեց, քիչ մնաց ամեն ինչ զիջեր։

Բայց Ռեյմոնն իր ձեռքով ամեն ինչ փչացրեց. շատ շտապեց։ Եթե ժամանակ ունենար գոնե քանչորս ժամ պահել Ինդիանային իր մոտ այն վիճակում, ինչպես եկել էր՝ վտան-

գելով անձը, գուցե տիրանար նրան։ Սակայն օրը բացվում էր. լուսապայծառ, արևաշող։ Լույսի խուրձեր էին լցվում տան մեջ, և դրսի աղմուկն ամեն վայրկյան աճում էր։ Ռեյմոնը մի հայացք նետեց ժամացույցին. ժամը յոթն էր։

«Ժամանակն է վերջացնել,— մտածեց նա,— մեկ պահից մյուսը Դելմարը կարող է գալ, մինչ այդ պետք է համոզեմ նրան, որ իր կամքով վերադառնա տունս։

Նա դարձավ ավելի համառ, շտապող և պակաս քնքուշ, շրթների դալկությունը մատնում էր անհանգստությունն ու անհամբերությունը, դառնում էր ավելի աննրբանկատ. համբույրները կոպիտ էին, և զայրույթ էր նկատվում նրա մոտ։ Ինդիանան վախեցավ։ Կարծես մի բարի հրեշտակ տարածեց թևերը այդ թրթռուն և շփոթված էակի վրա, նա արթնացավ և նորից ուժ հավաքեց պայքարելու այդ պաղ ու եսասիրական արատի դեմ։

— Թողեք ինձ, չեմ ուզում թուլության մեջ զիջել այն, ինչ ուզում էի հանձնել ձեզ սիրուց կամ երախտագիտությունից մղված։ Դուք կարիք չունեք իմ զգացմունքի ապացույցներն ունենալու. իմ ներկայությունն այստեղ բավական մեծ ապացույց է, իսկ ամբողջ ապագան մեր առջևում է։ Բայց թողեք իմ պատիվն անարատ մնա, որպեսզի կարողանամ պայքարել այն հզոր արգելքների դեմ, որոնք դեռևս բաժանում են մեզ իրարից, վճռականության և հանգստի կարիք եմ զգում։

— Այդ ի՞նչ եք ասում,— զայրացած ասաց Ռեյմոնը, որ չէր լսում նրան և նեղվում էր նրա դիմադրությունից։

Եվ այդ տանջալից ու տհաճ պահին, ամբողջովին կորցնելով գլուխը, Ռեյմոնը կոպտորեն հրեց նրան և սկսեց սենյակում քայլել՝ ծանրորեն շնչելով։ Գլուխն այրվում էր։ Ընդոստ վերցրեց ջրամանը և մեծ կումերով կուլ տվեց մի բաժակ ջուր, որ միանգամից հանգստացրեց նրա զառանցագին վիճակը, մարեց կիրքը։ Այդ ժամանակ նայեց նրան ծաղրական հայացքով և ասաց.

— Դե, տիկին, գնալու ժամանակն է։

Լույսի մի նշույլ հանկարծ եկավ լուսավորելու Ինդիանային և ողջ մերկությամբ ցույց տալու Ռեյմոնի հոգին։

— Իրավացի եք,— ասաց նա և ուղղվեց դեպի դուռը։

— Ցմոռանաք վերարկուն և մորթե վզնոցը,— ասաց Ռեյմոնը՝ կանգնեցնելով նրան։

— Իմարկե,— պատասխանեց Ինդիանան,— հետքերս կարող են հեղինակազրկել ձեզ։

— Կատարյալ երեխա եք,— ասաց Ռեյմոնը շողոքորթ տոնով, խնամքով պահելով վերարկուն, որ հագնի,— շատ լավ գիտեք, որ սիրում եմ ձեզ, բայց իսկապես հաճույք եք ստանում, երբ տանջում, խենթացնում եք ինձ։ Սպասեք, ես հիմա կաղաչեմ կհրավիրեմ։ Եթե կարողանայի, կուզեկցեի ձեզ մինչև տուն, բայց դա կկործանի ձեզ։

— Իսկ ի՞նչ եք կարծում, ես արդեն կործանված չե՞մ,— դառնորեն պատասխանեց Ինդիանան։

— Ոչ, սիրելիս,— վրա բերեց Ռեյմոնը, որի նպատակը մեկն էր. հնարավորին չափ շուտ աղատվել այս պատմությունից,— ձեր բացակայությունն առայժմ նկատելի չէ, այլապես մինչև հիմա եկած կլինեին այստեղ ձեր ետևից։ Ինձ ամենավերջում կկասկածեն, բնական է, որ կփնտրեն ձեր բոլոր ծանոթների մոտ։ Իսկ հետո կարող եք ձեր հորաքրոջը ապավինել. նույնիսկ դա միակ միջոցն է, որ խորհուրդ եմ տալիս իրագործել։ Նա ամեն ինչ կհարթի։ Կհավատան, որ նրա մոտ եք գիշերել...

Տիկին Դելմարը չէր լսում. ապշահար նայում էր խողոր ու հրակարմիր արևի գնդին, որ բարձրանում էր փայլփլող տանիքների հորիզոնի վրա։ Ռեյմոնը փորձեց պոկել նրան խորհրդածություններից։ Ինդիանան աչքերը դարձրեց նրա կողմը, բայց կարծես չճանաչեց։ Այտերը մահվան դալուկն էր պատել, իսկ չորացած շրթունքը կենսազուրկ էին դարձել։

Ռեյմոնը վախեցավ։ Հիշեց մյուսի ինքնասպանությունը և սարսափի մեջ, չիմանալով ինչ անել, ահաբեկված, որ կրկնահի հանցագործ կարող է դառնալ հենց իր աչքին, միաժամանակ զգալով, որ ուղեղը ամբողջովին դատարկվել է նրան նորից ու նորից խելքահան անելու համար, կամաց նստեցրեց բազկաթոռին, վրայից փակեց դուռը և բարձրացավ մոր հարկարամները։

Գլուխ XXI

Մայրն արդեն արթնացել էր, սովորություն ուներ առավոտ վաղ վեր կենալ. տարաբերության մեջ վարժվել էր գործնական կյանքի և մինչև հիմա, որքան էլ հարուստ էր, դեռ ապրում էր այդ սովորության ուժով։

Տեսնելով գունատ, հուսահատ Ռեյմոնին այդ վաղ ժամին, պարահանդեսային հագուստով, հասկացավ, որ որդին մաքառում է իր փոթորկալից կյանքի հաճախակի կրկնվող դժվարին մի նոր կացության հետ։ Նման հուզումնալից պարագաներում մայրը միշտ նեցուկ էր կանգնել նրան, օգնել, և այդ արարքների հետքերը խոր և ցավագին էին մխրճվել մայրական հոգում։ Նրա կյանքը թառամել ու մաշվել էր Ռեյմոնի կյանքի բարդավանման ու հաջողությունների հաշվին։ Այդ անսանձ և միաժամանակ սառը, խելամիտ ու կրքոտ որդու բնավորությունը արդյունք էր նրա հանդեպ տածած մայրական անսպառ սիրո, մեծահոգության ու քնքշության։ Ռեյմոնը շատ ավելի լավ մարդ կդառնար, եթե մայրն այդքան բարեհոգի չլիներ, բայց վերջինս վարժեցրել էր նրան օգտվել իր բոլոր զոհաբերություններից, որ համաձայն էր կատարել հանուն որդու։ Նրան սովորեցրել էր եռանդուն կերպով տենչալ ու հասնել այն ամենին, ինչ ինքը կցանկանար նրա համար։ Որովհետև մայրը կարծում էր, թե ինքն ստեղծված էր նրան պահպանելու ամեն տեսակի վտանգից ու զոհաբերելու նրա համար իր սեփական շահերը, և Ռեյմոնը վարժվել էր հավատալ, որ ամբողջ աշխարհը միայն իր համար գոյություն ունի, իր մի խոսքը կարող էր մորն ստիպել ամեն ինչ իր օգտին ծառայեցնել։ Տիկին դը Ռամիերի անսահման մեծահոգությունը միայն մի բանի էր հանդեպ. նա անհոգի, եսասեր անձնավորություն էր աճեցրել։

Խեղճ մայրը դուրս գցեց, նստեց անկողնու մեջ և անհանգստացած նայեց նրան, իսկ հայացքը կարծես ասում էր. «Ի՞նչ կարող եմ անել նրա համար, ո՞ւր գնամ»։

— Մայրիկ,— ասաց Ռեյմոնը՝ բռնելով մոր մեկնած չորացած ու թափանցիկ ձեռքը,— անսահման դժբախտ եմ, ձեր կարիքն եմ զգում։ Միայն դուք կարող եք աղատել ինձ տանջանքներից։ Սիրում եմ տիկին Դելմարին, դուք գիտեք...

— Գիտեի,— ասաց տիկին դը Ռամիերը մեղմ հանդիմանանքով։

— Մի փորձեք ժխտել, սիրելի մայրիկ,— ասաց Ռեյմոնը, որ ժամանակ չուներ կորցնելու,— դուք գիտեիք, և ձեր հրաշալի նրբանկատությունը թույլ չէր տալիս առաջինը խոսք բացել այդ մասին։ Ինչ որ է, այդ կինն ինձ հուսահատության դուռն է հասցրել, և ես կորցրել եմ գլուխս։

— Ամեն ինչ պատմիր,— ասաց տիկին դը Ռամիերը երիտասարդական աշխույժով, որ ներշնչում էր նրան մայրական սիրաը։

— Ոչինչ չեմ ուզում թաքցնել ձեզնից, առավել ևս՝ այս անգամ, ես մեղավոր չեմ։ Մի քանի ամիս է, որ ջանում եմ նրա ռոմանտիկ հոգին խաղաղեցնել, դարձի բերել նրան, իր պարտականությունները հիշեցնել։ Բայց իմ բոլոր ջանքերը միմիայն ծառայեցին ավելի գրգռելու այդ վտանգավոր ծարավը, արկածախնդրության այն պահանջը, որ ծլարձակում է նրա ծննդավայրի կանանց ուղեղում։ Հիմա, երբ խոսում եմ ձեզ հետ, նա այստեղ է, իմ սենյակում, ո՛չ իմ ցանկությամբ, և չգիտեմ ինչպես նրան ստիպեմ դուրս գալ այդտեղից։

— Դժբախտ աղջիկ,— ասաց տիկին դը Ռամիերը՝ արագ հագնվելով,— այդքան երիտասարդ, այդքան քնքուշ... Հենց հիմա կգնամ նրա մոտ, կխոսեմ հետը, դա է խնդրանքդ, այնպես չէ՞։

— Այո, այո,— անմիջապես պատասխանեց Ռեյմոնը, որին քնքշացրել էր մոր քնքշությունը,— գնացեք, խոսեք նրա հետ բանականության և բարության լեզվով։ Անկասկած կգնահատի ձեր բերանից դուրս եկած առաքինության խոսքերը, զուցե կենթարկվի ձեր քնքշություններին, թերևս տիրապետի իրեն այդ դժբախտ արարածը, որքա՞ն է տանջվում։

Ռեյմոնն ընկավ բազկաթոռի մեջ և սկսեց հեկեկալ, առավոտվա բազմազան հուզումները սասանել էին ջղերը։ Մայրը լաց եղավ նրա հետ և որոշեց իջնել ներքև որդուն հանգստացնող հեղուկ տալուց հետո միայն։

Սրբ սենյակ մտավ, Ինդիանան լաց չէր լինում։ Ճանաչելով Ռեյմոնի մորը, հանդարտ ու հարգալից շարժումով վեր կացավ տեղից։ Տիկին դը Ռամիերն ամենևին չէր սպասում այսպիսի ազնիվ ու հոգով ուժեղ արարք և վատ զգաց, որ

երիտասարդ կնոջ հանդեպ նման անշնորհքություն էր թույլ տվել, մտնելով որդու ննջասենյակը և տեսնելով նրան։

Սրտի խոր ու անկեղծ զգացմունքի ներքո ամեն ինչ մոռացավ և քնքշորեն մեկնեց թևերը։ Տիկին Դելմարը նեղվեց նրա գիրկը. հուսահատությունը դառը հեկեկոցներով փշրվեց, և երկու կանայք, իրար գիրկ ընկած, երկար ժամանակ արտասվեցին։

Բայց երբ տիկին դը Ռամիերը փորձեց խոսել, Ինդիանան ընդհատեց նրան՝ սրբելով արցունքները.

— Ոչինչ պետք չէ ասել, տիկին, չեք գտնի այնպիսի մի բան, որ ինձ ցավ չպատճառի։ Ձեր կարեկցանքն ու գուրգուրանքը վնհանձնության ապացույց են։ Սիրտս չափից ավելի թեթևացավ։ Հիմա պետք է հեռանամ։ Կարիք չկա համոզել, թե ինչ եմ անելու այսուհետև։

— Ես չեմ եկել ստիպելու ձեզ հեռանալ, եկել եմ մխիթարելու,— ասաց տիկին դը Ռամիերը։

— Չեմ կարող մխիթարվել,— պատասխանեց Ինդիանան՝ համբուրելով նրան,— սիրեք ինձ, դա մի փոքր կօգնի, բայց ոչինչ մի ասեք։ Մնաք բարով, տիկին, դուք հավատում եք աստծուն, աղոթեք ինձ համար։

— Մենակ չեք գնա,— բացականչեց տիկին դը Ռամիերը,— ես կտանեմ ձեր ամուսնու մոտ՝ ձեզ արդարացնելու, պաշտպանելու, սատար կանգնելու։

— Վնհանձն կին,— ասաց Ինդիանան՝ կրծքին սեղմելով նրան,— չեք կարող այդ անել։ Դո՛ւք միայն չգիտեք Ռեյմոնի գաղտնիքը, ամբողջ Փարիզը այս երեկո կխոսի, իսկ դուք այս պատմության մեջ կհեղինակագրկվեք։ Թույլ տվեք մենամենակ կրել խայտառակությունը, երկար չեմ տանջվի դրանից։

— Ի՞նչ եք ուզում ասել։ Մի՞թե հանցագործ կդառնաք՝ սպառնալով ձեր կյանքին։ Զավակս, դուք նույնպես հավատում եք աստծուն։

— Նույնպես, տիկին, և այդ պատճառով երեք օրից կմեկնեմ Բուրբոն կղզին։

— Եկ գրկեմ քեզ, սիրելի աղջիկս, եկ օրհնեմ։ Աստված կհատուցի արիությունդ։

— Հուսով եմ,— ասաց Ինդիանան՝ աչքերը երկինք բարձրացնելով։

Տիկին դը Ռամիերն ուզեց գոնե կառք հրավիրի՝ բայց Ինդիանան կտրականապես հրաժարվեց։ Ուզում էր մենակ և անաղմուկ վերադառնալ։ Ռեյմոնի մայրը ահաբեկվել էր՝ նրան այդքան թուլացած ու ընկճված տեսնելով, և այդ վիճակով նա ոտքով երկար ճանապարհ էր անցնելու։

— Ուժ ունեմ,— պատասխանեց նա,— Ռեյմոնի մի խոսքը բավական եղավ, որ այն գտնեմ իմ մեջ։

Փաթաթվեց վերարկուի մեջ, աչքերին իջեցրեց ժանյակավոր սև քողը և դուրս եկավ տան գաղտնի մուտքից. նրան ճանապարհեց տիկին դը Ռամիերը։ Փողոց դուրս գալուն պես Ինդիանան առաջին իսկ քայլից զգաց, որ դողացող ծնկները հրաժարվում են ծառայել։ Ամեն վայրկյան թվում էր, թե կատաղած ամուսնու կոպիտ ձեռքերը բռնում են իրեն, գետին տապալում և քարշ տալիս կեղտոտ առվի մեջ։ Դրսի աղմուկը, կողքից անցնող մարդկանց անտարբերությունը, մարմնի մեջ թափանցող առավոտյան ցուրտը սթափեցրին, հանգստացրին, ուժ ներարկեցին նրան, բայց դա ցավատանջ ուժ էր և դժբնդակ հանգստություն, որ հնարավոր է տեսնել ծովի հարթության վրա, իսկ հեռատես նավաստին ավելի է սարսափում դրանից, քան բարձրացած փոթորկից։ Ինստիտուտի մոտից կառամատույցով իջավ և հասավ Իրավագիտության գրասենյակի շենքի մոտ, բայց մոռացավ անցնել կամուրջը և շարունակեց գնալ գետի երկարությամբ՝ արտառոց մտքերի, անմիտ խոհերի մեջ մխրճված, անկապտակ քայլերն առաջ ուղղելով։

Ակամա կանգնեց ջրեղերքին. ոտքերի տակ դուրս էին նետվում ոտոցի կտորներ և չոր ու պաղ ճրթճրթոցով փշրվում գետափի քարերի վրա։ Կանաչավուն ջուրը անդիմադրելի ուժով ներգործում էր Ինդիանայի վրա։ Մարդ վարժվում է սարսափելի մտքերի հետ. բավական է մեկ անգամ ընդունել, և դրանք նույնիսկ հաճելի են դառնում։ Նունի ինքնասպանության օրինակը վաղուց էր հուսահատ օրերին հանդարտություն պարգևել Ինդիանային։ Ինքնասպանության գաղափարը նրա մոտ մի տեսակ գայթակղիչ հմայք էր ձեռք բերել և միայն մի միտք՝ հանցավոր լինելու միտքն էր կանխում նրա վերջնական մտադրությունն իրագործելուն։ Բայց այդ

պահին ոչ մի կատարյալ մտածում այլևս չէր իշխում նրա սպառված ուղեղի վրա։ Չէր էլ հիշում, որ աստված գոյություն ունի, որ Ռեյմոն գոյություն ունի, և քայլում էր անընդհատ՝ մոտենալով ափին մի տեսակ բնազդով ու հիպնոսացած, որ նրա դժբախտ կեցությունից ու տանջահար կյանքից էին բխում։

Երբ թրջված կոշիկների միջից ոտքերն զգացին ջրի սառնությունը, նա լուսնոտի նման հանկարծ զարթնեց, հայացքը պտտեցրեց չորս կողմը, հասկանալու համար, թե որտեղ է գտնվում. հետևում տեսավ Փարիզը և ոտքերի տակից փախչող Սենը, որն իր յուղոտ զանգվածի մեջ տանում էր սպիտակ տների արտացոլումը և կապտագորշագույն երկինքը։ Ջրի շարունակական շարժունությունը, գետնի անշարժությունը խառնվեցին նրա ուղեղում, և նրան թվաց, թե գետը նիրհում է, իսկ հողը՝ փախչում։ Գլխապտույտի մեջ Ինդիանան հենվեց ինչ-որ պատի և դյութված հակվեց գետին, որը անշարժ զանգվածի տեղ էր դրել... Հանկարծ նրա շուրջը թռչկոտող մի շուն իր հաչոցներով ցրեց նրա մտքերը և մի քանի վայրկյանով ուշացրեց կայացնել ճակատագրական որոշումը։ Այդ ժամանակ մի մարդ, որ վազում էր շան ձայնի ուղղությամբ, բռնեց Ինդիանայի մեջքից, հեռացրեց ափից և տեղավորեց նրան քիչ այն կողմ լքված նավաբեկորների վրա։ Ինդիանան նայեց նրան և չճանաչեց։ Այդ մարդը չոքեց նրա առջև, հանեց վերարկուն, փաթաթեց նրան, ձեռքերն առավ իր ձեռքերի մեջ, որ տաքացնի, և բարձրաձայն արտասանեց նրա անունը։ Բայց Ինդիանան այնքան էր թուլացել, որ շանք թափել էլ չէր կարող։ Քառասունութ ժամ մոռացել էր ուտելու մասին։

Երբ սառած մարմնի մեջ ջերմություն թափանցեց, տեսավ իր դիմաց ծնկի եկած Ռալֆին, որ բռնել էր ձեռքերը և ուշի ուշով հետևում էր, թե երբ է սթափվելու։

— Նունին տեսա՞ք,— հարցրեց Ռալֆին և հետո ավելացրեց՝ հասատատուն գաղափարների մեջ մոլորված,— ես տեսա նրան, այս ճանապարհով էր անցնում,— և ցույց էր տալիս գետը,— ուզեցի նրա ետևից գնալ, բայց շատ արագ էր անցնում, իսկ ես քայլելու ուժ չունեի։ Կարծես մղձավանջ լիներ։

Ռալֆը ցավագին հայացքով նայում էր նրան։ Զգում էր, որ իր գլուխն էլ է փշրվում, ուղեղը պայթում։

— Գնանք այստեղից,— ասաց նա։

— Գնանք,— պատասխանեց Ինդիանան,— բայց նախ և առաջ փնտրեք ոտքերս, այս խճաքարերի վրա կորցրի։

Ռալֆը նկատեց, որ նրա ոտքերը թաց են և ցրտից փայտացել են։ Գրկեց Ինդիանային և տարավ մոտակա հյուրընկալ մի տուն, որի բարի տանտիրուհու շանքերի շնորհիվ վերականգնվեց նրա բանականությունը։ Այդ միջոցին Ռալֆը մարդ ուղարկեց զգուշացնելու պարոն Դելմարին, որ կնոջը գտել են, բայց գնդապետը դեռ տուն չէր վերադարձել։ Անհանգստացած, զայրացած, կատաղած՝ շարունակում էր որոնումները։ Իսկ Ռալֆն ավելի քաջատեղյակ լինելով, ուղիղ գնացել էր պարոն դը Ռամիերի մոտ, Ռեյմոնին ծաղրալից ու սառը հայացքով էր հանդիպել. նա նոր էր անկողին մտել։ Այդ ժամանակ հիշել էր Նունին և գնացել էր գետի երկայնքով, ծառային ուղարկել էր հակառակ ուղղությամբ փնտրելու Ինդիանային։ Օֆելյան շուտով գտել էր տիրուհու հետքը և սրբ Ռալֆին ուղեկցել այնտեղ, որտեղ և գտան նրան։

Երբ Ինդիանայի հիշողությունը բացվեց, մտաբերեց, թե ինչ էր տեղի ունեցել այդ սարսափելի գիշերվա ընթացքում, չէր հիշում միայն զառանցագին պահերը։ Չէր կարող բացատրել զարմիկին, թե ինչ մտքեր էին պաշարել իրեն մեկ ժամ առաջ, բայց վերջինս գուշակեց դրանք և առանց հարցաքննելու հասկացավ նրա հոգեկան խռովքի պատճառը։ Ռալֆը բռնեց նրա ձեռքը և մեղմ, բայց հանդիսավոր ձայնով ասաց.

— Զարմուհի, միայն մի խոստում եմ պահանջում ձեզնից, թող ձեր բարեկամության վերջին վկայումը լինի. դրանից հետո այլևս չեմ անհանգստացնի ձեզ։

— Ասացեք,— պատասխանեց Ինդիանան,— ձեզ համար, եթե կարողանամ որևէ բան անել, այսուհետև կլինի միակ երջանկությունս։

— Եթե այդպես է, երդվեք,— շարունակեց Ռալֆը,— այլևս երբեք չմտածել ինքնասպանության մասին առանց ինձ զգուշացնելու։ Պատվովս եմ երդվում, ոչ մի գնով չեմ խանգարի ձեզ։ Ուզում եմ միայն տեղյակ լինել։ Ինչ վերա-

բերում է մնացածին, ես էլ ձեզ նման բոլորովին չեմ մտահոգվում, և ձեզ քաջ հայտնի է, որ ես էլ հաճախ նույնպիսի մտքեր եմ ունեցել...

— Ինչո՞ւ եք ինքնասպանության մասին խոսում ինձ հետ, — ասաց տիկին Դելմարը,— երբեք չեմ փորձել սպառնալ կյանքիս։ Ես վախենում եմ աստծուց, այլապես...

— Քիչ առաջ, Ինդիանա, երբ ձեզ վերցրի թևերիս մեջ, երբ այս խեղճ կենդանին,— և նա շոյեց Օֆելյային,— քաշեց ձեր հագուստից, մոռացել էիք աստծո, ողջ տիեզերքի, ձեր զարմիկ Ռալֆի, ինչպես նաև այլոց մասին...

— Ինչո՞ւ խանգարեցիք,— տխուր ասաց Ինդիանան,— հիմա աստծո թևերի մեջ կլինեի, որովհետև անմեղ էի, չէի գիտակցում, թե ինչ եմ անում...

— Դիտեմ, բայց կարծում եմ մտածված մահն է ճիշտ։ Եթե կամենաք, կխոսենք այդ մասին։

Ինդիանան ցնցվեց։ Կառքը կանգ առավ տան առջև, որտեղ նորից հանդիպելու էր ամուսնուն։ Աստիճաններով բարձրանալու ուժ չուներ։ Ռալֆն ուղեկցեց նրան մինչև իր սենյակը։ Բոլոր ծառաներին ազատել էին աշխատանքից, միայն մի սպասուհի էր մնացել, նա էլ գնացել էր տիկին Դելմարի փախուստի մասին տեղեկություն բերելու հարևան շրջաններից, և Լըլիվրը, որ, չիմանալով ինչ ձեռնարկել, գնացել էր դիահերձարան՝ առավոտյան տեղափոխած դիակների մեջ տիրուհուն որոնելու։ Ռալֆը մնաց տիկին Դելմարին խնամելու, որովհետև դեռ վատ էր զգում, երբ հանկարծ կատաղորեն զրնգացող դռան զանգը աղդարարեց գնդապետի վերադարձը։ Սարսափի և ատելության սարսուռ անցավ Ինդիանայի մարմնով։ Միանգամից բռնեց զարմիկի ձեռքը։

— Լսեք, Ռալֆ,— ասաց նրան,— եթե գեթ մի փոքր սիրում եք ինձ, այնպես արեք, որ այս վիճակում չտեսնի ինձ։ Չեմ ուզում խղճա, նախընտրում եմ նրա դայրույթը, քան վշտակցումը... Դուռը չբացեք կամ հեռացրեք նրան, ասացեք, որ ինձ չեն գտել...

Շրթները դողում էին, թևերը ջղաձգումներով գալարվում էին Ռալֆին բռնելու համար։ Երկու տարբեր զգացմունքների միջև կանգնած՝ խեղճ բարոնետը չգիտեր որ կողմը բռներ։

Դելմարը պոկելու աստիճան քաշում էր զանգը, իսկ կինը մնում էր բազկաթոռի մեջ։

— Դուք միայն նրա դայրույթի մասին եք մտածում,— վերջապես ասաց Ռալֆը,— բայց չեք խորհում, թե որքան է տանջվել ու անհանգստացել։ Միշտ կարծել եք, թե առում է ձեզ... եթե այս առավոտ տեսած լինեիք նրա վշտահար դեմքը...

Ինդիանան ուժասպառ ցած թողեց թևը, իսկ Ռալֆը գնաց դուռը բացելու։

— Այստե՞ղ է,— գոռաց գնդապետը ներխուժելով,— սատանան գիտե, թե ինչ բան է, ուր ասես չեմ վազել գտնելու համար, խիստ երախտապարտ եմ նրան այսքան լավ ժամանցի համար։ Գրողը տանի այդ կնկան, չեմ ուզում երեսը տեսնել, թե չէ կսպանեմ։

— Չե՞ք մտածում, որ կարող է լսել,— ցածրաձայն ասաց Ռալֆը,— նա այնպիսի վիճակում է, որ ոչ մի հուզում չի կարող տանել։ Զսպեք ձեզ։

— Բազում անեծք,— ոռնաց գնդապետը,— ես ավելի ծանր ապրումներ եմ կրել առավոտից։ Բախտիցս է, որ ջղերս ճոպանի պես ամուր են։ Ասացեք խնդրեմ, ո՞վ է մեզնից ավելի շատ վիրավորված, ավելի շատ հոգնած, ավելի հիվանդ, ե՞ս, թե նա։ Իսկ որտե՞ղ հայտնաբերեցիք նրան, ի՞նչ էր անում։ Ինքն է մեղավոր, որ այդքան կոպիտ վարվեցի խելագար պառավ Քարվախալի հետ. խուսափողական պատասխաններ էր տալիս և ինձ էր մեղադրում եղբոր աղջկա հրաշալի օյիններին համար։ Գրողը տանի, շատ չարչարվեցի։

Դելմարը խռպոտ ու կոպիտ ձայնով բարձր գոռալով իրեն նետել էր նախասրահի աթոռներից մեկի վրա։ Չնայած սարսափելի ցրտին, անընդհատ սրբում էր ճակատից ծորացող քրտինքը։ Հիշոցներ արձակելով պատմում էր, թե որքան է հոգնել, մատատանջվել, տառապել, հազար ու մի հարց էր տալիս և բարեբախտաբար չէր լսում պատասխանները, որովհետև խեղճ Ռալֆը ստել չէր կարող և իր ասելիքի մեջ չէր գտնում այնպիսի մի բան, որ հանգստացներ գնդապետին։ Նա նստել էր սեղանին՝ հանգիստ ու անխոս, կարծես այդ երկու

մարդկանց վշտի հետ բացարձակապես ոչ մի կապ չունենար, բայց իրականում ավելի էր տանջվում, քան նրանք։

Տիկին Դելմարը, լսելով ամուսնու լուտանքները, սպասածից ավելի ուժեղ զգաց իրեն։ Նախընտրում էր կռվել նրա հետ. դա ավելի շատ էր հաշտեցնում ինքն իր հետ, քան նրա կողմից վնասնելություն տանելը, որն ավելացնելու էր խղճի խայթը։ Սրբեց արցունքի վերջին հետքերը, հավաքեց մնացած վերջին ուժերը, չմտածելով, որ կարող էին գեռ պետք գալ իրեն, սրբանով որ կյանքը գեռևս ծանրանում էր իր վրա։ Ամուսինը խստագեմ ու տիրականորեն մոտեցավ նրան, բայց կնոջ ինքնատիրապետման ու վեհության առջև միանգամից ընկրկեց, փոխեց դեմքի արտահայտությունն ու խոսելաձևը, փորձեց նրա նման սառը արժանապատվություն ցուցաբերել, բայց չհաջողվեց։

— Տիկին, կրաբեհաճեք հայտնել, թե որտե՞ղ եք անցկացրել ձեր տասավոտը, գուցե նաև՝ գիշերը,— հարցրեց նրան։

«Գուցե» բառը տիկին Դելմարին հուշեց, որ իր բացակայությունը բավական ուշ է նկատվել։ Արիությունը մեծացավ։

— Ոչ, պարոն,— պատասխանեց Ինդիանան,— մտադրություն չունեմ հայտնել այդ մասին։

Դելմարը զայրույթից ու զարմանքից դույնը գցեց։

— Ինչ է, հույս ունեք ամեն ինչ թաքցնե՞լ ինձնից,— ասաց ամուսինը դողացող ձայնով։

— Մտադրություն չունեմ,— սառը ասնով պատասխանեց նա,— միայն հրաժարվում եմ պատասխանել՝ որոշ սկզբունքայնությունից ելնելով։ Ուզում եմ համոզվեք, որ նման հարց ուղղելու իրավունք չունեք։

— Իրավունք չունե՞մ, գրողը ձեզ տանի։ Իսկ ո՞վ է այստեղ տերը, դո՞ւք, թե՞ ես, ո՞վ է շրջազգեստ հագնում, և ո՞վ պետք է իլիկ մանի։ Ինչ է, ուզում եք ինձ կի՞ն դարձնել։ Չի հաջողվի, ազավնյակս։

— Գիտեմ, որ ես սարուկ եմ, իսկ դուք՝ տեր։ Այս երկրի օրենքը ձեզ իմ տերը դարձրեց։ Դուք կարող եք կապկպել իմ մարմինը, ձեռնակապեր հագցնել, իշխել իմ գործողությունների վրա։ Ուժի իրավունքը ձեր կողմն է, և հասարակությունը ձեզ թույլ է տալիս այդ անել։ Բայց իմ կամքի վրա, պարոն, չեք կարող բռնանալ։ Միայն ասուված կարող

է այն ընկճել կամ բարձրացնել։ Ուրեմն, փնտրեք մի օրենք, մի բանաձևություն, տանջանքի մի գործիք, որ կարողանա տիրել իմ հոգուն։ Դա նման է այն բանին, որ ցանկանաք օդը շոշափել կամ գաղափարի տարածությունը բռնել։

— Լռե՛ք, հիմար, ամբարտավան արարած, ձեր վիպային նախադասություններն արդեն ձանձրալի են դառնում։

— Կարող եք լռություն պարտադրել, բայց ստիպել չմտածել՝ չեք կարող։

— Ապուշ հպարտություն, ողորմելի ճիճվի սնափառություն, օգտվում եք այն հանգամանքից, որ խղճում եմ ձեզ, բայց կտեսնեք, թե ինչպես են հեշտությամբ ենթարկվում այդ «ուժեղ բնավորությունները»։

— Խորհուրդ չեմ տալիս փորձել, ձեր հանգիստը կվրդովեք, իսկ արժանապատվությունը չի շահի դրանից։

— Կարծո՞ւմ եք,— ասաց գնդապետը՝ բթարմատի ու ցուցամատի տրանքում ճզմելով կնոջ ձեռքը։

Ցալիքը երկու քայլ առաջ եկավ, բռնեց գնդապետի թևը իր երկաթյա ձեռքով, եղեգնի նման ճկեց՝ հանդարտ ձայնով ասելով նրան.

— Խնդրում եմ այս կնոջ մեկ մազին անգամ չդիպչել։

Դելմարն ուզեց հարձակվել նրա վրա, բայց զգաց, որ սխալ էր գործելու, կյանքում ոչ մի բանից այնքան չէր վախենում, որքան ինքն իրենից ամաչելուց։ Հրեց նրան, բավարարվելով միայն այսքանն ասել.

— Դուք ձեր գործերին խառնվեք։

Հետո նորից շարունակեց գիմել կնոջը։

— Այսպիսով, տիկին,— ասաց նա՝ թևերը սեղմելով կրծքին, որպեսզի նրան խփելու փորձ չանի,— բացահայտ ցո՞ւյց եք անում, հրաժարվո՞ւմ եք ինձ հետ Բուրբոն կղզի գնալ, ուզում եք բաժանվե՞լ։ Ինչ արած, գրողը տանի, ես նույնպես...

— Այլևս չեմ ուզում,— պատասխանեց Ինդիանան,— երեկ ուզում էի, այդպես էի կամենում, այս առավոտ որոշումս փոխվեց։ Բռնությամբ փակեցիք ինձ սենյակում, դուրս եկա պատուհանից՝ ապացուցելու համար, որ եթե չեք կարողացել ենթարկեցնել կնոջ կամքը, ձեր իշխանությունն անզոր է։ Մի քանի ժամ ձեր տիրապետությունից դուրս անցկացրի,

գնացի ազատ օդ շնչելու, որպեսզի ձեզ ցույց տամ, թե իմ բարոյական տերը զուր չեր, երկրի վրա ինքս ինձնից միայն կախում ունեմ։ Զբոսնելու ժամանակ մտածեցի, որ իմ պարտականությունն ու խիղճը պարտադրում են վերադառնալ ձեզ մոտ։ Ես դա արել եմ կամովին։ Իմ զարմիկն ուզեկցեց ինձ այստեղ և ոչ թե բերեց։ Եթե չուզենայի հետևել նրան, հակառակը չէր պնդի, կարծում եմ, հասկանում եք այդ բանը։ Այսպիսով, պարոն, ժամանակ մի կորցրեք համոզմունքներիս դեմ պայքար մղելով, երբեք չեք կարող ազդել, այդ իրավունքը կորցրիք այն ժամանակ, երբ ցանկացաք ուժով տիրել նրանց։ Զբաղվեք մեկնումի պատրաստությամբ, պատրաստ եմ օգնելու և հետևելու ձեզ, ոչ այն պատճառով, որ այդպես եք կամենում, որովհետև ես եմ այդպես որոշել։ Կարող եք ինձ դատապարտել, բայց միմիայն ի՛նձ եմ ենթարկվելու։

— Ցավում եմ, որ ձեր ուղեղը խանգարված է,— ասաց գնդապետը՝ ուսերը բարձրացնելով։

Եվ գնաց իր սենյակը փաստաթղթերը կարգի բերելու, ներքնապես խիստ գոհ տիկին Դելմարի որոշումից և իր դիմաց այլևս ոչ մի արգելք չտեսնելով, որովհետև այդ կնոջ խոսքը հարգում էր այնքանով, որքանով ատում էր նրա գաղափարները։

Գլուխ XXII

Հոգնությունը հաղթեց Ռեյմոնին։ Սրը Ռալֆին խիստ շոքությամբ ճանապարհ դնելուց հետո, որ եկել էր իրենից տեղեկություններ ստանալու տիկին Դելմարի վերաբերյալ, անմիջապես խոր քուն մտավ։ Երբ արթնացավ, շատ հաճելի զգացում էր ողողել նրան. Ինդիանայի հետ ունեցած սիրային պատմության հիմնական անախորժ կապը վերջապես խզվել էր։ Վազուց էր կանխատեսում, որ գալու է մի ժամանակ, երբ պայքարի մեջ է մտնելու այդ կնոջ զգացմունքի հետ, որպեսզի պաշտպանի իր ազատությունը ռոմանտիկ մրրկումներից, և նախապես որոշել էր անզիջում լինել։ Վերջապես հաղթահարել էր այս դժվարին քայլը. «ոչ» էր ասել։ Այլևս անհրաժեշտություն չէր զգացվելու անդրադառնալ այս հարցին, քանի որ հանգամանքները շատ լավ էին դասավորվել։

Ինդիանան առատ արցունք չէր թափել, բավականին խեղճացած էր գտնվել, Ռեյմոնի առաջին խոսքերից հասկացել էր ամեն ինչ, արագորեն և հպարտությամբ որոշում էր կայացրել։

Ռեյմոնը չափից ավելի գոհ էր իր բախտից, քանի որ այն միշտ իր հետ էր, և որին սիրասուն որդու պես հավատում էր, հույսը դնում նրա վրա՝ ամեն ինչին լավ ընթացք ապահովելու հավատով, երբեմն նույնիսկ հարազատների հաշվին։ Մինչև հիմա նախախնամությունն այնքան առատաձեռն էր եղել իր հանդեպ, որ Ռեյմոնի մտքով երբեք չէր անցել կասկածել նրան։ Եթե Ռեյմոնը կանխատեսեր իր սխալներն ու դրանց հետևանքները և անհանգստանար դրանց պատճառով, շատ մեծ ապերախտություն էր լինելու իր կողմից բարերար աստծո դեմ։

Նա վեր կացավ։ Դեռ հոգնած էր, ուղեղը շատ էր լարել՝ ծանր տեսարանի պատճառով։ Այդ ժամանակ մայրը վերադարձավ. նա գնացել էր տիկին դը Քարվախալի մոտ՝ տիկին Դելմարի առողջական և հոգեկան վիճակի մասին տեղեկություններ ստանալու։ Մարքիզուհուն ամենևին չէր հուզել այդ պահը։ Մինչդեռ, երբ տիկին դը Ռամիերը նրրորեն մի քանի հարցեր էր ուղղել նրան, սա խիստ վշտացել էր։ Միակ բանը, որ հուզել էր նրան, տիկին Դելմարի փախուստի հետ կապված այդ պատմությունից բխող աղմուկն էր։ Նա խիստ զառնացած տրտնջում էր եղբոր աղջկա դեմ, որին մեկ օր առաջ երկինք էր բարձրացրել։ Եվ տիկին դը Ռամիերը հասկացավ, որ դժբախտ Ինդիանան կատարած քայլով ընդմիշտ իր դեմ էր հանել բարեկամուհուն և կորցրել էր միակ հենարանը։

Ով էլ խորությամբ թափանցած լիներ մարքիզուհու հոգու մեջ, մեծ կորուստ չէր համարելու այդ կապի խզումը, բայց տիկին դը Քարվախալը նույնիսկ տիկին դը Ռամիերի համար անմերձենալի առաքինության տիպար էր։ Նրա երիտասարդությունը զգուշավոր խորհրդավորությամբ էր պարուրված կամ, ավելի ճիշտ, անհետացել էր հեղափոխությունների հոգիների ոլորապտույտի մեջ։ Ռեյմոնի մայրը ողբաց Ինդիանայի ճակատագիրը և աշխատեց նրան արդարացնել, բայց տիկին դը Քարվախալը թունոտ նկատել տվեց տիկին դը Ռամիերին, որ այս գործում նման մեծ շահագրգռվածությունը թույլ չի տալիս ճիշտ հետևություններ անել։

— Իսկ ի՞նչ է անելու այդ երիտասարդ դժբախտ կինը,— ասաց տիկին դը Ռամիերը,— եթե ամուսինը սկսի նրան ճնշել, ո՞վ է սատար կանգնելու։

— Աստված ինչ կամենա, այդպես էլ կլինի,— պատասխանեց մարքիզուհին,— ինչ վերաբերում է ինձ, այլևս գործ չունեմ նրա հետ և այսուհետև երեսն անգամ չեմ ուզում տեսնել։

Բարեսիրտ տիկին դը Ռամիերը անհանգստացած՝ որոշեց ամեն գնով տեղեկանալ տիկին Դելմարի վիճակի մասին։ Հրամայեց կառապանին տանել իրեն Ինդիանայի տան մոտի փողոցի անկյունը և ծառաներից մեկին ուղարկեց դռնապանին հարցուփորձ անելու, պատվիրելով տեղեկանալ նաև սըր Ռալֆի մասին, տա՞նն էր, թե ոչ։ Կառքի մեջ սպասեց մինչև պատասխան ստանալը, և շուտով Ռալֆն անձամբ եկավ նրա մոտ։

Միակ անձնավորությունը, գուցե, որ ճիշտ էր գնահատում Ռալֆին, տիկին դը Ռամիերն էր։ Մի քանի բառի փոխանակում բավական եղավ հասկանալու, որ երկուստեք այս պատմության մեջ անկեղծ ու մաքուր հետաքրքրություն են ցուցաբերում։ Ռալֆը պատմեց, թե ինչ էր տեղի ունեցել առավոտյան, և քանի որ գիշերվա վերաբերյալ սուտ տեղեկություններ չուներ, չաշխատեց դրանք պարզաբանել։ Բայց տիկին դը Ռամիերը հարկ համարեց ճշտորեն ներկայացնել ինչ որ գիտեր, հուսալով, որ դիմացինի ցանկությունը նույնպես այդ կորստաբեր ու անիրականանալի կապի խզումն էր։ Ռալֆը ոչ ոքի հետ առնրես այդքան ազատ չէր զգացել իրեն, ուստի այդ անկեղծ խոսքերը լսելուց հետո լթաքցրեց դեմքի վրա հուզմունքից առաջացած փոփոխությունը։

— Դուք ասում եք, տիկին,— շշնջաց նա՝ զգալով երակների միջով անցնող ջղային սարսուռը,— որ գիշերը ձեր տա՞նն է անցկացրել։

— Մի ամբողջ գիշեր, մեն-մենակ, անկասկած տառապալի մի գիշեր։ Ռեյմոնին այս պատմության մեջ մեղսակից չհամարեք, որովհետև առավոտյան ժամը վեցին վերադարձավ, իսկ ժամը յոթին եկավ ինձ մոտ ստիպելու, որ հանգստացնեմ այդ դժբախտ աղջկան։

— Նա ուզում էր լքել ամուսնուն, ուզում էր պատվազրկել

իրեն,— շարունակեց Ռալֆը՝ աչքերը մի կետի հառած, ինչ-որ տարօրինակ զգացմունքով համակված,— նշանակում է՝ շատ է սիրում նրան՝ այդ անարժանին...

Ռալֆը մոռացել էր, որ խոսում է Ռեյմոնի մոր հետ։

— Ես վաղուց էի գլխի ընկել,— շարունակեց նա,— բայց ինչո՞ւ չկանխազգացի, որ կգա օրը, երբ վերջնականապես նա իրեն կորստյան կմատնի։ Կսպանեի այդ կնոջը, բայց այդ բանը թույլ չէի տա։

Ռալֆի բերանից դուրս թռած բառերը մեծ զարմանք պատճառեցին տիկին դը Ռամիերին. կարծում էր, թե խաղաղ, մեծահոգի մարդու հետ գործ ունի և զղջաց, որ հավատ էր ընծայել արտաքին երևույթներին։

— Աստված իմ,— բացականչեց նա սարսափով,— ուրեմն դո՞ւք էլ եք անզիջում կերպով դատապարտում նրան, դո՞ւք էլ հորաքրոջ նման լքելու եք այդ դժբախտին։ Նշանակում է՝ բոլորդ էլ անկարեկից եք ու աններող։ Մի՞թե գործած մեղքից հետո, որի պատճառով այնքան տառապեց, մի բարեկամ չի մնալու նրա մոտ։

— Իմ հարցում կարող եք ապահով լինել, տիկին,— պատասխանեց Ռալֆը,— վեց ամիս է, ինչ ամեն բան հայտնի է ինձ, և ոչինչ չեմ ասել։ Տեսել եմ նրանց առաջին համբույրը և պարոն դը Ռամիերին ձիուց ցած չեմ գլորել։ Անտառում հաճախ եմ բռնել նրանց սիրային նամակները և մտրակի հարվածով չեմ ոչնչացրել դրանք։ Հանդիպել եմ պարոն դը Ռամիերին կամրջի վրա, երբ նրա մոտ էր շտապում գիշերով, մենակ էինք, նրանից քառապատիկ ուժեղ եմ, բայց այդ մարդուն գետը չեմ գցել և, երբ թույլ եմ տվել նրան փախչել, տեսել եմ, թե ինչպես, իմ աչալրջությունը խաբելով, մտնում է նրա սենյակը, դարձյալ, փոխանակ դռները խորտակելու և պատուհանից դուրս շպրտելու նրան, հանգիստ գնացել եմ զգուշացնելու, որ ամուսինն է գալիս, և փրկել եմ մեկի կյանքը, մյուսի պատիվը։ Տեսնո՞ւմ եք, տիկին, ես մեծահոգի և ներողամիտ մարդ եմ։ Այս առավոտ նա իմ ձեռքումն էր. դուք լավ գիտեք, որ մեր բոլոր դժբախտությունների պատճառն ինքն է, և եթե իրավունք չունեի առանց ապացույցների նրան մեղադրել, համենայն դեպս, հնարավորություն ունեի վիճաբանելու առիթն օգտագործել, երբ ծաղրանքով պատաս-

խանից ինձ ու ամբարտավան դիրք ընդունեց։ Ինչ արած, հանդուրժեցի ամեն տեսակի ոտնձգություն, որովհետև գիտեի. նրա մահը կսպաներ Ինդիանային։ Թողեցի, որ նա շրջվի կողքի վրա ու քնի, այնինչ Ինդիանան խելագարվում ու մեռնում էր Սենի ափին, պատրաստ միանալու այն մյուս գոհին... Տեսնում եք, տիկին, համբերությամբ եմ զինվում այն մարդկանց հանդեպ, որոնց ատում եմ, և մեծահոգություն եմ հանդես բերում այն անձանց նկատմամբ, որոնց սիրում եմ։

Տիկին դը Ռամիերը բռնեց նրա ձեռքն ու քնքշությամբ ասաց.

— Սիրելի պարոն Ռալֆ, դուք շատ եք տանջվում, քանի որ առանց մտահոգվելու ինձ այդպիսի ցավ եք պատճառում, մոռանում եք, որ նա, ում մասին խոսում եք, իմ որդին է, իսկ նրա հիմար արարքները, եթե իրոք գործել է, ավելի շատ են հոշոտում իմ սիրտը, քան ձերը։

Ռալֆն իսկույն տիրապետեց իրեն և տիկին դը Ռամիերի հանդեպ բարեկամական շերմ զգացմունքով լցված, որի արտահայտումը նույնքան ուրույն էր, որքան բարկությունը դրսևորումը, համբուրեց ձեռքը։

— Ներեցեք, տիկին,— ասաց նրան,— իրավացի եք, շատ եմ տանջվում և մոռանում եմ, թե ինչպիսի հանգամանքներում պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերեմ։ Մոռացեք, խնդրում եմ, դառը խոսքերս, իմ սիրտը դեռևս ի վիճակի է դրանք իր մեջ պարփակել։

Տիկին դը Ռամիերը որքան էլ վստահություն ձեռք բերեց նման պատասխան լսելով, այնուամենայնիվ դադանապես անհանգստացավ՝ զգալով այն խոր ատելությունը, որ Ռալֆը անուցում էր կրծքի տակ իր որդու հանդեպ։ Եվ փորձեց արդարացնել նրան թշնամու աչքին։ Ռալֆն ընդհատեց։

— Գուշակում եմ ձեր մտքերը, տիկին, բայց հավատացեք, պարոն դը Ռամիերին և ինձ վիճակված չէ մոտակա ժամանակներում հանդիպել։ Ինչ վերաբերում է զարմանքս, մի զլացեք նրա մասին ինձ տեղեկություններ տալու համար, եթե ամբողջ աշխարհը լքի նրան, երդվում եմ, գոնե մի բարեկամ կունենա։

Երեկոյան, երբ տիկին դը Ռամիերը վերադարձավ տուն, Ռեյմոնին գտավ բուխարիկի մոտ հարմարավետ տեղավորված, փափուկ հոգաթափերը ոտքերին, թեյի բաժակը ձեռքին։ Նա ցանում էր վերջնականապես ցրել առավոտվա ջղային խռովքները։ Դեռ ուշքի չէր եկել այդ կարծեցյալ հուզումներից, սակայն ապագայի նկատմամբ տածած քաղցր մտքերը վերակենդանացնում էին հոգին։ Վերջապես ազատ էր զգում իրեն և կարող էր լիովին օգտվել այդ անգնահատելի վիճակից, որը պահպանել չէր կարողանում։

«Ինչո՞ւ է նախասահմանված,— մտածում էր նա,— որ այդքան շուտ ձանձրանամ հոգևոր հանելի ազատությունից, երբ ամեն անգամ շատ թանկ գնով եմ վերագտնում։ Հենց որ զգում եմ, որևէ կնոջ լարած թակարդն եմ ընկել, չեմ կարողանում անմիջապես խորտակել այն, որպեսզի նորից ձեռք բերեմ հանգիստս ու հոգեկան անդորրս։ Անկծյալ լինեմ, եթե մեկ անգամ էլ զգոնությունս ազատություն։ Այդ երկու կրեոլուհիների պատճառած ցավը թող ինձ դաս լինի, սրանից հետո պետք է միայն գործ ունենամ թեթևաբարո և ծաղրասեր փարիզուհիների հետ... իսկական աշխարհիկ կանանց հետ։ Գուցե ճիշտ վարվեմ՝ ամուսնանալով, որպեսզի, ինչպես ասում են, վերջ տամ այս ամենին...»։

Ռեյմոնը մխրճվել էր նման հաճելի մտքերի մեջ, երբ մայրը հուզված ու հոգնած ներս մտավ։

— Նա ավելի լավ է զգում իրեն,— ասաց որդուն,— ամեն ինչ բարեհաջող է անցել, հույսավ եմ, որ կհանդարտվի...

— Ո՞վ,— հարցրեց Ռեյմոնը՝ ընդոստ զարթնելով անուրջներից։

Համենայն դեպս, հաջորդ օրը մտածեց, որ դեռ պարտականություններն ավարտված չէին, նա այդ կնոջ սրտում պետք է վերագտներ հարգանքը, եթե ոչ սերը։ Չէր ուզում Ինդիանային հնարավորություն տալ հպարտանալու, որ ինքն է առաջինը լքել իրեն։ Ուզում էր նրան համոզել, թե արամաբանությունն ու մեծահոգությունն էին ստիպել իրեն այդ քայլին դիմելու։ Այնքանից հետո, որ վանել էր իրենից, դեռ ուզում էր իշխել նրա վրա. և գրեց.

«Սիրելիս, ես չեմ գրում, որպեսզի ներողություն հայցեմ այն դաժան ու համաձակ խոսքերի համար, որ զառանցանքի

պահին դուրս թռան բերանիցս։ Հուզումնախառն պահերին անհնար է կատարյալ պայծառ ուղեղով տրամաբանել և արտահայտել մտքերը հանգիստ ու մտածված։ Մեղավոր չեմ, որ ասված չեմ ու չեմ կարողանում ձեր ներկայությամբ տիրապետել ինձ, և այդ պահերին եռում է արյունս, կորցնում եմ գլուխս, խելագարվում եմ։ Հավանաբար ինձ իրավունք կվերապահվի գանգատվել այն դաժան սառնարյունության դեմ, որով դատապարտեցիք ինձ սարսափելի տանջանքների և երբեք չիրաժարեցիք։ Բայց դուք էլ մեղավոր չեք։ Այնքան կատարյալ եք, որ չէիք կարող կյանքում խաղալ այն դերը, ինչ մենք՝ հասարակ մահկանացուներս, ենթարկվելով մարդկային կրքերին, ստրուկ դառնալով մեր ցանկասիրական բնազդներին։ Հաճախ եմ ձեզ ասել, Ինդիանա, երբ հանգիստ մտածում եմ ձեր մասին, ավելի ու ավելի եմ համոզվում, որ դուք կին չեք, դուք հրեշտակ եք։ Պաշտում եմ ձեզ, խոնարհվում ձեր առաջ, ինչպես աստվածության առաջ։ Բայց, ավաղ, ձեր ներկայությամբ հաճախ գլուխ է բարձրացրել իմ մեջ նախնադարյան մարդը, ձեր շուրթերի բուրումնավետ շունչը հաճախ հրկիզել է իմ շուրթերը։ Հաճախ, երբ հակվել եմ ձեր վրա, մազերս դիպել են ձեր մազերին, անբացատրելի հեշտանքի զգացում է հոսել երակներիս միջով, և մոռացել եմ, որ դուք երկնքից առաքված էակ եք, հարատևող հաճելի երազ, աստծո կրծքից պոկված հրեշտակ, որ առաջնորդելու էր ինձ այս կյանքում և պատմելու էր մի այլ գոյության ուրախությունների մասին։ Անաղարտ ոգի, ինչո՞ւ փորձության ենթարկող կնոջ կերպարանք հագար։ Ինչո՞ւ, լուսո հրեշտակ, դժոխքի հմայքներ բերիր։ Հաճախ թվացել է, թե երջանկությունն եմ գրկում, իսկ դու առաքինություն էիր միայն։

Սիրելիդ իմ, ներեցեք մեղավոր մտքերիս համար, ես ամենևին արժանի չեմ եղել ձեզ, և, միգուցե, եթե համաձայնած լինեիք իշնել իմ աստիճանին, թե՛ մեկս, թե մյուսս երջանիկ կլինեինք։ Բայց իմ անկատարությունը ձեզ անընդհատ տառապանք է պատճառել, և հանցավոր եք համարել ինձ, որ ձեր առաքինի գծերը բացակայում են ինձ մոտ։

Ուրեմն, գնացեք, իմ սիրասուն էակ, գնացեք մի այլ երկրների տակ առաքինության և բարեպաշտության պտուղներ

քաղելու։ Աստված կվարձատրի մեզ նման զոհողության համար, քանզի բարի է աստված։ Նա կմիացնի մեզ երանավետ մի այլ կյանքում և գուցե նույնիսկ... բայց այս միտքը դարձյալ հանցավոր է, մինչդեռ հույսս կորցնել չեմ կարող... Մնաս բարով, Ինդիանա, մնաս բարով։ Տեսնում եք, որ սերը հանցագործություն է... Ավա՜ղ, հոգիս խորտակվել է։ Որտեղի՞ց ուժ գտնեմ մնաք բարով ասելու ձեզ»։

Ռեյմոնն անձամբ տարավ նամակը տիկին Դելմարենց տուն, բայց Ինդիանան փակվեց սենյակում և հրաժարվեց հանդիպել նրան։ Իսկ Ռեյմոնը, նախքան այդ տնից հեռանալը, գաղտնորեն նամակը հանձնեց սպասուհուն և սրտանց համբուրեց ամուսնուն։ Վերջին աստիճանի վրա ոտքը դնելուն պես սովորականից ավելի թեթև զգաց իրեն։ Եղանակն ավելի մեղմ էր, կանայք ավելի գեղեցիկ էին, խանութներն՝ ավելի լուսավոր. Ռեյմոնի կյանքի գեղեցիկ օրերից մեկն էր։

Տիկին Դելմարը զմռսված նամակը դրեց սնդուկի մեջ, որ մինչև գաղութ հասնելը չէր բացելու։ Ուզեց հորաքրոջը հրաժեշտ տալ, բայց սըր Ռալֆը բացարձակ համառությամբ ընդդիմացավ։ Նա տեսել էր տիկին դը Քարվախալին, գիտեր, որ վերջինս ուզում էր Ինդիանային ընկճել հանդիմանական խոսքերով և արհամարհանքով։ Ռալֆին տհաճություն էր պատճառում նրա կեղծ խստությունը և չէր համակերպվում այն մտքի հետ, որ տիկին Դելմարը լսելու էր այդ ամենը։

Հաջորդ օրը, այն պահին, երբ Դելմարն ու կինը կառք էին նստելու, սըր Ռալֆը իր սովորական աներերությամբ ասաց.

— Հաճախ եմ հասկացրել, բարեկամներս, որ ցանկանում եմ հետևել ձեզ, բայց ամեն անգամ հրաժարվել եք ճիշտ հասկանալ ինձ կամ պատասխանել։ Թույլ կտա՞ք ձեզ հետ մեկնել։

— Բորդո՞,— ասաց Դելմարը։

— Բուրբոն,— պատասխանեց սըր Ռալֆը։

— Այդ ինչպե՞ս,— շարունակեց պարոն Դելմարը,— հենց այնպես չեք կարող ձեր տուն-տեղը տեղափոխել և կապվել մի ընտանիքի հետ, որի ապագան անորոշ է, իսկ նյութա-

կանը՝ ողբալի վիճակում։ Դա կնշանակի ստորաբար շահագործել ձեր բարեկամությունը՝ ընդունելով ձեր ողջ կյանքի զոհողությունը և հասարակական միջավայրից ձեր հրաժարումը։ Դուք հարուստ եք, երիտասարդ եք, ազատ եք, դուք պետք է նորից ամուսնանաք, ընտանիք կազմեք...

— Խոսքը դրա մասին չէ,— սառնորեն պատասխանեց սըր Ռալֆը,— քանի որ չեմ կարողանում մտքերս ամփոփել հիմնական իմաստ արտահայտող բառերի մեջ, ուստի անկեղծորեն կասեմ այն, ինչ մտածում եմ։ Ինձ թվում է, որ արդեն վեց ամիս է, ինչ ձեր երկուսի բարեկամական զգացմունքը սառել է իմ հանդեպ, գուցե սխալներ եմ թույլ տվել, որ իմ նեղ դատողությամբ չեմ նկատել, իսկ եթե այդպես չէ, ձեր մեկ բառը բավական է, որ ինձ հանգստացնի։ Այդ դեպքում թույլ տվեք հետևել ձեզ։ Եթե ձեր կողմից այլևս հարգանք չեմ վայելում, ժամանակն է, որ ասեք. լքելով ինձ, չպետք է հոգուս մեջ խղճի խայթ թողնեք. ես պետք է շտկեմ սխալներս։

Գնդապետն այնքան զգացվեց այդ միամիտ և մեծահոգի վերաբերմունքից, որ մոռացավ ինքնասիրության հետ կապված բոլոր հարցերը, որոնք հեռացրել էին նրան իր բարեկամից։ Ձեռքը մեկնեց, երդվեց, որ երբեք այսքան անկեղծ բարեկամական զգացմունքով չէր կապվել նրա հետ, իսկ նրա առաջարկությունը մերժում էր զուտ նրբանկատությունից ելնելով։

Տիկին Դելմարը լուռ էր։ Ռալֆը ուժ գործադրեց թեկուզ մեկ բառ կորզելու նրանից։

— Իսկ դուք, Ինդիանա,— խեղդվող ձայնով հարցրեց նրան,— դեռևս ինձ ձեր բարեկամը համարո՞ւմ եք։

Այս խոսքերը Ինդիանայի հոգում արթնացրին այն ամբողջ որդիական խանդաղատանքը, մանկության այն բոլոր հիշողությունները, ամեն տեսակի մտերմիկ սովորությունները, որ միացնում էին նրանց սրտերը։ Նրանք փարվեցին իրար և մեկը մյուսի գրկում արցունք թափեցին, քիչ մնաց Ռալֆն ուշաթափվեր. այդ հաղթանդամ մարմնի մեջ, այդ մեղմաբարո ու զուսպ եռանդի մեջ հզոր հույզեր էին ծլարձակում։ Նստեց, որպեսզի չընկնի, որոշ ժամանակ լուռ էր. դալուկը

պատել էր դեմքը, հետո մի ձեռքով բռնեց գնդապետի, մյուսով՝ . կնոջ ձեռքը և ասաց.

— ...ես պահին, որ բաժանվում ենք, հավանաբար նաև՝ մեկընդմիշտ, անկեղծ եղեք ինձ հետ. ձեզ հետևելու իմ առաջարկությունը ի՞նձ համար եք մերժում, թե՞ ձեր շահերից ելնելով։

— Պատվով եմ երդվում,— ասաց Դելմարը,— որ մերժելով ձեզ, զոհում եմ իմ երջանկությունը հանուն ձեր երջանկության։

— Իսկ ես,— ասաց Ինդիանան,— դուք այդ շատ լավ գիտեք, կուզենայի երբեք չլքել ձեզ։

— Աստված մի արասցե, եթե այս պահին գեթ մի փոքր կասկածեմ ձեր անկեղծությանը,— պատասխանեց Ռալֆը,— ձեր խոսքը բավական է, ձեր երկուսից էլ բավարարված եմ։

Եվ անհետացավ։

Վեց շաբաթ անց «Կորալիո» երկկայմանի նավը Բորդո նավահանգստում առագաստներն էր պարզում։ Ռալֆը բարեկամներին գրել էր, որ այդ քաղաքն էր ժամանելու նրանց մեկնելու նախորդ օրերին, բայց, ըստ իր սովորության, այնքան հակիրճ, որ անհնար էր դուշակել, թե ինչ մտադրություն ուներ. վերջին մնաս բարո՞վն էր ասելու, թե՞ ուղեկցելու էր նրանց։ Մինչև վերջին բոպեն սպասեցին նրան, և, առանց Ռալֆին տեսնելու, նավապետը հրաման տվեց մեկնելու։ Դժնատեսիլ նախազգացումներ եկան ավելանալու Ինդիանայի հոգու վրա կիտված տխուր ցավերին, երբ նավահանգստի վերջին տները ջնջվեցին ափի կանաչության մեջ։ Նա սարսռաց՝ խորհելով, որ այսուհետև մեն-մենակ էր մնալու աշխարհում ամուսնու հետ, որին ատում էր, պետք է ապրեր ու մեռներ նրա հետ՝ առանց բարեկամի, որ մխիթարեր իրեն, առանց ազգականի, որ պաշտպաներ նրա բիրտ իշխանությունից։

Բայց շրջվելով, իր հետևում, կամրջակի վրա, տեսավ Ռալֆի ժպտացող, խաղաղ ու բարեհամբույր հայացքը։

— Ուրեմն ինձ չե՞ք լքում,— ասաց Ինդիանան՝ նեռվելով նրա գիրկը, աչքերն արցունքով ողողած։

— Երբեք,— պատասխանեց Ռալֆը՝ կրծքին սեղմելով նրան։

Գլուխ XXIII

Տիկին Դելմարի նամակն ուղղված պարոն դը Ռամիերին

«Բուրբոն կղզի, 3 հունիսի, 18...

Որոշել էի այլևս չանհանգստացնել ձեզ իմ հիշողություններով, բայց տեղ հասնելուն պես կարդացի ձեր նամակը, որ Փարիզից մեկնելու նախորդ օրն էիք ինձ ուղղել, և որոշեցի պատասխանել, քանի որ խոր վշտի տվայտանքների մեջ կասկածներով շատ հեռուները գնացի. ձեր հարցում սխալվեցի և այժմ ուզում եմ սխալս ուղղել, գրում եմ ձեզ ոչ որպես «սիրեկանի», այլ որպես «մարդու»։

Ներեցեք, Ռեյմոն, կյանքիս այդ սոսկալի պահին ձեզ հրեշի տեղ դրի։ Ձեր միակ բառը, միակ հայացքը իմ սրտից ընդմիշտ վտարեցին ամեն տեսակի վստահություն, ամեն տեսակի հույս։ Գիտեմ, որ այլևս երջանիկ լինել չեմ կարող, բայց կարծում եմ, չեմ կարող դեռևս ատել ձեզ. դա վերջին հարվածը կլինի։

Այո, ձեզ ստոր մարդու տեղ դրի, դեռ ավելին՝ եսասեր մարդու։ Ատելությամբ լցվեցի ձեր հանդեպ։ Ցավով մտածեցի, որ Բուրբոնը այնքան էլ հեռու չէ, որպեսզի թաքնվեմ ձեզնից, և վրդովմունքն ինձ ուժ ներշնչեց կյանքի դառնությունն ըմպել մինչև մրուրը։

Բայց կարդալով ձեր նամակը, ինձ ավելի լավ զգացի։ Չեմ ուզում ձեր կյանքում խղճի խայթ դառնալ, ստիպելով ձեզ մտածել, թե կործանել եք իմ կյանքը։ Երջանիկ եղեք և անվրդով, մոռացեք ինձ, ես դեռ ապրում եմ և գուցե երկար կապրեմ...

Իրականում դուք մեղավոր չեք, այդ ե՞ս անմիտ վարվեցի։ Դուք սիրտ ունեք, պարզապես այն փակ էր ինձ համար։ Դուք ոչինչ չպարտադրեցիք, ես խաբվեցի։ Ոչ երդմնազանց եղաք, ոչ անզգա գտնվեցիք, պարզապես ինձ չէիք սիրում։

Ասված իմ, ինձ չէիք սիրում։ Իսկ ե՞ս, արդյո՞ք քիչ եմ սիրել ձեզ... Բայց այն աստիճան չեմ ստորանա, որ տրտնջամ, նրա համար չեմ գրում, որ անիծյալ հիշողություններով թունավորեմ ձեր ներկա կյանքը, չեմ խնդրում խղճալ ինձ

տառապանքիս համար, որ ուժ կգտնեմ մեն-մենակ կրելու իմ մեջ։ Ինձ հայտնի է այժմ, թե որ դերն է ձեզ ավելի շատ սազում. այդ պատճառով ուզում եմ արդարացնել ու ներել ձեզ։

Բավականություն չեմ պատճառի ինձ՝ հերքելով ձեր նամակը. դա շատ հեշտ է, իմ պարտականությունների վերաբերյալ ձեր արած դիտողություններին չեմ պատասխանի։ Մտահոգվելու կարիք չկա, Ռեյմոն, ես դրանք լավ գիտեմ, չափից ավելի եմ սիրել ձեզ, որպեսզի կարողանամ անմիտ ձևով դրանք ոտնակոխ անել։ Կարիք չկար նշելու, որ մարդիկ պիտի արհամարհեին ինձ իմ սխալի պատճառով. դա ինձ քաջ հայտնի էր։ Գիտեի, որ կատարածս քայլը ծանր էր նստելու ինձ վրա, անջնջելի հետք պիտի թողներ, անսահման կսկիծ պարգևեր, ամեն կողմից պիտի մերժվեի, անեծք պիտի կրեի, ամոթով պարուրվեի և ոչ մի բարեկամ չէի ունենալու, որ խղճար ինձ ու մխիթարեր։ Միակ սխալս այն էր, որ, վրստահությամբ ներշնչված, կարծեցի, թե կբացեք ձեր գիրկը, որտեղ, ձեր օգնությամբ, պիտի կարողանայի մոռանալ ամեն տեսակի արհամարհանք, թշվառություն և լքվածություն։ Միակ բանը, որ չկարողացա կանխատեսել՝ իմ բերած զոհողության մերժումն էր։ Չէի պատկերացնում, որ կարելի է այդպես վարվել։ Երբ ձեզ մոտ եկա, կանխազգում էի, որ սկզբում մերժելու եք ինձ՝ համոզմունքից ու պարտականությունից ելնելով, բայց չափից դուրս համոզված էի, որ արարքիս անդրդվելիությունը տեսնելով՝ պարտավորված պիտի զգայիք օգնել ինձ։ Ոչ, ինչ որ ճիշտն է, երբեք չէի մտածում, որ ինձ մեն-մենակ կթողնեք՝ այդքան վտանգավոր որոշում կայացնելուց հետո և թույլ կտաք քաղել դառնության պտուղները, փոխանակ ընդունելու ինձ ձեր գիրկը և ձեր սերը պատվար դարձնելու։

Այդ ժամանակ ինչպե՞ս կարհամարհեի անզոր աշխարհի արհավիրքները, չէի սարսափի նրանցից, ինչպե՞ս կշարտեի ատելությունը մի կողմ և ուժեղ կզգայի ձեր սիրով, որքա՞ն անուժ կլիներ խղճի խայթը, և ձեր ներշնչած սերը ինչպե՞ս կխեղդեր նրա ձայնը։ Միայն ձեզնով տարված, ինձ հպարտ կզգայի, որ նվաճել եմ ձեր սիրտը և ժամանակ չէի ունենա ամաչելու ինքս ինձնից։ Ձեր միակ բառը, միակ հայացքը,

մեկ համբույրը բավական կլիներ, որ ես արդար ճանաչեի ինձ և իմ կյանքում տեղ չէր մնա մարդկանց ու նրանց օրենքների համար։ Ինչ խոսք, հիմար եմ եղել, ձեր ցինիկ արտահայտությամբ՝ կյանքը ուսանել եմ սպասուհիների համար նախատեսված վեպերից, երջանիկ և պարզունակ հնարքների մեջ, որոնց ուրախություն է պատճառում արկածախնդրությունների հաջող ավարտը, անմերձենալի երջանկության անակնկալ իրականացումը։ Այդ ժամանակ, Ռեյմոն, սարսափելի ճշմարտությունն ակնարկեցիք։ Այն, ինչ ահաբեկում ու տապալում է ինձ, ձեր իրավացի լինելն է։

Մի բան պարզ չեմ պատկերացնում. անհնարինը ինչո՞ւ մեր երկուսի համար նույնը չէր, ինչո՞ւ ես՝ անզոր մի կին, զգացմունքների պոռթկումի միջից ուժ գտա մեն-մենակ հանդես գալու անհնարին և վիպային գործողությունների իրավիճակում, իսկ դուք, քաջարի տղամարդ, անկամ գտնվեցիք հետևել իմ օրինակին։ Այնինչ ժամանակին ապագայի նկատմամբ այդպիսի երազների փայփայումը դո՛ւք ներարկեցիք իմ մեջ, համաձայն էիք այդպիսի պատրանքների հետ, ինձ սնեցիք այնպիսի գաղափարով, որ նման հույսը կարող է իրականություն դառնալ։ Երկար ժամանակ ժպիտը ձեր շուրթերին, ուրախությունն աչքերի մեջ՝ լսում էիք իմ մանկական երևակայությունները և փոքրիկ պարծենկոտությունները և պատասխանում էիք սիրատենչ խոսքերով, երախտագիտությամբ։ Չէ՞ որ այն ժամանակ դուք նույնպես կույր էիք, անկանխակալ, սնապարծ։ Այդ ինչպե՞ս պատահեց, որ միայն վտանգի պահին արթնացավ ձեր դատողությունը։ Իսկ ես կարծում էի, որ վտանգը շլացնում է մարդու աչքերը, ավելացնում է վճռականությունը, չեզոքացնում է վախը։ Մի՞թե դուք՝ տղամարդիկդ, միայն մարմնական ուժ ունեք և կարող եք մահվանը հրավեր կարդալ, մի՞թե անկարող եք դառնում հոգեկան ուժի հանդեպ և չեք կարող դժվարություններ կրել։ Դուք ամեն ինչ հրաշալի կերպով կարողանում եք բացատրել. բացատրեք, խնդրեմ, նաև այս դեպքը։

Գուցե ձեր երազանքը տարբերվում էր իմ երազանքից, քանի որ իմ պատկերացմամբ՝ արիությունը սերն է։ Պատկերացնում էիք, որ սիրում եք ինձ և միանգամից զարմացած

արթնացաք ձեր սխալից այն օրն իսկ, երբ, վստահելով ձեր սիրուն, ինքս իմ հերթին սխալ գործեցի ու եկա ձեզ մոտ։ Տե՛ր աստված, ի՞նչ տարօրինակ պատրանք էր ձեր սերը. չէիք կանխատեսել բոլոր արգելքները և սարսափած նկատեցիք դրանք միայն վճռական պահին, քանի որ, երբ առաջին անգամ խոսեցիք այդ մասին, արդեն ուշ էր։

Իսկ հիմա ինչի՞ համար հանդիմանեմ ձեզ։ Մի՞թե պատասխանատու ենք սրտի հետ կատարվածի համար։ Արդյո՞ք ձեզնից էր կախված ինձ առհավետ սիրելը։ Իհարկե, ոչ։ Իմ սխալն այն էր, որ չկարողացա ավելի երկար ու ճշմարտապես դուր գալ ձեզ։ Սրտիս խորքում եմ փնտրում դրա պատճառը և չեմ գտնում։ Բայց վերջիվերջո այն ակնհայտորեն գոյություն ունի։ Գուցե ձեզ շատ եմ սիրել, գուցե իմ քնքշությունը ձանձրալի, հոգնեցուցիչ էր։ Դուք տղամարդ եք, անկախություն և հաճույք եք սիրում։ Ես ձեզ համար բեռ դարձա։ Երբեմն փորձեցի ներգործել ձեր կյանքի վրա։ Ավա՜ղ, սրանք էին այն մանր հանցանքները, որ այդքան դաժան լքումի պատճառը դարձան։

Իսկ հիմա վայելեք իմ գոյության հաշվին գնված ազատությունը, ես այլևս այն չեմ պղտորի։ Ինչո՞ւ այդ դասն ավելի շուտ չտվիք ինձ։ Գոնե այսքան մեծ ցավ չէի ապրի, հավանաբար նաև՝ դուք։

Երջանիկ եղեք. փշրված սրտիս վերջին ցանկությունն է։ Եվ կոչ մի արեք աստծո մասին խորհել, այդ հոգսը թողեք քահանաներին, որոնք կարող են մեզավորների կարծրացած հոգում հույս արթնացնել։ Ինչ վերաբերում է ինձ, հավատքս ավելի խորն է, քան ձերը։ Նույն աստծուն չեմ ծառայում, բայց ավելի լավ ու մաքուր սրտով եմ ծառայում։ Ձեր աստվածը մարդկանց աստվածն է, թագավորն է, ձեր ցեղի հիմնադիրն ու նեցուկն է։ Իմ աստվածը տիեզերքի աստվածն է, արարիչը, մարդկային էակների հույսն ու ապավենը։ Ձեր աստվածը միայն ձեզ համար է ամեն ինչ անում, իմ աստվածը կենդանի էակներին ստեղծել է մեկը մյուսի համար։ Դուք ձեզ աշխարհի տերն եք համարում, իսկ ես կարծում եմ, որ պարզապես բռնակալներ եք։ Ձեզ թվում է, թե աստված պաշտպան է կանգնում ձեզ և թույլ է տալիս հափշտակել երկրի

ամբողջ իշխանությունը։ Իմ կարծիքով նա որոշ ժամանակով համբերում է, և կգա օրը, երբ նրա շունչը ավազի հատիկների պես կցրի ձեզ։ Ոչ, Ռեյմոն, դուք աստծուն չեք ճանաչում, ավելի ճիշտ, թույլ տվեք Ռալֆին կրկնել այն, որ Լանչիում ասաց ձեզ. «Դուք ո՞չ մի բանի չեք հավատում»։ Ձեր դաստիարակությունը և անսահման տիրապետության անհրաժեշտությունը հակադրում եք ժողովրդի ուժին, առանց քննության առարկա դարձնելու՝ ձեզ ընդունել են տվել ձեր հայրերի հավատը, բայց աստծո գոյության հասկացությունը չի թափանցել ձեր հոգու խորքը, հավանաբար, երբևիցե չեք էլ աղոթել աստծուն։ Ես միայն մեկ հավատք ունեմ, գուցե միակը, որ դուք չունեք. հավատում եմ նրան, բայց ձեր հնարած կրոնը չեմ ընդունում։ Ձեր ողջ բարոյականությունը, ուսմունքը ձեր հասարակության շահերից են բխում, դրանք դուք եք օրենքի վերածել, իբր թե աստված է ստեղծել, ինչպես ձեր քահանաները, որ պաշտամունքի ծեսեր են ստեղծել՝ ազգերի վրա իրենց իշխանությունը տարածելու և հաստատելու համար։ Սակայն այս ամենը խաբկանք է ու անպատվություն։ Ես, որ վերակոչում, հասկանում եմ նրան, մի բան շատ լավ գիտեմ. ոչ մի ընդհանրություն չկա նրա և ձեր միջև։ Ամբողջ հոգով, մարմնով նրան ենթարկվելու պատճառով չեմ կարող լինել նրանց հետ, ովքեր ոտնահարում են նրա արարչագործությունները և ոչնչացնում նրա պարգևները։

Ոչ, մի խոսեք ինձ հետ աստծո մասին, հատկապես դուք, Ռեյմոն, մի ոգեկոչեք նրա անունը՝ ինձ արտաքսելու և լռություն պարտադրելու համար։ Ենթարկվելով՝ զիջում եմ միայն մարդկության իշխանությանը։ Եթե անսայի աստծո ձայնին, որ արձագանքեց հոգուս խորքում, ինչպես նաև ուժեղ ու համարձակ բնավորության ազնիվ բնազդին, որը միգուցե ամենաճշմարիտ խիղճն է, կփախչեի անապատ, կկարողանայի ապրել առանց օգնության, պաշտպանության ու սիրու կգնայի մեն-մենակ ապրելու մեր գեղեցիկ լեռների գրկում, կմոռանայի բռնակալներին, անարդարացի և ապերախտ մարդկանց։ Բայց, ավա՜ղ, մարդ անկարող է իր նմանից հեռու մնալ, նույնիսկ Ռալֆը չի կարող մենակ ապրել։

Մնաք բարո՜վ, Ռեյմոն, աշխատեք ապրել երջանիկ՝ առանց ինձ։ Ներում եմ ձեզ ինձ պատճառած ցավի համար։

Երբեմն ձեր մոր հետ խոսեք իմ մասին, իմ ճանաչած լավագույն կնոջ հետ։ Վստահ եղեք, որ իմ սրտում ոչ արհամարհանք կա, ոչ վրեժխնդրության զգացում։ Իմ թախիծն արժանի է այն սիրուն, որ տածել եմ ձեր հանդեպ։

Ինդիանա»

Խեղճ Ինդիանան գլուխ էր գովում։ Միայն սեփական արժանապատվության զգացումը դրդեց նրան այս խոր և մեղմ թախիծով տողերը գրել Ռեյմոնին, իսկ երբ ինքն իր հետ մենակ մնաց, լիովին անձնատուր եղավ ամենաբուռն տվայտանքներին։ Բայց և այնպես երբեմն ինչ-որ հուսո անքացատրելի մի ճառագայթ գալիս էր շողալու նրա շաղված աչքերի մեջ։ Գուցե Ռեյմոնի սերն էր պահում նրան. հույսը գեռ չէր կորցրել, չնայած այն դաժան դասին, չնայած այն սարսափելի մտքերին, որ ամեն օր հիշեցնում էին նրան, թե որքան սառը և թուլակամ է այդ մարդը, երբ գործը նրա անձնական շահին կամ հաճույքին չի վերաբերում։ Կարծում ենք, եթե Ինդիանան դաժան իրականության առջև աչքերը չփակեր, չէր կարողանա մինչև այդ քարշ տալ սպառված ու թոշնած կյանքը։

Գլուխ XXIV

Տիկին Դելմարի կյանքը համեմատաբար խաղաղ էր ընթանում։ Կեղծ բարեկամների հետ կապված դժվարությունների մեծ մասը հետևում էր մնացել. այդ ակտիվ միջնորդների եռանդուն մասնակցությունից նրանց կյանքն ավելի էր թունավորվում։ Սըր Ռալֆը չէր խոսում, արտաքուստ ոչ մի հարցի չէր խառնվում, բայց գործում էր ճարպկորեն. կարողանում էր հարթել ընտանեկան մանր անախորժությունները, որ բամբասանքի շնչի տակ գնալով ուռճանում էին։

Ինդիանան համարյա միշտ մենակ էր։ Նրանց տունը լեռներում էր, քաղաքի բարձրության վրա։ Ամեն առավոտ պարոն Դելմարը գնում էր նավահանգիստ, ապրանքների անձնական պահեստը, և ամբողջ օրն զբաղվում էր Հնդկաստանի ու Ֆրանսիայի հետ կատարվող առևտրի հարցերով։

Սըր Ռալֆն ապրում էր նույն տան մեջ, նրանց հետ։ Նա

հնարքներ էր գտնում, նվերներ տալու պատրվակով, բարելավել ընտանեկան պայմանները։ Զբաղվում էր բնական գիտություններով կամ հսկում էր պլանտացիաների աշխատանքները։ Ինդիանան վերագտել էր նախկին սովորությունը՝ կրեոլուհուն հատուկ ծուլությունը։ Օրվա ամենաշոգ ժամերն անցկացնում էր ընկողմանած հնդկական թիկնաթոռի մեջ, իսկ երկարատև երեկոները՝ լեռների մենության մեջ։

Երբ իրիկնամուտի քամին բարձրանում ու նրան էր հասցնում բրնձի ծաղկած անկիների բույրը, նա խորանում էր արևադարձային տափաստանների մեջ, թողնելով Դելմարին ու Ռալֆին ըմբոշխնել պատշգամբում Ֆահամի* բուրավետ թուրմը ու ծուլորեն սիգարի ծուխ արձակել։ Այդ ժամանակ ընտրում էր բարձունք տանող մատչելի մի ճանապարհ, հասնում հնադարյան լեռան հանգած հրաբուխներից մեկի խառնարանի մոտ՝ դիտելու մայրամուտը, որ բոցավառում էր ամպերը՝ ոսկու և սուտակի փոշի ցրելով շաքարեղեգների շշնջացող կատարներին, ջրից դուրս ցցված փայլփլող խութերի վրա։ Հազվագեպ իջնում էր Սեն-Ժիլ գետի կիրճը, որովհետև որքան էլ ծովը մորմոքում էր նրան, այնուամենայնիվ, կախարդական պատրանքով, հմայում էր։ Թվում էր, թե այդ ալիքների և հեռավոր մշուշների հետևից իր դեմ հառնելու է հեքիաթային մի այլ աշխարհ։

Իր հերթին Ռալֆն էլ էր ընտրել զբոսնելու համար իր նախասիրած վայրերը. դրանք ստվերախիտ էին ու փակ, որտեղ ծովային քամիները չէին թափանցում։ Օվկիանոսի տեսարանը տհաճ էր նրա համար, մանավանդ եռադարձի ծովային ճանապարհը։ Ֆրանսիայի հիշողությունը նրա սրտում դրոշմվել էր որպես անեծք։ Այդ երկրում էր դժբախտություն ունեցել կորցնելու արքությունը, վարժվել էր հանդուրժել ամեն տեսակի ցավ և համբերությամբ զինվել իր վշտերի դեմ։ Ամբողջ հոգով ձգտում էր մոռանալ այդ օրերը։ Չնայած հիասթափված էր կյանքից, բայց ուզում էր ապրել այնքան ժամանակ, որքան կարող էր օգուտ տալ որևէ մեկին։ Այսպիսով աշխատում էր ոչ մի ակնարկ չանել այդ երկրում ապրած օրերի մասին։ Նա ամեն ինչ կտար, միայն թե տիկին

* Ֆահամ— թեյ, որ պատրաստվում է խոլորձի տերևներից (Ն. Բ.)։

Դելմարի մտքից հաներ սարսափելի հիշողությունը։ Բայց չէր կարծում, որ կհաջողվի, գիտեր, որ ճարպիկ ու ճարտասան չէ, այդ պատճառով խուսափում էր Ինդիանայից և չէր փորձում նրա մտքերը ցրել։ Խիստ զսպվածության ու նրբանկատության մեջ նա շարունակում էր սառը, հասարակ հատկանիշներով ներկայանալ։ Մեն-մենակ գնում էր շատ հեռու տանջվելու, ամբողջ օրը տեսնելով նրան, թե ինչպես է վազվզում անտառներում ու լեռների մեջ թռչունների ու միջատների հետևից, կարելի էր մտածել, որ այդ որսորդը կամ բնասերը կլանված է իր միամիտ կրքով և ամբողջովին կտրված է ամեն տեսակի հոգեկան ապրումներից, որ խլրտում էին իր շուրջը։ Այնինչ որսորդությունն ու գիտությունը միայն պատրվակ էին, որոնք թաքցնում էին իր դառն ու անվերջանալի երազները։

Կոնաձև Բուրբոն կղզին իր ողջ հարթության վրա ճեղքվածքներ ունի, և այդ նեղ բացվածքների մեջ խորունկ կիրճեր են գոյացել, որտեղ գետերը գլորում են իրենց ականակիտ ու վարարած ջրերը. այդ կիրճերից մեկը Բերնիկա է կոչվում։ Հրաշագեղ մի վայր. մի տեսակ նեղ ու խոր հովիտ՝ թաքնված ուղղահայաց երկու ժայռե պատերի արանքում. նրանց մակերեսները պատված են վիմածին թփուտների փնջերով և լայնատերև պտերների խուրձերով։

Հանդիպակաց պատերի անկյունների վրա ստեղծված ակոսի միջով մի գետակ է հոսում։ Այնտեղ, ուր ճեղքն անհետանում է, գետակն է նետվում սարսափազդու անդունդների մեջ և անկման վայրում կազմում է եղեգնաբոլոր և ջրափոշիով պատված մի փոքրիկ լճակ։ Նրա ափերի շուրջը և գետի հոսանքն ի վար, որոնք սնունդ են առնում լճակից, աճում են բանանի, թուրինջի ծառեր ու նարնջենիներ. նրանք իրենց մուգ կանաչ և առողջ գույնով զորդապատում են կիրճի հատակը։

Այստեղ էր շոգից ու մարդկանցից պատսպարվում Ռալֆը։ Նրա բոլոր զբոսանքների վերջնակետը այս սիրելի վայրն էր։ Զովասուն ջրվեժի միապաղաղ աղմուկը հանգստացնում էր նրան և ցրում թախիծը։ Երկար ժամանակ սրտում ծվարած և դաժանորեն անհաղորդ մնացած գաղտնի մտորումներից տանջահար՝ գալիս էր այստեղ՝ մարդկանց անհայտ արցունք-

ներով, լուռ բողոքներով թեթևացնելու հոգու անիմաստ եռանդը և երիտասարդական խտացած ավյունը։

Որպեսզի լավ հասկանաք Ռալֆին, գուցե անհրաժեշտություն զգացվի ասել, որ կյանքի առնվազն կեսից ավելին այս ձորի մեջ էր անցկացրել։ Մանկության առաջին իսկ օրերից այստեղ էր եկել՝ ամրապնդելու արիությունը անարգարությունների դեմ, որոնց զոհն էր դարձել ընտանիքում։ Այստեղ էր լարել սրտի բոլոր զսպանակները՝ դաժան ճակատագրի դեմ պայքարելու համար և այստեղ էր ձեռք բերել անհողդողդությունը, որը դարձել էր նրա համար երկրորդ բնավորություն։ Պատանեկության տարիներին այստեղ էր բերում փոքրիկ Ինդիանային՝ ուսերին նստեցրած։ Նրան պառկեցնում էր կանաչ խոտերի վրա, իսկ ինքը գետի պաղպաջուն ջրերի մեջ ձուկ էր բռնում կամ մագլցում էր ժայռերի վրա՝ թռչունների բներ գտնելու։

Այս հիշողությունները Ռալֆի ուղեղում անընդհատ աճում և լցնում էին հոգին աննկարագրելի զառնությամբ, որովհետև ժամանակները փոխվել էին, փոքրիկ աղջնակը, որ մշտապես իր ընկերուհին էր եղել, այժմ դադարել էր բարեկամ լինելուց կամ առաջվա նման ամբողջ հոգով նվիրված չէր իրենց։ Հիմա Ինդիանան որքան էլ փոխադարձեր Ռալֆի տածած գորովը, նվիրվածությունը, խնամքը, համենայն դեպս մի պատճառ կար, որ խանգարում էր միմյանց նկատմամբ անկեղծ լինել. դա հիշողությունն էր, որի վրա ոլորապտույտ շարժվում էին իրենց կյանքի բոլոր հույզերը։ Ռալֆն զգում էր, որ այլևս չէր կարող այդ թեմային անդրադառնալ, մեկ անգամ, այն սարսափելի, վտանգով լի օրը փորձել էր, և խիզախությունը ոչ մի արդյունք չէր տվել։ Հիմա նորից շոշափել այդ թեման՝ իր կողմից բարբարոսություն կլիներ։ Եվ Ռալֆը նախընտրեց ներել Ռեյմոնին՝ այդ աշխարհիկ մարդուն, քան արդարության համար Ինդիանայի ցավն ավելացնել։

Այդ պատճառով լռում էր և խուսափում նրա ներկայությունից։ Քանի որ նույն հարկի տակ էին ապրում, նա ջանում էր Ինդիանային հանդիպել միայն ճաշի ժամերին, բայց միաժամանակ, խորհրդավոր նախախնամությամբ, հեռվից հեռու հսկում էր նրան։ Ռալֆը տնից դուրս էր գալիս միայն շոգ օրերին, երբ Ինդիանան նեռվում էր իր ցանցավոր ճոճքի

մեջ, իսկ երեկոյան, երբ դուրս էր գալիս զբոսնելու, Ռալֆը տարբեր առիթներով Դելմարին թողնում էր պատշգամբում և գնում էր Ինդիանային սպասելու ժայռի ստորոտին, որտեղ, ինչպես հայտնի էր նրան, տիկին Դելմարը սովորություն ուներ նստելու։ Ռալֆը ժամերով մնում էր այնտեղ, ճյուղերի արանքից մերթ ընդ մերթ հետևում էր նրան ճերմակ լուսնի լույսի տակ, բայց երբեք չէր խախտում այն կարճ տարածությունը, որ բաժանում էր նրան, չհամարձակվելով մի պահ անգամ ընդհատել նրա թախծոտ երազանքը։ Երբ Ինդիանան հովիտ էր իջնում, միշտ հանդիպում էր Ռալֆին արագընթաց գետակի ափին, որի եզերքով տրահետը հասնում էր իրենց տան մոտ։ Նստում էր մեծ քարաբեկորների վրա, որոնց շուրջը ջրի արծաթե ցայտերը էին սարսռում։ Երբ Ինդիանայի ճերմակ զգեստը դծագրվում էր ափին, Ռալֆը լուռ վեր էր կենում, առաջարկում էր թևը և ուղեկցում էր նրան տուն, առանց մի խոսք ասելու, եթե Ինդիանան սովորականից ավելի տխուր ու ընկճված էր լինում, ինքը խոսք չէր բացում։ Հետո Ռալֆը թողնում էր նրան, քաշվում իր սենյակը և սպասում էր մինչև տանը բոլորը քնեն։ Եթե Դելմարը գլխում ծագած առաջին իսկ պատճառաբանությամբ բարկացած բարձրացնում էր ձայնը, Ռալֆը գնում էր նրա մոտ և ամեն անգամ հաջողվում էր հանգստացնել նրան կամ ցրել մրտքերը, երբեք ցույց չտալով, որ դիտումնավոր է արել այս ամենը։ Նրանց բնակարանային պայմանները, համեմատած մեր տների հետ, բավական տարբերվում են, անընդհատ մեկը մյուսին հսկողության տակ են պահում, և գնդապետը ստիպված էր ավելի զուսպ լինել իր պոռթկումների մեջ։ Ռալֆի կերպարանքը ամեն առիթով, ամենաչնչին աղմուկի դեպքում ցցվում էր նրա և հնոց արանքում և ձգված էր պահում պարոն Դելմարին, որովհետև, խոր ինքնասիրության տեր մարդ լինելով, երբեմն չէր ցանկանա պարտվել համբ և միաժամանակ խստաբարո հսկիչից։ Որպեսզի ձերբազատվեր այդ հիմար վիճակից և օրվա ընթացքում առնտրական անհամաձայնությունների հետ կապված տրամադրությունից, Դելմարն սպասում էր գիշերվա քնելու ժամին, որ ազատվի իր դատավորից։ Զուր ջանքեր. դաղտնի լսողությունը հսկում էր

նրան. առաջին իսկ խիստ ու կոպիտ բառերի պոռթկումի հետ, որ արձագանքում էր բնակարանի բարակ միջնորմների հետևից, Ռալֆի սենյակում պատահականորեն ինչ-որ կահույք էր տեղաշարժվում կամ ծանր քայլեր էին լսվում, որ կարծես պարտադրում էին լռել և հասկացնում էին, որ զգուշավոր ու համբերատար պահապանը քնած չէ։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Գլուխ XXV

Այնպես պատահեց, որ օգոստոսի ութին հաստատված կառավարական նոր կազմը Ֆրանսիայում շատ հարցեր փոխելով՝ ծանր հարված հասցրեց նաև Ռեյմոնի ունեցվածքին և հասարակական դիրքին։ Պարոն դը Ռամիերն այն կույր սնապարծներից չէր, որոնք ոգևորվել էին կարճատև հաղթանակով։ Նա քաղաքականության մեջ ներդրել էր իր ամբողջ հոգին, նրա վրա հիմնել էր ապագայի բոլոր ծրագրերը։ Հույս ուներ, որ թագավորը, ճարպիկ գործարքի ուղի ընտրելով, կկարողանար բավական երկար ժամանակ երկրում պահպանել այնպիսի հավասարակշռություն, որ ապահովեր ազնվական ծագում ունեցող ընտանիքների գոյությունը։ Բայց Պոլինյակ իշխանի հայտնվելով՝ խորտակվեց նաև այդ հույսը։ Ռեյմոնը շատ հեռուներն էր տեսնում և բավական լավ էր ճանաչում «նոր» հասարակությանը, որպեսզի, ծրագրեր կազմելու համար, հույս դներ ժամանակավոր հաջողությունների վրա։ Հասկացավ, որ իր բախտը երերում է միապետության ճակատագրին համընթաց, և ունեցվածքը, գուցե նաև կյանքը, մազից են կախված։

Նա հայտնվեց նոր ու դժվարին կացության մեջ։ Չնայած իր նվիրվածության հետ կապված ամեն տեսակ վտանգներին, պատվախնդրությունը պարտադրում էր հավատարմորեն ծառայել թագավորական ընտանիքին, քանի որ նրա բոլոր շահերը մինչ այդ կախված էին եղել այդ տոհմից։ Այս առումով նա չէր կարող խղճի դեմ գործել ու գավաճանել նախնյաց հիշատակին։ Բայց որպես զգուշավոր և խելամիտ մարդ, այնքան էլ հավանություն չէր տալիս այդ արագահաս առաջխաղացումներին՝ բացարձակ միապետությունը կանխելու հարցում, և դա, ինչպես ինքն էր ասում, հակասում էր իր ներքին համոզմունքներին։ Քաղաքական մարքի այդպիսի ուղղությունը սպառնում էր նրա ձգտումնե-

րի իրականացմանը, դեռ ավելին, ծիծաղելի վիճակի մեջ էր գցում իրեն՝ հայտնի հրապարակախոսին, որը բազմիցս հանդգնել էր թագավորի անունից արդարություն խոստանալ բոլորին և իր երդումին հավատարիմ մնալու պարտավորություն ստանձնել։ Իսկ հիմա կառավարության գործողությունները ձևական բնույթ էին տալիս երիտասարդ քաղաքագետի հավաստիացումներին և հերքում էին դրանք։ Հանգիստ և անտարբեր բնավորության տեր մարդիկ, որոնք դեռ երկու օր առաջ սահմանադրական միապետությունից էին կառչած, այժմ հակառակ դիրք էին բռնում և կեղծիք, խաբկանք էին տեսնում Ռեյմոնի ու նրա համախոհների ասածների մեջ։

Լքված զգալով, Ռեյմոնն իրոք տառապեց. նրան թվաց, թե ողջ-ողջ թաղված է քայքայման եզրին կանգնած այնպիսի տենդագին հասարակության մեջ, որ անզոր է հարել այս կամ այն միավորմանը, ոչ միայն թույլ լինելու պատճառով, այլ այն բանի համար, որ դժվարանում է ընտրություն կայացնել։ Տառապում էր, որ չի կարող ներգրավվել ամենուրեք ծփացող ռազմական դրոշների ներքո, վճռական մարտի հրավեր կարդալ նույնիսկ ամենաանշան ու անկարող մարդկանց։ Հիվանդության սոսկալի ցավերը, լքվածությունը, հոգեկան տառապանքը, տենդը աննկատելիորեն շեղեցին նրա մտքի ընթացքը։ Հավանաբար, առաջին անգամ լինելով, ինքն իրեն հարց տվեց. արդյո՞ք բարձր հասարակությունն արժանի էր իր գործադրած ջանքերին, որ չէր խնայել նրան դուր գալու համար, և տեսնելով, թե որքան անտարբեր է այժմ այդ նույն հասարակությունն իր հանդեպ, որքան արագ է մոռացել իր ընդունակությունները և անունը, դատապարտեց նրան։ Ու չնայած ի դերև էին ելել բոլոր հույսերը, բայց այն մտքից, որ նա հասարակությանը նայել էր միայն որպես անձնական շահերից բխող միջոցի և նպատակին հասել էր իր անձնական շնորհքով, Ռեյմոնը հանգստացավ։ Ոչ մի բան այնքան չի ամրապնդում եսասիրությունը, որքան՝ արամաբանությունը։ Ռեյմոնը հետևյալ եզրակացության հանգեց. կազմակերպված հասարակության մեջ ապրող յուրաքանչյուր մարդ իրեն երջանիկ զգալու համար հասարակական կյանքում և անձնական կյան-

քում անհրաժեշտաբար պետք է հաջողություն ունենա, բարձրաշխարհիկ կյանքում պետք է հաղթանակներ ձեռք բերի և ընտանիքի գրկում հաճույք վայելի։

Ռեյմոնի հիվանդության ժամանակ նրան անձնուրացաբար խնամելիս, մայրը ծանր հիվանդացավ։ Այժմ սեփական ցավերը մոռանալու և մորը հսկելու հերթը իրենն էր, բայց ուժերը չպատեցին։ Ուժեղ բնավորության տեր, միաժամանակ զգացմունքային մարդիկ վճռական պահերին իրենց առողջ են զգում և հրաշքներ գործում, իսկ թուլակամ և անտարբեր անձնավորությունները անկարող են գերբնական ուժ ստանալ։ Ռեյմոնը, ըստ հասարակության կարծիքի, նվիրված զավակ էր, բայց չտոկաց այդ ծանրաբեռնվածությանը։ Վշտով համակված, անկողնում իր սնարի մոտ տեսնելով միայն ծառաներին կամ հասարակական կյանքի խլրտումներին մասնակցելու համար շտապող հազվադյուտ ընկերների, դարձյալ հիշեց Ինդիանային և անկեղծորեն տենչաց նրան, քանի որ նրա կարիքն այժմ շատ էր զգում։ Հիշեց, թե ինչպիսի ջերմեռանդությամբ էր խնամում իր ծեր ու ծանրաշունչ ամուսնուն, և պատկերացրեց այն քնքուշ, ուշադիր վերաբերմունքը, որով կարող էր նա շրջապատել իր սիրեցյալին։

«Եթե համաձայնեի ընդունել նրա զոհողությունը,— մտածում էր Ռեյմոնը,— դա անպատվություն կլիներ նրա համար, բայց հիմա ինչ նշանակություն կարող էր ունենալ ինձ համար։ Թեթևամիտ ու եսասեր հասարակությունից լքված, այժմ մենակ չէի լինի։ Նա, որին բոլորը արհամարհանքով մերժելու էին, հիմա իմ ոտքերի առջև կլիներ, սիրով համակված։ Իմ ցավերի հետ կարտասվեր, կմեղմեր տանջանքներս։ Ինչո՞ւ վռնդեցի այդ կնոջը։ Նա այնքան շատ էր սիրում ինձ, որ երջանկություն նվիրելով, կմխիթարվեր ու կմոռանար մարդկանց արհամարհանքը իր հանդեպ»։

Ռեյմոնը որոշեց կազդուրվելուն պես ամուսնանալ, և հիշողության միջով անցկացրեց անուններ ու դեմքեր, որոնք գրավել էին իր ուշադրությունը, երկու դասակարգերի՝ բուրժուաների և արիստոկրատների սալոններում։ Հմայիչ պատկերներ անցան նրա երազների միջով. ծաղիկներով զարդարված մաղահարդարանքներ, կարապի աղվամազից վրդ-

կապերով պարուրված ձյունաճերմակ ուսեր, սեղմիրանների մեջ պրկված՝ ատլաս ու մետաքս կրող հեզաճկուն մարմիններ, և այս գրավիչ ուրուները իրենց թափանցիկ թևերը թափահարում էին Ռեյմոնի ծանրացած ու տենդալից աչքերի վրա։ Բայց այդ փերիներին պատկերացնում էր միայն պարահանդեսի օծանելիքներով հագեցած ոլորապտույտի մեջ։ Ուշքի գալով, նա հարց տվեց իրեն. նրանց շրթներն արդյո՞ք սեթևեթող ժպիտից բացի այլ ժպիտ կարող էին ունենալ, նրանց սպիտակ, փափկասուն ձեռքերը կարո՞ղ էին վերքեր կապել, նրանց սրամիտ ու պայծառ միտքը կարո՞ղ էր դժվարություններն անտեսելով, ցավատանջ հիվանդի կողքին մխիթարանքի ու վերացարկելու խոսքեր գտնել։

Այս պրակտիկ դատողությունները պարզորոշ ցույց էին տալիս նրան, որ զգացմունքը ամուսնական կյանքում անհնշան դեր է կատարում, և այն հույսը, որ մի օր իր սիրուն արժանի կողակից կգտնի, հիմնում էր միայն երջանիկ պատահականության վրա։ Մինչդեռ հիվանդությունը կարող էր երկար տևել, իսկ բախտավոր օրերի հույսը ամենևին չէր ջնջում ներկայի սուր ցավերը։ Տխուր եզրակացությունների հանգեց. նա այն օրը կուրորեն գործեց, երբ հրաժարվեց փախցնել տիկին Դելմարին, և անիծեց իրեն, որ չկարողացավ հասկանալ իր սեփական շահը։

Այս մտորումների մեջ էր, երբ ստացավ Բուրբոն կըզզուց առաքված Ինդիանայի նամակը։ Չնայած այն հանգամանքին, որ այդ կինը դժբախտ էր և կարծես պետք է ընկրճված լիներ, պահպանել էր իր մռայլ, սակայն անենկուն եռանդը, և դա Ռեյմոնի վրա մեծ տպավորություն գործեց։

«Սխալվեցի,— մտածեց նա,— ճշմարիտ սիրով էր սիրում և շարունակում է սիրել ինձ, նա ընդունակ էր հերոսական արարքներ գործել, որ ընդհանրապես կանանց ուժից վեր է, իսկ հիմա գուցե արժե մեկ բառով մագնիսի նման աշխարհի մեկ ծայրից մյուսը ձգել նրան։ Դժբախտաբար այդ քայլը փորձելու համար իմ տրամադրության տակ պետք է լինի վեց կամ գուցե նաև ութ ամիս, համենայն դեպս, փորձեմ»։

Այդ մտքերով քնեց, բայց շուտով արթնացավ հարևան

սենյակից եկող մեծ իրարանցումից։ Դժվարությամբ վեր կացավ անկողնուց, հագավ տնային խալաթը և մի կերպ հասավ մոր սենյակը. տիկին դը Ռամիերը վատ էր զգում։

Լեռավոտյան մայրը ուժ գտավ իր մեջ խոսելու որդու հետ. պիտեր, որ հաշված ժամանակ է մնացել ապրելու և զբաղվեց որդու ապագայով։

— Դուք, հանձին ինձ, կորցնում եք ձեր լավագույն ընկերուհուն,— ասաց մայրը,— ասված թող փոխարինի ինձ ձեզ արժանի կողակցով։ Բայց զգուշացեք, Ռեյմոն, ձեր կյանքի անպորը մի զոհաբերեք փառասիրական պատրանքներին։ Ավա՜ղ, ես միայն մի կին եմ ճանաչել, որին կուզեի ապրիս պես ընդունել, բայց ասված արդեն տնօրինել է նրա ճակատագիրը։ Չնայած դրան, լսեք, որդիս, պարոն Դելմարը ձեր է և ուժասպառ է եղել, ո՞վ իմանա, գուցե այդ երկար ճամփորդությունն ավելի է քայքայել նրա առողջական վիճակը, ուժերը։ Հարգեք նրա կնոջ պատիվը, որքան այդ մարդը կապրի, բայց, եթե, ինչպես կարծում եմ, ամամանված լինի շուտով հեռանալ ինձ հանդերձյալ կյանքում, հիշեք, որ նա կյանքում մի կին ունի՝ ձեզ նույնքան սիրող, որքան ձեր մայրը։

Երեկոյան տիկին դը Ռամիերը որդու թևերի մեջ ավանդեց հոգին։ Ռեյմոնը ծանր ու խոր վիշտ ապրեց. այսպիսի կորուստի ողջ ձևական զգացմունքների, կամ հաշվենկատության մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Մայրը իրոք, խիստ անհրաժեշտ էր նրան։ Հանձին մոր, նա կորցնում էր իր կյանքի իսկական նեցուկին։ Նրա գունատ ճակատի, հանկած աչքերի վրա հաստատության արցունքներ թափեց. պատապարտեց երկնային տիրակալին, անիծեց իր բախտը, լաց եղավ նաև Ինդիանայի համար։ Հաշիվ պահանջեց աստծուց իրեն հասանելիք երջանկության համար, հանդիմանեց նրան, որ սովորական մահկանացուի պես էր վարվել իր հետ և ամեն ինչ միանգամից խլել իրենից։ Հետո կտրվածեց այդ աստծո գոյությանը, որ պատժում էր իրեն։ Նախընտրեց մեռնել, քան ենթարկվել նրա կամքին։ Կյանքի պաժան իրականության հետ բախվելով, Ռեյմոնը կորցրեց բոլոր պատրանքները և նորից բարձր ջերմությամբ անկողին ընկավ՝ ջարդուփշուր եղած, ինչպես գահընկեց արքա, ինչպես երկնքից վտարված հրեշտակ։

Երբ մի փոքր կազդուրվեց, թեթևակի հայացք գցեց Ֆրանսիայում սիրող իրավիճակի վրա. վատ իրադրություն էր, ամեն կողմից ժողովուրդը հրաժարվում էր հարկեր վճարել։ Ռեյմոնը զարմացավ միապետության կողմնակից իր համախոհների հիմար, կույր հավատը տեսնելով և որոշեց առայժմ չնետվել այդ թոհուբոհի մեջ, փակվեց Սերսիում՝ մոր և տիկին Դելմարի տխուր հիշողությունների հետ։

Անընդհատ խորացնելով նախկինում թեթևորեն շոշափած մտքերը, Ռեյմոնը հանգեց այն եզրակացության, որ Ինդիանան վերջնականապես կորած չէր իր համար, և եթե ցանկանար, նա կբերեր նրան։ Այս որոշման կայացումը ծանր դժվարությունների հետ էր կապված, բայց առավելությունները մեծ էին։ Նրա համար ձեռնտու չէր սպասել մինչև Ինդիանան կայրիանար և հետո միայն ամուսնանար նրա հետ, ինչպես տիկին դը Ռամիերն էր խորհուրդ տվել։ Դելմարը քսան տարի էլ կարող էր ապրել, իսկ Ռեյմոնը չէր ուզում հրաժարվել այդ շահավետ ամուսնության հետ կապված երջանիկ հնարավորությունից։ Նրա վատ ու բեղուն երևակայությունը ավելի փայլուն նախագծեր էր կառուցում ուղեղում։ Մի փոքր նեղություն կրելով, կարող էր Ինդիանային իր կամքը թելադրել։ Իրեն բավական ճարպիկ և խորամանկ էր զգում՝ այդ վսեմ և կամքից ուժեղ կնոջը հնազանդ ու նվիրված սիրուհի դարձնելու համար։ Կարող էր նրան պահպանել հասարակության կատաղի կարծիքից, թաքցնել իր անձնական կյանքի անթափանցելի որմի ետևում, պատսպարանի խորքերում պահել անգին գանձի պես և օգտագործել մենակության և տխրության պահերին՝ վայելելով նրա մեծահոգության և մաքրամաքուր խանդաղատանքի պարգևած երջանկությունը։ Ամուսնու զայրույթն անգամ նրան այնքան էլ չէր մտահոգում։ Երեք հազար վիրստ ճանապարհ չէր կարի՝ կնոջը պահանջելու համար, երբ սեփական շահերը անխոնջ գամել էին նրան մի այլ աշխարհում։

«Իմիջիայլոց,— նաև մտածում էր Ռեյմոնը,— այդ կինն ինձ համար ամեն տեսակի զոհաբերության կգնա, աշխարհն ինձ համար ոտքի տակ կառնի, իր ետևում կթողնի կենցաղի, ապրուստի հետ կապված բոլոր միջոցները և կխափանի ետ-

պարձի բոլոր ուղիները։ Հասարակությունը միայն մեզ և ընդհանուր բնույթի արատներն է դատապարտում, իսկ հազվադյուտ համարձակ քայլից զարմանում է, բացառիկ դժբախտությունից զինաթափ է լինում։ Ինդիանան հասարակության խղճահարությանը կարժանանա, գուցե նաև՝ հիացմունքին, որովհետև այդ կինը կանի ինձ համար այն, ինչ չէր համարձակվի փորձել որևէ մեկ ուրիշը։ Պախարակելի կդառնա, բայց ոչ ծիծաղելի, ես էլ իմ հերթին ինձ վրա մեծ մեղք չեմ վերցնի, քանի որ իր սիրո այդքան մեծ առհավատչյան տեսնելուց հետո ինչպե՞ս կարող էի չընդունել ու չպաշտպանել նրան։ Ընդհակառակը, իմ սխրագործությունը, մեծ հավանականությամբ, գովասանքի կարժանանա։ Համենայն դեպս, կգտնվեն մարդիկ, որ կպաշտպանեն իմ արարքը և քննարկման նյութ դարձնելով՝ կփառաբանեն նաև իմ անձը։ Հասարակությունը երբեմն սիրում է անտեսվել, բայց միաժամանակ չի հիանում նրանցով, ովքեր զարտուղի ճանապարհներ են ընտրում։ Մեր ժամանակներում հասարակության կարծիքը մտրակի հարվածներով պետք է զեկավարել»։

Նման մտքերի ազդեցության տակ Ռեյմոնը գրեց տիկին Դելմարին։ Այդպիսի նամակ կարող էր կազմել միայն իր նման ճարպիկ ու փորձառու մարդը։ Այն ներշնչում էր սեր, խղճմտանք և հատկապես հնչում էր ճշմարտացի։ Ավա՜ղ, էլ ինչ իսկական ճկուն եղեգն, որ ամենափոքր շնչից չկարողանա ուղածդ կողմը թեքվել։

Բայց և այնպես Ռեյմոնը բավական խելամիտ վարվեց՝ նամակում որոշակիորեն չնշելով իր մտադրությունը։ Զգացնում էր, թե Ինդիանայի վերադարձը նրա համար անսպասելի երջանկություն կլիներ, բայց այս անգամ հարևանցիորեն էր ակնարկում նրա պարտականությունները։ Գրում էր մոր վերջին խոսքերը, տենդագին կերպով նկարագրում էր այդ կորուստի պատճառով նրա հոգում բուն դրած հուսահատությունը, նկարագրում էր մենակության տառապանքը և առողջությանը սպառնացող վտանգը։ Նա մոայլ ու սարսափելի նկարագրությամբ գծում էր Ֆրանսիայի հորիզոնում խոշորացող հեղափոխության պատկերը և ամեն կերպ ձեռնտու, որ արագ է մենակ կրկին համար այդ հարվածները, միաժամանակ հասկացնում էր Ինդիանային, որ հասել է պահը

ապացուցելու նրա պոռթկուն հավատարմությունը, վտանգներով լի անձնվիրությունը, որով այնքան հպարտանում էր։ Ռեյմոնը գաղտագաղտում էր իր ճակատագիրը և ասում էր, որ առաքինությունը թանկ է նստել նրա վրա, որ իր լուծը բավական ծանր է, որ երջանկությունն իր ձեռքում էր, բայց իր մեջ ուժ էր գտել հավիտենական մենակության գաղտագաղտելու իրեն։

«Այլևս ինձ չասեր, թե սիրել եք ինձ,— ավելացրեց վերջում,— ես հիմա այնքան ուժասպառ եմ և հուսալքված, որ անիծում եմ իմ արիությունը և ատում եմ իմ պարտականությունները։ Ասացեք միայն, որ մոռացել եք ինձ և երջանիկ եք, որպեսզի մեջս ուժ գտնեմ չխորտակելու այն կապանքները, որ մեզ բաժանում են իրարից»։

Մի խոսքով, երբ շեշտում էր իր դժբախտության մասին, Ինդիանային հասկացնում էր, որ սպասում է նրան։

Գլուխ XXVI

Նամակն ուղարկելուց և այն Բուրբոն կղզի հասնելուց հետո երեք ամիս էր անցել։ Այդ ընթացքում տիկին Դելմարի վիճակն ավելի անտանելի էր դարձել ընտանեկան մի միջադեպից հետո և շրջադարձային նշանակություն ստացել նրա համար։ Ինդիանան սովորություն էր դարձրել ամեն իրիկուն գրել օրվա ընթացքում տարած իր ծանր մտորումների մասին։ Տառապանքի օրագրի նյութերն ուղղված էին Ռեյմոնին։ Նա ամենևին մտադրություն չուներ իրազեկ պահելու Ռեյմոնին իր մտատանջությունների մասին, բայց այս միջոցով կարծես կապ էր պահպանում նրա հետ, երբեմն կրքոտ կերպով, երբեմն գառնացած՝ պատմելով նրան իր կյանքի ցավերի, զգացողությունների մասին, որ խեղդել չէր կարողանում։ Այս թղթերն ընկան պարոն Դելմարի ձեռքը, ավելի ճիշտ, կոտրեց այն արկղիկը, որտեղ պահվում էր օրագիրը, որոնց հետ նաև՝ Ռեյմոնի նախկին նամակները։ Խանդով ու զայրույթով լցված, ամուսինը աչքերով հոշոտեց գրանք։ Կատաղության անմիջական բռնկման մեջ կորցրեց ինքնատիրապետումը և սաստիկ տրուփող սրտով, ջղաձգված մատներով դուրս եկավ ճանապարհի վրա՝ սպասելու կնոջը, որ վերադառնալու էր զբոսանքից։ Եթե Ինդիանան մի քանի բոպե ուշանար, գուցե այդ դժբախտ մարդը ժամանակ ունենար սանձելու զայրույթը, բայց երկուսն էլ չարաբաստիկ աստղի տակ էին ծնված. այնպես պատահեց, որ կինը նույն բոպեին հայտնվեց նրա մոտ։ Այդ ժամանակ, առանց մի խոսք ասելու, Դելմարը բռնեց նրա մազերից, տապալեց գետնին, երկարաճիտ կոշիկների կրունկներով սկսեց հարվածներ տեղալ գլխին։ Երբ նրա աչքերին պատկերացավ վայրի արարքի արյունոտ հետևանքը, որ թույլ էր տվել մի թույլ էակի հանդեպ, ատեց ինքն իրեն, խելակորույս վազեց իր սենյակը, կողպեց դուռը, լցրեց ատրճանակը և ուզեց ինքնասպանություն գործել։ Բայց երբ պատրաստվել էր իրագործել նպատակը, պատշգամբում տեսավ Ինդիանային. նա բարձրացել էր գետնից և սառնասրտորեն, հանգիստ սրբում էր դեմքից հոսող արյունը։ Դելմարին թվացել էր, թե սպանել է նրան, բայց ոտքի վրա տեսնելով Ինդիանային, ուրախացավ, իսկ հետո զայրույթը նոր ուժով համակեց նրան։

—Ա՜խ, միայն մի քերծվածք և ուրիշ ոչինչ,— գոռաց նա,— իսկ դու սատկելու էիր արժանի։ Ո՜չ, ինքնասպանություն չեմ գործի, որովհետև դրանից հետո կգնաս սիրեկանիդ գրկում զվարճանալու։ Չեմ ուզում իմ ձեռքով ձեր երջանկությունն ապահովել, ուզում եմ ապրել, որ տանջեմ ձեզ, տեսնեմ՝ ինչպես ես ցավի ու տառապանքի մեջ շունչդ փչում, ուզում եմ ապրել, որ այդ ստոր արարածին անպատվության դուռը հասցնեմ, որովհետև նա դաժան խաղ խաղաց ինձ հետ։

Կատաղի տանջանքների մատնված՝ նա դեռ շարունակում էր ձայնը գլուխը գցել, երբ պատշգամբի վրա բացվող մի փոքրիկ դռնից Ռալֆը ներս մտավ ու նկատեց ահավոր վիճակի մեջ ընկած հերարձակ Ինդիանային։ Վերջինս սարսափի ոչ մի նշան չէր արտահայտել, ճիչ չէր արձակել, ձեռքերը չէր բարձրացրել՝ ամուսնուց շնորհ հայցելու։ Կյանքից հոգնած՝ դաժան ցանկությամբ, կարծես Դելմարին հնարավորություն էր տվել մարդասպանություն գործելու։ Ոչ մեկին օգնության չէր կանչել։ Այդ դեպքը տեղի ունենալիս, անտարակույս, Ռալֆը քսան քայլ հեռավորության վրա էր գտնվում և ոչ մի ձայն չէր լսել։

— Ինդիանա,— բացականչեց նա զարհուրանքից ու զարմանքից ընկրկելով,— ձեզ ո՞վ է այս օրը գցել։

— Դեռ հարցնո՞ւմ եք,— պատասխանեց նա դառը ժպիտով,— էլ ո՞վ, եթե ոչ՝ ձեր բարեկամը, որի ձեռքին է գտնըվում իրավունքը և կամքը։

Ռալֆը գետին շպրտեց ձեռքի եղեգնափայտը. Դելմարին խեղդելու համար խոշոր ձեռքերից բացի այլ զենքի կարիք չէր զգում։ Երկու ոստյունով հասավ դռան մոտ, բռունցքի մի հարվածով խորտակեց փականքը... Դելմարը փռված էր գետնին՝ դեմքը կապտած, կոկորդն ուռած, ուղեղի կաթված էր ստացել։

Ռալֆն անմիջապես նետվեց հատակին ցրված թղթերը վերցնելու։ Ճանաչելով Ռեյմոնի ձեռագիրը, տեսնելով արկղիկի կտորտանքները, ամեն ինչ հասկացավ։ Խնամքով հավաքեց մեղադրանքի վկաները, վազեց հանձնեց տիկին Դելմարին՝ պարտադրելով անմիջապես այրել դրանք։ Հավանաբար, Դելմարը ժամանակ չէր ունեցել բոլորը կարդալու։

Հետո խնդրեց իր սենյակը գնալ, մինչև օգնության կկանչեր ծառաներին։ Բայց Ինդիանան ոչ թղթերն էր ուզում այրել, ոչ վերջը թաքցնել։

— Ոչ,— ասաց նա հպարտորեն,— չեմ ուզում։ Այս մարդը ժամանակին չուզեց թաքցնել իմ փախուստը տիկին դը Քարվախալից, շտապեց հրապարակել այն, ինչ անվանում էր իմ անպատվությունը։ Հիմա թող բոլորը տեսնեն ի՞նչ անպատավության հետքերը, որ բարեհաճեց դրոշմել դեմքիս։ Տարօրինակ արդարություն է, երբ պահանջում են թաքցնել մեկի հանցանքը, այնինչ վերջինս իրեն իրավունք է վերապահում անիրավաբար ոտնահարել մյուսի պատիվը։

Երբ Ռալֆը տեսավ, որ գնդապետն ի վիճակի է իրեն լսելու, սկսեց անսպասելի կոպտությամբ ու կրքով մեղադրանքի խոսքեր ասել։ Դելմարը, որ իսկապես չար մարդ չէր, երեխայի պես լաց եղավ և ընդունեց իր մեղքը, բայց սրտով չէր զղջում, այն մարդու նման, որ գործում է բռնության ազդեցության տակ, հաշիվ չտալով իրեն ոչ պատճառի, ոչ հետևանքի համար։ Հիմա նա պատրաստ էր հպատակ ծայրահեղության դիմել. ուզում էր կնոջը կանչել և ներողություն խնդրել, բայց Ռալֆը ընդդիմացավ և ջանաց

հասկացնել, որ այդ մանկական քայլը կարող էր հնդինակալրկել նրան և ամենևին չհաշտեցնել Ինդիանային այն մարի հետ, որ կրած վիրավորանքները այդքան շուտ մոռանա։ Նա շատ լավ գիտեր, որ կան աններելի սխալներ և չմոռացվող դժբախտություններ։

Այդ պահից կինը նոզկանք զգաց ամուսնու հանդեպ։ Դելմարն ինչ էլ արեց սխալն ուղղելու համար, ընդհակառակը, նպաստեց կորցնելու գոնե մինչ այդ կնոջ մոտ ունեցած հարգանքը։ Եվ իրոք, նա շատ մեծ սխալ էր գործել։ Եթե մարդ իր մեջ ուժ չի գտնում վրեժխնդրությունը սառնորեն ու աննկուն մինչև վերջ հասցնելու, ավելի լավ է հրաժարվի դժգոհությունը կամ թշնամանքը ցուցադրելու ամեն մի փորձից։ Այս հարցում անհնար է ոսկի միջինը գտնել. կամ պետք է քրիստոնյա լինել ու ներել կարողանալ, կամ աշխարհական լինել ու բաժանվել կնոջից։ Բայց Դելմարն էլ եսասիրության իր բաժինն ուներ. զգում էր, որ ծերացել է, կնոջ խնամքի կարիքն օրեցօր ավելի մեծ անհրաժեշտություն էր դառնում։ Նա անսահմանորեն վախենում էր մենակությունից և, եթե վիրավորված ինքնասիրության ազդեցության տակ վերադառնում էր զինվորականի նախկին սովորությունը և կոպտում էր կնոջը, բանականությունն իսկույն հասցնում էր նրան լքումից վախեցած ծերունուն հատուկ թուլամորթությանը։

Իր հերթին տիկին Դելմարը, խորապես վիրավորված ամուսնական օրենքներից, լարում էր ներքին բոլոր ուժերը՝ ատելությամբ և արհամարհանքով լցվելու դրանց դեմ։ Այնուհանդերձ նրա ուղեղի խոր ծալքերում բույն էր դրել զուտ անձնական մի զգացողություն։ Բայց, գուցե, երջանկության ձգտելու անհրաժեշտությունը, որ հոշոտում է մարդուն, անարդարության հանդեպ լցված ատելությունը, ազատության ծարավը, որոնք մեռնում են միայն կյանքի ավարտի հետ, եսասիրության հիմնական հատկանիշներն են, որի տակ անգլիացիները հասկանում են սեր՝ իր անձի նկատմամբ, չդիտելով այն որպես արատ, այլ՝ յուրաքանչյուր մարդուն վերապահված իրավունք։ Ինձ թվում է, թե ընտրված անհատը, որ պատապարված է տառապելու օրենքի ձեռքին, որը կարող է ձեռնտու լինել այլոց համար, պետք է, եթե մի

փոքր կամքի ուժ կա նրա մեջ, պայքարի այդ կամայական բռնակալական չծի գեմ։ Կարծում եմ նաև, որքան խորն է ու ազնիվ նրա հոգին, այնքան ավելի զգայուն է նա մարդկային անարդարությունների հանդեպ։ Եվ եթե այդպիսի մարդը երազել է առաքինության կողմից փարձադրվող երջանկության մասին, որքան ինչպիսի՞ սրտամաշ կասկածներ, ինչպիսի՞ հուսահատ հիացմունք, ինչպիսի՞ հուսալքումներ է բերելու նրան կյանքի փորձը։

Այսպիսով, Ինդիանայի բոլոր մտորումները, նրա կատարած բոլոր քայլերը, բոլոր տառապանքները պատվում էին ընդդեմ հասարակության՝ բնության այդ մեծ ու սարսափելի պայքարի շուրջ։ Եթե կղզու անմարդաբնակ լեռները կարողանային երկար ժամանակ պատսպարել Ինդիանային, երբ ամուսինը հարձակվել էր վրան, նա, անկասկած, կփախչեր այնտեղ։ Բայց Բուրբոն կղզին բավական փոքր է, և անպայման կհայտնաբերեին իրեն, ու որոշեց, որ միայն ծովը և հեռավոր երկրները կարող էին հեռացնել իրեն բռնակալից։ Այդ որոշումը կայացնելուց հետո հանգստացավ, նույնիսկ ներքին ուրախություն ապրեց։ Դելմարն այնքան էր զարմացել և միաժամանակ հիացել, որ իրեն հատուկ միամտությամբ հանգեց կոպիտ մարդկանց բնորոշ հետևյալ եզրակացության. երբեմն խիստ օգտակար է կանանց վրա ուժ բանեցնել։

Իսկ Ինդիանան երազում էր միայն փախուստի, առանձնության և անկախության մասին։ Նրա ցավոտ ուղեղում պտտվում էին հազար ու մի ռոմանտիկ ծրագրեր Հնդկաստանի կամ Աֆրիկայի անապատներում բնակվելու մասին։ Թուլամո՞ր կին, ուժ չէր գտնում իր մեջ համակերպվելու ամուսնու ցասման հետ և հույս էր փայփայում, որ ֆրիմարի վայրի բնության տարերքներին։

Նման ռոմանտիկ մտքերով և անիրական ծրագրերով տարված, ստեղծում էր մի ուրույն աշխարհ, համեմատում էր այս կյանքի հետ և մտիթարվում։ Նա արդեն վարժվել էր ավելի քիչ մտածել Ռեյմոնի մասին, որ շուտով դադարելու էր գոյություն ունենալ իր միալնակ ու հայեցողական կյանքում։ Եռնակայության ուժով ապագայի մասին կազմած հույսերի շնորհիվ կարծես մի փոքր մոռացել էր

անցած կյանքը, զգում էր արդեն սրտի ազատությունն ու արիությունը, և թվում էր, թե նախապես քաղում է միանձնուհու կյանքի հաճելի պտուղները։ Այդ ժամանակ էր, որ Ռեյմոնի նամակն ստացավ, պատրանքների վրա կառուցված շենքը կարծես մի շնչով փլվեց։ Զգաց կամ ավելի ճիշտ նրան թվաց, թե ավելի մեծ սեր է տածում նրա հանդեպ։ Ես հակված եմ մտածելու, որ Ինդիանան երբեք խորությամբ չի սիրել նրան։ Ինձ թվում է, որ միակողմանի սերը տարբերվում է փոխադարձ սիրուց այնպես, ինչպես սխալը ճշմարտությունից։ Կարծում եմ նաև, որ եթե մեր զգացմունքների մեջ ոգևորությունն ու խանդավառությունը կտրացնում են մեզ այն աստիճան, որ հավատում ենք, թե սերը իր ողջ հզորությամբ դա է, իսկ ավելի ուշ, երբ ճշմարիտ սիրո քաղցրությունն ենք ըմբշխնում, հասկանում ենք, թե որքան ենք մեզ խաբել։

Այն ժամը վիճակը, օրի մեջ, ըստ իր գրածի, ընկել էր Ռեյմոնը, Ինդիանայի սրտում բացավառեց իր բնավորությանը հատուկ վեհանձնության հույսը։ Տխրությամբ, որ Ֆրիմոնը մենակ է մնացել ու դժբախտ է, Ինդիանան պատրաստ համարեց մոռանալ անցյալը և չկանխատեսել ապագան։ Նախարեին ուզում էր լքել ամուսնուն ատելությունից ու վիրավորանքից, հիմա ափսոսում էր, որ կորցրել է հարգանքը նրա նկատմամբ, որովհետև Ռեյմոնի համար խիստ զգոնաբերության չէր կատարելու։ Այնքան մեծ էր ոգևորությունը, որ վախեցավ քիչ բան անել նրա համար՝ փախչելով դյուրագրգիռ, իրեն սպանելու պատրաստ տիրոջ մոտից, ենթարկվել շորամսյա ծովային դժվար ճամփորդության վտանգներին։ Նա կյանքը կտար՝ Ռեյմոնի մեկ ժպիտին արժանանալու համար, չմտածելով, որ առանց այն էլ շատ թանկ էր վճարել։ Այդպես է ստեղծված կինը։

Հիմա ամբողջ հարցն այն էր, թե ինչպես մեկներ։ Շատ դժվար էր Դելմարի կասկածները ցրել և Ֆրիի զգոնությունը թուլացնել։ Բայց գլխավոր խոչընդոտը սա չէր. հարկավոր էր խուսափել այն հայտարարությունից, որ, ըստ օրենքի, յուրաքանչյուր տղոնոր պարտավոր էր լրագրով հայտնել իր կատարելիք ճամփորդության մասին։

Մի քանի հազվագյուտ նավերի շարքում, որոնք խարիսխ

են զցում Բուրբոնի վտանգավոր նավահանգստում, գտնվում էր նաև «Եվգենիա» նավը, որ պատրաստվում էր Եվրոպա մեկնել։ Ինդիանան, երկար ժամանակ խուսափելով ամուսնու հսկողությունից, առիթ էր փնտրում խոսել նավապետի հետ, բայց ամեն անգամ, երբ ցանկություն էր հայտնում զբոսնել նավահանգստում, Դելմարը աշխատում էր սրբ Ռալֆին պահակ կարգել, իսկ ինքը հուսահատ համբերությամբ հայացքով հետևում էր նրանց։ Այդ ընթացքում մանրամասն տեղեկություններ հավաքելով Ֆրանսիա մեկնող նավի նավապետի մասին, որը պետք է իրագործեր իր ճակատագիրը, իմացավ, որ կղզու ծայրամասում մի բարեկամուհի ունի և նրա մոտից հաճախ ուրբով է գնում նավահանգիստ՝ գիշերելու։ Այդ պահից սկսած այլևս չհեռացավ դիտակետ ծառայող ժայռերի վրայից։ Կասկածները վերացնելու նպատակով գնում էր այնտեղ ոլորապտույտ արահետներով և նույն ճանապարհով վերադառնում, երբ գիշերն ընկնելուց հետո հայտնաբերած չէր լինում լեռնային կածաններում իրեն հետաքրքրող ճամփորդին։

Մնացել էր ընդամենը երկու օր, որոնց հետ էր կապված միակ հույսը. քամին սկսել էր ափից փչել։ Այն տեղը, ուր խարիսխ էր գցել նավը, սպառնում էր այլևս չպահել նրան, և նավապետ Ռանդոմը շտապում էր բաց ծով դուրս գալ։

Ճարահատյալ Ինդիանան ջերմեռանդ աղոթք հղեց ճընշված և թույլ մարդկանց ապավեն ստեղծուն և գնաց Սալին գյուղի ճանապարհի վրա սպասելու, չմտածելով այլևս, որ կարող էին նկատել իրեն, որ վտանգում էր վերջին հույսը։ Մեկ ժամ էլ չէր անցել, որ նավապետ Ռանդոմը երևաց ճանապարհին։ Իսկական ծովային գայլ, ամեն առիթով բիրտ ու սմբարտավան։ Նրա հայացքի տակ խեղճ Ինդիանան ահից քարացավ։ Բայց իսկույն հավաքեց ողջ արիությունը, վճռական ու արժանապատվությամբ լի հայացքով գնաց նրան ընդառաջ։

— Պարոն,— ասաց նրան,— ձեր ձեռքերի մեջ եմ դնում կյանքս ու պատիվս։ Ուզում եմ հեռանալ գաղութից և վերադառնալ Ֆրանսիա։ Եթե ձեր պաշտպանության տակ վերցնելու փոխարեն մատնեք ինձ և ձեզ վստահածս գաղտնիքը, ծովում խեղդվելուց բացի՝ ինձ ոչինչ չի մնա անելու։

Նավապետը պատասխանեց երդվելով, որ ծովը կհրաժարվեր խորտակել այդքան գեղեցիկ ծովային ծիծառի կամ, միևնույնն է, երկկայմանի մի նավ, իսկ ինքը պատրաստ էր նավաքարշ շոգենավով տանել նրան թեկուզ աշխարհի ծայրը, մանավանդ որ քամու ուղղությամբ էր գնում։

— Ուրեմն համաձա՞յն եք, պարոն,— ասաց տիկին Դելմարն անհանգստացած,— այդ դեպքում ընդունեք, խնդրեմ, իմ ճամփորդության նախահաշիվը։

Եվ նավապետին հանձնեց ժամանակին տիկին դը Քարվախալի տված լեցուն զարդատուփը՝ իր ունեցած միակ հարստությունը։ Բայց նավաստին ուրիշ բան էր ակնկալում. վերադարձրեց զարդատուփը այնպիսի խոսքերով, որոնցից Ինդիանայի դեմքը միանգամից շիկնեց։

— Որքան դժբախտ եմ, պարոն,— ասաց նրան Ինդիանան՝ զսպելով կատաղության արցունքները, որոնք փայլփլում էին երկար թարթիչների արանքում,— իմ կատարելիք քայլը ձեզ թույլ է տալիս անպատիվ խոսքեր ասել, մինչդեռ, եթե իմանայիք որքան անտանելի է իմ գոյությունը այս կղզում, փոխանակ արհամարհանքով լցվելու իմ հանդեպ, կխղճայիք։

Ինդիանայի ազնիվ ու զգայացունց կերպարանքը նավապետ Ռանդոմի վրա մեծ ազդեցություն թողեց։ Այն մարդիկ, ովքեր զգայունակությունից զուրկ են, երբեմն ընդունակ են որոշ առիթների դեպքում ավելի խոր և ավելի անկեղծորեն զգալ։ Նա անմիջապես հիշեց գնդապետ Դելմարի ատելի դեմքը և կնոջ նկատմամբ ունեցած վերաբերմունքի պատճառով գաղութում բարձրացած աղմուկը։ Ամբարտավան աչքերն ուղղած այդ նրբին ու գեղեցիկ էակին, ցնցվեց նրա անմեղ ու մաքուր հայացքից։ Հատկապես շատ հուզվեց, երբ նկատեց, շիկնելու պահին, նրա ճակատի ճերմակ սպին։ Դելմարի հետ նա առևտրական գործարքի մեջ էր մտել և տհաճությամբ էր լցված այդ կամակոր ու ժլատ մարդու հանդեպ։

— Գրողը տանի,— բացականչեց նա,— ատում եմ այն տգամարդուն, որ ընդունակ է կոշիկի կրունկի հարվածով կոտրել այսքան սիրուն կնոջ գլուխը։ Դելմարը ծովահեն է, նրա գլխին հաճույքով օյին կխաղամ։ Բայց զգուշացեք, տի-

կին, և մի մոռացեք, որ հանուն ձեզ հեղինակություն եմ խաղի մեջ դնում։ Երբ լուսինը դուրս գա, պետք է իսկույն թաքնվեք և փոքրիկ թռչունի նման դուրս թռչեք որևէ մութ կիրճից...

— Գիտեմ, պարոն,— պատասխանեց Ինդիանան,— այս կարևոր ծառայությունը մատուցելով, շրջանցում եք գոյություն ունեցող օրենքները։ Հավանաբար տուգանք վճարելու վտանգն էլ է սպառնում, այդ պատճառով տալիս եմ այս զարդատուփը, որը ճամփորդության գնից առնվազն կրկնակի անգամ թանկ արժե։

Նավապետը վերցրեց զարդատուփը՝ ժպտալով։

— Հաշիվ տեսնելու ժամանակը չէ,— ասաց նա,— բայց համոզված կպահեմ մոտս ձեր փոքրիկ կարողությունը։ Անկասկած, հանգամանքներն հաշվի առնելով, մեծ ճամպրուկներ չեք վերցնի ձեզ հետ, եկեք գիշերը, երբ խարիսխը կբարձրացնենք, եղեք Արմավենու ծովախորշում ժամը մեկից երկուսը, ձեզ կմոտենան երկու լավ թիավարող նավաստիներ իրենց նավակով և կուղեկցեն ձեզ դեպի նավ։

Գլուխ XXVII

Մեկնումի օրը երազի նման անցավ։ Ինդիանան վախենում էր, որ այդ օրը երկար ու տանջալից էր ձգվելու, բայց թռավ մեկ վայրկյանի պես։ Շրջապատում իշխող լռությունը, տան անդորրը հակասություն էին կազմում տիկին Դելմարի հոգին հոշոտող հուզումների հետ։ Գնաց փակվեց սենյակում՝ մի քանի հագուստ պատրաստելու համար, որ տանելու էր իր հետ։ Դրանք թաքցրեց մարմնի վրա, մեկ առ մեկ տարավ Արմավենու ծովախորշը ավազի մեջ թաքցրած զամբյուղի մեջ տեղավորելու։ Ծովը սաստիկ հուզված էր, քամին ժամանակ առ ժամանակ ուժգնանում էր։ Զգուշության համար «Եվգենիա» նավը հեռացել էր նավահանգստից։ Տիկին Դելմարը հեռվում տեսնում էր քամու տակ ուռչող սպիտակ առագաստները, որ պարզել էին նավը շրջելու համար և հնարավորություն տալու անձնակազմին՝ հանգիստ

աշխատելու։ Նրա սիրտը ուժգին բաբախումներով նետվում էր նավի վրա, որ կարծես մեկնումից առաջ կատաղի հրածին նժույգի պես գոփում էր անհամբերությունից։

Երեկոյան քամին հանդարտվեց։ «Եվգենիան» մոտեցավ ափին, իսկ մթնշաղին տիկին Դելմարը ժայռի բարձունքից լսեց թնդանոթի համազարկը, որ արձագանքում էր կղզու հեռավոր անկյուններում։ Հաջորդ օրվա մեկնումի ազդանշանն էր. շարժվելու էր, երբ արշալույսը իր շողերը թաթախեր ծովի ալիքների մեջ։

Ճաշից հետո պարոն Դելմարը վատ զգաց։ Կինը մտածեց, որ ամեն ինչ կորած է, ամբողջ գիշեր նա կարող էր բոլորին արթուն պահել, ծրագիրը տապալվելու էր։ Իսկ գրեդապետը տանջվում էր, կնոջ կարիքն էր զգում։ Այսպիսի մի պահի Ինդիանան չէր կարող լքել նրան։ Այդ ժամանակ խղճի խայթը սողոսկեց նրա մեջ և ինքն իրեն հարց տվեց. ո՞վ կխղճա այդ ծերունուն, եթե լքի նրան։ Մարսուաց այն մտքից, որ սեփական աչքում հանցագործ է դառնալու, և գուցե հետագայում խղճի ձայնը ավելի բարձրանար, քան իրեն դատապարտող հասարակության ձայնը։ Սովորականի պես, եթե Դելմարը կոպտությամբ ստիպեր խնամել իրեն, եթե պահանջկոտություն ցուցաբերեր և ցավերի հետ կամակորություն աներ, շահագործված ստրուկի ըմբոստությունը պիտի պատճառաբանվեր և մեղմացուցիչ հանգամանք ստանար, օրինական համարվեր։ Բայց կյանքում առաջին անգամ ցավն անձայն տարավ և կնոջը հացեպագրից երախտագիտության ու սիրո արտահայտություններ։ Ժամը տասին հայտնեց, որ կատարելապես լավ է զգում իրեն, պահանջեց Ինդիանայից իր սենյակը գնալ, արգելելով անհանգստանալ իր վիճակի համար։ Ռալֆը վստահեցրեց, որ հիվանդության բոլոր նշաններն անհետացել են, միակ դեղամիջոցը հանգիստ քունն է։ Երբ ժամը տասնմեկը հնչեց, տան մեջ տիրեց կատարյալ լռություն և խաղաղություն։ Տիկին Դելմարը ծնկի իջավ և դառնորեն արտասվելով աղոթեց, որովհետև սրտի վրա մեծ մեղք էր վերցնում և այսուհետև միայն աստծո ներմանը կարող էր արժանանալ։ Նա անձայն մտավ ամուսնու սենյակը։ Վերջինս խոր քնով քնած

էր. դեմքը հանդարտ, էր, շնչառությունը՝ համաչափ։ Այն պահին, երբ պատրաստվում էր դուրս գալ, սենյակի խորքում, մթության մեջ, նկատեց բազկաթոռին քնած մի մարդու։ Ռալֆն էր. նա կամաց վեր էր կացել և եկել էր Դելմարի քունը հսկելու. հնարավոր է, որ անակնկալ տոիթով շտապ իր կարիքն զգացվեր։

«Խեղճ Ռալֆ,— մտածեց Ինդիանան,— ինչ պերճախոս ու դաժան հանդիմանություն ես ուղղում ինձ»։

Ուզում էր արթնացնել նրան, ամեն ինչ խոստովանել, խնդրել պահպանել իրեն, հետո հիշեց Ռեյմոնին։

«Եվս մի զոհաբերություն,— մտածեց նա,— եղածներից ամենադաժանը, նրա համար զոհում եմ պարտականությունս»։

Վզից հանեց ոսկե մի շղթա, որ մորից էր մնացել, և միշտ կրում էր, կամաց անցկացրեց Ռալֆի վզին, որպես եղբայրական զգացմունքի վերջին գրավական, մեկ անգամ էլ մոմի լույսն իջեցրեց ծերունի ամուսնու դեմքին՝ վստահելու համար, որ լավ է զգում իրեն։ Այդ բոպեին նա երազ էր տեսնում և թուլացած ու տխուր ձայնով շշնջաց.

— Զգուշացիր այդ մարդուց, քեզ կկործանի...

Ինդիանան ոտքից գլուխ ցնցվեց և փախավ իր սենյակը։ Անորոշ ցավից սկսեց մատները կոտրատել, բայց հանկարծ մի միտք համակեց նրան. նա այդ քայլին դիմում էր ոչ հանուն իր երջանկության, ընդհակառակը՝ գնում էր նրա մոտ երջանկացնելու նրան, և ինչ փույթ երկնային տառապանքները, եթե գեղեցկացնելու էր իր սիրած մարդու կյանքը։ Տնից դուրս նետվեց և շտապեց դեպի Արմավենու ծովախորշը, չհամարձակվելով շրջվել ու ետ նայել, թե ինչ էր թողնում այնտեղ։

Անմիջապես ավազի տակից հանեց զամբյուղը և, լռելյայն ու դողդոջուն, նստեց վրան. լսում էր քամու սուլոցը, խշշացող ալիքների ձայնը, որոնք գալիս էին մեռնելու նրա ոտքերի տակ, ժայռերից կախված ջրիմուռների միջից բարձրացող գիշերային ծովաորորների ծղրտոցը։ Բայց այս բոլոր ձայների վրա մահագուշակ զանգերի զողանջի պես ականջների մեջ իշխում էին սրտի զարկերը։

Նա երկար սպասեց. հանեց ժամացույցը և համոզվեց,

որ նշված ժամն անցել է։ Ծովը խիստ ալեկոծ էր, իսկ Դդզոտիների մոտ նավարկելը շատ դժվար էր, նույնիսկ բարենպաստ եղանակին, Ինդիանան արդեն սկսել էր հույսը կորցել նավաստիներից, որոնց հանձնարարված էր իրեն տեղափոխել նավ, երբ փայլփլացող ալիքների վրա նկատեց ափին մոտենալու փորձեր անող նավակի ստվերը։ Բայց ոլորապտույտ ալիքներն այնքան հզոր էին, ծովն այնպիսի խորխորատներ էր փորում, որ փեսարանման նավակն ամեն վայրկյան անհետանում էր և պարուրվում ստողացողն պատանք հիշեցնող ծովի մթին ծալքերում։ Նա վեր կացավ և մի քանի անգամ պատասխանեց իրեն ուղղված ազդանշանին. բարձրաձայն աղաղակներով կանչում էր նրանց, իսկ քամին իր ձայնը նախքան թիավարներին հասցնելը, քշում հեռացնում էր։ Վերջապես, երբ մոտեցան այնքան, որ կարող էին լսել Ինդիանային, շատ մեծ դժվարությամբ ուղղվեցին նրա կողմը, հետո կանգ առան՝ սպասելով նոր ալիքի։ Հենց որ իրենց զգացին նրա դագաթին, կրկնապատկեցին ուժերը, իսկ մարող ալիքը նավի հետ ծովափ շպրտեց նրանց։

Նավակը տարավ Ինդիանային և իր ունեցվածքը կատաղի ալիքների, փոթորկի ոռնոցների միջով, երկու նավաստիների անբարյացակամ խոսքերի տարափի տակ, որոնք չէին քաշվում բարձրաձայն անեծքներ տեղալ այդ կնոջ հասցեին, որ այսպիսի վտանգի էր ենթարկել իրենց։ Ասում էին, որ նավը երկու ժամ առաջ պետք է խարխսիր բարձրացրած լիներ, և սրա պատճառով նավապետը համառորեն հրաժարվել էր հրման արձակել։ Այս տոիթով վիրավորական և կոպիտ ենթադրություններ էին անում, իսկ տարաբախտ փախստականը լուռ հոշոտում էր իր տոթը։ Երբ նրանցից մեկը մյուսին նկատել տվեց, թե ինչ կլիներ իրենց վիճակը, եթե նավապետի սիրուհու հանդեպ թերանալին իրենց պարտականության մեջ, մյուսը հիշոցներ արձակելով պատասխանեց.

— Գլուխս մի տար, այս գիշեր շնաձկների հետ ենք հաշիվ մաքրելու։ Եթե մեկ էլ տեսնենք նավապետ Ռանդոմին, կարծում եմ, նրանցից ավելի կատաղի չի լինի։

— Դե լավ, լավ, հանգստացեք, սիրելի տիկին,— երկար

մաքառումներից հետո առաց առաջին նավաստին,— արդեն փրկված եք։ Երևի նավապետը մեզ իր ամբարի լավագույն գինուց կհյուրասիրի՝ այսպիսի թանկարժեք ապրանք ողջառողջ տեղ հասցնելու համար։

Մյուս նավաստին ձևացնում էր, թե խղճում է երիտասարդ կնոջը թրջված հագուստների պատճառով և ավելացրեց, որ նավապետը սպասում է և կհոգա նրա մասին։ Համրու անշարժ, Ինդիանան սարսափած լսում էր նրանց ասածները։ Հասկանում էր իր ծանր կացությունը և նրանց անպատվությունից խուսափելու միակ ելքը գտնում էր ծովի ալիքներին կուլ գնալու մեջ։ Երկու-երեք անգամ փորձեց նավակից դուրս թռչել, բայց քաջություն ունեցավ տիրապետելու իրեն՝ վեհանձնաբար մտածելով.

«Նրա համար, հանուն Ռեյմոնի, պետք է տանեմ այս բոլոր տանջանքները։ Պետք է ապրեմ, թեկուզ արատավորվի անունս։

Ձեռքը տարավ կծկված սրտին և շոշափեց դաշույնի կոթը, առավոտյան այն բնազդով թաքցրել էր կրծքի վրա, անհրաժեշտ առիթի դեպքում օգտագործելու համար։ Ձենքի առկայությունը վերականգնեց վստահությունը. դա մի կարճ, սրած սվինաղաշույն էր, որ հայրը սովորություն ուներ կրել, իսպանական հինավուրց մի շեղբ, որ պատկանել էր Մեդինա-Սիդոնիա տոհմի ներկայացուցիչներից մեկին, որի անունը 1300 թվականի հետ փորագրված էր դաշույնի պողպատե շեղբի վրա։ Անկասկած այդ հրաշալի զենքը բազմիցս թաթախվել էր ազնվականների արյան մեջ, շատ վիրավորանքներ էր վերացրել, շատ ամբարտավանների կյանքից զրկել։ Դաշույնի հպումից Ինդիանան դարձյալ խպանուհի զգաց իրեն և նավ մտավ վճռական քայլերով՝ մտածելով, որ կնոջը վտանգ չի սպառնա այնքան ժամանակ, որքան հնարավորություն ունի անպատվություն ընդունելուց առաջ ինքնասպանություն գործել։ Նա չուզեց վրեժխնդիր լինել իր կոպիտ ուղեկիցներից, ընդհակառակը, առատաձեռնորեն վարձատրեց նրանց ծառայության համար։ Հետո փակվեց իրեն հատկացված նավախցիկում և անձկությամբ սպասեց մեկնումի ժամին։

Վերջապես օրը բացվեց, և ծովը ծածկվեց ուղևորներին տեսարան հրամայող կարաիբյան մակույկներով։ Ինդիանան խցիկի անկյունից սարսափահար նայում էր նավ բարձրացողներին, ամբողջ մարմնով դողում էր՝ մտածելով, որ նրանց մեջ հայտնվելու էր իրեն պահանջելու եկած ամուսինը։ Ի վերջո մեկնումի ազդանշանը՝ թնդանոթի համազարկը, գնաց արձագանքով փշրվելու կղզու վրա, որ նրա համար բանտ էր դարձել։ Նավն ակսեց փրփուրի հորձանքներ շպրտել, խոկ ալիքը, բարձրանալով երկնակամարում, վարդագույն ու կայտառ շողեր նետեց Սալազյան լեռների ճերմակափառ գագաթներին, որոնք ասահմանաբար անհետանում էին՝ ցածրանալով հորիզոնում։

Երբ նավը մի քանի վերստ կտրել անցել էր ծովը, նավապետ Ռանդոմը որոշեց մի կատակերգություն սարքել, որպեսզի հետագայում խարկանքի մեջ չմեղադրվի։ Ձևացրեց, թե տիկին Դելմարին հանկարծակի հայտնաբերել է նավի մեջ, դարմանք արտահայտեց, հարցուփորձ արեց նավաստիներին, իբր թե բարկացավ, հետո հանգստացավ և ի վերջո արձանագրություն կազմեց այն մասին, որ նավի կամրջակին «մոլորված հրեխա» են հայտնաբերել՝ նման դեպքերի համար սովորական մի ձևակերպություն։

Իսկ ավելի հենց այստեղ վերջացնել ուղևորության հետ կապված մեր պատմությունը։ Նավապետ Ռանդոմին մեծարելու միտումով կրավարարվեմ ավելացնել միայն, որ, չնայած իր կոպիտ բնավորությանը, բնական խելք ուներ և ճիշտ հասկացավ տիկին Դելմարին։ Նրա մենակությունից օգտվելու մի քանի փորձերից հետո նավապետն զգացվեց այդ կնոջ դժբախտ ճակատագրից, դարձավ նրա բարեկամն ու բարերարը։ Բայց այդ ազնիվ մարդու սրինգապահությունը և Ինդիանայի պատվախնդրությունը չկանխեցին անձնակազմի չարամիտ ակնարկները, ծաղրական հայացքները, վիրավորական կասկածները և երկիմաստ, տեղին-անտեղի արված սհամ կատակները։ Սրանք էին իսկական տանջանքները, որ ճամփորդության ժամանակ բաժին հասան այդ դժբախտ արարածին։ Ձեզ չեմ պատմի հոդվածների, զրկանքների, վտանգների մասին, քանի որ նա էլ այդ ամենի վրա ուշադրություն չէր դարձնում։

Գլուխ XXVIII

Երեք օր անց, Բուրբոն կղզի նամակ ուղարկելուց հետո, Ռեյմոնն ամբողջովին մոռացավ և՛ նամակի, և՛ հասցեատիրոջ մասին։ Այժմ ավելի լավ էր զգում իրեն և որոշեց այցելել հարևաններին։ Լանջի կալվածքը, որ պարոն Դելմարը պարտքի դիմաց թողել էր պարտատիրոջը, ումն հարուստ արդյունաբերող պարոն Հուբերի, այժմ ամբողջապես նրան էր պատկանում՝ ճարպիկ, բայց հարգանքի արժանի մի մարդու, որ նման չէր մյուս հարուստ, գործունյա մարդկանց, նա պարզապես բացառություն էր կազմում։ Ռեյմոնը հանդիպեց նոր տանտիրոջը, որն արդեն ընտելացել էր այդ տանը, իսկ իր սրտում այնքան հիշողություններ էր արթնացնում։ Պարտեզում զբոսնելու ժամանակ Ռեյմոնն սկզբում մեծ հուզումների ենթարկվեց. կարծես մինչև հիմա ավազի վրա դրոշմված լինեին նունի թեթև ոտնահետքերը, իսկ ընդարձակ սրահներում նրան թվում էր, թե լսում է Ինդիանայի քնքուշ խոսքերի արձագանքը։ Բայց նոր տանտիրոջ ներկայությունը շուտով շեղեց նրա մտքերի ընթացքը։

Մեծ սրահում, տիկին Դելմարի բազկաթոռի մեջ, ուր նա սովորաբար նստում էր ասեղնագործելու, այժմ տեղ էր գրավել ամրակազմ ու սլացիկ մի օրիորդ, նշաձև աչքերով, որոնցում միաժամանակ և՛ քնքշություն կար, և՛ խորամանկություն, և՛ շոյանք, և՛ ծաղր։ Գծատախտակի առջև նստած, ներկապնակը կողքին, ջրաներկով վերարտադրում էր պատի արտառոց օրմնանկարները։

Ռեյմոնի վրա հանդարտ բարձրացրեց ձգված աչքերը, ուր դրոշմված էր մի տեսակ գայթակղիչ և նենգ քնքշություն, որ, չգիտես ինչու, Ռեյմոնին հիշեցրեց շեքսպիրյան Անեա Պեջին։ Նրա կեցվածքում ոչ երկչոտություն կար, ոչ հանդգնություն, ոչ աշխարհիկ կանանց հատուկ սեթևեթանք, ոչ անվստահություն իր անձի նկատմամբ։ Նրանք սկսեցին զրուցել ժամանակակից արվեստի ազդեցության ոլորտների շուրջ։

— Պարոն, չե՞ք կարծում, որ դարասկզբի բարոյական նկարագիրը արտացոլված է այս գեղանկարի մեջ,— ասաց

նա, Ռեյմոնին ցույց տալով փայտաղարդ պատը՝ ծանրաբեռնված Բուշեի սճով նկարված Ամուրների պատկերներով,— չե՞ք կարծում, որ ոչխարներն այստեղ չեն քայլում, չեն քնում, չեն արածում այսօրվա պես։ Իսկ այս կոկված գեղեցիկ բնությունը, հազարաթերթ վարդերի բարձրացած թփերն անտառի մեջ, որոնք մեր օրերում նույնպիսի վայրում միայն մասբենու ձևով են աճում, իսկ այս ընտելացած թռչունները, որոնք ակնհայտորեն այսօր գոյություն չունեն, և ատլասե վարդագույն հագուստները, որոնք չեն գունաթափվում արևի տակ, չե՞ք կարծում, որ այս ամենի մեջ բանաստեղծություն կա, երանության և երջանկության գաղափար, այստեղ կյանքը մեղմ է, խաղաղ, անխոցելի։ Անշուշտ այս զավեշտական երևակայություններն արժանի են մեր մռայլ քաղաքական մեծախոսություններին։ Ինչո՞ւ այս դարաշրջանում չեմ ծնվել,— ավելացրեց երիտասարդ աղջիկը ժպտալով,— ինձ նման թեթևամիտ ու դատարկախոս կնոջը ավելի շատ կսազեր հովհարներ և պարահանդեսային գլուխգործոց հանդերձներ նկարել, քան լրագրերի հոդվածներ մեկնաբանել և պալատական վիճաբանությունների վրա գլուխ կոտրել։

Պարոն Հուբերը երիտասարդներին մենակ թողեց, և նրանց զրույցը կամաց-կամաց հասավ տիկին Դելմարին։

— Ասում են, այս տան նախկին տերերի հետ շատ կապված եք եղել,— շարունակեց երիտասարդ աղջիկը,— և, անշուշտ, ձեր վարմունքի մեջ մեծահոգություն է նկատվում, երբ գալով այստեղ, նոր դեմքեր եք տեսնում։ Տիկին Դելմարը,— ավելացրեց նա Ռեյմոնի վրա գցելով թափանցող մի հայացք,— ասում են, հիանալի անձնավորություն էր, այստեղ այնպիսի հիշողություններ պետք է թողած լինի, որ մեր կարողություններից վեր է մոռացնել տալ ձեզ։

— Հրաշալի կին էր,— անտարբերությամբ ասաց Ռեյմոնը,— իսկ ամուսինն արժանապատիվ մարդ էր...

— Բայց,— անփութորեն շարունակեց երիտասարդ օրիորդը,— ինձ թվում է, նա ավելին էր, քան հրաշալի կին լինելը։ Որքան հիշում եմ, նա այնպիսի հմայք ուներ, որ ավելի հատկանշական և ավելի բանաստեղծական մակդիրի է արժանի։ Երկու տարի առաջ եմ տեսել նրան, Իսպանիայի

դեսպանի տանը կազմակերպված պարահանդեսի ժամանակ։ Այդ օրը խիստ հրապուրիչ էր, հիշո՞ւմ եք։

Այդ երեկոյի հիշողությունը ցնցեց Ռեյմոնին, առաջին անգամ այնտեղ էր խոսել Ինդիանայի հետ։ Միաժամանակ հիշեց, որ այդ պարահանդեսում նկատել էր այն երիտասարդ աղջկա նրբագեղությունը և խելացի աչքերը, որի հետ ավյալ պահին խոսում էր, բայց վերջինս ամենևին չէր հետաքրքրել իրեն։

Եվ միայն նրանց տնից մեկնելու ժամանակ, երբ աղջկա հասցեին հաճոյախոսելով՝ հիացմունքն էր հայտնում պարոն Հուբերին, իմացավ նրա անունը։

— Նրա հայրը լինելու երջանկությունը չունեմ,— ասաց արդյունաբերողը,— բայց նրան որդեգրելով, վարձատրված եմ զգում ինձ։ Մի՞թե ձեզ հայտնի չէ իմ պատմությունը։

— Արդեն քանի ամիս է հիվանդ եմ,— պատասխանեց Ռեյմոնը,— ձեր մասին ոչինչ չգիտեմ, լսել եմ միայն մեր շրջանում տարածված ձեր բարի համբավի մասին։

— Մարդիկ կան,— շարունակեց պարոն Հուբերը ժպտալով,— որ օրիորդ դը Նանժիին որդեգրելու համար մեծ պատիվ են տալիս ինձ։ Բայց դուք, պարոն, ձեր մեծ սրտով կարող եք հասկանալ, որ այլ կերպ վարվել չէի կարող, իմ խիղճն էր թելադրում այդպես գործել։ Այրի էի, զավակ չունեի, անխոնջ աշխատանքի շնորհիվ տասը տարի առաջ մեծ կարողության տեր դարձա, քաղեցի աշխատանքիս պտուղները և սկսեցի դրանք օգտագործելու մասին մտածել։ Բուրգունդիայում հնարավորություն ունեցա ձեռք բերել դը Նանժիի դղյակն ու ամբողջ կալվածքը, որ այդ ժամանակ պատկանում էր պետությանը. ինձ շատ էր դուր եկել այն։ Որոշ ժամանակ ապրեցի այնտեղ որպես սեփականատեր և մի օր էլ իմացա, որ այդ կալվածքի նախկին սեփականատերը՝ մի ազնվական, իր յոթնամյա թոռնիկի հետ ինչ-որ խրճիթում քարշ է տալիս կյանքը։ Ճիշտ է, այդ ծերունին ժամանակին իր հողից եկամուտներ ստացել էր, բայց դրամն ամբողջությամբ փոխանցել էր պարտքերը մարելու, որ կուտակվել էին տարագրության մեջ եղած ժամանակ։ Ուզեցի թեթևացնել նրա կյանքը և առաջարկեցի տեղափոխվել ինձ մոտ։ Բայց դժբախտության մեջ անգամ պահպանել

էր ազնվականին արժանի հպարտությունը և հրաժարվեց պապենական օջախ մտնել որպես խղճահարության արժանացած մարդ։ Իմ այցելությունից քիչ ժամանակ անց վախճանվեց՝ ոչ մի ծառայություն չընդունելով ինձանից։ Բայց թոռնիկին տարա մոտս։ Չնայած այդ տարիքում արդեն նա շատ հպարտ էր, սակայն ազնվական ընտանիքից սերած աղջնակը անկախ իրենից համաձայնեց ընդունել իմ առաջարկությունը։ Այդ տարիքում նախապաշարումները խոր արմատներ չունեն, իսկ որոշումները երկար չեն տևում։ Շուտով վարժվեց նոր կյանքին և ինձ ընդունեց որպես հայր, իսկ ես մեծացրի նրան սեփական աղջկաս նման։ Իմ ծերացած օրերի վրա երջանկություն սփռելով՝ ամեն ինչի համար նա վարձահատույց է եղել։ Բացի այդ, երջանկությունս մինչև վերջ հասցնելու համար որդեգրեցի օրիորդ դը Նանժիին և միակ ձգտումս այժմ նրան արժանի ամուսին գտնելն է, որն ընդունակ լինի միաժամանակ ճարպկորեն տնօրինելու այն ամբողջ ունեցվածքը, որ թողել եմ նրան։

Աննկատելիորեն, սրտապնդված իր պատմածի հանդեպ Ռեյմոնի ցուցաբերած հետաքրքրությունից, այս հրաշալի մարդը առաջին իսկ հանդիպումից անկեղծ մարդու պարզությամբ ընտանեկան գաղտնիքները վստահեց նրան։ Ուշադիր ունկնդիրը հասկացավ, որ խոսքը վերաբերում էր պատկառելի և օրինական մի գումարի, որ սպասում էր իր ողջ շռայլությամբ հայտնվել ավելի նրբաճաշակ տիրոջ ձեռքերի մեջ, քան Հուբերն էր։ Ռեյմոնն զգաց, որ ինքը, հավանաբար, այդ հաճելի պարտականությունն ստանձնող մարդն է և շնորհակալություն հայտնեց առատաձեռն նախախնամությունից, որ բարեհաջող լուծում է իրեն հետաքրքրող բոլոր հարցերը, միաժամանակ, ռոմանտիկ դիպվածով, իրեն նվիրելով պատկառելի ունեցվածքի տեր, ծագումով հարմար մի կին։ Երկնառաք բախտը չպետք է ձեռքից բաց թողնել, և ամբողջ ճարպկությունն ի գործ դրեց դրան տիրելու համար։ Բացի այդ, ժառանգորդուհին էլ հրապուրիչ էր։ Ռեյմոնը մի փոքր հաշվեց ճակատագրի հետ։ Ինչ վերաբերում է տիկին Դելմարին, Ռեյմոնն այլևս չուզեց նրա մասին մտածել։ Հեռացրեց իրենից այն մտավախությունը, որ ժամանակ առ ժամանակ հիշեցնում էր ուղարկած նամակը, և ջանաց

համոզել իրեն, որ խեղճ Ինդիանան չէր հասկանա իր ակնարկած գաղտնի մտքերը կամ այնքան արիություն չէր ունենա վճռական որոշում կայացնելու։ Ի վերջո, Ռեյմոնին հաջողվեց համոզել նաև ինքն իրեն, որ մեղավոր չէ, որովհետև ծանր էր անդրադառնալու իր վրա՝ եսասիրության մեջ իրեն հանդիմանելու միտքը։

Այսպիսով, Ռեյմոնը սկսեց ավելի հաճախակի այցելել Լանյի։ Նրա ներկայությունը հաճելի էր պարոն Հուբերին, որովհետև, ինչպես գիտեք, պարոն դը Ռամիերը տիրապետում էր դուր գալու արվեստին, և, ի վերջո, մեծահարուստ պլերեյի միակ ցանկությունը եղավ նրան փեսա անվանել։ Բայց ուզում էր, որ հոգեդուստրը ընտրեր Ռեյմոնին, և իրար ավելի լավ ճանաչելու, հասկանալու համար կատարյալ ազատություն տրվեց նրանց։

Լորա դը Նանժին չէր շտապում երջանկացնել Ռեյմոնին և նրա մոտ միշտ պահպանում էր հույսի և վախի հավասարակշռությունը։ Այդ աղջիկը տիկին Դելմարի նման մեծահոգի չէր, բայց ավելի ճարպիկ էր, սառը և շողոքորթ, ավելի հպարտ էր ու բարեհամբույր։ Միակ կինն էր, որ կարող էր իրեն ենթարկեցնել Ռեյմոնին, որովհետև ճարպկությամբ գերազանցում էր նրան, ինչպիսին որ Ռեյմոնն էր եղել Ինդիանայի նկատմամբ։

Օրիորդ դը Նանժին արդեն որոշել էր իրագործել այդ ամուսնությունը որպես սոցիալական անհրաժեշտություն, բայց առայժմ իրեն պատկանող ազատությունից ուզում էր խորամանկորեն օգտվել, միաժամանակ ցույց տալով իր հեղինակությունը, որ Ռեյմոնն ակնկալում էր խլել իրենից։ Վաղ հասակից ճանաչելով հարստության հետ առնչված բոլոր հնարքները, այդ երիտասարդ աղջիկը զերծ էր երիտասարդությանը հատուկ հաճույքներից, բաղցր երազներից, ապագայի նկատմամբ ունենալիք վառ ու հմայիչ հույսերից։ Նրա համար կյանքը կառուցված էր սառը հաշիվների վրա, իսկ երջանկությունը միամիտ պատրանք էր, որից հարկավոր էր պաշտպանվել, ինչպես զավեշտական թուլությունից։

Երբ Ռեյմոնը ջանք էր թափում իր բախտին տիրանալ, Ինդիանան մոտենում էր Ֆրանսիայի ափերին։ Բայց որքան մեծ եղավ նրա զարմանքն ու սարսափը, երբ նավից իջնելու ժամանակ Բորդոյի պատերին տեսավ ծածանվող եռագույն դրոշակներ։ Քաղաքին մեծ հուզում էր պաշարել։ Նախօրեին քիչ էր մնացել սպանեին նահանգապետին։ Ժողովուրդն ամեն կողմից գլուխ էր բարձրացնում, ռազմական կայազորը կարծես արյունահեղ պայքարի էր պատրաստվում, և դեռ ոչ ոք չգիտեր փարիզյան հեղափոխության արդյունքների մասին։

«Ուշացար»,— եղավ տիկին Դելմարի առաջին մտածմունքը, որ կայծակի հարվածի նման ընկավ նրա վրա։ Այս ամենից այնպես էր սարսափել, որ նավի մեջ մոռացավ ամբողջ ունեցվածքը՝ դրամը և հագուստները, մոլորվածի նման սկսեց քաղաքով մեկ վազել, Փարիզ հասնելու համար հանրակառք էր փնտրում, բայց հանրային բոլոր փոխադրամիջոցները լեփ-լեցուն էին խուճապի մատնված մարդկանցով, որոնք փախչում էին քաղաքից կամ ուզում էին օգտվել հաղթողների ավարից։ Միայն երեկոյան հաջողվեց մի ազատ տեղ գտնել։ Այն պահին, երբ կառք էր բարձրանում, ազգային գվարդիայի պարեկը կանխեց կառքի մեկնումը և պահանջեց ուղևորների փաստաթղթերը։ Ինդիանան ոչ մի վկայական չուներ մոտը։ Մինչ կմաքառեր հաղթողների անհեթեթ կասկածների դեմ, իր կողքին խոսակցություն լսեց թագավորական իշխանության տապալման, թագավորի փախչելու, նախարարներին ու նրանց համախոհներին կոտորելու մասին։ Ծիծաղի պոռթկումներով հայտարարված նորությունները, ոսքերի դոփյունները, ուրախության ճիչերը մահացու հարված հասցրին տիկին Դելմարին։ Այս հեղափոխության մեջ նրան առանձնապես մի փաստ էր հետաքրքրում. ամբողջ Ֆրանսիայում միայն մի մարդու էր ճանաչում։ Ուշագնաց ընկավ սալաքարերի վրա և սթափվեց հիվանդանոցում... մի քանի օր հետո։

Երկու ամիս էր անցել. դուրս եկավ հիվանդանոցից առանց դրամի, առանց սպիտակեղենի, առանց որևէ իրի, թուլացած, երերուն, ջերմությունից և ուղեղի ցնցումից ուժասպառ եղած։ Քանի-քանի անգամ մահվան դուռը գնաց-եկավ։ Երբ

մեն-մենակ փողոց ելավ, հագիվ պահելով իրեն, առանց նեցուկի, առանց ապրուստի միջոցների, անուժ, փորձեց իր վիճակի մասին մտածել և տեսավ, որ այս մեծ քաղաքում լքված է իսպառ, նրան աննկարագրելի սարսափ պատեց, հուսալքվեց՝ մտածելով, որ Ռեյմոնի ճակատագիրը վազուց էր ի կատար ածվել, և շուրջը չկար մեկը, որ այդ անորոշ վիճակից հաներ իրեն։ Լքված լինելու վախը ամբողջ ուժով ծանրացավ փշրված սրտի վրա, իսկ անտարբեր հուսահատությունը, որ թշվառություն է ներշնչում, կամաց-կամաց եկավ ու համակեց նրան, թմրեցրեց բոլոր զգայարանները։ Հոգեպես թուլացած, ամբողջովին ընկճված՝ սկսեց թափառել նավահանգստում. տենդից դողում էր, նստեց նավերը ափին պահող կլոր քարերից մեկի վրա՝ արևի տակ տաքանալու համար, ակնապիշ, աննպատակ նայելով ջրին, որ թրջում էր ոտքերը։ Այսպես նստած մնաց մի քանի ժամ՝ ուժերն սպառված, հույսը կորցրած, անկամ։ Հետո հիշեց, որ ապրանք ուներ, փող ուներ և թողել էր «Եվգենիա» նավի վրա։ Գուցե հնարավոր էր վերցնել։ Բայց մութն արդեն ընկել էր։ Համարձակություն չունեցավ անցնել նավաստիների միջով, հարցուփորձ անել նրանց նավի մասին, որոնք կատաղի ուրախությամբ աշխատանքի ավարտն էին ազդարարում։ Ընդհակառակը, ցանկանալով խուսափել անցորդների սեռեռուն ուշադրությունից, հեռացավ նավահանգստից և գնաց պատսպարվելու մի փլատակի մեջ, որ գտնվում էր Կինկոս առափնյա մեծ փողոցի հետևում։ Հոկտեմբերյան ցուրտ գիշեր էր. նա մնաց այդտեղ, անկյունում կծկված, մտածմունքներից դառնացած, ահաբեկված։ Վերջապես լույսը բացվեց։ Անտանելի և թրատող քաղցը զգացնել տվեց իրեն։ Ինդիանան որոշեց հաց մուրալ։ Որքան էլ հագուստները տեսքից ընկել էին, այնուամենայնիվ մատնում էին նրանց ներքագեղությունը, որ ամենևին համապատասխան չէին մուրացկանին։ Մարդիկ նրան նայում էին հետաքրքրությամբ, արհամարհանքով, ծաղրանքով և ոչինչ չէին տալիս։ Նորից քարշ եկավ նավահանգստում, ուզեց տեղեկանալ «Եվգենիայի» մասին և իմացավ, որ նավը մինչև հիմա Բորդոյում ապատում է հերթական ուղերթի։ Նավակով նրան տեղ հասցրին, և Ինդիանան Ռանդոմին գտավ նախաճաշելիս։

— Այդ ինչպե՞ս, սիրունիկ ուղևորուհի,— բացականչեց նա,— արդեն վերադարձա՞ք Փարիզից։ Ճիշտ ժամանակին եկաք։ Ձեզ Նորից Բուրբո՞ն հասցնեմ։

Նավապետը պատմեց տիկին Դելմարին, որ ամենուրեք փնտրել էին նրան, որպեսզի ունեցվածքը հանձնեին։ Բայց Ինդիանան ոչ մի փաստաթուղթ չուներ մոտը, որ ինքնությունը պարզեր, երբ հիվանդանոց էին տեղափոխել, ուստի այնտեղ և ոստիկանատանը արձանագրել էին «անծանոթուհի» անվան տակ, և նավապետը ոչ մի տեղեկություն չէր կարողացել ստանալ նրա մասին։

Չնայած թույլ վիճակին ու հոգնածությանը, Ինդիանան հաջորդ օրը մեկնեց Փարիզ։ Թվում էր, թե նա այժմ պիտի հանգստանար, տեսնելով քաղաքական իրադրության հետ կապված նոր սրընթաց փոփոխությունները, բայց անհանգստությունը դատողություն չի ընդունում, իսկ սերը հղի է վտանգավոր սարսափներով։

Փարիզ հասնելուն պես, նույն երեկոյան վազեց Ռեյմոնի մոտ և սրտի անհուն հուզմունքով հարցրեց դռնապանին տանտիրոջ մասին։

— Պարոնը ողջ-առողջ է,— պատասխանեց ծառան,— հիմա նա Լանյիում է։

— Լանյի՞ում։ Ուզում էիք ասել Սերսիո՞ում։

— Ոչ, տիկին, Լանյիում, որի սեփականատերն է այժմ։

«Իմ բարի Ռեյմոն,— մտածեց Ինդիանան,— ինձ համար է գնել այդ կալվածքը, որպեսզի պատսպարան ունենամ և հասարակության չարիքից զերծ մնամ։ Համոզված էր, որ կգամ. ...»։

Երջանկությունից արբած, թեթևացած, նոր կյանքի սպասելիքներից աշխուժացած՝ շտապեց տեղավորվել հյուրանոցում։ Գիշերն ու հաջորդ ցերեկվա մի մասը հատկացրեց հանգստին։ Դժբախտ արարածը բավական երկար ժամանակ խաղաղ քնով չէր քնել։ Քաղցը ու խարուսիկ երազներ տեսավ, իսկ երբ արթնացավ, այլևս չափազանց, որ կորցրել էր գիշերվա պատրանքները, որովհետև հույսն էր սավառնում սնարին։ Խնամքով հագնվեց. գիտեր, որ Ռեյմոնը մանրամասնորեն հետևում էր իր արտաքինին։ Դեռ նախորդ

երեկոյան գեղեցիկ ու պայծառ գույներով հագուստ էր պատվիրել, որ զարթնելուն պես բերին։

Կեսօրից հետո կառք վարձեց և երեկոյան ժամը իններին հասավ Ֆոնտենբլո անտառի եզրին գտնվող գյուղը։ Այստեղ կառապանին պատվիրեց արձակել ձիերը և սպասել մինչև հաջորդ օրը, իսկ ինքն ընտրեց անտառի արահետներից մեկը, որը հասնում էր մինչև Լանյիի դղյակի պարտեզի մոտ. քառորդ ժամ չանցած տեղ հասավ։ Փորձեց բացել դռնակը, բայց ներսից կողպած էր։ Ինդիանան ուզում էր աննկատ անցնել, խուսափում էր ծառաներից, ուզում էր անակնկալի բերել Ռեյմոնին։ Գնաց այգու պատի երկայնքով։ Պատը շատ հին էր, հիշեց, որ տեղ-տեղ անցքեր էին բացված, բարեբախտաբար այդպիսի մի բացվածք գտավ և առանց մեծ դժվարության սպրդեց այգու մեջ։

Ռեյմոնին պատկանող հողի վրա ոտք դնելուն պես, որն այսուհետև իր պատսպարանն էր լինելու, իր սրբավայրը, իր հայրենիքը, զգաց ուրախությունից բաբախող սրտի զարկերը։ Թեթևաքայլ ու հաղթական անցավ քաջածանոթ ծառուղիներով։ Հասավ անգլիական ոճով մշակված պարտեզը, որ այս կողմից բավական մռայլ ու առանձնացած տեսք ուներ։ Ամեն ինչ մնացել էր նույնը, միայն կամուրջն էր անհետացել, որն իր հուշերում տխուր անկյուն էր զբաղեցնում, և մեկ էլ գետի հունն էր փոխված։ Այն տեղերը, որ նույնի մահն էին հիշեցնելու, ամբողջովին նոր տեսք էին ստացել։

«Ցանկացել է դաժան հիշողությունն անհետացնել իմ սրտից։ Սխալվել է, կարող էի այդ ամենը տանել։ Մի՞թե ինձ համար չկրեց այդ խղճի խայթը։ Այսուհետև հավատար պայմաններում ենք, որովհետև ես էլ իմ հերթին հանցագործ եմ։ Գուցե ամուսնուս մահվան պատճառն եմ դարձել։ Ռեյմոնը կարող է գիրկը բացել և ընդունել ինձ. սերը մեզ նորից մաքուր խիղճ և առաքինություն կապահովի»։

Անցավ գետի վրա գցած տախտակների վրայով, որ հետագա կամրջի նախագիծ էր, և մտավ ծաղկանոց։ Ստիպված էր մի քանի բոպե կանգ առնել. սիրտը դուրս թռչելու աստիճան տրոփում էր։ Աչքերը բարձրացրեց իր նախկին սենյակի պատուհանին։ Ինչպիսի՜ երջանկություն. երկնագույն

վարագույրների հետևից լույս էր երևում։ Ռեյմոնն այնտեղ էր։ Կարո՞ղ էր ուրիշ սենյակ ընտրել։ Ծոնամուտքի սանդուղքի դուռը բաց էր։

«Ամեն վայրկյան սպասում է ինձ,— մտածեց Ինդիանան,— ավելի շատ ուրախանալու է, քան՝ զարմանալու»։

Աստիճանի ծայրին նորից կանգնեց շունչ առնելու։ Ուրախության համար այնքան ուժ չուներ իր մեջ պահած, որքան ցավ կրելու համար։ Կռացավ և բանալու անցքից ներս նայեց։ Ռեյմոնը մենակ էր, կարդում էր։ Այո, Ռեյմոնն էր, ուժով և կենսախնդությամբ լի։ Վիշտը չէր ծերացրել նրան, թաղաքական փոթորկումները մի մազ անգամ չէին պակասեցրել նրա գլխից։ Նստած էր հանգիստ, գեղեցիկ տեսքով, ճակատը հենած սպիտակ ձեռքին, որ մխրճել էր սև մազերի մեջ։

Ինդիանան աշխուժորեն հրեց դուռը, այն առանց դիմադրության հանդիպելու բացվեց։

— Սպասո՞ւմ էիր ինձ,— բացականչեց նա ծնկների վրա ընկնելով և գլուխը դնելով Ռեյմոնի կրծքին,— Ամիսներ, օրեր ես հաշվել։ Գիտեիր, որ նշված ժամկետն անցել է, բայց գիտեիր նաև, որ պիտի արձագանքի քո կանչին... Դո՛ւ ինձ կանչեցիր, հիմա ես այստեղ եմ, այստեղ եմ։ Ինձ թվում է, թե հիմա կմեռնեմ։

Ինդիանայի մտքերը շաղափվեցին ուղեղում, մի քանի վայրկյան լռեց, շունչը կտրվում էր, ոչ մի բառ չէր արտաբերում, մտածելու անկարող էր։

Հետո բացեց աչքերը, ճանաչեց Ռեյմոնին, կարծես երազում լիներ, ուրախության ճիչ արձակեց, խենթացած, ոգևորությամբ ու երջանկությամբ լի շուրթերը հպեց նրա շուրթերին։ Ռեյմոնը գունատվել էր, անշարժացել, կայծակնահար էր եղել։

— Ինչ է, ինձ չե՞ս ճանաչում,— բացականչեց Ինդիանան,— ես եմ, քո Ինդիանան, քո սորուկն եմ, որին կանչեցիր աքսորից, երեք հազար վերստ կտրելով եկել եմ քեզ սիրելու և ծառայելու։ Քո ընտրած կյանքի ուղեկիցն եմ, ամեն ինչ թողել եմ, ամեն տեսակի փորձություններ ենթարկվել եմ, ոչ մի բանից չեմ վախեցել, որպեսզի այս պահի երջանկությունը բերեմ քեզ։ Երջանիկ ես, չէ՞, գոհ ես, չէ՞, ին-

ձանիցի։ Ուզում եմ վարձատրվել, միայն մեկ բառ եմ ուզում, միայն մեկ համբույր, և ինձ հարյուրապատիկ վարձատրած կլինես։

Բայց Ռեյմոնը չէր պատասխանում. մտքի հիանալի տիրապետումը այժմ լքել էր նրան։ Զարմանքից, խղճի խայթից, սարսափից քարացել էր իր ոտքերի առջև ընկած կնոջը տեսնելով։ Երիսը թաքցրեց ձեռքերի մեջ և մահ տենչաց։

— Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ, չես խոսում ինձ հետ, ինձ չես համբուրում, ոչինչ չես ասում,— սրտաճմլիկ ձայնով աղաղակեց Ինդիանան՝ Ռեյմոնի ծնկները գրկելով,— ուժ չունե՞ս պատասխանելու Երջանկությունից կարկամե՞լ ես, սպանո՞ւմ է այդ երջանկությունը, քեզ լավ եմ հասկանում։ Ա՜խ, տանջվում ես, խեղդվում ես, խիստ անակնկալի բերի։ Փորձիր նայել ինձ, տես որքա՜ն գունատ եմ, ինչպես եմ ծերացել, ինչքան եմ տանջվել։ Եվ քեզ համար եմ տառապել, դու ավելի ուժգին կսիրես ինձ։ Մի բառ, Ռեյմոն, միայն մի բառ ասա։

— Ուզում եմ լաց լինել,— ասաց Ռեյմոնը խեղդված ձայնով։

— Ես էլ,— պատասխանեց Ինդիանան՝ նրա ձեռքերը համբույրներով ողողելով,— այո, այո, արցունքը թեթևացնում է։ Լաց եղիր, լաց եղիր կրծքիս վրա, արցունքներդ համբույրներովս կսրբեմ։ Եկել եմ քեզ երջանկություն պարգևելու, ամեն ինչ կլինեմ քեզ համար, ինչ ցանկանաս. ուզում եմ կողակիցդ լինեմ, սպասուհիդ, սիրուհիդ։ Առաջ դաժան էի, հիմար, եսասեր, շատ եմ տանջել քեզ և չեմ ուզել հասկանալ, որ ուժերիցդ վեր բաներ եմ պահանջել։ Բայց դրանից հետո շատ եմ մտածել։ Այժմ, քանի որ չես վախենում հասարակական կարծիքից և ամեն ինչ անում ես հանուն ինձ, մի՞թե իրավունք ունեմ մերժելու քեզ. ես պատրաստ եմ ամեն տեսակի զոհողության դիմելու։ Դարձիր իմ անձի, իմ արյան, իմ կյանքի տերն ու տնօրենը, հոգով սրտով քեզ եմ պատկանում։ Երեք հազար վերստ եմ անցել՝ քեզ պատկանելու, այս ամենը քեզ ասելու համար։ Տիրիր ինձ, քո սեփականությունն եմ, իմ տերը դու ես։

Զգիտեմ, թե ինչ դժոխային միտք ճառագեց հանկարծ Ռեյմոնի ուղեղում, պրկված ձեռքերը բաց թողեցին դեմքը,

սատանայական սառնասրտությամբ նայեց Ինդիանային։ Հետո սարսափազդու ժպիտ թափառեց շրթներին, աչքերը փայլով լցվեցին։ Ինդիանան դեռ շատ գեղեցիկ էր։

— Նախ պետք է թաքցնեմ քեզ,— ասաց նա վեր կենալով։

— Ինչո՞ւ թաքցնել,— հարցրեց Ինդիանան,— մի՞թե այստեղ դու չես տերը, մի՞թե իրավունք չունես ինձ ընդունելու, պաշտպանելու, չէ՞ որ կյանքում քեզնից բացի ոչ մեկը չունեմ, եթե դու չլինես, մուրալու եմ մեծ ճանապարհների վրա։ Մի վախեցիր, մարդիկ չեն մեղադրի քեզ, որ սիրում ես ինձ։ Ամբողջ մեղքն ինձ վրա եմ վերցնում... Ես եմ մեղավոր... Բայց ո՞ւր ես գնում,— ճչաց նա՝ տեսնելով Ռեյմոնին դռան կողմն ուղղվելիս։

Կառչեց նրանից այն երեխայի սարսափով, որ ոչ մի վայրկյան չի ուզում առանձին մնալ և ծնկների վրա քարշ եկավ նրա հետևից։

Ռեյմոնն ուզում էր կողպել դուռը, բայց ուշ էր։ Այն բացվեց՝ նախքան ձեռքը բանալուն կտաներ, և Լորա դը Նանժին մտավ սենյակ։ Նա ավելի շուտ ցնցված էր, քան զարմացած. ոչ մի բացականչություն չարձակեց, միայն մի փոքր կռացավ և աչքերը կկոցելով նայեց հատակին համարյա կիսամեռ ընկած կնոջը, հետո դառը ժպիտով, սառնությամբ ու արհամարհանքով ասաց.

— Տիկին Դելմար, կարծում եմ բավական հաճելի է ձեզ երեք հոգու արտառոց վիճակի մեջ դնելը, բայց և այնպես շնորհակալություն եմ հայտնում, որ զավեշտական ամենափոքր դերը ինձ եք բաժին հանում, և ահա թե ինչպես եմ ուզում երախտագիտությունս հայտնել. նեղություն կրեք դուրս գալ այստեղից։

Զայրույթը ուժ ներարկեց Ինդիանային, նա հպարտ տեսքով և հաստատակամ բարձրացավ գետնից։

— Ո՞վ է այս կինը,— շրջվելով Ռեյմոնի կողմը՝ հարցրեց նա,— և ի՞նչ իրավունքով է հրամաններ արձակում ձեր տան մեջ։

— Դուք ի՛մ տանն եք, տիկին,— միջամտեց Լորան։

— Խոսե՞ք, պարոն,— ճչաց Ինդիանան՝ կատաղորեն թափ

տալով դժբախտ Ռեյմոնի թևը,— ասացեք, ո՞վ է սա, ձեր սիրուհի՞ն, թե՞ կինը։

— Իմ կինն է,— պատասխանեց Ռեյմոնը հիմար տեսքով։

— Ներում եմ ձեր տարակուսանքը,— ասաց տիկին դը Ռամիերը դաժան ժպիտով,— եթե գտնվեիք այնտեղ, որտեղ ձեր պարտականությունն էր ձեզ պարտավորեցնում, ստացած կլինեիք պարոնի ուղարկած հարսանեկան հրավերը։ Կեցցեք, Ռեյմոն,— ավելացրեց նա ծաղրական բարեհոգի տոնով,— ցավում եմ՝ տեսնելով ձեզ այդպիսի անելանելի վիճակի մեջ, բայց ոչինչ, դեռ երիտասարդ եք, հույս ունեմ, կզգաք, որ կյանքում հարկավոր է շատ ավելի զգույշ գործել։ Խորհուրդ եմ տալիս վերջ տալ այս անհեթեթ տեսարանին։ Շատ պիտի ծիծաղեի, եթե այդքան դժբախտ տեսք չունենայիք։

Այսպես խոսելով, դուրս եկավ սենյակից, ինքն իրենից գոհ, որ կարողացել էր արժանավայել պահել իրեն և գաղտնապես զգում էր իր հաղթանակը՝ տեսնելով ամուսնուն իր ներկայությամբ այդ աստիճանի նվաստացած. այսուհետև նա կախում պիտի ունենար իրենից։

Երբ Ինդիանայի խելքը գլուխը եկավ, իրեն գտավ մենմենակ նստած փակ կառքի մեջ, որն ամբողջ արագությամբ սուրում էր դեպի Փարիզ։

Գլուխ XXIX

Կառքը կանգ առավ ցանկապատի մոտ։ Մի սպասավոր, որին տիկին Դելմարը նախկինում տեսել էր Ռեյմոնի տանը և ճանաչել, մոտեցավ կառքին ու հարցրեց տիկնոջը, թե ուր էր ցանկանում ուղևորվել։ Ինդիանան մեքենայաբար հայտնեց նախորդ օրն իջևանած հյուրանոցի հասցեն և անունը։ Տեղ հասնելուն պես փլվեց աթոռի վրա և մնաց մինչև հաջորդ առավոտ։ Նա չէր մտածում անկողին մտնելու մասին, ոչ մի շարժում չէր ուզում կատարել, երազում էր միայն մեռնել, բայց այնքան էր հյուծված, այն աստիճան թմրած էր, որ ուժ չէր գտնում նույնիսկ ինքնասպանություն գործել։

Մտածում էր, որ այդքան ցավից հետո անհնար էր ապրել, և մահն ինքը կգար իր հետևից։ Այդպես մնաց նաև հաջորդ օրը, ոչինչ չկերավ, առաջարկված ծառայություններից անգամ չցանկացավ օգտվել։

Ավելի ահավոր բան չեմ պատկերացնում, քան Փարիզի վատահամբավ հյուրանոցներից մեկում դիշերելը, այնպիսի մի հյուրանոցում, որը կառուցված է նեղ ու մութ փողոցի վրա, որտեղ օրվա գունատ լույսն ու խոնավությունը կարծես ափսոսալով են բարձրանում ծխից սևացած առաստաղներին ու պատուհանների կեղտոտ ապակիներին։

Կին լինել և բոլորից մերժված հայտնվել երեք հազար վերստ հեռու, հարազատներից, հովանավորությունից զրկված, այսպիսի մի վայրում, առանց դրամի (ավելի լավ է անծայրածիր անջուր անապատում լքված լինել, քան այստեղ), անցյալի մեջ չունենալ երջանիկ մի հիշողություն, որ թունավորված կամ արատավորված չլինի, գալիք կյանքի համար գոյատևության հույսի հնարավորություն չլինի, որ ներկայի ճնշումից ազատի, սա նշանակում է թշվառության և լքվածության վերջին աստիճանին հասնել։ Տիկին Դելմարը նույնիսկ չփորձեց մաքառել ծանր ճակատագրի դեմ, փշրված ու անէացած կյանքի դեմ, և թողեց, որ քաղցը, տենդը, վիշտը սպանեն իրեն։ Չորրորդաց, արցունք չթափեց, չփորձեց մինչև իսկ ժամ առաջ մահն արագացնել՝ մեկ ժամ պակաս տանջվելու համար։

Հետևյալ օրվա առավոտյան նրան գտան գետնին փռված, ցրտից քարացած, ատամները սեղմած, կապտած շրթունքներով, հանգած աչքերով։ Բայց չէր մահացել։ Հյուրանոցի տիրուհին պահարանի գզրոցները խառնելուց հետո, երբ տեսավ, որ այդ կինը համարյա ոչինչ չունի, մտածեց և նպատակահարմար գտավ հիվանդանոց փոխադրել նրան, քանի որ երկարատև թվացող հիվանդությունը մեծ ծախսեր էր պահանջելու։ Բայց, մինչ այդ, քանի որ «մարդասեր» կին էր, Ինդիանային պառկեցրեց անկողնում, ուղարկեց բժիշկ կանչելու, որպեսզի իմանար՝ հիվանդությունը երկու օրից ավելի՞ էր տևելու։ Ներկայացավ մեկը, որին չէին հրավիրել։

Բաց անելով աչքերը, Ինդիանան նրան տեսավ իր սնարի մոտ։ Հարկ չեմ համարում անունը տալ...

— Ա՜, այդ դո՞ւ ես, դո՞ւ ես,— ասաց նա՝ կիսամեռ նեռվելով այդ մարդու դիրքը,— իմ բարեբար հրեշտակ։ Բայց շատ ես ուշացել, ոչինչ չեմ կարող անել քեզ համար, բացի օրհնելուց։

— Սիրելի բարեկամ, դուք չեք մեռնի,— հուզված պատասխանեց Ռալֆը,— կյանքը դեռ կարող է ժպտալ ձեզ։ Ձեր երջանկությանն դեմ կանգնած օրենքներն այսուհետև ձեր զգացմունքների վրա բռնանալ չեն կարող։ Կուզեիայի ավերել այն մարդու հմայքը, որ անհաղթահարելիորեն ծանրացած է ձեզ վրա, այն մարդու, որին չեմ սիրում և չեմ հարգում, բայց իմ կարողությունից վեր է, և հոգնել եմ ձեր տանջանքները տեսնելով։ Ձեր գոյությունը մինչև հիմա ահավոր է եղել, այլևս այսպես շարունակվել չի կարող։ Եվ եթե իմ տխուր կանխատեսումներն իրականանան, եթե ձեր երազած երջանկությունը թեկուզ կարճատև լինի, գոնե առժամանակ կճանաչեք այն, երջանկությունը չճաշակած չեք մեռնի։ Զոհում եմ իմ առելությունը։ Ճակատագիրը, որ ձեզ մեն-մենակ նետում է իմ թևերի մեջ, պարտադրում է ինձ կատարել խնամակալի և հոր պարտականությունները։ Եկել եմ հայտնելու, որ ազատ եք, կարող եք ձեր բախտը կապել պարոն դը Ռամիերի հետ։ Դելմարն այլևս չի ապրում։

Ռալֆը խոսում էր, և արցունքները հանդարտ պորվում էին այտերի վրայով։ Ինդիանան ընդոստ թռավ տեղից և հուսահատությամբ գալարելով ձեռքերը՝ բացականչեց.

— Ամուսինս մահացել է, ե՛ս սպանեցի նրան։ Եվ դուք խոսում եք ապագայի ու երջանկության մասին, որ կարծես կարող է բույն դնել ինքն իրեն ատող և իրենից զզվող մարդու սրտո՞ւմ։ Հավատացեք, ասվածն արդար է դատում, ես անիծյալ կին եմ, պարոն դը Ռամիերն ամուսնացել է։

Ինդիանան ուժասպառ ընկավ զարմիկի թևերի մեջ։ Մի քանի ժամ հետո միայն կարողացան շարունակել խոսակցությունը։

— Թող ձեր խռովյալ հոգին խաղաղվի,— ասաց Ռալֆը հանդիսավոր, բայց մեղմ ու տխուր տոնով,— Դելմարին մահացու կաթված էր խփել, երբ հեռացաք նրա մոտից։ Ձեր գնալուց հետո քնից այլևս չարթնացավ, չիմացավ ձեր փա-

խուստի մասին, նա մահացավ առանց անիծելու ձեզ, չողբաց ձեր կորուստը։ Առավոտյան, երբ իր անկողնու մոտ մրափից արթնացա, դեմքն արդեն կապտել էր, քունը ծանր էր, տենդում էր. արյան զեղում էր ստացել։ Վազեցի ձեր սենյակը, զարմացա՝ ձեզ չգտնելով, բայց դրա մասին մտածելու ժամանակը չէր։ Միայն Դելմարի մահից հետո լուրջ տագնապեցի։ Բժշկական գիտության բոլոր հնարքները բանեցրի, բայց անօգուտ։ Վիճակը շատ արագ սաստկացավ։ Մեկ ժամ չանցած, անգիտակից վիճակում, շունչը փչեց թևերիս վրա։ Սակայն վերջին պահին նրա խաղաղված ու մարած հոգին կարծես շանքեր գործադրեց վերակենդանանալու. բռնեց ձեռքս, որ կարծում էր ձերն է, փորձեց սեղմել իր պրկված, անզգայացած ձեռքով և ձեր անունը կմկըմալով՝ ավանդեց հոգին։

— Նրա վերջին բառերը լսեցի,— ասաց Ինդիանան մթամած տեսքով,— այն պահին, երբ ընդմիշտ լքում էի նրան, քնի մեջ խոսեց հետս։ «Այդ մարդը կկործանի քեզ»,— ասաց նա։ Այդ բառերն այստեղ են,— ավելացրեց Ինդիանան մի ձեռքը կրծքին, մյուսը ճակատին դնելով։

— Երբ ուժ ունեցա աչքերս ու միտքս հեռացնելու դիակից,— շարունակեց Ռալֆը,— մտածեցի ձեր մասին, Ինդիանա, որ այսուհետև ազատ էիք և ողբալու էիք ձեր ամուսնուն որպես բարեսիրտ և հավատացյալ մարդ։ Միակ անձնավորությունն էի, որին նրա մահը հուզելու էր, որովհետև նրա բարեկամն էի։ Եթե միշտ սրտաբաց չէր ինձ հետ, համենայն դեպս, հանձին ինձ, թշնամի չէր տեսնել։ Վախենում էի անակնկալ նորությունը մեծ հուզում պատճառեր, դուրս եկա դուռն մոտ սպասելու ձեզ, մտածելով, որ շուտով կվերադառնաք առավոտյան զբոսանքից։ Երկար սպասեցի։ Կարիք չկա պատմելու այն հուսահատության, որոնումների, վախի մասին, երբ Օֆելյայի դիակը գտա, արնաթաթախ, ժայռերին խփված։ Ալիքները ափ էին նետել նրան։ Ավա՜ղ, երկար ժամանակ փնտրում էի նաև ձեր դիակը, հավատացած լինելով, որ շուտով կգտնեմ, կարծում էի ինքնասպանություն եք գործել և երեք օր շարունակ թվում էր, թե երկրի երեսին այլևս ոչինչ սիրելի բան գոյություն չունի ինձ համար։ Ան-

օգուտ է պատմել վշտիս մասին, կարծում եմ, ինձ լքելու ժամանակ կանխատեսած պիտի լինեիք։

Շուտով կղզում լուր տարածվեց, թե փախել եք։ Ինչ-որ նավ, որ խարիսխ էր գցել ծովափին, բաց ծովում հանդիպել էր «Եվգենիա» նավին, Մոզամբիկի ջրանցքում։ Նավերն այնքան էին մոտեցել, որ ուղևորներից մեկը ճանաչել էր ձեզ և երեք օրվա ընթացքում ամբողջ կղզին իմացավ, որ հեռացել եք տնից։

Ձեզ խնայելով չեմ պատմի, թե ինչ անհեթեթ և չափազանցված խոսակցության առիթ տվին նույն գիշերվա մեջ պատահած երկու դեպքերը՝ ձեր փախուստը, պարոն Դելմարի մահը։ Ես էլ զերծ չմնացի դրանից և «մեծահոգաբար» ենթադրություններ արվեցին իմ մասին, բայց դրանք ինձ չէին հետաքրքրում։ Այս երկրի վրա դեռ մի պարտականություն ունեի կատարելու. համոզվել, որ ապրում եք, և անհրաժեշտության դեպքում օգնել ձեզ։ Ձեր հեռանալուց քիչ ժամանակ անց ես էլ մեկնեցի, բայց ուղևորությունը շատ դժվար անցավ, և միայն ութ օր առաջ հասա Ֆրանսիա։ Ամենաառաջին միտքս այն էր, որ գնայի պարոն դը Ռամիերի մոտ՝ ձեզնից տեղեկություն ստանալու։ Բայց պատահաբար հանդիպեցի նրա ծառային՝ Կարլին։ Ոչ մի ավելորդ հարց չտվի նրան, բացի ձեր իշևանած հասցեն ուզելուց, և եկա այստեղ, համոզված, որ մենակ չեմ գտնելու ձեզ։

— Մենակ, մեն-մենա՜կ, ահավոր ձևով լքված,— բացականչեց տիկին Դելմարը,— բայց լռեսենք այդ մարդու մասին, երբեք լռեսենք։ Այլևս չեմ կարող նրան սիրել, որովհետև արհամարհում եմ, և կարիք էլ չկա ասելու, որ երբևիցե սիրել եմ, քանի որ դա ինձ հիշեցնելու է ամոթաբեր արարքս և հանցանքս, դա կնշանակի ծանր կերպով ճնշել կյանքիս վերջին պահերի վրա։ Ա՜խ, մխիթարող հրեշտակ եղիր ինձ համար, դո՛ւ, որ իմ ողբերգական կյանքի բոլոր ցնցումների ժամանակ հայտնվել ես ու բարեկամաբար ձեռք ես մեկնել։ Վերջին անգամ կատարիր քո բարի գործը. մեղմ ու ներում շնորհող խոսքեր ասա, որպեսզի հանգիստ մեռնեմ՝ հույսով, որ կարժանանամ ինձ սպասող երկնային դատավորի ներմանը։

Նա հույս ուներ, որ կմեռնի, բայց վիշտը, փոխանակ

խորտակելու կյանքի շղթան, կռում է այն։ Նույնիսկ հիվանդությունը վտանգավոր չէր, պարզապես ուժասպառ էր եղել և ընկավ անգործունեության և անկենդանության գիրկը, կարծես ցնորված լիներ։

Ռալֆը փորձեց ցրել նրա մտքերը, հեռացրեց նրան այն ամեն ինչից, որ Ռեյմոնին էր հիշեցնում։ Տարավ Թուրեն, շրջապատեց ամեն տեսակի բարիքներով։ Ոչ մի վայրկյան չլքեց Ինդիանային, որպեսզի մի քիչ տանելի դարձներ նրա կյանքը, և երբ արդյունքի չհասավ, երբ զգաց, որ բոլոր ջանքերն ապարդյուն են անցել ու չի կարողացել նույնիսկ մի աննշան ժպիտ, մի թույլ շող փայլեցնել նրա մռայլ ու հոգնած դեմքին, հուսահատվեց իր անզորությունից և դառնորեն հանդիմանեց իրեն, որ, հակառակ իր սիրուն ու քնքշությանը, ոչնչով չի կարողանում օգնել։

Մի օր, երբ Ինդիանան սովորականից ավելի ընկճված ու հուսահատված էր, Ռալֆը տխուր նստեց նրա կողքին, չհամարձակվելով որևէ բառ ասել։ Ինդիանան շրջվեց և նրբորեն սեղմելով ձեռքը, ասաց.

— Շատ մեծ ցավ եմ պատճառում քեզ, խեղճ Ռալֆ, մարդ պետք է մեծ համբերության տեր լինի, ինձ նման դժբախտ ու փոքրոգի կնոջ պարգևած տհաճություններին դիմանալու համար։ Վաղուց ես ավարտել ծանր պարտականությունդ։ Ոչ մի նվիրված բարեկամից չի կարելի ավելին պահանջել, դու շատ բան ես արել ինձ համար։ Հիմա թո՛ղ ինձ իմ հոշոտող վշտի հետ առանձին, մի փչացրու քո սուրբ ու անարատ կյանքը, մի կապիր այն իմ անիծյալ բախտի հետ, փորձիր այլ տեղ երջանկություն փնտրել, որ երբեք չի հայտնվի իմ կողքին։

— Իրոք, հրաժարվում եմ փրկել ձեր հոգին, Ինդիանա,— պատասխանեց Ռալֆը,— բայց երբեք չեմ լքի ձեզ, նույնիսկ այն ժամանակ, երբ ասեք, թե անտանելի եմ դարձել ձեզ համար, որովհետև հիմա էլ անմիջական խնամքի կարիք եք զգում։ Իսկ եթե չեք ցանկանում ձեր բարեկամը մնամ, թույլ տվեք, գոնե, ձեր ծառան լինել։ Լա՜վ լսեք ինձ, մի առաջարկություն ունեմ. մի դեղամիջոց կա, որ պահել եմ ծայրահեղ, վատթար վիճակի համար, դա անսասան միջոց է։

— Վշտի դեմ պայքարելու մի դեղամիջոց է ինձ հայտնի,— պատասխանեց Ինդիանան,— մոռացումը, որովհետև ժամանակ ունեցա համոզվելու, որ բանականությունն անզոր է այս հարցում։ Ուրեմն, հույսներս դնենք ժամանակի վրա։ Թեև կամքս հնազանդվեր ներշնչածդ երախտագիտական զգացմունքին, այս պահից սկսած պետք է ծիծաղախինդ ու հանգիստ լինեի, ինչպես մեր մանկության օրերին։ Հավատա, բարեկամս, ես ամենևին չեմ ուզում սնուցել իմ ցավը և խորացնել վերքս, կարծում ես չգիտե՞մ, թե ինչպիսի ծանրությամբ են տառապանքներս ընկնում սրտիդ վրա։ Ավա՜ղ, կուզենայի մոռանալ ամեն ինչ, բուժվել, բայց անզոր կին եմ։ Ռալֆ, համբերող եղիր և ապերախտ մի համարիր ինձ։

Արցունքները հորդեցին Ինդիանայի աչքերից։ Սըր Ռալֆը բռնեց նրա ձեռքը։

— Լսիր, սիրելի Ինդիանա, մոռացումը մեր ձեռքին չէ, քեզ չեմ մեղադրում, կարող եմ համբերությամբ տառապել, բայց տեսնել քո տառապանքը՝ իմ ուժերից վեր է։ Եվ հետո, արժե՞, որ մենք՝ թույլ արարածներս, այդպես աննկուն ձևով պայքարենք ճակատագրի դեմ։ Բավական է որքան քարշ տվինք այս ծանր գոյությունը։ Աստված, որին պաշտում ենք, մարդուն տառապանքի ենթարկելով, հնարավորություն է տվել միաժամանակ բնազդով ազատվել դրանից։ Եվ իմ կարծիքով, կենդանական աշխարհի հետ համեմատած, մարդու առավելությունն այն է, որ կարող է բուժել իր ցավերը։ Այդ միջոցը ինքնասպանությունն է։ Ահա թե ինչ եմ առաջարկում քեզ և խորհուրդ եմ տալիս իրագործել։

— Հաճախ եմ խորհել,— պատասխանեց Ինդիանան կարճատև լռությունից հետո,— կար ժամանակ, որ մտածում էի վերջ տալ կյանքիս, բայց հավատացյալիս խիղճը կանխում էր որոշումս։ Այդ ժամանակվանից առանձնության մեջ շատ եմ մտորել։ Դժբախտությունը անքակտելիորեն կապվելով ինձ, կամաց-կամաց մի այլ հավատքի տարավ, բայց ոչ այն հավատքին, որ մարդիկ էին ուսուցանել։ Երբ վերջին անգամ օգնության հասար, որոշել էի քաղցից մեռնել, բայց խնդրեցիր ապրել։ Իսկ ես իրավունք չունեի մերժել քեզ ու

զոհողության գնացի։ Հիմա քո գոյությունն է ինձ կանխում այդ քայլին դիմել, քո ապագան։ Ի՞նչ ես անելու մեն-մենակ այս աշխարհում, խեղճ Ռալֆ, առանց ընտանիքի, առանց հետաքրքրությունների, առանց սիրու։ Այն ժամանակից, ինչ սարսափելի վերքերից խոցվել է սիրտս, ոչ մի օգուտ չեմ տվել քեզ։ Բայց, հավանաբար, կբուժվեմ։ Այո, Ռալֆ, ամեն ջանք կգործադրեմ, երդվում եմ, մի քիչ էլ համբերիր, երևի շուտով կսկսեմ ժպտալ... Ուզում եմ առաջվա նման հանգիստ ու աշխույժ լինել, ուզում եմ կյանքս նվիրել քեզ, որի համար այնքան պայքարել ես։

— Ոչ, բարեկամս, ոչ,— ասաց Ռալֆը,— այդպիսի զոհողություն երբեք չեմ ընդունի։ Մի՞թե իմ կյանքն ավելի արժեք ունի, քան ձերը։ Ինչո՞ւ եք ապագա տանջանքների ենթարկել ուզում ձեզ միայն նրա համար, որ իմ կյանքը հաճելի դարձնեք։ Կարծում եք կարելի կլինի՞ վայելել այդպիսի կյանքը, զգալով, որ ձեր սիրտը չի բաժանում իմ ուրախությունը։ Ոչ, ես այդ աստիճանի եսասեր չեմ։ Հավատացեք, կարիք չկա այդպիսի հերոսական քայլի դիմել։ Հրաժարվել ամեն տեսակի անձնասիրական զգացմունքներից, դա արդեն անձնասպանություն է։ Վերջապես, հանգիստ պայմաններում քննարկենք մեր իրավիճակը և մեզ մնացած մի քանի օրերին նայենք որպես ընդհանուր սեփականություն, մեզնից ոչ մեկը իրավունք թող չունենա առանց մյուսի համաձայնության տնօրինելու դրանք։ Դեռ շատ վաղուց, կարող եմ ասել, ծնվածս օրվանից հոգնել եմ վրաս ծանրացող կյանքից։ Հիմա, Ինդիանա, ուժ չեմ գտնում մեջս առանց դառնանալու կամ վատ զգալու համակերպվել դրան։ Մեկնենք միասին, վերադառնանք աստծու մոտ, որ արտաքսել է մեզ փորձությունների այս երկիրը՝ «արցունքի հովիտը», և նա, անկասկած, չի հրաժարվի գիրկը բացել մեր առաջ, երբ հոգնած ու տանջված՝ նրանից գթություն և ողորմածություն հայցենք։ Հավատում եմ աստծուն, Ինդիանա, և առաջինը ես սովորեցրի ձեզ հավատալ նրան։ Ուրեմն վստահեք ինձ, ազնիվ հոգին չի կարող մոլորեցնել այն մարդուն, որին մաքուր սրտով է դիմում։ Թե՛ դուք, թե՛ ես շատ ենք տանջվել այս երկրի վրա, այնպես որ գործած բոլոր մեղքերը քավել ենք։ Դժբախտության մկրտ-

տումը մաքրագործել է մեր հոգիները, վերադարձնենք այդ հոգիները նրան, ով ստեղծել է։

Օրեր շարունակ Ռալֆի և Ինդիանայի միտքն զբաղված էր այս հարցով, ի վերջո որոշեցին միասին հեռանալ կյանքից։ Խոսքը հիմա վերաբերում էր ինքնասպանության տեսակին։

— Դա շատ կարևոր հարց է,— ասաց Ռալֆը,— այդ մասին էլ եմ մտածել, ահա թե ինչ եմ առաջարկում։ Այն, ինչ ուզում ենք իրագործել, անմիջական պահի ազդեցության տակ չի կատարվելու, այլ խաղաղ պայմաններում, բանականորեն, գիտակցված, որն այնպիսի ակնածանք է պահանջում, ինչպիսին կտածի հավատացյալը եկեղեցու խորանի առջև։ Մեզ համար մեր տաճարը տիեզերքն է, ուր պաշտում ենք աստծուն։ Մեծասքանչ ու կուսական բնության մեջ է մարդ անսահման ուժով զգում նրա հզորությունը, որը զերծ է մարդկային ամեն տեսակի մեղքերից։ Ուրեմն, վերադառնանք անապատ, որտեղ կաղոթենք։ Այստեղ, մարգկանցով ու նրանց արատներով լցված հողի վրա, քաղաքակրթության գրկում, որտեղ ժխտում են աստծուն կամ խեղաթյուրում են նրա կաճառը, անհանգիստ, տհաճ, տխուր զգացումներ եմ ունենալու։ Ուզում եմ ուրախ մեռնել, հանգիստ ուղեղով, աչքերս երկինք հառած։ Իսկ կարելի՞ է այստեղ այդպիսի անկյուն գտնել։ Ուրեմն, կտանեմ ձեզ այնպիսի մի տեղ, որտեղ ինքնասպանությունը կկատարվի ամենաազնիվ, ամենահանդիսավոր պայմաններում, Բուրբոն կղզու Բերնիկայի լեռնանցքում, ջրվեժի մոտ, որի ականակիտ, ծիածանի գույներով ջրերը նետվում են մարդու ոտք չդիպած խորխորատի մեջ։ Այնտեղ ենք անցկացրել մեր մանկության ամենաքաղցր պահերը, ավելի ուշ այնտեղ եմ արտասուք թափել կյանքիս դառնագույն ցավերի վրա, այնտեղ եմ աղոթել և սովորել հուսալ, այնտեղ եմ ուզում, մի գեղեցիկ երեկո, որ հասուկ է մեր երկրին, պառանվել նրա անապակ ջրերի մեջ ու իջնել զովասուն ու ծաղկավետ շիրիմ, որ առաջարկում է անդունդի կանաչապատ հողը։ Եթե տեղի ընտրության հարցում այլ առաջարկ չունեք, բավականություն կպատճառեք ինձ՝ իրագործելու մեր զոհաբերու-

թյունը այն վայրում, որ վկան է եղել մեր մանկական խաղերի և երիտասարդական ցավերի։

— Շատ լավ,— պատասխանեց տիկին Դելմարը ձեռքը մեկնելով Ռալֆին, որպես համաձայնության նշան,— ջրեկերքները միշտ ձգել են ինձ անհաղթահարելի գայթակղությամբ, որն, իհարկե, կապված է խեղճ Նունիս հիշատակի հետ։ Նրա նման մեռնելը հաճելի կլինի ինձ համար, դա կլինի նրա մահվան վարձատրությունը, մի մահ, որ իմ պատճառով տեղի ունեցավ։

— Եվ հետո,— ասաց Ռալֆը,— ծովային այս նոր ճամփորդությունը, որ մինչ այդ անցել է հուզումների, խռովքների մեջ, մեզ համար կլինի լավագույն նախապատրաստություն՝ վերադառնվելու, երկրային կապանքներից ձերբազատվելու, մաքուր հոգով հասնելու դերագույն տիրոջը։ Աշխարհից կտրված՝ պատրաստ կլինենք ուրախությամբ լքելու կյանքը, հիացմունքով կդիտենք փոթորկածին բնության տարերքները և մեր աչքի դեմ բացվող գեղեցիկ պատկերները։ Եկ, Ինդիանա, գնանք, մեր ոտքերից թափ տանք այս ապերախտ երկրի փոշին։ Մեռնել այստեղ, Ռեյմոնի աչքի առջև, դա հիմար ու տառապագույն վրեժխնդրություն կլինի։ Աստծո կամքին թողնենք այդ մարդուն հասանելիք պատիժը, ավելի ճիշտ, խընդրենք բարձրյալից իր հոգու անսահման գանձերից բաժին հանել այդ երախտամոռ և ստեր սրտին։

Նրանք մեկնեցին։ «Նահանգով» երկկայմանի նավը տարավ նրանց թռչունի նման արագ ու թեթև, դեպի հայրենիք, որը երկու անգամ լքել էին։ Երբեք այդքան երջանիկ և անենկատ անցնող ուղևորություն չէին կատարել։ Կարծես բարենպաստ քամին հանձնարարություն էր ստացել կյանքի փոթորկահույզ ալիքներին հանձնված, ծովաքարերի վրա ծեծված այդ երկու դժբախտներին շուտափույթ ափ հանելու։ Երեք ամսվա ընթացքում, Ռալֆի խորհուրդներին անսալով, Ինդիանան քաղեց համակերպվելու պտուղները։ Ծովի սուր ու ներթափանցող օդը վերականգնեց նրա թույլ առողջությունը։ Անդորրը սողոսկեց նրա հոգնած սիրտը։ Համոզված էր, որ ցավերը շուտով վերջ կգտնեն, և այդ միտքը նրա վրա այնպիսի ուժով ներգործեց, ինչպես բժշկի խոստումները հավատով լցված հիվանդի վրա։ Նա մոռացավ անց-

յալը, և հոգին հավատացյալի հույսով բացվեց խոր զգացումների առաջ։ Նրա մտքերը խորհրդավոր հմայքի, երկնային բույրի դրոշմը կրեցին։ Երբեք ծովն ու երկնակամարը այդքան գեղեցիկ չէին պատկերվել նրա աչքին, կարծես նրանց մեջ առաջին անգամն էր այդքան պերճանք ու հարստություն հայտնաբերում։ Ճակատը պայծառացավ, և ասես աստվածային մի ճառագայթ անցավ նրա հեզահամբույր, թախծոտ, կապույտ աչքերի միջով։

Նման տարօրինակ փոփոխություն կատարվեց նաև Ռալֆի հոգում և արտաքինի վրա։ Նույն պատճառները հանգեցին նույն հետևանքներին։ Վշտի դեմ երկար ժամանակ քարացած հոգին հույսի կենսախինդ ջերմության տակ փափկեց։ Երկինքն իջավ նաև այս գառնացած ու կոտրված սրտի մեջ, խոսքերը կրեցին զգացմունքի դրոշմը, և առաջին անգամ լինելով Ինդիանան ճանաչեց նրա իսկական էությունը։ Բարեկամական սուրբ մտերմությունը մերձեցրեց նրանց, և արդյունքն այն եղավ, որ մեկի վրայից հանեց տանջալից երկչոտությունը, մյուսի վրայից՝ կասկածելի նախազգացումները։ Ցուրաքանչյուր օր Ռալֆի վրայից նետում էր բնավորության ծանր մի գիծ, իսկ Ինդիանայի վրայից՝ նրա մասին արած սխալ դատողությունները։ Ռեյմոնի հետ կապված թրատող հիշողությունը կամաց-կամաց թուլացավ, գունատվեց և կտոր-կտոր թափվեց Ռալֆի՝ մինչ այդ չհայտնաբերված առաքինության, հոգու վեհանձնության առջև։ Ինդիանայի աչքին որքան մեծանում, բարձրանում էր մեկը, այնքան փոքրանում, իջնում էր մյուսը։ Այդ երկու մարդկանց համեմատության շնորհիվ կույր, տարաբախտ սիրո կրակը ի վերջո հանգավ Ինդիանայի սրտում։

Գլուխ XXX

Անցյալ տարի Բուրբոնում հավերժ իջխող ամառային երեկոներից մեկն էր։ «Նահանդով» նավի երկու ուղևորներն ափ իջնելով՝ երեք օր հետո ուղղվեցին դեպի կղզու լեռները։ Այդ երեք օրը նրանք հատկացրել էին հանգստի, արտառոց մի արարք, որ ամբողջապես հակասում էր այս վայրերը գալու նրանց բուն նպատակին։ Բայց նրանք այդպես չէին մտածում. պատշգամբում Ֆահամի թուրմ խմելուց հետո հատուկ խնամքով հագնվեցին, կարծես պատրաստվում էին քաղաք գնալ՝ հաճելի երեկո անցկացնելու և, լեռներ տանող արահետն ընտրելով, մեկ ժամ ոտքով գնալուց հետո հասան Թերնիկայի կիրճը։

Հաճելի պատահականությամբ, մերձարևադարձային ամենագեղեցիկ լուսնկա գիշերներից մեկն էր։ Իրիկնային թաղումին հազիվ էր դուրս եկել մթամած ալիքների միջից, որ ծովի հարթության վրա սփռեց արծաթե շլացուցիչ երկարաձիգ մի ուղեգիծ, բայց շողերը դեռ չէին թափանցել կիրճի մեջ, իսկ լճակի հայելին անդրադարձնում էր միայն մի քանի փոքրիկ աստղերի դողդոջուն ցոլացումներ։ Լեռան բարձունքին տարածված կիտրոնի ծառերը նույնիսկ չէին ցողված այն գունատ ադամանդներով, որ լուսինն է ցանում նրանց փայլփլուն ու նրբակերտ տերևների վրա։ Եբենոսի ու հնդկասալորի ծառերը շշնջում էին մթության մեջ։ Միայն մի քանի արմավենիներ, որ հասակով մեկ վեր էին խոյանում, իրենց սլացիկ բների կատարներին պահում էին կանաչափայլ արծաթազօծումով հսկայական տերևափնջեր։

Ժայռերի խոռոչներում ծովային թռչունները լռել էին, միայն մի քանի երկնագույն աղավնիներ լեռան կողերից տարածում էին իրենց հեռավոր, տխուր ու սիրատենչ զունդունները։ Փայլփլուն թանկարժեք քարերի նման սիրուն բզեզները հազիվ լսելի տզզում էին սրճի ծառերի մեջ կամ բզզալով իջնում էին լճակի հարթության վրա սահելու։ Ջրվեժի միապաղաղ խշշոցը կարծես խորհրդավոր խոսքեր էր փոխանակում իր ափերի արձագանքի հետ։

Ջրոսնողները ոլորապտույտ կածանով հասան կիրճի բարձունքին, որտեղ հորձանքը, ճերմակ ու փխրուն գոլորշու սյուն կազմած՝ գահավիժում էր անդունդի խորքը։ Նրանք հայտնվեցին իրենց ծրագրի իրականացման համար շատ նպաստավոր հարթակի վրա։ Ռաֆիս արմավենու ճյուղերից կախված լիանաները այդտեղ կազմել էին բնական մի ճոճանակ, որն իջնում էր ջրվեժի վրա։ Սրբ Ռալֆը հիանալի սառնասրտությամբ մի քանի կախված ճյուղ կտրեց, որպեսզի լիանգարեին իրենց գահավիժմանը, հետո բռնեց զար-

մուհու ձեռքը և նստեցրեց մամռապատ ժեռ քարին, որտեղից ցերեկը վայրի և հուժկու հիասքանչ տեսարան է բացվում։ Բայց գիշերվա խավարն ու ջրվեժի խտացած գոլորշին այդ պահին ամեն ինչ պատսպարել էին իրենց մեջ և ցույց էին տալիս միայն ներքևում գտնվող անդունդի սարսափելի, ահազդու անհունությունը։

— Պարտավոր եմ զգուշացնել, սիրելի Ինդիանա,— ասաց սըր Ռալֆը,— որ մեր ձեռնարկումն իրականացնելու համար անհրաժեշտ է մեծ սառնասրտություն ցուցաբերել։ Եթե արագությամբ նետվենք այն կողմից, որտեղից գիշերվա խավարը դատարկության տեսքով է ներկայացնում, անպայման կջախջախվենք ժայռերի վրա և դաժան ու դանդաղ մահ կգտնենք, բայց եթե գցվենք այս ճերմակ ժապավենի մեջ, որը ջրի անկումն է գծում, նրա հետ կհասնենք լճի մեջ, և ջրվեժն ինքը հանձն կառնի մեզ սուզել։ Իմիջիայլոց, եթե մեկ ժամ էլ համբերեք, լուսինը կբարձրանա, կհասնի մեր գլխավերևը և կլուսավորի շրջապատը։

— Շատ լավ,— պատասխանեց Ինդիանան,— մանավանդ այս վերջին վայրկյանները կարող ենք աստծուն տրամադրել։

— Իրավացի եք, բարեկամս,— շարունակեց Ռալֆը,— կարծում եմ, այս գերագույն ժամը աղոթելու և խորհրդածելու համար է։ Չեմ ասում, որ պետք է հաշտվենք Հավերժական կյանքի հետ, դա կնշանակի մոռանալ այն տարածությունը, որ մեզ բաժանում է նրա վեհությունից, մենք, կարծում եմ, պետք է հաշտվենք մարդկանց հետ, որ մեզ տառապանք են պատճառել, և պետք է խնդրենք հյուսիսարևելք փչող զեփյուռին գթառատ խոսքեր հասցնել այն մարդկանց, որոնք երեք հազար վերստ հեռու են գտնվում մեզանից։

Ինդիանան լսում էր նրան առանց զարմանալու, առանց հուզվելու։ Վերջին ամիսների ընթացքում հիացմունքն աճել էր այն չափով, որ չափով փոփոխություն էր նկատել Ռալֆի մոտ։ Նրան այլևս չէր լսում որպես սառնարյուն խորհրդատուի, այլ լռությամբ հետևում էր որպես գերբնական ուժով օժտված բարերար մի անձնավորության, որն ազատելու էր իրեն երկրային բոլոր տանջանքներից։

— Համաձայն եմ,— ասաց Ինդիանան,— հանձնվելով կգում եմ, որ առանց դժվարության կարող եմ ներել նրանց, իմ սրտում ոչ ատելություն կա, ոչ ափսոսանք, ոչ սեր, ոչ չարություն։ Այս վերջին պահերին ես համարյա մոռացել եմ ոմանք կյանքիս ցավերը և ինձ շրջապատած մարդկանց երախտամոռություն։ Գերագույն աստված, դու, որ թափանցում ես մինչև սրտիս խորքը, այժմ գիտես, թե որքան անարատ է այն և խաղաղված, իսկ սերս, հույսս ամբողջապես ուղղված են առ քեզ։

Այդ ժամանակ Ռալֆը, տեղավորվելով Ինդիանայի ոտքերի առաջ, սկսեց բարձրաձայն աղոթել, և աղոթքն իշխեց ջրվեժի աղմուկի վրա։ Մնված օրվանից, հավանաբար, նրա մտքերն առաջին անգամ էին լիովին բարձրանում շուրթերին։ Հնչում էր մահվան ժամը. նրա հոգին հիմա ազատ էր, ոչ մի խորհրդավորություն չէր պարունակում, այն ամբողջովին պատկանում էր աստծուն, հասարակության շղթաներն այլևս չէին ծանրանում վրան։ Նա հոգու վրա ոչ մի մեղք չուներ պահած, նրա թռիչքը դեպի երկինք, որ սպասում էր իրեն, անկաշկանդ էր. առաքինությունը, վեհությունը, հզորությունը թաքցրած քողը լիովին ընկավ, և Ռալֆի պայծառ միտքը մի թռիչքով հասավ զեղեցիկ սրտին։

Ռալֆը, որ արտաքուստ սովորական մարդ էր թվում, պարզվեց, որ բացառիկ անձնավորություն է, որովհետև ուժգնորեն էր հավատում աստծուն և խղճի թելադրանքով էր գործում. հիմա հավերժության հետ էր պարզում իր հարցերը։ Վերջապես պետք է ինքը իրե՛ն պես հանդես գար, պետք է ողջ մերկությամբ բացահայտեր իր ներքին էությունը և երկնային գատավորին ներկայանալուց առաջ պետք է հաներ այն դիմակը, որ մարդիկ սոփել էին նրան կրելու։ Տառապանքի լուծը թոթափելով վրայից, վեր կացավ, հասակով մեկ ձգվեց վեհաշուք և երջանիկ տեսքով, կարծես արդեն մուտք էր գործել երկնային դրախտի դռներից ներս։

Լսելով նրան, Ինդիանան ամենևին չզարմացավ և նույնիսկ հարց չտվեց իրեն, թե Ռալֆն էր այդպես խոսում։ Այն Ռալֆը, որին ճանաչել էր, այլևս գոյություն չուներ, իսկ նրան, որին այժմ լսում էր, թվում էր, երազում վաղուց տեսած բարեկամ է, և երազն այդ վերջապես իրականացել

էր մահվան շեմին։ Նա զգաց, թե ինչպես հոգին բարձրացավ նույն թևերով։ Աստվածային մի ջերմ զգացում նույն հուզումները պատճառեց նրան։ Ազնվությունն ապրումներ հոսեցին ալիքերից Ալֆի մազերի վրա։

Այդ ժամանակ լուսինը բարձրացավ ամենամեծ արմատվենու կատարին, և նրա շողերը, թափանցելով լիանների մեջ, Ինդիանային պարուրեցին գունատ ու թափանցիկ լույսով։ Ճերմակ հագուստով, ուսերի վրայով սահող երկար հյուսքերով, նա նման էր անապատում մոլորված սուրբ կույսի սավերի։

Սըր Ալֆը ծնկի իջավ նրա առաջ և ասաց.

— Ինդիանա, այժմ դու պետք է ներես ինձ քո հանդեպ գործած բոլոր սխալներիս համար, որպեսզի ես էլ կարողանամ ինձ ներել։

— Ավա՜ղ,— պատասխանեց Ինդիանան,— ինչի՞ համար պիտի ներեմ քեզ, խեղճ Ալֆի։ Ընդհակառակը, չե՞ս կարծում, որ պետք է օրհնեմ քեզ վերջին ժամին, ինչպես արել եմ իմ կյանքի բոլոր դժբախտ օրերին։

— Զգիտեմ ինչ ասածիանի եմ մեղավոր եղել,— շարունակեց Ալֆը,— բայց անհնար է, որ ճակատագրիս դեմ մղած երկար ու սարսափելի պայքարի ընթացքում, կամքիցս անկախ, սիրալներ թույլ տված չլինեմ։

— Ո՞ր պայքարի մասին է խոսքը,— հարցրեց Ինդիանան։

— Մեռնելուց առաջ հենց այդ մասին պետք է խոսեմ ձեզ հետ,— պատասխանեց նա,— իմ կյանքի գաղտնիքի մասին։ Նավի վրա, որ ձեզ այստեղ էր բերում, ինձ հարցրիք այդ մասին, և ես խոստացա Ռերնիկա լճի ափին բացել այն ձեր առջև, երբ վերջին անգամ լուսինը բարձրանար մեզ վրա։

— Հասել է պահը,— ասաց Ինդիանան,— լսում եմ։

— Համբերությամբ զինվեք, որովհետև պատմությունս երկար է տևելու, Ինդիանա, և դա իմ կյանքի պատմությունն է։

— Կարծում էի ձեր կյանքի պատմությունը լիովին ծանոթ է ինձ, չէ՞ որ համարյա միշտ ձեր կողքին եմ եղել։

— Իմ կյանքի ոչ մի օրը, ոչ մի ժամը ձեզ հայտնի չէ,— տխրությամբ ասաց Ալֆը,— և ե՞րբ կարող էի պատմել Ձեզ։ Տերը կամեցավ, որ խոստովանությունս համար ամենասարսափելի պահը ձեր և իմ կյանքի վերջին օրը լինի։ Բայց օրերն խիստ ու հանգամանք կարող էր համարվել այն ասաց, ոչտար ոչիրան տանջող ու օրինական է։ Սա անձնական մի հանգույց է, որի համար այս պահին ոչ ոք իրավունք չունի հանդիմանելու ինձ, իսկ դուք վերջին ուրախությունը կպատճառեք ինձ, հավատացած եմ։ Հանձնեցեք, ուրեմն, չանչ համբերությամբ և սիրով իմ կյանքի տխուր պատմությունը, իսկ եթե իմ խոսքերը հոգնեցնեն կամ զայրացնեն ձեզ, լսեք ջրվեժի աղմուկը, որ ինձ համար մահվան հիմն է երգում։

Ես ծնվել էի սիրելու համար, ձեզնից ոչ մեկը չուզեց հավատալ դրան, և այդ սխալմունքն ու արհամարհանքը իմ բնավորության մեջ մեծ դեր խաղացին։ Ճիշտ է, բնությունը ջերմ հոգի էր պարգևել ինձ, բայց նաև արտասովոր սխալ էր գործել. իմ դեմքի վրա դրել էր քարե դիմակ, իսկ լեզվին՝ անհաղթահարելի ծանրություն, ինձ մերժել էր այն, ինչ շնորհում է նույնիսկ ամենակոպիտ մարդկանց. զգացմունքներ արտահայտելու կարողություն՝ հայացքով կամ լեզվով։ Դա էլ ինձ հասցրեց դարձրեց։ Հոգուս մասին դատեցին արտաքինով և հատած մրգի նման ինձ շորացրին իմ կոպիտ կեղևի տակ, որից ազատվել չէի կարող։ Նոր էի աշխարհ եկել և իսկույն զրկվեցի այն քնքշանքից, որի կարիքը երեխան ամենից շատ է զգում։ Մայրս հրաժարվեց ինձ կրծքով կերակրել, քանի որ դեմքս չէր զարդարում ժպիտը՝ ի պատասխան նրա փաղաքշանքների։ Այն տարիքում, երբ դժվար է զգացմունքը տարբերել պահանջարկից, ես արդեն դատապարտված էի զրկվել «նեռասեր» մականունը կրելու։

Այդ ժամանակ վճռեցին, որ ոչ ոք ինձ չի սիրելու, քանի որ չէի կարողանում արտահայտել հույզերս մարդկանց ներկայությամբ։ Ինձ դժբախտ դարձրին, բարձրաձայն ասացին, որ այդ էլ չեմ զգում, համարյա արտաքսեցին հայրական հարկից։ Մոլափի խեղճ թռչունների նման ուղարկեցին ժայռերի վրա ապրելու։ Ինդիանա, ձեզ ծանոթ է իմ մանկությունը։ Երկար օրերս անց էի կացնում ամայության մեջ, և մայրս երբեք չէր մտահոգվում, չէր փնտրում իմ ոտնա-

հետքերը, ոչ մի քնքուշ ձայն չէր բարձրանում խորխորատներից և չէր հասնում ինձ, որպեսզի հիշեցներ մութն ընկնելուց հետո առն վերադառնալու մասին։ Մեծացա մենակ, ապրեցի մենակ, բայց ասված չկամեցավ, որ մինչև վերջ հասնի դժբախտությունս, որովհետև մենակ չեմ մեռնելու։

Այնինչ երկինքն այդ ժամանակ ինձ մի պարգև ուղարկեց, մխիթարություն, հույս։ Դուք մտաք իմ կյանքի մեջ, կարծես ինձ համար էիք ստեղծված։ Ես՝ ոգն երեխա. ինձ նման լքված, ինձ նման կյանքի մեջ նետված, առանց սիրո, առանց պաշտպանության, թվում էր, թե ինձ համար էիք նախատեսված, ես այդ միտքը, համենայն դեպս, փայփայում էի իմ մեջ։ Մի՞թե այդ ժամանակ շատ ինքնավստահ չէի։ Տասը տարի շարունակ միայն ինձ էիք պատկանում, անմնացորդ կերպով, մրցակից չունեի, անհանգստանալու առիթ չունեի։

Դրանք իմ կյանքի լավագույն տարիներն էին, Ինդիանա։ Դուք գարձաք իմ քույրը, իմ աղջիկը, իմ կողակիցը, իմ աշակերտուհին, իմ միակ ընկերը։ Եվ երբ տեսա իմ կարիքն եք զգում, իմ կյանքը նշանակություն ստացավ, և այլևս վայրի կենդանու չէի նմանվում։ Ձեզ համար իմ վրայից նետեցի ընկճվածության լուծը, որ վրաս էին գրել ազգականներս իրենց արհամարհանքով։ Սկսեցի ինքս ինձ հարգել, տեսնելով, որ օգտակար եմ ձեր կյանքում։ Ամեն ինչ անկեղծորեն պիտի ասեմ, Ինդիանա։ Երբ ձեր պատճառով կյանքի ծանր բեռը վերցրի ուսերիս, այնուհետև մտածեցի, որ պետք է վարձատրվեմ։ Վարժվեցի (ներեցեք այն բառերի համար, որ ուզում եմ հիմա օգտագործել, այսօր էլ ես դրանք գողալով եմ արտասանելու), վարժվեցի այն մտքի հետ, որ իմ կինն եք դառնալու։ Երեխա էիք, բայց ձեզ իմ նշանածն էի համարում, իմ երևակայությունը ձեզ զարդարում էր պարմանուհու շնորհներով, անհամբեր էի, ուզում էի ձեզ շուտ մեծացած տեսնել։

Ավա՜ղ, ներեցեք նման սրբապղծության համար, որը, այնուամենայնիվ, տասը տարվա կյանք պարգևեց ինձ։ Եթե դա իմ՝ անիծյալ երեխայի, գործած հանցանքն էր ձեր հանդեպ, լեռների գեղեցիկ ու պարզ աղջիկ, ապա այս հարցում ասված է միայն մեղավոր, որ անընդհատ սնուցեց հոգիս

այդ հանդուգն մտքով։ Ինչպե՞ս կարող էր գոյատևել այս կոտրված, անհասկանալի մնացած սիրտը, որը ծարավի էր սիրո, բայց ոչ մի տեղից սփոփանք չէր գտնում, ո՞ւմ կողմից կարող էի մի բարի հայացք ակնկալել, սիրո մի ժպիտ, եթե ոչ ձեզնից, որին սիրեցի նախ որպես հայր, հետո որպես սիրահար։

Բայց մի սարսափեք այն մտքից, թե հասակ առաք սիրուց հոշոտված խեղճ թռչնի թևերի տակ, երբեք որևէ արատավոր զգացմունք, հանցավոր միտք վտանգի չենթարկեցին ձեր կուսական հոգին, շուրթերս երբեք չքաղցեցին ձեր այտերի անմեղության ծաղիկը, որ ծածկում էր նրանց, ինչպես արեածաղի նուրբ մշուշը՝ մրգերին։ Իմ համբույրները զուտ հայրական համբույրներ էին, և երբ ձեր անմեղ ու թրթռուն շուրթերը հանդիպում էին իմ շրթներին, ցանկասիրության կիզիչ կրակը չէր այրում նրանց։ Ոչ, կապույտ աչքերով փոքրիկ աղջիկ, ես ձե՛զ չէի սիրահարված։ Երբ գրկում էի ձեզ, ձեր մաքուր ժպիտով և նուրբ շոյանքներով, դուք միմիայն իմ երեխան էիք կամ առ առավելն, փոքրիկ քույրս։ Ես սիրահարված էի այն աղջկան, որ պիտի դառնայիք տասնհինգ տարեկան հասակում, և իմ այդ տարիքի երիտասարդի ողջ ավյունով հոշոտում էի ապագան անհագ հայացքով։

Ինչպիսի խաղաղ, երջանիկ օրեր ենք անցկացրել այս կիրճի խորքում։ Քանի անգամ եմ ձեր ոտքերը լվացել այս լճակի ականակիտ ջրերում։ Քանի-քանի անգամ եմ նստել ձեր կողքին ու նայել, թե ինչպես եք քնած այդ եղեգների մեջ, իսկ լուսանիս արմավենու տերևը հովանոց էի դարձնում ձեզ համար։ Այդ ժամանակ երբեմն սկսում էին իմ տանջանքները։ Վատ էի զգում ձեզ շատ փոքրիկ տեսնելով և հարց էի տալիս ինքս ինձ. կգիմանա՞մ արդյոք այդքան տառապանքի մինչև այն օրը, որ կհասկանաք ինձ ու կպատասխանեք իմ հարցերին։ Կամաց բարձրացնում էի ձեր մեռաքսանման մազերը և սիրով համբուրում էի դրանք։ Համեմատում էի նախորդ տարիներին ձեր ճակատի վրայից կտրածս խոպոպիկների հետ, որ պահում էի պայուսակիս մեջ։ Հաճույքով նկատում էի, որ յուրաքանչյուր գարուն մգացնում էր դրանց գույնը։ Հետո փյունիկյան արմավենու բնի վրա իմ ձեռքով փորված գծերին էի նայում, որ չորս-

հինգ տարի շարունակ նշում էի և ձեր հասակի արագ աճն էի տեսնում։ Սառը մինչև հիմա պահել է այդ սպիները, Ինդիանա։ Դրանք տեսա վերջին անգամ, երբ եկել էի այստեղ տանջվելու։ Ավա՜ղ, իզուր մեծացաք, իզուր ձեր գեղեցկությունը իր խոստումները կատարեց, իզուր ձեր մազերը եբենոսի պես սևացան։ Դուք ինձ համար չմեծացաք, ինձ համար չծավալվեց ձեր հմայքը, առաջին անգամ ձեր սիրտը ուրիշի համար տրոփեց։

Այո, դա անարատ սեր էր, խոր և իսկական սեր, որ նեղշնում էիք ինձ։ Տասը տարեկան հասակում նունը մեկ գլխով բարձր էր ձեզնից, ողջ էությամբ կրեոլուհի։ Նա արդեն հասունացել էր, խոնավ հայացքը տարօրինակ արատահայտության փայլեր էր արձակում, նա երիտասարդ օրիորդի արտաքին ու բնավորություն էր ձեռք բերել։ Բայց ես նունին չէի սիրում, ավելի ճիշտ, սիրում էի ձեր պատճառով, որովհետև նա ձեր խաղընկերուհին էր։ Երբեք ինձ հարց չէի տալիս. գեղեցի՞կ է նա արդյոք, կամ ժամանակի հետ ավելի կգեղեցկանա՞։ Չէի նայում նրան։ Իմ աչքին նա ավելի երեխա էր, քան դուք։ Ձեր մասին էի միայն մտածում։ Դուք իմ կյանքի ընտրյալն էիք, երիտասարդական տարիներիս երազը...

Բայց չգիտեի, թե ինչ է պահել ինձ համար ապագան։ Եղբորս մահը ինձ դատապարտեց ամուսնանալ նրա նշանածի հետ։ Կարիք չկա պատմել կյանքիս այդ տարիների մասին, դրանք դեռ վատթարագույն տարիները չէին, Ինդիանա, չնայած դարձա ամուսինը մի կնոջ, որ ատում էր ինձ, ես էլ չէի կարող նրան սիրել։ Հայր դարձա և կորցրի որդուս։ Այրիացա և հետո իմացա, որ ամուսնացել եք։

Ձեզ չեմ պատմի Անգլիա արտաքսված տարիներիս մասին, որ ինձ համար ծանր վշտի շրջան է եղել։ Եթե որևէ մեկի հանկիպ հանցավոր եղել եմ, համենայն դեպս, ոչ ձեր նկատմամբ, իսկ եթե իմ հանդեպ են մեղքեր թույլ տվել, չեմ ուզում բողոքել։

Ոչ ոք չի կարող հասկանալ այն խոր հուզումները, մռայլ հուսալքումը, որ համակեցին, երբ ինձ՝ ամայության մեջ մեծացած դժբախտ երիտասարդիս, ոչ մեկի կողմից երբևիցե վշտակցության չարժանացած մարդուն պոկեցին այս վայրերից, որպեսզի հասարակական պարտականություններ փաթաթեն վզիս, որպեսզի պարտադրեն ինձ զբաղեցնել եղբորս թափուր մնացած տեղը այն մարդկանց շրջապատում, որ հրաժարվել էին ինձնից, որպեսզի ինձ ներշնչեին, թե պարտքի զգացում ունեմ այն մարդկանց հանդեպ, որ չէին ճանաչել իրենց պարտավորությունները իմ հանդեպ։ Եվ ի՞նչ, իմ հարազատներից ոչ մեկը չուզեց նեցուկ կանգնել ինձ, իսկ հետո բոլորը, իրենց շահերից ելնելով, դիմեցին ինձ... որպեսզի ստիպեն պաշտպանել իրենց։ Մինչև անգամ չէին թողնում խաղաղ վայելեմ այն, ինչը նույնիսկ իրավազուրկից խլել չեն կարող՝ մենակության վայելքը։ Կյանքում միայն մեկ ուրախություն, մեկ հույս, մեկ մտածմունք ունեի, այն, որ իմ կինն եք դառնալու։ Դա էլ խլեցին ինձնից, ասացին, որ հարուստ չեք և ինձ չեք համապատասխանում։ Ինչպիսի ծաղր ինձ նման մարդու համար, որին լեռներն էին սնել-մեծացրել, որին հայրական օջախից էին վտարել։ Ես չէի ճաշակել հարստության հրճվանքը, իսկ հիմա պարտադրում էին ուրիշի ունեցվածքը տնօրինել և բարգավաճման հասցնել։

Ինչ արած, ենթարկվեցի։ Իրավունք չունեի ազատել, որ չխլեն փոքրիկ երջանկությունս։ Առանց այն էլ բավական արհամարհված էի, իսկ եթե դիմադրեի, բոլորը նողկանքով պիտի երես թեքեին ինձնից։ Մայրս, որ չէր մխիթարվում մյուս զավակի մահից հետո, սպառնում էր մեռնել, եթե պարտքս չկատարեի։ Հայրս մեղադրում էր ինձ, որ չեմ կարողանում մխիթարել իրեն, կարծես ես էի մեղավոր նրա կողմից սիրված չլինելու համար, և պատրաստ էր անիծել, եթե փորձեի փախչել նրա լծի տակից։ Գլուխս կախ համակերպվեցի, բայց որքան տանջվեցի դրանից հետո։ Դուք, որ նույնպես շատ դժբախտ եք եղել, չեք կարող դա չհասկանալ։

Երբ վերադարձա այստեղ, երբ տեսա այն մարդուն, որի հետ ամուսնացրել էին ձեզ... Ներիր, Ինդիանա, իսկական հասատիր այդ ժամանակ դարձա. սիրո մեջ միշտ առկա է հասատիրությունը, քանի որ իմ սիրո մեջ էլ ի հայտ եկավ։ Ձեզ պատկերացնի, թե ինչ դաժան ուրախություն ապրեցի՝ մտածելով, որ ձեր ամուսնական կապը քեզ միայն տիրոջ էր արժանացրել և ոչ թե ամուսնու։ Զարմացար, տեսնելով, թե ինչ զգացում եմ ցուցաբերում նրա հանդեպ, պատճառն

այն էր, որ նրա մեջ ախոյան չէի տեսնում։ Գիտեի, որ այդ ծերուկը ոչ սեր կարող էր ներշնչել, ոչ զգալ, իսկ քո սիրտը ամուսնական առագաստից կույս էր դուրս գալու։ Երախտագիտությամբ լցվեցի այդ մարդու հանդեպ քո տխրության և անտարբերության պատճառով։ Եթե այստեղ մնար, հավանաբար, հանցագործ դառնայի։ Բայց մենակ թողեցիք ինձ, իսկ առանց քեզ ապրել՝ իմ կարողությունից վեր էր։ Փորձում էի հաղթահարել այդ անսանձահարելի սերը, որ ամբողջ ուժգնությամբ բռնավարվել էր, երբ քեզ գնդակոծած ու թախծոտ տեսա, այնպիսին, ինչպիսին երազել էի։ Եվ մենակությունը ավելի սրեց ցավս, այլևս չէի կարող դիմադրել քեզ տեսնելու ցանկությանս, ուզում էի քեզ հետ նույն հարկի տակ ապրել, նույն օդը շնչել, ամեն վայրկյան հարբել քո ներդաշնակ ձայնի հնչյուններից։ Քեզ հայտնի են, թե ինչ խոչընդոտներ պիտի հաղթահարեի, ինչ կասկածներ պիտի վերացնեի, այդ ժամանակ հասկացա, թե ինչ պարտավորություններ էի դնելու իմ առջև։ Մինչև ամուսնուդ սուրբ երդմամբ չվստահեցնեի, չէի կարող իմ կյանքը կապել քեզ հետ, և ես մինչև վերջ խոսքիս տերը մնացի։ Բանականորեն ու սրտով խստորեն որոշեցի երբեք չմոռանալ եղբոր իմ դերը, ասա, Ինդիանա, երդմնազանց եղա՞։

Հասկացա նաև, որ շատ դժվար, գուցեև անկարելի պիտի լիներ կատարել այս ծանր պարտականությունը, եթե հանեի դիմակս, որ հեռացնում էր ինձնից ամեն տեսակի մտերիմ կապ, հարաբերություն, խոր զգացմունք։ Հասկացա, որ չէր կարելի կրակի հետ խաղալ, որովհետև սերս շատ բուռն էր և դժվար կլիներ ճակատամարտից հաղթանակած դուրս գալ։ Զգացի, որ հարկավոր էր եռակի բարձրությամբ սառցե պատ բարձրացնել շուրջբոլորս, որպեսզի վերացնեմ ինձ համար խիստ կործանարար խղճահարությունդ, իմ հանդեպ ցուցաբերած հետաքրքրությունդ։ Ինքս ինձ ասացի, որ այն օրը, երբ կարեկցես ինձ, մեղավոր կդառնամ, և համաձայնեցի ապրել չոր ու եսասեր մարդու ահավոր մեղադրական անվանումների ծանրության տակ, բարեբախտաբար, այդպիսին էլ հանդես եկա ձեր աչքին։ Կեղծիքս անցավ իմ բոլոր սպասելիքներից. իմ նկատմամբ լցվեցիք գետնահարող խղճահարությամբ, այնպիսի խղճահարությամբ, որ տածում են ներ-

ջինների հանդեպ։ Անհոգի և անզգա մարդ համարեցիք ինձ, ոանահարեցիք, իսկ ես իրավունք չունեի ցույց տալ զայրույթի և վրեժխնդրության պոռթկում, որովհետև դրանով կմատնեի ինձ և նկատել կտայի, որ տղամարդ եմ։

Ես բողոքում եմ ընդդեմ մարդկության, բայց ոչ քո դեմ, Ինդիանա։ Դու միշտ բարի և գթասիրտ ես եղել իմ հանդեպ, հանդուրժել ես զզվելի, կեղծ դիմակս, որ կրում էի՝ քո կողքին լինելու համար, և երբեք չեմ կարմրել ստանձնածս դերի համար, ինձ համար դու ամեն ինչ ես եղել։ Երբեմն մտածում էի հպարտությամբ. եթե այդքան բարի ես իմ հանդեպ կերպարանափոխությամբ հանդերձ, հնարավոր է նաև սիրեիր ինձ, եթե իսկական դեմքով տեսնեիր։ Ավա՜ղ, քո փոխարեն ո՞վ չէր վանի ինձ իրենից, էլ ո՞վ ձեռք կմեկներ այնպիսի մի ոչնչության, ինչպիսին ես էի, որ ոչ դատել կարող էր, ոչ խոսել։ Քեզնից բացի, բոլորը զզվանքով հեռացան «հեսասերից»։ Ա՜խ, կյանքում միայն մի մեծահոգի անձնավորություն կար, որն իր վրա էր վերցրել այդ ծանրությունը անշահախնդիր կերպով, միայն մի մեծ սիրտ կար, որ կարող էր խեղճ լքվածի փակ ու սառած հոգու մեջ, կենդանություն հաղորդելու համար նրան, սրբազան կրակ վառել, միայն մեկ սիրտ, որ ունենար այն ամենը, ինչ պակասում էր ինձ։ Երկնքի տակ միայն մեկ Ինդիանա կար, որ ընդունակ էր այդպիսի Ռալֆի սիրել։

Քեզնից բացի, իմ հանդեպ մեծահոգի գտնվեց նաև Դելմարը։ Մեղադրում էիր ինձ, որ նախապատվությունն այդ մարդուն եմ տալիս, զոհաբերելով երջանկությունդ հանուն իմ շահի, երբ հրաժարվում էի միջամտել ձեր ընտանեկան վեճերին։ Անարդար, կույր կին, դու չտեսար, որ քեզ համար արեցի այն, ինչ հնարավոր էր, հատկապես չհասկացար, որ չէի կարող հոգուս քեզ բարձրացնել ձայնս և ինձ չմատնել։ Ի՞նչ կլիներ քո վիճակը, եթե Դելմարը վռնդեր ինձ իր տնից։ Ո՞վ կպաշտպաներ քեզ այդպիսի համբերությամբ, լռությամբ, բայց նաև հարատևող, անմար սիրով։ Ռեյմոնն այդ բանը չէր անի։ Եվ հետո Դելմարին սիրում էի երախտագիտությունից մղված, խոստովանում եմ, այդ կոպիտ ու անտաշ մարդը, որ կարող էր խլել ինձնից իմ միակ երջանկությունը, նման բան չարեց։ Սիրում էի նրան, որովհետև

դժբախտություն ուներ չսիրվելու քո կողմից, այն բանի համար, որ նրա վիշտը մտերմացնում էր ինձ նրա հետ, սիրում էի նաև նրա համար, որ չի տանջել ինձ՝ խանդ առաջացնելով իմ մեջ...

Բայց ահա հասնում եմ կյանքիս ամենասոսկալի ցավոտ կետին, այն շարաբաստիկ ժամանակաշրջանին, որ իմ այնքան երազած սերը նվիրաբերեցիք ուրիշի։ Այդ ժամանակ միայն ընկալեցի զգացմունքիս ողջ խորությունը, որ տարիներ շարունակ փայփայում էի իմ մեջ։ Այդ ժամանակ առեղությունը թույն լցրեց սրտիս մեջ, և խանդը հոշոտեց մնացած ուժերս։ Մինչ այդ, երևակայությունս ձեզ անբիծ էր պահել, ձեր հանդեպ ունեցածս հարգանքը այնպիսի քողով էր ձեզ պարուրել, որ երազներիս անմեղ՝ հանդգնությունն անգամ համարձակություն չուներ բարձրացնել այն, բայց երբ այն ահավոր միտքը պաշարեց ինձ, թե մեկ ուրիշը տանում է ձեզ իր հետևից, իմ հզոր ձեռքերից պոկում է ձեզ և հարբում է երջանկությունից, որի մասին երազել անգամ չէի կարող, կատաղության դուռը հասա։ Ուզում էի ոչնչացնել այդ մարդուն, ուզում էի հանդիպել նրան այս ձորի մեջ և քարերով գլուխը չափչափել։

Բայց այնքան մեծ վիշտ ապրեցիք, որ մոռացա իմ ցավերը։ Այլևս նրան տպանելու մասին չէի մտածում, որովհետև ողբալու էիք նրա մահը։ Նույնիսկ բազմիցս ցանկություն եմ ունեցել, թող ասված ինձ ների, ասոր քայլի դիմել՝ դավաճանել Դելմարին և ծառայել իմ տիրոջանին։ Այո, Ինդիանա, խելքս գլխիցս թռել էր, թշվառ վիճակի մեջ ընկա՝ տեսնելով ձեր տառապանքը և զղջացի, որ բացել եմ ձեր աչքերը։ Նույնիսկ կյանքս կտայի, որպեսզի սիրտս փոխանցեմ այն մարդուն։ Օ՜, ասոր արարած, թող ասված ների նրան ինձ պատճառած ցավերի համար, բայց թող պատժվի այն չարիքների համար, որ կուտակեց ձեր գլխին։ Այս բանի համար եմ ատում նրան։

Ներեցեք, Ինդիանա, ներեցեք, երևի իմ կողմից դաժանություն է թույլ տրվում՝ այսպես բողոքելով ձեր ներկայությամբ, բայց առաջին և վերջին անգամը կլինի, թողեք անեծք տեղամ այդ ապերախտ մարդու գլխին, որ այսօր ձեզ գերեզման է իջեցնում։ Մի՞թե ձեր աչքերը բացելու համար այսպիսի դաս էր հարկավոր։ Ելացել էիք. և չուզեցիք լսել ո՜չ Նունի ճիշը, ո՜չ Դելմարի մահվան մահճից դուրս եկած նախազգուշացնող ձայնը, որ ասում էր. «Զգուշացիր նրանից, քեզ կկործանի»։ Ձեր անմտությունը քաշեց տարավ ձեզ, իսկ հիմա թողնել եք, հասարակական կարծիքը դատապարտում է ձեզ, իսկ նրան արդարացնում։ Ամեն տեսակի չարիք գործեց, և ոչ ոք ուշադրություն չդարձրեց դրան։ Նունին սպանեց, և դուք մոռացաք, ձեզ կործանեց, և դուք ներեցեք նրան։ Պատճառն այն է, որ նա կարողանում էր շլացնել մարդկանց աչքերը և շեղել նրանց ուղիղը, կարողանում էր ճարպիկ ու նենգ խոսքերով թափանցել սրտերը, նրա իժային հայացքը հմայում էր։ Եթե բնությունը նրան օժտած լիներ իմ երկաթյա դեմքով և անկուն բանականությամբ, կատարյալ մարդ կլիներ։

Օ՜, այո, թող պատժի նրան ասված, որովհետև գազանաբար վարվեց ձեզ հետ, ավելի ճիշտ, թող ների, որովհետև նա ավելի հիմար գտրս եկավ, քան չար։ Ձեզ չհասկացավ, չգնահատեց երջանկությունը, որ կարող էր ճաշակել։ Իսկ դուք որքա՞ն էիք սիրում նրան, որքա՞ն կարող էր գեղեցկացնել ձեր կյանքը։ Նրա փոխարեն ես մի կողմ կնետեի առաքինությունը և ձեզ հետ միասին կփախչեի վայրի լեռների գիրկը, հասարակության ճանկերից կխլեի ձեզ, որպեսզի միայն ինձ պատկանեիք, և միայն մի բանից կվախենայի, որ հասարակությունն ամբողջովին չլքեր հանկարծ ձեզ, չվտարեր իրենից, միայն այդ ժամանակ կկարողանայի փոխարինել այդ ամենին։ Խանդով կլցվեի ձեր բարի անվան դեմ, բայց ոչ այնպես, ինչպես նա կարող էր դատել, կուզենայի, որ բոլորը երես թեքեն ձեզնից, որպեսզի իմ սերը միայն փոխարիներ այս ամենին։ Կտանջվեի, եթե տեսնեի ուրիշ տղամարդու կողմից թեկուզ մի փշրանք երջանկություն կամ մեկ պահ անգամ ձեզ տրված ուրախություն։ Իմ պարտավորությունը կլիներ ձեզ երջանկացնելը, կլիներ իմ սեփական կյանքը, գոյությունը, երջանկությունը։ Այս վայրի կիրճը կդառնար իմ բնակարանը, լեռների վրա խոյացող ծառերը իմ հարստությունը կլինեին, ինձ հպարտ ու երջանիկ կզգայի, եթե ձեր սիրո հետ տիրանայի այս ամե-

նին... Թողեք լաց լինեմ, Ինդիանա, կյանքում առաջին անգամ եմ արտասվում։ Ասոված կամեցավ, որ մեռնելուց առաջ ճաշակեմ այս տխուր հաճույքը։

Ռալֆը երեխայի պես հեկեկում էր։ Իրոք, առաջին անգամ էր առնական հոգով այս աղամարդը խղճում իրենն։ Բացի այդ, նրա արցունքների մեջ ավելի շատ ցավ կար պահված Ինդիանայի, քան իր համար։

— Ինձ համար լաց մի եղեք,— ասաց Ռալֆը, տեսնելով արցունքով ողողված նրա դեմքը,— ինձ մի խղճացեք, ձեր սիրալիրությունը տեսնելով, Ինդիանա, մոռանում եմ անցյալը, իսկ ներկան այլևս գառը չէ։ Ինչի՞ համար տանջվեմ հիմա, երբ նրան չեք սիրում։

— Եթե ձեզ ճանաչած լինեի, Ռալֆ, նրան երբեք չէի սիրի,— ասաց տիկին Դելմարը,— ձեր հոգու մաքրությունը կործանեց ձեզ։

— Եվ հետո,— ասաց Ռալֆը՝ ցավոտ ժպիտով նրան նայելով,— ուրախանալու այլ առիթներ էլ ունեմ. ճամփորդության ընթացքում, անկախ ձեզնից, երբ ձեր սիրտն էիք բացում, մի խոստովանություն արեցիք։ Ասացիք, որ այդ Ռեյմոնը չի տիրացել այն հաճույքին, որ այնպես հանդգնորեն ակնկալում էր, և դրանով ինձ ազատեցիք տառապանքներիս մի մասից, ազատեցիք խղճի խայթից, այլապես տանջվում էի մտածելով, որ վատ եմ հսկել ձեզ, որովհետև համարձակություն ունեցա մտածել, որ պիտի պահպանեմ ձեզ նրա գայթակղություններից, և իմ կասկածներով վիրավորեցի ձեզ, Ինդիանա։ Չէի հավատում, որ ուժ կգտնեք ձեր մեջ, իսկ հիմա այս մեղքիս համար էլ եմ ներողություն խնդրում։

— Ավա՜ղ,— ասաց Ինդիանան,— ներում եք խնդրում մի մարդուց, որ ձեր կյանքի դժբախտության պատճառը դարձավ, որ այսքան մաքուր ու վեհանձն սերը փոխադարձեց անմիտ կուրությամբ, դաժան ապերախտությամբ։ Հիմա ե՞ս պետք է ծնկի չոքած ձեր առջև ներողություն հայցեմ։

— Նշանակում է, իմ սերը նողկանք չի պատճառում, չի զայրացնում, Ինդիանա... Օ՜, ասոված իմ, երախտապարտ եմ քեզ, երջանիկ եմ մեռնելու համար, Ինդիանա, իմ տանջանքների համար այլևս մի հանդիմանիր քեզ։ Այս բոպեին

այլևս չեմ ափսոսում Ռեյմոնի վայելած ուրախությունների համար, մտածում եմ, որ նա պիտի նախանձի ինձ, եթե սիրտ ունի։ Հիմա ես եմ առհավետ քո եղբայրը, ամուսինը, սիրեկանը։ Այն օրից, ինչ երդվեցիր ինձ հետ հեռանալ կյանքից, սկսեցի քաղցր միտք փայփայել. դու իմն ես, վերադարձել ես՝ երբեք չլքելու համար ինձ, քեզ անձայն իմ նշանածը անվանեցի։ Երջանկություն անսահման պիտի լիներ, բայց երևի ոչ կատարյալ, եթե երկրի վրա տիրանայի քեզ։ Երկնքում դրախտային կյանք է սպասում ինձ, որի մասին մանկուց եմ երազել։ Այնտեղ կսիրես ինձ, Ինդիանա, այնտեղ աստվածային հոգիդ, երկրային ամեն տեսակի կեղծիքից զերծ, վարձահատույց կլինի ինձ զոհողություններով, տանջանքներով, հրաժարումներով լի կյանքիս դիմաց, սիրելիս, այնտեղ իմը կլինես, իմ Ինդիանա, դու իմ երկինքն ես, և եթե արժանացել եմ դրախտին, արժանացել եմ նաև քեզ։ Այս մասին մտածելով է, որ առաջարկեցի քեզ ճերմակ հագուստով հագնել՝ հարսանեկան հանդերձը, իսկ գեպի լճակ առաջացող այս ժայռը մեզ սպասող խորանն է։

Ռալֆը վեր կացավ, քիչ այն կողմ ծաղկած նարնջենուց մի ճյուղ կտրեց և ամրացրեց Ինդիանայի սև մազերի մեջ, հետո ծունկ չոքելով նրա առաջ, ասաց.

— Երջանկացրու ինձ, ասա, որ համաձայն ես երկնքում ամուսնանալ ինձ հետ։ Հավերժություն տուր ինձ, մի ստիպիր, որ անձկություն տենչամ։

Եթե Ռալֆի կյանքի պատմությունը ոչ մի ազդեցություն չգործեց ձեզ վրա, եթե չկարողացաք համակրել, սիրել այդ առաքինի մարդուն, նշանակում է, նրա հոգեկան կյանքի վատ թարգմանն եմ, նշանակում է, չեմ կարողացել ազդել ձեզ վրա՝ վատ նկարագրելով նրա զգացմունքները, հոգու հզորությունը, որ ճշմարիտ, խոր սիրո ձայնն է արձակում։ Բացի այդ, լուսինը հիմա իր մելամաղձոտ շողերով չի պարուրում ձեզ, բենգալյան թռչունները չեն երգում, ծառերը չեն բուրում, չեք զգում մերձարևադարձային գիշերների հմայքը, երբ քաղցր թույնով արբեցնում է միտքն ու հոգին։ Հավանաբար, ձեզ հայտնի չէ նաև, թե ինչ ուժեղ և նոր զգացումներ են արթնանում մարդու սրտում ինքնապահանություն գործելուց առաջ. երկրային բոլոր երևույթներն իրենց

իսկական տեսքով են հայտնվում այն պահին, երբ ուզում են հաշիվները փակել նրանց հետ։ Այս հանկարծակի հայտնված շողը ողողեց Ինդիանայի սրտի բոլոր անկյունները։ Ակնակապը, որ վաղուց էր սկսել թուլանալ, միանգամից ընկավ նրա աչքերից։ Բնականին, իրականությանը վերադառնալով, տեսավ Ռալֆի հոգին ինչպես որ կար, տեսավ նրա դիմագծերը, որ երբեք չէր նկատել. հոգին ներգործել էր արտարտինի վրա, ինչպես էլեկտրական հոսանքը՝ քարացած անդամների վրա։ Նա ձերբազատվել էր այն անդամալուծությունից, որ շղթայել էր աչքերն ու լեզուն։ Իր անկեղծության և մաքրության մեջ նա Ռեյմոնից ավելի գեղեցիկ էր, և Ինդիանան զգաց, որ սա էր արժանի իր սիրուն։

— Եղիր իմ ամուսինը երկնքում և երկրի վրա,— ասաց Ռալֆին,— այս համբույրը թող առհավետ նշանի ինձ քեզ հետ։

Նրանց շրթները հպվեցին. և, անկասկած, սրտից բխող սիրո մեջ ավելի հանկարծակի առաջացած հզորություն կա, քան վաղանցիկ ցանկասիրության պոռթկումի մեջ, քանի որ այս համբույրն էլ, որ քաղված էր մի այլ կյանքի շեմին, նրանց համար ամփոփեց նրա բոլոր ուրախությունները։

Այդ ժամանակ Ռալֆը գրկեց իր նշանածին և առաջացավ նրա հետ՝ միասին հորձանքի մեջ նետվելու...

ՎԵՐՋԱԲԱՆ

Պատրոն Ժ. Ներոյին

Անցյալ տարվա հունվարյան մի տաք ու պայծառ օր Սեն-Պոլից գնացի Բուրբոն կղզու՝ վայրի անտառների մեջ երազելու։ Ձեր մասին էի մտածում, բարեկամ։ Այս կուսական անտառները կարծես հիշողություններ էին պահել ձեր շրջագայություններից և ուսումնասիրություններից, գետնին ձեր ոտնահետքերն էին դրոշմված։ Ամենուրեք հանդիպում էի բնության այն հրաշալիքներին, որոնց մասին կարդացել էի ձեր կախարդական հեքիաթներում, որոնք ժամանակին հմայել էին ինձ անքուն գիշերներիս միջոցին. ու, ցանկանալով միասին հիանալ այս բնությամբ, մտովի կանչեցի ձեզ հինավուրց Եվրոպայից, որտեղ հիմա ձեզ մութ մոռացումն է շրջապատել համեստ կեցության մեջ։ Երջանիկ մարդ, ոչ մի նենգամիտ ընկեր դեռ չի արժեքավորել ձեր տաղանդն ու խելքը։

Զբոսնելու ընթացքում քայլերս ուղղեցի դեպի ամայի մի վայր, որը գտնվում է կղզու ամենաբարձրադիր մասում և կոչվում է Սեն-Պոլի (Հսկաների) լեռնահովիտ։

Երկրաշարժից պոկված մի մեծ լեռնաբեկոր սարի լանջին բացել է երկարաձիգ հարթակ, որի վրա ամենակախարդական անկանոնությամբ ու ցրվածությամբ ժայռեր են ցցված։ Այս կողմում կտեսնեք մանր քարերի վրա հավասարակշռությունը պահած հսկայական մի քարաբեկոր, այն կողմում՝ բարակ, նեղ, թափանցիկ ժայռերից ժանյակավոր ու ծակոտկեններով ասեղնագործած պատն է բարձրանում, որը մավրիտանական պալատ է հիշեցնում, այստեղ ժեռ քարից մի կոթող, որն ասես հղկվել, կոկվել է արվեստագետի ձեռքով, խոյանում է առատանավոր պատվանդանի վրա, ավելի հեռվում՝ գոթական ոճով կառուցված, անձև և տարօրինակ տեսքով մի ամրոց թեքվել է չինական մեհյանի վրա։ Այն-

տեղ կարծես ժամագրության են եկել ճարտարապետական արվեստի բազմատեսակ նմուշներ, և թվում է, թե բոլոր դարաշրջանների և բոլոր ազգերի տաղանդները իրենց ներշնչանքը քաղել են բնության այս անձեռակերտ հրաշալիքներից։ Անկասկած, այս կախարդական կերտվածքները մավրիտանական ճարտարապետության նախատիպն են։ Գեղաշար, վայելչակազմ արմավենու բները նույնպես օրինակ են ծառայել այդ հոյակերտ արվեստի կերտման համար։ Հողից կառուցած ու գետնին խարսխված ճյուղատարած արմատներով ծառը այդ նրբակերտ կամարների վրա հենվող տաճարի նախագիծն է հանդիսացել։ Հսկաների լեռնահովտում բոլոր կազապարները, բնության գեղեցկությունները համարձակորեն հավաքվել, տեղադրվել, հարմարվել, կերտվել են մի մրրկաշունչ գիշերվա ընթացքում։ Հավանաբար օդի և կրակի ոգիները մասնակցություն են ունեցել այս դիվական գործին. միայն նրանք կարող էին իրենց ստեղծագործությանը տալ այս սարսափելի, կամակոր, անկատար տեսքը, որ տարբերում է ձեռակերտ հուշարձաններից։ Միայն նրանք կարող էին կուտակել այս սահմռկեցուցիչ ժայռաբեկորները, շարժել այդ հսկայական զանգվածները, խաղալ լեռների հետ, ինչպես ավազահատիկների հետ և, ստեղծագործությունների մեջ, որ մարդը փորձել է ընդօրինակել, ներդնել արվեստի հզոր գաղափարներ, անիրական վիհ հակասություններ, որոնք կարծես ծիծաղում են արվեստագետի հանդգնության վրա և ուզում են ասել. «Փորձեք սա՛ էլ վերակերտել»։

Կանգ առա համարյա վաթսուն ոտնաչափ բարձրությամբ ժեռ քարե կոթողի սորոտին, որ կարծես արվեստագետի ձեռքն էր կռել, հղկել։ Այս արտառոց հուշարձանի մեջտեղում երևում էր խոշոր գրերով մի արձանագրություն, որ թվում էր, թե գերբնական մարդ էր փորագրել այն։ Հրաբխի հետևանքով առաջացած քարերը հաճախ կրում են այդպիսի հետքեր։ Ինչ-որ ժամանակ ժայթքող կրակը փափկացրել է նրանց, և դաղջ վիճակում նրանց են կպել խեցիներ և լիանաներ, թողնելով այնտեղ իրենց դրոշմը։ Այս դիպվածային միակցություններով են բացատրվում բնության տարօրինակ խաղերը, խորհրդավոր գրություններով հիերոգլիֆային

գծագրումները, որ կարծես անդրերկրային էակի ձեռքով կախարդական նշաններով փորագրված լինեն։

Երկար ժամանակ կանգնած մնացի այդտեղ, տարված այն միամիտ ցանկությամբ, որ կթափանցեմ այդ առեղծվածային արձանագրությունների աշխարհը։ Անօգուտ որոնումներն ինձ գցեցին խորհրդածությունների գիրկը, և մոռացա փախչող ժամանակի գոյության մասին։

Իսկ թանձր ամպերն այդ ընթացքում կուտակվում էին լեռների կատարին և իջնում էին լանջերն ի վար՝ արագորեն կլանելով նրանց ուրվագծերը։ Մինչ կանցնեի հարթակի կեսը, մառախուղը նետվեց այդտեղ, և ամեն կողմից անթափանց վարագույր իջավ։ Մի ակնթարթում կատաղի քամի բարձրացավ ու մի վայրկյանում ավլեց տարավ ամպերը։ Հետո քամին հանդարտվեց, մառախուղը նորից կուտակվեց, որպեսզի դարձյալ վտարվեր ահավոր փոթորկի կողմից։

Փնտրեցի մի պատսպարան, որ պաշտպանվեմ ամպրոպից, բայց բնության մի այլ տարերք եկավ միանալու այդ մրրիկին։ Տեղատարափ անձրևը հունից հանեց գետերին, որոնց ակունքը լեռների բարձունքներն են։ Մի ժամվա ընթացքում ամեն ինչ հեղեղի տակ անցավ, իսկ լեռնալանջերն ամեն կողմից շրջապատվեցին վերևից թափվող ջրերով, որոնք հսկայական ջրվեժ կազմած՝ կատաղորեն սլանում էին դեպի դաշտավայր։

Անկասկած, նախախնամության կողմից առաջնորդվելով, երկու օրվա շատ ծանր և վտանգավոր ճամփորդությունից հետո, հանկարծ հայտնվեցի բացարձակապես անմարդաբնակ մի վայրում, որտեղ մի տուն տեսա։ Պարզ տեսքով, բայց գեղեցիկ տնակը կանգուն էր մնացել փոթորկի դեմ, քանի որ պատսպարված էր ժայռե պատնեշի տակ, որ հակվելով կարծես ամպհովանու դեր էր կատարում։ Քիչ այն կողմ՝ կատաղի սահանքը նետվում էր ձորի հատակը, և այնտեղ կազմում ափերից դուրս թափվող լիճ, իսկ վերևում գեղեցիկ ծառերի փնջերը դեռ բարձր էին պահել իրենց գունաթափ ու հոգնած գլուխները։

Բախեցի դուռը, շեմին հայտնված մարդը, կամքիցս անկախ, ստիպեց ինձ նահանջել։ Նախքան պատսպարան կխնդրեի, տանտերը անխոս, լուրջ շարժումով ներս հրավիրեց։

Տ

մտա և դեմուդեմ գտնվեցի սբր Ռալֆ Բրաունի հետ

Մեկ տարի առաջ, երբ «Նահանդով» նավը պարոն Բրաունին և իր կողակցին գաղութ էր բերել, միայն երեք անգամ էի նրան քաղաքում տեսել։ Ինչ վերաբերում է տիկին Դելմարին, այնպես էր փակված իր պատսպարանում, որ տեղի բնակիչներն էին նույնիսկ կասկածում նրա գոյությանը։ Համարյա այդ ժամանակվա հետ էր համընկնում առաջին անգամ Բուրբոն կղզում իմ հայտնվելը, իսկ սա իմ երկրորդ հանդիպումն էր պարոն Բրաունի հետ։

Մեր առաջին ծանոթությունը անջնջելի տպավորություն թողեց ինձ վրա. հանդիպեցինք Սեն-Պոլում, ծովափին։ Այս մարդու արտաքինն ու կեցվածքը նախ մեծ հետաքրքրություն չառաջացրին իմ մեջ, բայց ավելի ուշ, երբ կղզաբնակներին հարցուփորձ արեցի նրա մասին, պարզապես տեղեկանալու համար, և տարօրինակ ու իրար հակասող կարծիքներ լսեցի, սկսեցի ավելի ուշադիր հետևել Բերնիկայի այդ մենակյացին։

— Կոպիտ ու անկիրթ մարդ է,— ասացին ոմանք,— կատարյալ ոչնչություն, միակ առավելությունն այն է, որ լուռ է։

— Խիստ զարգացած, գիտակ, խոր գիտելիքների տեր անձնավորություն է,— ասացին ուրիշները,— բայց այնպիսի մեծ կարծիք ունի իր մասին, այնքան հպարտ է, որ մեղք է համարում հասարակ մահկանացուների հետ խոսել։

— Այդ մարդը միայն իրեն է սիրում,— ասացին երրորդները,— միջակություն է, բայց հիմար չէ, անասելի եսասեր, նույնիսկ ասում են, ոչ մեկի հետ չի հաղորդակցվում։

— Ի՞նչ է, ոչինչ չգիտե՞ք նրա մասին,— հարցրեց ինձ գաղութում մեծացած, գավառացու նեղմտությամբ տոգորված մի երիտասարդ,— թշվառականի մեկն է, սրիկա, նենգաբար թունավորել է ընկերոջը, որպեսզի նրա կնոջ հետ ամուսնանա։

Այս կարծիքն այն աստիճան զարմացրեց ինձ, որ դիմեցի տարեց մի գաղութաբնակի, որին քիչ թե շատ բանականությամբ օժտված մարդ էի համարում։

Այս առեղծվածի շուրջը լուսաբանում պահանջող իմ հարցերին անսալով՝ նա պատասխանեց.

— Ինչ-որ ժամանակ սբր Ռալֆը աշխարհական է եղել, հարգանք է վայելել, բայց այնքան էլ չի սիրվել, քանի որ անմիջական, մարդամոտ չէր։ Այսքանը միայն կարող եմ ասել նրա մասին, մանավանդ իր չարաբաստիկ պատմությունից հետո երբեք չեմ հանդիպել։

— Ի՞նչ պատմություն,— հարցրի նրան։

Եվ նա ինձ պատմեց գնդապետ Դելմարի հանկարծակի մահվան, նույն գիշերվա մեջ նրա կնոջ փախուստի, պարոն Բրաունի մեկնումի և վերադարձի մասին։ Այս բոլոր իրադարձությունները պարուրող խավարը, չնայած դատական հետաքննություններին, չէր պարզվել, ոչ ոք չէր կարողացել ապացուցել փախստականների մեղքը։ Դատախազը հրաժարվել էր շարունակել հետաքննությունը, բայց բոլորին հայտնի էր իշխանության ցուցաբերած կողմնապահությունը պարոն Բրաունի հանդեպ, և հասարակական կարծիքը բավականին խոցված էր այն բանի համար, որ երկու անձանց վրա ընկած այդպիսի ահավոր կասկածներով արատավորված մի գործ չէր լուսաբանվել։

Կասկածներն ավելի շատ հիմնվում էին երկու մեղապարտների գաղտագողի վերադարձի և Բերնիկայի անմարդաբնակ վայրերում խորհրդավոր կերպով հաստատվելու փաստերի վրա։ Ըստ մարդկանց կարծիքի, նրանք նախ փախել էին՝ գործը քնեցնելու համար, բայց Ֆրանսիայում հաստատակական կարծիքն այնպես էր հայածել նրանց, որ ստիպված վերադարձել էին՝ մենության մեջ պատսպարվելու և խաղաղորեն հագուրդ տալու իրենց հանցավոր կապին։

Բայց այս բոլոր կասկածներն ի չիք էին դառնում մի վերջին, ավելի հիմնավոր կարծիքի պատճառով, որ, կարծում եմ, գիտակ մարդկանց կողմից էր կազմված. տիկին Դելմարը, ասում էին նրանք, երբեք չի համակրել իր զարմիկին՝ պարոն Բրաունին, նույնիսկ հետո հակակրանք է զգացել նրա նկատմամբ։

Այդ ժամանակ ես սկսեցի ուշադիր, նույնիսկ, կարող եմ ասել, մանրազնին ուսումնասիրել այդ սարսափելի պատմությունների տեր հերոսին։ Նա նստել էր ապրանքների կույտի վրա և սպասում էր ինչ-որ նավաստու վերադարձին՝ առևտրի հետ առնչված պայմանավորվածության համա-

ձայն։ Սովի պես ծավի նրա աչքերը մեղմ ու երազկոտ արտահայտությամբ հեռուներն էին հառնում։ Դեմքի բոլոր գծերը հրաշալիորեն ներդաշնակում էին։ Նյարդերը, մկանները, արյունը այնքան հանգիստ էին, այնքան կատարյալ, այնքան հավասարկշռված՝ այդ առողջ ու ամբակազմ մարդու մեջ, որ պատրաստ էի երդվելու նրա հասցեին ուղղված մահացու մեղադրանքի դեմ. այդ մարդը ոչ մի ոճիր չէր կարող գործած լինել, նույնիսկ անհնար էր, որ մտքով անցկացրած լիներ։ Սիրտը և ձեռքերը նույնքան անբիծ էին, որքան ճակատը։

Բարոնետի հայացքն հանկարծ ընկավ ինձ վրա, որին ագահ ու բացահայտ հետաքրքրասիրությամբ զննում էի։ Հանցանքի վայրում բռնված գողի պես շփոթված՝ կախեցի աչքերս, որովհետև սըր Ռալֆը խիստ հանդիմանական հայացքով էր ինձ նայում։ Այդ պահից ի վեր, անկախ ինձնից, հաճախ մտաբերեցի նրան։ Նույնիսկ երազում էի տեսնում։ Նրա մասին մտածելիս այն աղոտ անհանգստությունը, անբացատրելի հուզումն էի ապրում, որ գալիս էր կարծես անսովոր ճակատագիր ունեցող այդ մարդուց տարածված մագնիսական հոսանքից։

Սըր Ռալֆին ճանաչելու բուռն և ճշմարիտ ցանկություն ունեցա, բայց նախընտրեցի հեռվից ու անկատ ուսումնասիրել նրան։ Ինձ թվաց, թե ինչ-որ հարցում մեղավոր եմ նրա հանդեպ։ Նրա հայացքի սառը պարզությունը զամում էր ինձ տեղում։ Այդ մարդը հավանաբար շատ առաքինի պետք է լիներ կամ մեծ ապիրատ, և ես նրա ներկայությամբ ինձ փոքր ու չնչին էի զգում։

Նա շատ լավ ընդունեց ինձ, բայց առանց իրար անցնելու, առանց աղմկելու։ Ուղեկցեց ինձ իր սենյակը, առաջարկեց փոխել թրջված հագուստներս, հետո ծանոթացրեց ինձ իր կյանքի ընկերուհու հետ, որն արդեն սպասում էր մեզ սեղանի մոտ։

Տեսնելով, որ նա այդքան դեղեցիկ է, երիտասարդ (տասնութ տարեկանից ավելի չէր երևում), հիանալով նրա թարմությամբ ու հմայքով, լսելով նրա քնքուշ ձայնը, ինչ-որ ցավագին հուզում պատեց ինձ։ Իսկույն մտքովս անցավ, որ այդ կինը կամ մեծ մեղք է կրում, կամ շատ դժբախտ

է։ Կամ իրոք մեղավոր է կատարված զարհուրելի ոճրի մեջ, կամ ամոթաբեր մեղադրանքի բեռի տակ ընկճված։

Ութ օր շարունակ վարարած գետերը, ջրասույզ հարթավայրերը, քամիներն ու անձրևները պահեցին ինձ Բերնիկայում։ Հետո արև ծագեց, և ես մտածեցի իմ հյուրընկալներից բաժանվելու մասին։

Նրանցից ոչ մեկը, ոչ մյուսը աչքի չէին ընկնում արտակարգ խելքով, բայց ինչ որ ասում էին՝ հատկանշական էր ու հաճելի. նրանք հոգով էին ապրում և ոչ բանականությամբ։ Ինդիանան շատ մեծ զարգացում չուներ, բայց դա այն կոպիտ տգիտությունը չէր, որ ծնունդ է առնում ծուլությունից. անփույթ վերաբերմունքից կամ մտավոր սահմանափակությունից։ Նա ծարավի էր ուսման, բայց չէր հասել դրան կյանքի ծանր հանգամանքների պատճառով։ Հավանաբար նրա կողմից կանացի խաղ էր անընդհատ հարցեր ուղղել սըր Ռալֆին, որպեսզի հնարավորություն տար նրան իմ ներկայությամբ փայլելու իր բազմակողմանի գիտելիքներով։

Ես նրան ուրախ տեսա, բայց ոչ աշխույժ։ Նրա շարժումների մեջ տխուր դանդաղկոտություն էր նկատվում, որ հատուկ է կրեոլուհիներին, բայց, իմ կարծիքով, նրան ավելի մեծ հմայք էր հաղորդում։ Նրա արտակարգ հեզահամբույր աչքերը կարծես խոսում էին տանջանքով ու ցավով հագեցած կյանքի մասին, և երբ շուրթերն էին ժպտում, հայացքը, այնուամենայնիվ, պահում էր թախիծը, բայց այնպիսի թախիծ, որ կարծես ծնված լիներ երջանկության կամ խանդաղատագին երախտագիտության մասին ունեցած խոկումից։

Մի առավոտ նրանց հայտնեցի, որ վերջապես մեկնում եմ։

— Արդե՞ն,— բացականչեցին նրանք։

Այս միակ բառի շեշտադրությունն այնքան անկեղծ, այնքան զգայացունց էր, որ սրտապնդվեցի։ Որոշել էի չհեռանալ սըր Ռալֆի մոտից, մինչև իր կյանքի պատմությունը չիմանալի, բայց նախկինում սրտիս մեջ բուն դրած ահավոր կասկածի պատճառով անհաղթահարելի երկյուղ էի զգում։

Փորձեցի հաղթահարել։

— Լսեք,— ասացի նրան,— մարդիկ սրիկա են, ձեր մա-

սին իմ ներկայությամբ բավական վատ են արտահայտվել։ Բայց հիմա, որ ճանաչում եմ ձեզ, այլևս չեմ զարմանում։ Կարծում եմ, շատ գեղեցիկ կյանքով եք ապրել, այլապես այդքան բամբասելու առիթ չէիք տա նրանց...

Միանգամից ընդհատեցի խոսքս, տեսնելով տիկին Դելմարի դեմքին միամիտ զարմանք։ Հասկացա, որ անտեղյակ էր իր շուրջը ծավալված դաժան չարախոսություններին, իսկ սրբ Ռալֆի դեմքին կարդացի ուղղակի ներողամտություն և միաժամանակ՝ դժգոհություն։ Վեր կացա մեկնելու համար, ամոթահար էի ու տխուր, պարոն Բրաունի հայացքի ներքո՝ ընկճված, հիշում էի մեր առաջին հանդիպումը և նույն համբ խոսակցությունը ծովափին։

Նման հանգամանքներում այդ հրաշալի մարդուց ընդմիշտ հեռանալու մտքից հուսահատված, զգալով, որ բարկացրել ու վիրավորել էի նրան՝ ի հատուցումն այն երջանիկ օրերի, որ ընձեռել էր իմ կյանքում, զգացի, որ սիրտս ուռել է, և արցունքները թափվեցին աչքերիցս։

— Երիտասարդ,— ասաց՝ ձեռքս բռնելով,— մեկ օր էլ մնացեք մեզ հետ։ Քաջություն չունեմ թողնել մեր միակ բարեկամին այս վիճակով հեռանալ։

Իսկ երբ տիկին Դելմարը մեզ մենակ թողեց. նա ավելացրեց.

— Ձեզ հասկացա, կպատմեմ կյանքիս պատմությունը, բայց ոչ Ինդիանայի ներկայությամբ։ Վերքեր կան, որ չի կարելի բացել։

Երեկոյան գնացինք անտառ զբոսնելու։ Տասնհինգ օր առաջ այնքան թարմ ու գեղեցիկ ծառերը ամբողջովին տերևաթափ էին եղել, բայց փոխարենը նորից լցվում էին հատ, խեժառատ, խոշոր բողբոջներով։ Թռչունները և միջատները վերականգնել էին իրենց իշխանությունը։ Թառամած ծաղիկներն արդեն նոր ծիլերով էին փոխարինվում։ Առվակներն անընդհատ քշում էին ավազը, որ լցվել էր նրանց հունի մեջ։ Կյանքը վերականգնվանում էր, երջանկությամբ ու կենսախնդությամբ էր հագենում։

— Տեսեք,— ասաց Ռալֆը,— ինչպիսի զարմանահրաշ արագությամբ է բնությունը վերակերտում իր կորուստները։ Ձեզ չի՞ թվում, թե նա ամաչում է կորցրած ժամանակի

համար և ցանկանում է իր կորովի և ավիշի օգնությամբ մի քանի օրում ավարտել մեկ տարվա աշխատանքը։

— Եվ կհասնի դրան,— շարունակեց տիկին Դելմարը,— հիշում եմ անցյալ տարվա փոթորիկները. մեկ ամիս հետո շորս կողմը խաղաղ էր։

— Վշտից խորտակված սրտի պատկերն է,— ասացի նրան,— երբ երջանկությունը գալիս է նրան միանալու, փթթում է և շատ արագ երիտասարդանում։

Ինդիանան ձեռքը մեկնեց ինձ և նայեց պարոն Բրաունին քնքշության և ուրախության անվերջանալի արտահայտությամբ։

Երբ գիշերն ընկավ, Ինդիանան քաշվեց իր սենյակը, իսկ սրբ Ռալֆն առաջարկեց ինձ նստել պարտեզի նստարանին, իր կողքին, և պատմեց իր կյանքի պատմությունը մինչև այն մասը, որ թողեցինք նրան նախորդ գլխում։

Այստեղ երկար ընդմիջում տվեց և կարծես լիովին մոռացավ իմ ներկայությունը։

Պատմության նկատմամբ տածած հետաքրքրությունս ինձ անհամբեր էր դարձրել, և որոշեցի ընդհատել նրա մտքերը՝ մի վերջին հարց տալու համար։

Քնից արթնացած մարդու նման ցնցվեց, հետո բարեհամբույր կիրպով ժպտալով՝ ասաց.

— Երիտասարդ բարեկամ, հիշողություններ կան, որ պատմելու ժամանակ գեղեցկությունը խամրում է։ Բավարարվեք իմանալով, որ անվերապահորեն որոշել էի սպանել Ինդիանային, ինձ էլ նրա հետ։ Բայց, անկասկած, մեր զոհաբերության վավերացումը դեռևս արձանագրված չէր երկրների արխիվներում։ Հավանաբար, որևէ բժիշկ ձեզ կհավատացնի, թե այդ բոսեին գլխապտույտ եմ զգացել և կորցրել իմ հավասարակշռությունս։ Ես, որ ամենևին բժիշկ չեմ համարում ինձ, այս հարցի վերաբերյալ հակված եմ հավատալու, որ Աբրահամի և Թովբիտի ճերմակաթև, գեղեցիկ, կապուտաչյա, ոսկե գոտիով հրեշտակը, որին հաճախ տեսած պիտի լինեք մանկության տարիներին, երազների մեջ, լուսնի շողով իջավ և, օրորվելով ջրվեժի մշուշապատ գողգոջուն շղարշի վրա, տարածեց արծաթաղօծ թևերը իմ քնքուշ կնոջ վրա։ Միակ բանը, որ կարող եմ փատահարար

ձեզ ասել, այն է, որ լուսինը քուն մտավ բարձր լեռների հետևում, իսկ ջրվեժի խաղաղ շշնջյունը չվրդովվեց ոչ մի չարագուշակ աղմուկից։ Ժայռի խոռոչներում պատսպարված հավքերը այն պահին թեան միայն, երբ ճերմակ լուսահերը ձգվեց ծովի հեռավոր հարթության վրա, երբ առաջին բոսոր ճառագայթն ընկավ նարնջենիների փնջի վրա և տեսավ ինձ ծնկաչոք, աստծուն օրհնելիս։

Համենայն դեպս, չմտածեք, թե միանգամից ընդունեցի ճակատագիրս վերակերտող անհուսալի երջանկությունը։ Վախեցա կշռադատել ինձ վրա խոյացող լուսապայծառ ապագան, և երբ Ինդիանան բարձրացրեց աչքերը՝ ինձ ժպտալու համար, ցույց տվի ջրվեժը և հիշեցրի նրան մահվան մասին։

— Եթե չեք ափսոսում, որ ապրելու եք միենույն այս առավոտ,— ասացի նրան,— երկուսս էլ կարող ենք հավատացնել, որ իր ամբողջության մեջ վայելել ենք երջանկությունը, իսկ սա առավել ևս մի պատճառ է, որ լքենք կյանքը, որովհետև իմ ասողը վաղը կարող է խավարել։ Ո՞վ գիտե, այս վայրերից հեռանալուց հետո, այս արբեցուցիչ վիճակից դուրս գալուց հետո, ուր մահվան ու սիրո մթքերով տարվեցի, նորից չե՞մ դառնա այն կոպիտ ու զզվելի անձնավորությունը, որին դեռ երեկ արհամարհում էիք։ Ինքներդ ձեզնից չե՞ք կարծրիլու, նորից տեսնելով ինձ այնպիսին, ինչպիսին ճանաչել եք... Ա՜խ, Ինդիանա, խնայեք ինձ այս դաժան ցավի դեմ, դա կլինի լրումն իմ ճակատագրի։

— Կասկածո՞ւմ եք ձեր սրտի վրա, Ռալֆ,— ասաց Ինդիանան քնքշության և վստահության հրաշալի արտահայտությամբ,— թե՞ իմ սիրտը ձեզ վստահություն չի ներշնչում։

— Ինչ ասեմ ձեզ, առաջին օրերը երջանիկ չէի զգում ինձ։ Տիկին Դելմարի անկեղծությանը չէի կասկածում, բայց ապագան սարսափեցնում էր ինձ. երեսուն տարի շարունակ ինքս ինձ կասկածելով, մեկ օրում չէի կարող հավատիանալ դուրս գալու և սիրվելու հույսի մեջ։ Անվստահության, վախի, դառնության պահեր ապրեցի։ Զղջացի լճում չխեղդվելու համար, այն պահին, երբ Ինդիանայի մեկ բառը երջանկություն էր պարգևել ինձ։

Նա նույնպես տխրության պահեր ապրեց, դժվարությամբ հրաժարվեց տառապելու սովորությունից, որովհետև հոգին դժբախտության մեջ է ձևավորվում, այնտեղ արմատներ է գցում և մեծ ջանքերի շնորհիվ է ազատվում դրանցից։ Բայց արդարացիորեն պետք է նշել, որ նա երբեք չափազանց Ռեյմոնի համար, նույնիսկ առելությամբ չհիշեց նրան։

Վերջապես, ինչպես պատահում է խոր և ճշմարիտ սիրո առկայության դեպքում, ժամանակը, փոխանակ թուլացնելու մեր սերը, ընդհակառակը, ավելի հաստատեց և ամրապնդեց։ Ցուրաքանչյուր օրը նոր ուժ, խտություն բերեց նրան, որովհետև ամեն մի օրը, այս կամ այն ձևով, հարգանքի և օրհնության պարտավորություն բերեց իր հետ։ Ամեն տեսակի վախ մեկ առ մեկ փարատվեց, և տեսնելով, թե որքան հեշտ է խորտակել անվստահության պատճառները, ինքներս մեզ խոստովանեցինք ժպտալով, որ վախկոտի պես ենք ընդունում երջանկությունը և արժանի ենք մեկս մյուսին։ Այդ պահից սկսած վայելում ենք մեր սերը։

Ռալֆը լուռ. մի քանի րոպե երկուսով էլ խորասուզվել էինք բարեպաշտ մտքերի մեջ։

— Իմ երջանկության մասին չեմ խոսի,— շարունակեց նա քիչ անց՝ ձեռքս բռնելով,— եթե կան ցավեր, որ երբեք չեն մատնում իրենց և պատանքի նման պարուրում են հոգին, կան նաև ուրախություններ, որոնք մարդու սրտի մեջ են պարփակվում, որովհետև երկրային ոչ մի ձայն չի կարող դրանք արտահայտել։ Եթե երկնային որևէ հրեշտակ դա նստի այս ծաղկած ճյուղերից մեկի վրա և երկնքի լեզվով պատմի ձեզ այդ ուրախությունների մասին, միևնույնն է, չեք հասկանա, երիտասարդ, քանի դեռ կյանքի մրրիկներն ու փոթորիկները չեն սասանել ձեզ։ Ավա՜ղ, տապապանք չտեսած հոգին երջանկությունից ոչինչ չի հասկանա։ Ինչ վերաբերում է մեր ոճրագործությանը...— ավելացրեց նա ժպտալով։

— Օ՜,— բացականչեցի ես արցունքոտ աչքերով։

— Լսեցեք, պարոն,— ընդհատեց նա իսկույն,— դուք շատ երկար չապրեցիք Բերնիկայի երկու մեղադրյալների հետ, բայց այդ ժամանակի մեկ մասն էլ բավական էր՝ նրանց ամբողջ կյանքին ծանոթանալու համար։ Մեր բոլոր օրերը նման են իրար, բոլորն էլ խաղաղ են ու գեղեցիկ, անցնում են նույնքան արագ ու մաքուր, ինչպես մեր մանկության

օրերը։ Ամեն երեկո օրհնում ենք երկնային արքայությունը, ամեն առավոտ պաղատում ենք նրան տալ մեզ նախորդ օրվա արևն ու սովերները։ Մեր եկամուտների մեծ մասով օգնում ենք հաշմանդամ, հիվանդ սեամորթ մարդկանց։ Սա է մեր հացեին շարախոսելու հիմնական պատճառը, որ տարածում են գաղութարարները։ Ինչու այնքան հարուստ չպիտի լինեինք, որ աղատագրեինք սորկության մեջ գտնվող բոլոր մարդկանց։ Մեր ծառաները մեր բարեկամներն են. նրանք կիսում են մեր ուրախությունները, մենք բուժում ենք նրանց, հոգում նրանց մասին։ Այսպես է անցնում կյանքը. առանց վշտի, առանց խղճի խայթի։ Հազվադեպ ենք հիշում անցյալը, հազվադեպ ենք խոսում ապագայի մասին։ Խոսում ենք անցյալի մասին առանց վշտանալու և համարձակ նայում ենք ապագային։ Եթե հանկարծ մեկնումեկիս աչքերին արտասուք է երևում, պատճառն այն է, որ մեծ երջանկության մեջ էլ են դրանք երևան գալիս, մեծ վշտի մեջ արցունք չկա։

— Բարեկամս,— ասացի նրան երկար լռությունից հետո,— եթե մարդկանց մեղադրանքներն ուղղված ընդ ձեզ՝ հասնեին այստեղ, ձեր երջանկությունը կլիներ լավագույն պատասխանը։

— Դուք երիտասարդ եք,— պատասխանեց նա,— ձեր միամիտ և մաքուր հոգով, որ չի պղծվել դեռ հասարակության մեջ, կարող եք զգալ, որ մեր երջանկությունը մեր առաքինության արգասիքն է, իսկ մարդկանց համար դա մեր գլխավոր հանցանքն է։ Ինչ ասեմ, մենակությունը լավ բան է, իսկ մարդկանցից հեռու գտնվելու համար չպետք է ափսոսալ։

— Բոլորը չէ, որ մեղադրում են ձեզ,— ասացի նրան,— բայց նրանք էլ, գնահատելով հանդերձ, նախատում են ձեզ հասարակական կարծիքը հաշվի չառնելու համար, իսկ ովքեր ընդունում են ձեր առաքինությունը, գոռոզ ու ինքնահավան են համարում ձեզ։

— Հավատացեք ինձ,— առարկեց Ռալֆը,— այդ հանդիմանության մեջ ավելի շատ գոռոզություն կա, քան իմ ենթադրյալ արհամարհանքի մեջ։ Ինչ վերաբերում է հասարակական կարծիքին, պարոն, տեսնելով, թե ում է մեծարում, պետք է ձեզ մեկնել նրան, ում ոտնահարում է։

Ասում են, առանց մարդկային հարգանքի երջանկություն լինել չի կարող, ովքեր հավատում են դրան, պետք է հավատան նաև հասարակական կարծիքին։ Իսկ ես անկեղծորեն խղճում եմ այն կարգի երջանկությունը, որ նրա կամավոր շնչի տակ բարձրանում կամ իջնում է։

— Որոշ բարոյախոսներ ամբաստանում են ձեզ առանձնության համար, նրանք հակված են մտածելու, որ յուրաքանչյուր անձ պատկանում է հասարակությանը։ Ավելացնում են նաև, որ վտանգավոր օրինակ եք ծառայում։

— Հասարակությունը ոչինչ չպետք է պահանջի այն մարդուց, որից ինքը ոչ մի սպասելիք չունի,— պատասխանեց սըր Ռալֆը,— ինչ վերաբերում է օրինակի վարակին, այդ բանին չեմ հավատում, պարոն, կամքի մեծ ուժ է հարկավոր՝ հասարակությունից կապերը խզելու համար, շատ վշտեր պետք է կրել՝ այդ կամքի ուժը ձեռք բերելու համար։ Այսպիսով, թողեք խաղաղությամբ հոսի մեր այդ չդիտակցված երջանկությունը, որը ոչ մեկին վնաս չի տալիս, և, նախանձողներից խուսափելով, թաքցնում ենք։ Գնացեք, երիտասարդ, հետևեք ձեր ճակատագրին, բարեկամներով շրջապատեցեք ձեզ, պետություն ունեցեք, անուն, հայրենիք։ Ես Ինդիանա ունեմ։ Մի խզեք հասարակությանը միացնող ձեր շղթաները, հարգեք նրա օրենքները, եթե ձեզ պաշտպանում են, գնահատեք դրանք, եթե ճիշտ են թվում, բայց եթե մի օր այդ հասարակությունը ամբաստանի ձեզ և հեռացնի իրենից, հպարտ գտնվեք, կարողացեք հրաժարվել նրանից։

— Այո,— ասացի նրան,— մաքուր սիրտը կարող է աքսորը տանելի դարձնել, բայց այն սիրելի դարձնելու համար հարկավոր է կյանքի այնպիսի ընկերուհի ունենալ, ինչպիսին ձեր կինն է։

— Ա՛,— ասաց նա անթաքույց ժպիտով,— եթե իմանայիք, ինչպես եմ խղճում ինձ արհամարհող մարդկանց։

Հաջորդ օրը հեռացա Ռալֆի և Ինդիանայի մոտից. մեկը համբուրեց ինձ, մյուսը մի քանի կաթիլ արցունք թափեց։

— Գնաք բարով,— ասացին ինձ,— վերադարձեք մարդկանց մոտ, եթե երբևիցե նրանք վտարեն ձեզ, հիշեք մեր հնդկական հյուղակը։

Ժորժ Սանդը՝ Լյուսիլ-Օրոր Դյուդևանը, 19-րդ դարի եվրոպական գրականության մեջ ամենաբեղուն ու բազմաժանր գրողներից մեկն է։

Ծնվել է Փարիզում, 1804 թվականին։ Հայրը Նապոլեոնի բանակի սպա էր, ազնվական ծագումով, մայրը՝ փարիզյան թատրոնի պարուհի։

Ժորժ Սանդը մեծացավ Ֆրանսիայի Բերրիի շրջանում, նոանի հայրական կալվածքում՝ մեծ մոր դղյակում։ Նա առավոտից իրիկուն վազվզում էր ու խաղում գեղջուկ երեխաների հետ, ոչխարներ արածեցնում, ծառեր մագլցում։ Ամռան ցուրտ երեկոներին ծվարում էր բուխարիկի մոտ, ապրուկ մի անկյունում, և լսում տեղաբնակների ավանդապատումները ու զրույցները։ Երաժշտության դասեր էր առնում մեծ մորից։

1817 թվականին Օրոր Դյուդևանն ընդունվում է Փարիզի անգլիական Օպյուատեն վանք, որտեղ ուսանում էին բարձրաշխարհիկ ընտանիքի երեխաները։ Երեք տարի անց, 1820 թվականին, ընդհանուր գիտելիքներով զինված՝ Ժորժ Սանդը վերադառնում է մեծ մոր մոտ։ Վերջինս բազմահմուտ, խոր գիտելիքների տեր ու մտավոր մեծ կարողություններ ունեցող կին էր։ Հարուստ գրադարան ուներ։ Դեռատի աղջիկը շատ էր սիրում կարդալ։ Գրքերից ստացած տպավորությունները նա կիսում էր մեծ մոր հետ, ստանում սպառիչ պատասխաններ, անհագորեն լսում նրա պատմածները անցած դարերի նշանավոր անձանց մասին։ Նոանի դղյակում այնպես ձևավորվում էր ապագա գրողի ստեղծագործական աշխարհը, որի ուսուցիչներից մեկն էլ նրան շրջապատող գեղեցիկ բնությունն էր, իսկ Հյուգոն՝ նրա կուռքը։

1821 թվականին նա սրտի խոր կսկիծով հրաժեշտ է տալիս մեծ մոր շիրմին և մեկնում Փարիզ՝ մոր մոտ, ուր երիտասարդ աղջկա համար սկսվում են տառապալից օրեր։ Մայրն ստիպում է նրան շուտ ամուսնանալ։

Տասնութամյա Լյուսիլ-Օրորն ամուսնանում է բարոն Քազիմիր Դյուդևանի հետ։ Բայց շատ շուտով հիասթափվում է նրանից, քանզի ոչ մի հոգեկան կապ չի ստեղծվում նրա և այդ գավառական մեծահարուստ մարդու միջև...

1830 թվականին պայթեց ֆրանսիական հեղափոխությունը։ Ազատության դաղափարը ներքուծեց նաև գավառ, և անհավանական թվացող շատ հարցեր պատասխան գտան ու իրականացան։ Ոգեորված նոր հեղափոխությամբ, գրականության մեջ առաջ քաշված առաջադեմ մտքերով, տարվելով ձախ հանրապետականների և ուտոպիստ-սոցիալիստների գաղափարներով, Ժորժ Սանդը հեռանում է ամուսնուց և 1831 թվականին մեկնում Փարիզ, որպեսզի իրեն լիովին նվիրի գրական գործունեությանը՝ զերծ մնալով ամեն տեսակի բանադատություններից և նախապաշարումներից։

Փարիզում բարոնուհի Դյուդևանը՝ Ժորժ Սանդը, աշխատակցում է զանազան լրագրերի ու պարբերականների։ Այստեղ նա հրատարակում է իր առաջին նովելները։ Այս շրջանում էր, որ նա հանդիպում է ֆրանսիացի գրող Ժյուլ Սանդոյին և նրա հետ համատեղ գրում ու հրատարակում է «Ռոզը և Բլանշը» վեպը՝ Ժյուլ Սանդ գրական կեղծանունով։ Օրոր Դյուդևանն այնուհետև հրատարակում է իր առաջին ինքնուրույն վեպը՝ «Ինդիանան» (1832) և ստորագրում է Ժորժ Սանդ գրական անունով, որն ուղեկցում է նրան ամբողջ կյանքում։ Հաջորդում են «Վալանտինան» (1832), «Լելիա» (1833), «Ժակ» (1834) և այլ վեպեր։ Դրանք ռոմանտիկ, քնարական վեպեր են, ուր հիմնական մոտիվը սերն է, որը բախվում է իրական կյանքի, սոցիալական նախապաշարումների հետ, Ժորժ Սանդի կյանքը նույնպես հաջորդական սերերի շղթա է, կապված Մյուսեի, Շոպենի հետ։

Ժ. Սանդի իդեալիզմն այս շրջանում բխում է երեք ակունքներից, սիրո, մարդկությունի, բնության։ Դա Ժ. Սանդի գրական ստեղծագործության առաջին շրջանն էր։ Իսկ առհասարակ նրա հինգամյա ստեղծագործական ուղին պայմանականորեն կարելի է բաժանել չորս շրջանի։

1-ին շրջանը՝ 1831 թվականից մինչև 1840-ը, կարելի է համարել վերոհիշյալ ռոմանտիկ վեպերի շրջան։

2-րդը՝ (1840—1845) սոցիալական և միստիկական ստեղծագործությունների շրջանն է («Սպիրիդիոն» (1840), «Կոնսուելո» (1842), «Անժիրոցի (1848) և այլն)։

3-րդը՝ հեղինակի «գեղջկական» գործերի շրջանն է, որն ընդգրկել է 1845—1848 թվականները («Սատանայի լիճը» (1848), «Փոքրիկ Ֆրանսեթը» (1848) և այլն։

4-րդը՝ Ժ. Սանդի աշխարհիկ ստեղծագործությունների շրջանն է, որն ընդգրկում է 1848-ից մինչև կյանքի վերջը («Ոսկեղջ անտառի գեղեցիկ պարոնները» (1858), «Վիլլմերի մարքիզը» (1860), «Իմ կյանքի պատմությունը՝ սկսած 1854-ից» և ուրիշներ)։

Ժ. Սանդը գրական, գործնական սերտ կապեր ուներ ժամանակի շատ նշանավոր գրողների ու քաղաքական գործիչների հետ, որոնց հանդիպում էր հատկապես երեկույթների ու զանազան հավաքույթների ժամանակ։ 1838 թվականին էր, որ նման երեկոներից մեկում հանդիպում է երիտասարդ, տաղանդավոր բանաստեղծ Ալֆրեդ դը Մյուսեին։ Նա իր քնարական նուրբ բանաստեղծություններով արդեն հռչակ էր վայելում, հատկապես ռոմանտիկների շրջանում։

1834 թվականը հարուստ է իրադարձություններով։ Ապրիլին Լիոնի բանվորների ապստամբությունը ցնցում է ամբողջ Ֆրանսիան։ Ամեն մի խավություն ենթարկվում է դաժանորեն։ Բանտերը լեփ-լեցուն են։ Այդ տարիների իրադարձությունները տակնուվրա են անում հասարակական կարծիքը և մեծ ազդեցություն թողնում ֆրանսիացի շատ գրողների քաղաքական հայացքների վրա։ Ժ. Սանդը նույնպես ընկնում է այդ հոսանքի մեջ։ Նա խորապես ուսումնասիրում է իրադարձությունները և դրանք ծնող պատճառները։ Մոտիկից ծանոթանում է աշխատավոր ժողովրդի ծանր ու զժվարին կյանքին, պայմաններին, իր առջև նպատակ դնում գրաղվել տառապյալների հակատագրով։ Այդ շրջանում Ժ. Սանդը մտերմություն է հաստատում լիբերալների, ավելի ուշ՝ սենսիմոնականների, ուտոպիստ-սոցիալիստների հետ։ Նրանց գաղափարները խոր ազդեցություն են թողնում նրա ստեղծագործության վրա։ Կնոջ ազատագրության հարցը, ինչպես նաև հասարակ մարդկանց հանդեպ թույլ տրվող անարդարությունները դառնում են Ժ. Սանդի

ստեղծագործությունների հիմնական մոտիվը, որոնք իրենց գրսևորումն են գտնում նրա երկրորդ շրջանի ստեղծագործություններում։ Նրա հերոսները մտավոր հորիզոնն ընդլայնվում է։ Նրանք դուրս են գալիս ընտանեկան նեղ, հեղձուկ շրջանակներից, անձնական զգացմունքների ոլորտից և պայքարի ուղին բռնում, մասնակցում քաղաքական կյանքին։ Այդպիսիք են «Հաբացիոսը» (1841) վեպի հերոսները։ Այսպիսով Ժ. Սանդը դառնում է սոցիալական վերածնունդի առաջյալներից մեկը, համամարդկային թեմաներով գրված ստեղծագործությունների մեջ անդրադառնում է Թուսսոյի տեսությանը։

1838 թվականին հուլիսվոր կին գրողը մտերմանում է մեծ կոմպոզիտոր ու դաշնակահար Ֆրեդերիկ Շոպենի հետ։ Այդ կապը տևում է տասը տարի, որը Ժ. Սանդին հեռու է պահում փարիզյան աղմկոտ կյանքից։ Այդ շրջանը Շոպենի ստեղծագործության ակտիվ շրջանը դարձավ։ Շոպենի երաժշտության հանդեպ ունեցած նուրբ զգացմունքների արձագանք է Ժ. Սանդի «Կոնսուելո» վեպը։

30—40-ական թվականներին Ժ. Սանդը անտարբեր չէ նաև հասարակական մի շարք դաղտնի կազմակերպությունների հանդեպ, որոնք ժամանակին մեծ թիվ էին կազմում Ֆրանսիայում և ամբողջ Եվրոպայում։ Նրան հատկապես հետաքրքրում է քաղաքական պայքարը։ Այդ է ցանցել արտացոլել «Կոնսուելոյի» երկրորդ մասում՝ «Կոմսուհի Ռուդոլշտատը» (1843—45) վեպում։

1848 թվականի փետրվարյան հեղափոխության լուրն ստանալով, Ժ. Սանդը մեկնում է Փարիզ։ Այնտեղ խմբագրում է ձախ հանրապետականների տեղեկագիրը, թերթ է հիմնում։ Սակայն շուտով հասկանում է, որ կառավարությունը հակահեղափոխական դիրք է գրավում, որոշում է խզել կապերը քաղաքականության հետ, «երևակայությունը շեղել՝ վերադառնալով խաղաղ իդեալական կյանքին, անմեղությանը, երազանքին»։

Բերրիում սկսում է Ժ. Սանդի ստեղծագործական կյանքի երրորդ շրջանը։ Նրա կարծիքով, «Արվեստը դրական իրականության ուսումնասիրություն չէ, այն իդեալական իրականության որոնումն է... Այսօրվա վիպը պետք է փոխարինի պարզ ժամանակների այլաբանությանն ու առասպելին։ Այս գաղափարներով էլ նա առաջնորդվում է մինչև վերջ, շարունակելով իր ինքնակենսագրական վեպը՝ «Իմ կյանքի պատմությունը»։

Ժ. Սանդի ստեղծագործություններին բնորոշ են կյանքի իդեալականացումը, կրքոտ սերը, սենտիմենտալ մարդասիրությունը, իսկ բնությունը առանձնահատուկ տեղ է գրավում նրա վեպերում։

Լիստը, հմայված Ժ. Սանդի արձակի երաժշտականությամբ, ցանկանում է «Կոնսուելո» վեպի հիման վրա օպերա գրել։

1873 թ. հրատարակված «Մեծ մայրիկի հեքիաթները» վկայում են գրողի խոր գիտակիցները և անհուն սերը բանահյուսության հանդեպ։

Թատերական կյանքը նույնպես հետաքրքրում է Ժ. Սանդին։ Նա փարիզյան թատրոնների համար գրում է թատերգություններ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ժ. Սանդի նամակներին։ Նա անձնական ծանոթություն է ունեցել և նամակագրական կապեր է հաստատել Ֆլոբերի, Տուրգենևի, Բալզակի, Մյուսեի, Լիստի, Միցկևիչի, Հայնեի, Գրլլպարցերի, Գոթիեի, Գոնկուրի և այլոց հետ։

Հիսուն տարվա գրական գործունեության ընթացքում Ժ. Սանդը գրել է մոտ յոթանասուն վեպ, քննադատական ու քաղաքական բնույթի հոդվածներ, նամակներ, այսպիսով շարադրելով կեսդարյա արվեստի, քաղաքական ու մտավոր կյանքի մի արտառոց օրագիր։

Ժ. Սանդը վաստակեց նաև մի այլ պատվավոր անուն, որ նրան ուղեկցեց մինչև կյանքի վերջը. «Ինանի բարի տիկինը»։

Ժ. Սանդը վախճանվեց 1876-ին, 72 տարեկան հասակում։

«Ինդիանան» Ժ. Սանդի առաջին վեպն է, գրված մի շնչով, առանց նախնական ծրագրի։ Իր վիպերից սա գուցե միակն է, որ նա գրել է այդքան ինքնաբուխ կերպով և հայեցած հույզերով։ Գլխավոր հերոսուհին՝ Ինդիանան, գեղեցիկ մի խառնածին է, որը, պարոն Դելմարի հետ ամուսնանալով, գալիս է Ֆրանսիա։ Նա իրենց հրաշալի գյուղակում գերի է զգում իրեն։ Պ. Դելմարի մռայլ ու դյուրագրգիռ բնավորությունը, ինչպես նաև բնական խառնվածքը խորապես գայրացնում են տասնինգ տարին նոր թռչուծ դնոզը։ Դեռևս սեր չվայելած Ինդիանան դյուրահավատությամբ ու միամիտ հրապուրվում է Ռեյմոն դը Ռամիերով՝ երիտասարդ ու կանանց գայթակղող ազնվականով։ Ինդիանան իր մեջ ուժ է գտնում պայքարել ամուսնու բռնակալության դեմ և իր զարմիկի՝ Ռալֆի հետ, հեռանում է հասարակությունից անմարդաբնակ մի վայր։ Մեծ ջերմությամբ ու անկեղծությամբ նկարագրելով Ինդիանայի ճակատագիրը, Ժ. Սանդը այս պրոցեսը միաժամանակ վերածում է մի տեսակ անության։ Հերոսուհին տառապում է ոչ միայն ամուսնու լծի տակ, այլև իր շրջապատում գոյություն ունեցող նասիրության և մարդկային ճշմարիտ զգացումների բացակայության, հասարակության մեջ գոյություն ունեցող մարդասիրության պակասի պատճառով։ «Ես գրել եմ «Ինդիանան»,— վկայում է Ժ. Սանդը,— օրենսդրական օրենքների անիրավության և բարբարոսության պայմաններում, որոնք դեռ տեսրինում են կնոջ վիճակը ընտանիքում և հասարակության մեջ... Ես կամեցի հասարակական կարծիքի հետ, քանզի նա է ուշացնում կամ պատրաստում սոցիալական բարելավումները»։

Եթե վեպում Ինդիանայի և Ռալֆի բնավորության գծերն իդեալականացված են, ապա Դելմարի և, հատկապես, Ռեյմոնի կերպարները վկայում են հեղինակի վերաբերմունքը հասարակության անդամների նկատմամբ։

Վեպը դուր եկավ գրաքննադատությանը։

Ժ. Սանդը հայ ընթերցողին ծանոթ է դեռևս անցյալ դարի սկզբից, երբ ուրախությունը թարգմանվեցին նրա մի քանի նովելները։ Սրբուհի Տյուտանը իր ավագ ժամանակակցի՝ Ժ. Սանդի հիմնական գաղափարները որդեգրելով, դրանք ներմուծել է հայ գրականության մեջ, ներկայացրել կնոջ անապատ վիճակը հասարակության մեջ։

Ժ. Սանդը 1834 թվականին այցելել է Սուրբ Ղազար կղզին, հիացել Մխիթարյանների գործունեությամբ։ Հետագայում «Մի Ճանապարհորդի նամակները» (1834—36) գործի մեջ նկարագրել է Բայրոնի մեծ սերը հայ մշակույթի հանդեպ, Մխիթարյանների ու նրա սերտ կապի մասին։

ԵՎԱՐՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ISBN 5-550-00524-7

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԺՈՐԺ ՍԱՆԴ

Ինդիանա

Վեպ

Литературно-художественное издание

Жорж Санд

ИНДИАНА

Роман

Ереван, «Хорурдаин грох»

На армянском языке

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բաբայան
Խմբագիր՝ Է. Ռ. Թոսունյան
Նկարիչ՝ Վ. Ա. Թումանյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Դ. Շահվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ղ. Թեզյան

ИБ 6694

Հանձնված է շարվածքի՝ 13. 11. 89 թ.։
Ստորագրված է տպագրության 1. 08. 90 թ.։
Չափսը՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 14,28 պայմ. տպ. մամ., 14,3 պայմ. ներկ. թերթ., 12,6 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 2380։ Գինը՝ 1 ռ. 20 կոպ.։
«Հորհրդային գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Хорурдаин грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.